

**NATIONAL ACADEMY OF SCIENCES
REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF ORIENTAL STUDIES**

H. G. KHORIKYAN

**ARMENIA AND TRANSCAUCASIA IN THE
ADMINISTRATIVE DIVISIONS OF ACHAEMENIAN
PERSIA**

(HISTORICO-GEOGRAPHICAL STUDY)

YEREVAN 2014

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Հ. Գ. ԽՈՐԻԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ԱՅՍՐԿՈՎԿԱՍԸ ԱՔԵՄԵՆՅԱՆ
ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԿԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐՈՒՄ
(ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՈՒՄՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ)

ԵՐԵՎԱՆ-2014

ՀՏԴ 93/99
ԳՄԴ 63.3
Խ 826

ՏՊԱԳՐԿՈՒՄ Է
ՀՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՄԱՄԲ

Խմբագիր՝ Ա. Վ. Քոսյան
պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Գրախոս՝ Բ. Հ. Հարությունյան
պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

Խորհկյան Հովհաննես
Խ 826

Հայաստանը և Այսրկովկասը Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանումներում (պատմաաշխարհագրական ուսումնասիրություն).-Եր.: Հեղինակային հրատարակություն, 2014.-172 էջ:

Աշխատության մեջ քննարկվում են Հայաստանի և Այսրկովկասի Աքեմենյան տիրապետության ժամանակաշրջանի վարչական բաժանման և էթնիկական կազմի հիմնահարցերը, որոնց պարզաբանումը կարևոր է ոչ միայն Հայաստանի և Այսրկովկասի, այլև Հին Արևելքի պատմության ուսումնասիրության համար:

Հասցեագրվում է հայագետներին, կովկասագետներին և արևելագետներին, ինչպես նաև Հայաստանի և Այսրկովկասի հին պատմությամբ և պատմական աշխարհագրությամբ հետաքրքրվող ընթերցողներին:

ՀՏԴ 93/99
ԳՄԴ 63.3

ISBN 978-9939-0-0984-1

© Հ. Գ. Խորհկյան, 2014

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արեւմենյան տիրապետության ժամանակաշրջանը Առաջավոր Ասիայում կարևոր նշանակություն ունի Հայաստանի և Այսրկովկասյան երկրների պատմության համար, իսկ Հայաստանի և Այսրկովկասի պատմական աշխարհագրության համակողմանի ուսումնասիրությունը մեծ կարևորություն է ներկայացնում ոչ միայն հայագիտության, այլև կովկասագիտության ու արևելագիտության համար: Հարկ է նշել, որ Հայաստանի և Այսրկովկասի պատմական աշխարհագրության ուսումնասիրությունն ունի ոչ միայն գուտ գիտական, այլև կարևոր քաղաքական նշանակություն, քանի որ թուրք, ադրբեջանցի և, մասամբ, վրացի պատմաբանները, հետապնդելով հեռուն գնացող քաղաքական նպատակներ, փորձում են նենգափոխել հայ ժողովրդի պատմությունը և պատմաաշխարհագրական շատ իրողություններ: Այդ պատճառով Հայաստանի և Այսրկովկասյան երկրների պատմական աշխարհագրությանը նվիրված ամեն մի կարևոր հետազոտություն հավուր պատշաճի պատասխան է մեր հարևան երկրների պատմաբանների նենգափոխումներին և քաղաքական նկրտումներին:

Ուսումնասիրության թեման, ընդհանուր առմամբ, մեզանում դեռևս հատուկ ուսումնասիրության չի արժանացել: Թեև XIII, XVIII և XIX սատրապությունների պատմական աշխարհագրության որոշ հիմնահարցեր ուսումնասիրության առարկա են դարձել մի քանի հայ և օտարագի ուսումնասիրողների կողմից, սակայն XIII, XVIII և XIX սատրապությունների վարչական կացության և դրանց էթնիկական կազմի վերաբերյալ ամբողջական ուսումնասիրություն ցայսօր հրապարակի վրա չկա: Սույն մենագրությունն այդ հիմնահարցերի համակողմանի և ամբողջական ուսումնասիրության առաջին փորձն է: Մեր առջև նպատակ ենք դրել կատարելու Հայաստանի և Այսրկովկասի Արեւմենյան տիրապետության ժամանակաշրջանի վարչական բաժանման համալիր ուսումնասիրություն և քննության առնելու Հայաստանի և Այսրկովկասի էթնիկական կազմը:

Ըստ այդմ, քննության են առնվել հետևյալ խնդիրները.

ա. Աքեմենյան Պարսկաստանի XIII սատրապության տեղորոշումը, տարածքը, սահմանները և էթնիկական կազմը,

բ. Աքեմենյան Պարսկաստանի XVIII սատրապության տեղորոշումը, տարածքը, սահմանները և էթնիկական կազմը,

գ. Աքեմենյան Պարսկաստանի XIX սատրապության տեղորոշումը, տարածքը, սահմանները և էթնիկական կազմը:

Հայաստանի, Այսրկովկասի և հարավարևելյան Մերձսևծովյան շրջանի Աքեմենյան տիրապետության ժամանակաշրջանի պատմական աշխարհագրության վերաբերյալ մեզ հասած գրավոր աղբյուրները սակավաթիվ են ու կցկտուր, իսկ առկա աղբյուրագիտական նյութն էլ աչքի է ընկնում անորոշությամբ, ինչը ծնունդ է տալիս տարբեր բացատրությունների և մեկնաբանությունների, քանի որ ոչ միշտ է խարսխված անմիջական իրազեկության վրա: Առկա կացությունը պահանջում է նշված խնդիրների գիտական քննություն և սկզբնաղբյուրների համադրական-համեմատական վերլուծություն:

Հին Հայաստանի և նրա հյուսիսային հարևան երկրների պատմական աշխարհագրությանը վերաբերող մեզ հասած աղբյուրները կարելի է բաժանել երեք խմբի՝ ա) սեպագիր արձանագրություններ, բ) հունա-հռոմեական հեղինակների երկեր, գ) հայ մատենագիրների աշխատություններ:

Սեպագիր արձանագրությունների մեջ, բնականաբար, առաջին տեղը զբաղեցնում են Աքեմենյան արքաների թողած արձանագրությունները, որոնց մեջ իր նշանակությամբ առանձնանում է Բեհիստունի եռալեզու արձանագրությունը: Վերջինս բաղկացած է հսկայական 9 սյունակից, որոնցից 5 սյունակը հին պարսկերենով է, 3 սյունակը՝ էլամերեն, և մեկ սյունակը՝ բաբելերեն: Դարեհ Ա-ի այս արձանագրության 26-30 պարագրաֆները վերաբերում են հայերի ապստամբությանը: Հայերը հինգ անգամ ձակատամարտ են տալիս Դարեհի զորավարներ հայ Դադարշիշին և պարսիկ Վահունիսային և միայն հինգերորդ ձակատամարտում պարտություն կրելուց հետո ենթարկվում են պարսից պետությանը: Կարևոր են արձանագրությունում հիշատակվող հայաստանյան տեղավայրերը, որտեղ հայերը համառ դիմադրություն են ցույց տալիս Դարեհի բանակներին: Արձանագրության 49-50 պարագրաֆներում

պատմվում է բաբելացիների երկրորդ ապստամբության մասին, որը զլխավորում է հայ Հալդիտայի որդի Արախան՝ Բաբելոնի ինքնակոչ հայ թագավորը՝ Նաբուգոդոնոսոր IV արքայական անունով:

Սատրապությունների հերոդոտյան ցուցակի բաղդատումը Աքեմենյան արքաների արձանագրություններում տրված հպատակ երկրների անվանումների հետ անհամապատասխանություն է դրսևորում: Անհամապատասխանության պատճառն այն է, որ ուսումնասիրողները Բեհիստունի և այլ արձանագրություններում փորձում են տեսնել հերոդոտյան վարչական բաժանման համապատասխան արտացոլումը: Սակայն եթե նկատի ունենանք, որ Բեհիստունի արձանագրությունը գրվել է մ. թ. ա. 518 թվականին¹, իսկ Դարեհի վարչական վերափոխումները կատարվել են (կամ ավելի ճիշտ սկսվել) դրանից հետո՝ մ. թ. ա. 517 թվականից, հետևաբար Բեհիստունի, Նադշե Ռոստամի, Սուեզի և ավելի ուշ շրջանի արձանագրություններում Աքեմենյան տիրակալները սոսկ թվարկում են նվաճված ենթակա երկրները, ճիշտ է, ըստ աշխարհագրական սկզբունքի, բայց առանց խիստ հերթականության, այնուամենայնիվ, թվարկվող երկրները ներկայանում են որպես պատմաաշխարհագրական ընդհանրություններ, որոնք միշտ չէ, որ պետք է համապատասխանեին վարչական բաժանումներին²: Հին պարսկական արձանագրությունների³ տված տեղեկություններն ամենահավաստի են, քանի որ դրանք, փորագրված լինելով ժայռերի վրա, ոչ մի ընդմիջարկության չեն ենթարկվել և մեզ են

¹ Стів Дандамаев М., Иран при первых Ахеменидах (V в. до н. э.), Москва, 1963, с. 80.

² Стів Тураев Б., История Древнего Востока, т. II, Ленинград, 1935, с. 138; Дьяконов М., Очерк истории древнего Ирана, Москва, 1961, с. 92.

³ Стів «Դարեհ Վշտասպի Բիսթունյան արձանագրությունը», թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթ. Գ. Նալբանդյանի, Երևան, 1964; Rawlinson H. C., The persian cuneiform inscription at Behistun, "Journal of the Royal Asiatic society", vol. X, London, 1847; Kent R., Old Persian. Grammar. Texts. Lexicon, 2nd ed., New Haven, 1953; "Les inscriptions de la Perse achéménide", traduit du vieux perse, de l'élamite, du babylonien et de l'araméen, présenté et annoté par Pierre Lecoq. Gallimard, Paris, 1997 (այսուհետև՝ Lecoq); Malbran-Labat F., La version akkadienne de l'inscription trilingue de Darius à Behistun, Roma, 1994. Հին պարսկական այլ արձանագրություններում ևս Հայաստանը բազմիցս սոսկ հիշատակվում է մնացած հպատակ երկրների շարքում, սակայն այդ արձանագրությունները մեր ուսումնասիրության համար հետաքրքրություն չեն ներկայացնում:

հասել անաղարտ ձևով, չճայած, օրինակ, Պարեիը անձնական շահագրգռությունների պատճառով կարող էր և կեղծել պատմական ղեպերը: Պատմաաշխարհագրական որոշ խնդիրներ պարզաբանելու համար՝ անհրաժեշտության ղեպքում, դիմել ենք նաև վանյան⁴, ասսուրաբաբելական⁵ սեպագիր արձանագրությունների տեղեկություններին:

Աքեմենյան պետությանը հպատակ ժողովուրդների պատմության, տնտեսության ու ազգագրության մասին կարևորագույն սկզբնաղբյուրը Հերոդոտոսի «Պատմություն»-ն⁶ է, որտեղ թեկուզ համառոտ, բազմաթիվ արժեքավոր տեղեկություններ կան նաև Հայաստանի, Այսրկովկասի և հարավարևելյան Սերժսեժովյան շրջանի պատմական աշխարհագրության վերաբերյալ: Պատմահայրն (մ. թ. ա. 484-մոտ 425 թթ.) իր երկում րազմաթիվ հղումներ է կատարում մ. թ. ա. VI դարի լոգոգրափոս Հեկատեոս Միլետացուց, որին որոշ ուսումնասիրողներ վերագրում են Հերոդոտոսի մոտ պահպանված Աքեմենյան սատրապությունների ցուցակը, որն իր հերթին, ամենայն հավանականությամբ, ծագում է պարսկական պաշտոնական սկզբնաղբյուրից: Հերոդոտոսն իր երկում լայնորեն օգտագործում է րանավոր հաղորդումները, որոնք նա գրի էր առել ղեպի Ասորեստան, Բաբելոն, Ասորիք, Փյունիկիա, Պարսկաստան, Եգիպտոս և Լիբիա կատարած իր ճանապարհորդությունների ընթացքում: Հատկապես արժեքավոր են Հերոդոտոսի տեղեկությունները պարսիկների և պարսից հսկայածավալ

⁴ Տե՛ս Меликишвили Г., Урартские клинообразные надписи (այսուհետև՝ УКН), Москва, 1960; Арутюнян Н., Корпус урартских клинообразных надписей (այսուհետև՝ КУКН), Ереван, 2001; Կարաղոզյան Հ., Ուրարտական աղբյուրները Հայկական լեռնաշխարհի և հարևան պետությունների մասին, «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատի», հ.1, Երևան, 1981:

⁵ Տե՛ս Дьяконов И., Ассиро-вавилонские источники по истории Урарту (այսուհետև՝ АВИИУ), «Вестник древней истории» (այսուհետև՝ «ВДИ»), 1951, թիվ 2-4; Luckenbill D., Ancient Records of Assyria and Babylonia, vols. I-II, Chicago, 1926-1927.

⁶ Տե՛ս Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից (այսուհետև՝ Հերոդոտոս), թարգմ. Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1986; Геродот, История в девяти книгах (այսուհետև՝ Геродот), перевод и примечания Г. Страпановского, Ленинград, 1972; Herodotus (with an English translation by A. D. Godley), v. II-III, Cambridge, Mass.-London, 1957 (Loeb Classical Library).

պետության մասին, որի մեջ մտնում էր նաև Հայաստանը: Ուսումնասիրողները վաղուց ընդգծել են դրանց մեծ հավաստիությունը և ճշգրտությունը: Չնայած Հերոդոտոսը Հայաստանում չի եղել⁷, նրա տեղեկությունները XIII սատրապության, ինչպես նաև XVIII և XIX սատրապությունների վերաբերյալ ունեն բացառիկ կարևոր արժեք, որոնց հավաստիությունը հաստատվում է այլ աղբյուրների ուղղակի կամ անուղղակի տվյալներով:

Հաջորդ պատմիչը, որի «Անաբասիս» աշխատությունն առաջնակարգ նշանակություն ունի Հայաստանի, Սև ծովի հարավարևելյան շրջանի և, ընդհանրապես, Աքեմենյան պետության մ. թ. ա. V-IV դարերի սահմանագլխի պատմության համար, Քսենոփոնն է (մ. թ. ա. մոտ 430-356 թթ.): «Անաբասիս»-ը⁸, որտեղ նկարագրվում է Կյուրոս Կրտսերի մահից հետո հունական զորաբանակի նահանջը Բաբելոնից Հայաստանի վրայով դեպի Սև ծովի հարավարևելյան ափերը, բացառիկ արժեք ունի այդ վայրերի պատմական աշխարհագրության, էթնիկական կազմի, տնտեսության և այլ խնդիրների մասին, քանի որ զորավար-պատմիչն անձամբ էր անցել այդ տարածքներով և ականատես էր եղել նկարագրած իրադարձություններին:

Ուսումնասիրության մեջ օգտագործվել են նաև Քսենոփոնի «Կյուրոպեդիա» երկի⁹ տեղեկությունները, որոնցից երևում է, որ հայերն ակտիվ դեր են ունեցել Առաջավոր Ասիայի քաղաքական անցուղարձեռում: Քսենոփոնի հիշյալ երկում կան նաև տեղեկություններ, օրինակ, խալդայների մասին, որոնք, համադրվելով «Անաբասիս»-ի վկայությունների հետ, կարող են

⁷ Տե՛ս Կրկյաշարյան Ս., Հին Հայաստանի պետական կառուցվածքը (մ. թ. ա. VI-մ. թ. IV դդ.), Երևան, 2005, էջ 9:

⁸ Տե՛ս Քսենոփոն, Անաբասիս (այսուհետև՝ Անաբասիս), թարգմ. Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1970; Xenophon, Anabasis (with an English translation by Carleton L. Brownson), Books IV-VII, Cambridge, Mass.-London, 1947 (Loeb Classical Library).

⁹ Տե՛ս Քսենոփոն, Կյուրոպեդիա, թարգմ. Ս. Կրկյաշարյանի, Երևան, 2000 (այսուհետև՝ Կյուրոպեդիա); Ксенофонт, Киропедия, издание подготовили В. Г. Борухович и Э. Д. Фролоф, Москва, 1976; Xenophon, Cyropaedia (with an English translation by Walter Miller), v. I-II, Cambridge, Mass.-London, 1960 (Loeb Classical Library).

հանգեցնել մի շարք հետաքրքիր պատմաաշխարհագրական եզրահանգումների:

Աշխատանքում օգտագործել ենք հույն պատմիչ Ղիոդորոս Սիկիլիացու (մ. թ. ա. շուրջ 90-20 թթ.) «Պատմական գրադարան»-ը¹⁰, հատկապես երկի այն բաժինը, որտեղ համառոտակի պատմվում են նույն դեպքերը, ինչ մանրամասն շարադրում է Քսենոփոնը «Անաբասիս»-ում: Չի բացառվում, որ այս հատվածի աղբյուր հանդիսացել է հելլենների արշավանքի մասնակից մեկ ուրիշ հեղինակ:

Լայնորեն օգտագործել ենք ամասեցի հույն աշխարհագետ Ստրաբոնի (մ. թ. ա. 65-մ. թ. 21 թթ.) «Աշխարհագրություն»¹¹ աշխատության տվյալները, չնայած դրանք հիմնականում վերաբերում են հեղինակի ապրած ժամանակաշրջանին: Ստրաբոնի տեղեկությունները հայկական և հարևան երկրամասերի մասին հնարավորություն են տալիս հետադարձ քննությամբ պարզաբանելու մինչարտաշեսյան ժամանակաշրջանի պատմաաշխարհագրական տարբեր հարցեր: Ստրաբոնի տեղեկությունները Արտաշես Ա-ի և Ջարեհի ռազմաքաղաքական գործունեության մասին հնարավորություն են տալիս, օրինակ, քննել Սատրապական Հայաստանի վարչական սահմանների հարցերը: Ստրաբոնի հաղորդումների հիմքում ընկած են բազմաթիվ աղբյուրներ, որոնք գոյություն են ունեցել նրանից շատ առաջ և շատերը չեն պահպանվել: Օրինակ, Ստրաբոնն իր երկում վկայակոչում է Ալեքսանդր Մակեդոնացու ուղեկիցներ Կիրսիլոս Փարսալացուն և Մեդիոս Լարիսացուն, որոնց տեղեկությունները հայերի և Հայաստանի մասին պահպանվել են Ստրաբոնի շնորհիվ:

¹⁰ Տես Ղիոդորոս Սիկիլիացի, Պատմական գրադարան, թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Ս. Կոկյաշարյանի, Երևան 1985 (այսուհետև Ղիոդորոս Սիկիլիացի):

¹¹ Տես Ստրաբոն, Քաղեց և թարգմ. Հ. Աճառյան, Երևան, 1940 (այսուհետև Ստրաբոն); Страбон, География в 17 книгах (այսուհետև Страбон), перевод, статья и комментарии Г. Страпановского, Ленинград, 1964; "The Geography of Strabo" (այսուհետև Strabo), with an English translation by H. L. Jones, in eight volumes, London, 1969 (Loeb Classical Library).

Լայնորեն օգտվել ենք Արիանոս Փլավիոսի (մ. թ. II դար) աշխատությունից¹²։ Արիանոսի համար սկզբնաղբյուր են հանդիսացել Ալեքսանդրի նամակները, նրա զորավարների (հատկապես Պտղոմեոս Լագոսի երկը) հաղորդած տեղեկությունները և արքունի հիշատակարանը։ Աշխատության մեջ արժեքավոր տեղեկություններ կան մ. թ. ա. IV դարի հայերի և Հայաստանի, հարևան երկրների, Միջին Ասիայի էթնիկական կազմի մասին։

Հայաստանի, հայերի, հարակից շրջանների, Միջին Ասիայի մ. թ. ա. IV դարի պատմության ու պատմական աշխարհագրության վերաբերյալ կարևոր տեղեկություններ են պահպանվել մ. թ. I դարի հռոմեացի պատմիչ Կուրտիոս Ռուփոսի բանաքաղաժո աշխատությունում¹³, որտեղ օգտագործվել են Ալեքսանդրի մասին մեզ չհասած գրավոր պատմությունները։

Մեր պատմաաշխարհագրական ուսումնասիրությունը լիարժեք չէր լինի, եթե չօգտագործեինք Պլինիոս Ավագի «Բնապատմություն»¹⁴ և Պտղոմեոսի «Աշխարհագրություն»¹⁵ աշխատությունները։ Այս հեղինակների աշխարհագրական տեղեկությունները հնարավորություն են ընձեռում հաստատել կամ մերժել բազմաթիվ պատմաաշխարհագրական բնույթի հարցեր, որոնք քննարկում ենք Հեկատեոս Միլետացու, Հերոդոտոսի,

¹² Տե՛ս Արիանոս, Ալեքսանդրի արշավանքը (այսուհետև՝ Արիանոս), «Ալեքսանդր Մակեդոնացի», Երևան, 1987; Arrian, *Anabasis Alexandri* (with an English translation by E. Iliff Robson), v. I-II, Cambridge-Massachusetts-London, 1958-1961 (Loeb Classical Library); Arrian, *Поход Александра* (перевод с древнегреческого М. Е. Сергеенко), М.-Л., 1962.

¹³ Տե՛ս Ռուփոս, Ալեքսանդր Մակեդոնացու պատմությունը (այսուհետև՝ Ռուփոս), «Ալեքսանդր Մակեդոնացի», Երևան, 1987; Квинт Курций Руф, *История Александра Македонского*, Москва, 1963; Rufus Curtius Quintius; *History of Alexander* (with an English transl. by John C. Rolfe), v. I-II, Cambridge-Massachusetts-London, 1956 (Loeb Classical Library).

¹⁴ Տե՛ս Plinii Secundus, *Naturalis historiae*, vol. 1-10, Cambridge, Mass.-London, 1950-62 (Loeb Classical Library).

¹⁵ Տե՛ս Claudii Ptolemaei *Geographia*, e codicibus recognovit, prolegomenis, annotatione, indicibus, tabulis instruxit Carolus Müllerus, voluminis primi, pars secunda, Parisiis, 1901; Claudii Ptolemaei *Geographia*, edidit Carolus Fridericus Augustus Nobbe, t. I-III, Lipsiae, 1843-1845.

Քսենոփոնի, Ստրաբոնի և ուրիշ հեղինակների հաղորդումների կապակցությամբ:

Հարավարևելյան Մերձսևծովյան շրջանի, մասամբ նաև Այսրկովկասի պատմական աշխարհագրության ուսումնասիրության համար էական նշանակություն ունեն հին հունական նշանավոր պատումները արգոնավորդների մասին և անտիկ բազմաթիվ հեղինակների կողմից այս առասպելի մեկնաբանությունները (սբոլիաները): Հատկապես կարևոր է մ. թ. ա. III դարի հեղինակ Ապոլլոնիոս Հռոդոսցու «Արգոնավորդների արշավը» երկը: Անտիկ հեղինակներից շատերը փորձել են պահպանել առանձին կարևորություն ներկայացնող «Արգոնավորդների արշավի» (և ոչ միայն այս երկի) ուղենշային բնույթը, և ստացվել է այնպես, որ ժամանակի ընթացքում չճշգրտված տեղեկատվական հավելումները, ի լրումն կամայական խմբագրությունների, վերածվել են ինքնակամ նորամուծությունների, ինչը պահանջում է աղբյուրագիտական լուրջ քննություն: Հատկապես, ինչպես կարծում ենք, մեր քննության ընթացքում ոչ քիչ չափով գործ ունենք միևնույն ցեղի աղբյուրների կողմից մատուցվող տարբեր անունների և դրանց աղձատումների հետ: Այսպես, տարբեր աղբյուրներում հիշատակվող մակրոնները հանդես են գալիս մակրոկեփալներ (մեծագլուխներ) և ճաներ անուններով: Հակառակ դեպքում, կարելի է մտածել, որ խոսքն այստեղ վերաբերում է տարբեր անուններով հանդես եկող ազգակից ցեղերի մասին: Խնդիրն այն է, որ պատմական տարբեր դարաշրջաններում պատմաաշխարհագրական իրողությունները սկզբնաղբյուրներում կրում են որոշակի փոփոխություններ, ընդ որում, նկատելի է դառնում, որ ավելի հին աղբյուրները փորձում են համադրել նորերի հետ: Սա էլ բերում է որոշակի խառնաշփոթության, երբ օրինակ, այս կամ այն էթնոսը դուրս է հայտնվում իր նախնական բնակության տարածքից և ընդգրկում ավելի մեծ աշխարհագրություն:

Ռւսումնասիրության ընթացքում, ըստ ամենայնի, օգտագործվել են Կեղծ Արիանոսի, Դիոնիսիոսի, Նիկիփորոս Բլենմիդոսի, Պրիսկիանոսի, Պլուտարքոսի, Հովսեպոս Փլավիոսի, Պոմպոնիոս Մելասի, Ստեփանոս Բյուզանդացու և ուրիշների

աշխատությունները¹⁶, որոնց հեղինակներն օգտվել են բազմաթիվ և տարաբնույթ, տարբեր ժամանակների աղբյուրներից: Ուստիև, նրանց վկայությունները հարկ է քննել ժամանակի, տարածության և զարգացման մեջ:

Հայ մատենագիրների երկերից առանձնապես արժեքավոր են Մովսես Խորենացու և Թովմա Արծրունու աշխատությունները¹⁷, որոնց տեղեկությունների համեմատությունն ու համադրությունը հունա-հռոմեական և որոշակիորեն սեպագիր աղբյուրների խնդրո հարցերի հետ ուսումնասիրության մեջ բերել են պատմաաշխարհագրական բնույթի կարևոր եզրահանգումների:

Հայ և օտար պատմագիտության մեջ երկար ժամանակ գերիշխող է եղել այն կարծիքը, թե մ. թ. ա. VI-IV դարերում Հայաստանի տարածքը բաժանված է եղել երկու վարչական միավորների՝ XIII և XVIII սատրապությունների: Ընդ որում, հավանական է համարվել, որ կամ մ. թ. ա. 522-520 թվականների ապստամբությունից հետո, կամ էլ Քսերքսեսի ժամանակ միասնական Հայաստանը բաժանվում է երկու նահանգների: Հայկական լեռնաշխարհի բաժանումը XIII և XVIII սատրապությունների ընդունել են Ն. Ադոնցը, Գր. Ղափանցյանը, Հ. Մանանդյանը, Բ. Պիտրովսկին, Ի. Դյակոնովը և ուրիշներ:

Ն. Ադոնցը, մասնավորաբար չանդրադառնալով խնդրին, ենթադրել է, թե Ուրարտու և Միննի (իմա՝ Մանա) երկու խոշոր թագավորությունները համապատասխանել են սատրապների ժամանակվա Արևելյան և Արևմտյան Հայաստաններին, այսինքն՝

¹⁶ Այսրկովկասի, Սև ծովի հարավարևելյան մասի և ավելի պակաս չափով Հայաստանի վերաբերյալ անտիկ աղբյուրների տեղեկություններն ի մի են բերված Վ. Լատիշևի հայտնի ժողովածուում, որը հրատարակվել է 1893-1906 թվականների ընթացքում: Մենք օգտագործել ենք այս ժողովածուի հետագայում մաս-մաս հրատարակված հատվածները, որոնք ունեն բազմաթիվ լրացումներ և ծանոթագրություններ (տես Լатышев В., Известия древних писателей греческих и латинских о Скифии и Кавказе (այսուհետև՝ ИДПСК), «ВДИ», 1947-1949, թիվ 1-4):

¹⁷ Տես «Մովսեսի Խորենացու Պատմութիւն Հայոց» (այսուհետև՝ Մովսես Խորենացի), քննական բնագիրը և ներածությունը Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի, Երևան, 1991; Թովմա Արծրունի և Անանուն, Պատմութիւն տանն Արծրունեաց (այսուհետև՝ Թովմա Արծրունի), բնագիրը հրատարակության պատրաստեց, աշխարհաբար թարգմ. և ծանոթագր. Վ. Վարդանյան, Երևան, 1985:

Աբենենյան շրջանում Հայաստանը բաժանված է եղել XIII և XVIII սատրապությունների միջև¹⁸ :

Ըստ Գր. Ղափանցյանի, XIII սատրապությունն ընդգրկել է Փոքր Հայքի, Մելիտենեի, Ծոփքի և Արմե-Շուպրիայի տարածքը¹⁹ :

Հ. Մանանդյանը գտնում էր, որ Հերոդոտոսի ժամանակ արմենները զբաղեցրել են Հայկական լեռնաշխարհի միայն հարավային ու, գլխավորապես, հարավարևմտյան շրջանները, Ստորին Արածանիի և Վերին Տիգրիսի տարածքները՝ հին Ծոփքը և Աղծնիքը²⁰ :

Բ. Պիոտրովսկին նույնպես կարծում էր, որ Հերոդոտոսի ժամանակ արմենները հիմնականում բնակվել են մերձեփրատյան շրջաններում²¹ :

Գ. Մելիքիշվիլին հին պարսկական «Արմինա»-ն համապատասխան է համարում ուրարտական արձանագրությունների Արմե երկրին՝ ժամանակակից Դիարբեքրից հյուսիս-արևմուտք²² :

Ի. Ղյակոնովի կարծիքով, Ղարեհ Ա-ն Հայաստանում ստեղծում է երկու սատրապություններ՝ XIII՝ Մելիդ կենտրոնով և XVIII (ուրարտական), որտեղ նստող սատրապական դինաստիան ազգակից էր առաջին Հայկական թագավորության արքաների հետ²³ :

Ս. Երեմյանը գտնում էր, որ XIII սատրապությունը ձևավորվել էր Արմե-Շուպրիայի, իսկ XVIII-ը՝ Բիաինիլիի տերիտորիայի հիմքի վրա: Նրա կարծիքով, Արմե-Շուպրիան և հարևան գավառները

¹⁸ Տե՛ս Ադոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Երևան, 1987, էջ 433, ծանոթ. 1:

¹⁹ Տե՛ս Капанцян Гр., Хаїаса-колыбель армян. этногенез армян и их начальная история, Ереван, 1947, с. 157, 202.

²⁰ Տե՛ս Մանանդյան Հ., Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության,-Երկեր, հ.Ա, Երևան, 1977, էջ 62-64:

²¹ Տե՛ս Пиотровский Б., История и культура Урарту, Ереван, 1944, с. 136, 335; նույնի՝ Ванское царство, Москва, 1959, с. 122 и сл.

²² Տե՛ս Меликшвили Г., Наир-Урарту, Тбилиси, 1954, с. 22.

²³ Տե՛ս Дьяконов И., Предыстория армянского народа, Ереван, 1968, с. 188, 238; նույնի՝ История Мидии, Москва-Ленинград, 1956, с. 343, 354-355.

Քսենոփոնի «Արևմտյան Արմենիա»-ն է, իսկ Վանա լճի ավազանում ընկած Հայաստանը՝ «Արմենիա»-ն²⁴:

Ինչպես տեսնում ենք, բոլոր ուսումնասիրողները հարցին փորձել են անդրադառնալ հայ ժողովրդի կազմավորման գործընթացի վերաբերյալ սելիական վարկածների տեսանկյունից, որտեղ հիմնականը հայերի եկվոր լինելու վարկածն է:

Հայաստանը երկու սատրապությունների բաժանելու տեսությունը զարգացնում են Գ. Տիրացյանը և Գ. Սարգսյանը:

Գ. Տիրացյանի կարծիքով, XIII սատրապության կենտրոնը Վանն էր, իսկ XVIII սատրապությանը՝ Էրեբունին: Երկու սատրապությունների սահմանը սկսվում էր Վանա և Ուրմիո լճերի միջև գտնվող շրջանից, այնտեղ, որտեղ Արմենների երկիրը հանդիպում էր Մատիանային ու ընթանում հյուսիսային ուղղությամբ, ապա Հայկական Պարի երկայնքով հասնում Արաքս գետի վերին հոսանքի շրջանները և այնտեղից գնում դեպի հյուսիս²⁵: Գ. Տիրացյանը հին Հայաստանի (մ. թ. ա. VI-IV դարեր) պատմական աշխարհագրության խնդիրներին հիմնականում նույն մոտեցումով անդրադարձել է նաև այլ աշխատություններում²⁶:

Գ. Սարգսյանի կարծիքով ևս, Հայկական լեռնաշխարհը բաժանված է եղել երկու սատրապությունների՝ XIII և XVIII, այն տարբերությամբ, որ XVIII սատրապության ալարոդների տակ միանշանակ պետք է հասկանալ հայերին: XVIII սատրապությունն իր մեջ ներառել է Քսենոփոնի «Արմենիան» (վերջինս Գ. Սարգսյանի մոտ կոչվում է «բուն» Հայաստան, ի տարբերություն «Արևմտյան Արմենիա»-ի՝ XIII սատրապության)²⁷:

²⁴ Տես Երեմյան Ս., Հայկական առաջին պետական կազմավորումները (VII-VI դդ. մ. թ. ա.), «Պատմա-բանասիրական հանդես» (այսուհետև՝ «ՊԲՀ»), 1968, թիվ 3, էջ 109:

²⁵ Տես Տիրացյան Գ., Հայաստանը Աքեմենյան Պարսկաստանի տիրապետության ներքո, «Հայ ժողովրդի պատմություն», ՀԽՍՀ ՉԱ հրատ., Կ. Ա, Երևան, 1971, էջ 450-452:

²⁶ Տես նույնի՝ Երվանդյան Հայաստանի տարածքը (մ. թ. ա. VI դար), «ՊԲՀ», 1980, թիվ 4, էջ 84-95; նույնի՝ Երվանդյան Հայաստանի տարածքը (մ. թ. ա. VI դ. վերջ- մ. թ. ա. III դ. վերջ), «ՊԲՀ», 1981, թիվ 2, էջ 68-84; նույնի՝ Անաբասիսը և Հայաստանը, Անաբասիս, էջ 221-239:

²⁷ Տես Սարգսյան Գ., Պատմահայր Հերոդոտոսը, «Երոդոտոս», էջ 568-578; նույնի՝ Ուրարտական տերությունը և հայերը, «Ուրարտու-Հայաստան», Երևան, 1988, էջ 68-70:

Մ. Դանդամանը հարևանցիորեն նկատում է, որ Դարեհ Ա-ն Մարաստանից առանձնացնում է Հայաստանը՝ որպես ինքնուրույն սատրապություն, իսկ Քսերքսեսի ժամանակ Հայաստանը բաժանվում է երկու սատրապությունների (Արևմտյան և Արևելյան), որոնցից մեկը զբաղեցնում էր նախկին Ուրարտուի տարածքը²⁸:

Ռ. Հյուսընի կարծիքով, Աքեմենյան «Արմինա»-ն տարածվել է Հայկական լեռնաշխարհի կենտրոնական մասում, Մերձեփրատի արևելյան և արևմտյան շրջաններում (Փոքր Հայք, Մելիտինե)՝ հարավում սահման ունենալով Արևելյան և Արևմտյան Տիգրիսների միջև ընկած տարածքը, իսկ Հայկական լեռնաշխարհի արևելյան մասը հատկացնում է Մարաստանի սատրապությանը: Հեղինակի համոզմամբ, Քսենոփոնի ժամանակ այս «Արմինա» սատրապությունը բաժանված էր երկու սատրապությունների՝ Արևմտյան և Արևելյան, որոնց սատրապներն էին Տիրիբազոսը և Օրոնտասը²⁹: Ընդհանրապես, Ռ. Հյուսընը գտնվում է Հ. Մանանդյանի ազդեցության տակ և իր տեսակետները կառուցում է ոչ մանրակրկիտ վերլուծության վրա՝ փորձելով սկզբնաղբյուրների տեղեկություններն ավելի շուտ հաշտեցնել, քան պարզաբանել: Հայկական լեռնաշխարհի արևելյան մասը հատկացնելով մարական սատրապությանը՝ նա փորձում է կոլխերի, սասպեյրների և մարերի բնակության տարածքը մոտեցնել իրար, ինչպես հաղորդում է Հերոդոտոսը:

Ֆ. Տեր-Մարտիրոսովը ևս ընդունում է Հայաստանի բաժանումը երկու սատրապությունների՝ XIII և XVIII (վերջինս ձևավորվել է մ. թ. ա. 484-480 թվականներին), այն տարբերությամբ, որ XVIII սատրապության մեջ ընդգրկում է նաև Վիրքը և Կամբեճանը: Հեղինակը միևնույն ժամանակ Այսրկովկասի հյուսիս-արևելքում տեղադրում է XV սատրապությունը, որը նույնպես ձևավորվում է XVIII սատրապության հետ նույն ժամանակակաշրջանում³⁰:

²⁸ Տե՛ս Дандамаев М., Луконин В., Культура и экономика древнего Ирана, Москва, 1980, с. 111. Այս տեսակետը կիսում է նաև Վ. Բայբուրդյանը (տե՛ս Բայբուրդյան Վ., Իրանի պատմություն, Երևան, 2005, էջ 69):

²⁹ Տե՛ս Hewsen R., The boundaries of Achaemenid "Armina", "Revue des Études Arméniennes", t. XVII, Paris, 1983, p. 123-143.

³⁰ Տե՛ս Тер-Мартиросов Ф., Границы ахеменидских владений в Закавказье (V век до н. э.), «ՊԲՀ», 1998, թիվ 3, էջ 133-142:

Բերված կարծիքները, կարծես թե, դարձել են անժխտելի եզրակացություն; որը երկար տարիներ գերիշխող է եղել պատմագիտության մեջ: Ինչպես երևում է, ուսումնասիրողները պատշաճ ուշադրություն չեն դարձրել «Երոդոտոսի այն տեղեկությանը, որ «յուրաքանչյուր ազգի նա (իմա՝ Ղարեհ Ա-ն-Խ. Հ.) կցեց մերձակա հարևաններին և, բացի այդ, հեռավոր ազգություններին միացրեց այս կամ այն իշխանությանը»³¹: Ուրեմն, պարսից արքունիքի նպատակը եղել է ոչ թե որևէ ժողովրդի վարչական տրոհումը սատրապությունների մեջ, այլ մի քանիսին մեկ վարչական միավորի մեջ ներառելը: Ընդ որում, զարմանալիս այն է, որ ուսումնասիրողների մեծ մասի կարծիքով, նույնիսկ մ. թ. ա III դարում այսբեփրատյան Արմենիան ընդգրկել է միայն Ծոփքը, Աղձնիքը, Տուրուբերանը, Վանա լճի ավազանը և Այրարատի մի մասը³²: Հարկավ, պետք է ուշադրություն հրավիրել այն հանգամանքի վրա, որ «Երոդոտոսի մոտ սատրապությունների թվարկման աշխարհագրական միջավայրի թռիչքածև փոփոխությունները պայմանավորված են սատրապությունների ձևավորման ժամանակագրական հաջորդականությամբ: Քսան սատրապությունների կազմավորումը՝ ըստ ժամանակագրության, կարելի է բաժանել հետևյալ խմբերի: Վարչական վերափոխումների առաջին փուլում ձևավորվել են I-VI սատրապությունները, երկրորդում՝ VII, երրորդում՝ VIII-XI, չորրորդում՝ XII, հինգերորդում՝ XIII, վեցերորդում՝ XIV-XVII, յոթերորդում՝ XVIII-XIX և վերջին փուլում՝ XX՝ հնդկական սատրապությունը:

Ուսումնասիրողների կարծիքները բաժանվում են նաև XIII և XVIII սատրապությունների մեջ մտնող ցեղերի էթնիկական պատկանելության հարցում: Ալարդները հիմնականում նույնացվել են ուրարտացիներին, մարդերը համարվել են իրանական ծագում ունեցող ցեղ, տաոխները՝ խուռիական, սասպեյրները կամ հեսպերիտները, փասիանները, խալդայները (խալուբները)՝ թերևս քարթվելական³³: Հիմնականում

³¹ «Երոդոտոս, III, 89:

³² Տե՛ս Մանանդյան Հ., Զննական տեսություն..., էջ 107-108: Հյուբշման Հ., Հին Հայոց տեղւոյ անունները, թարգմ. Հ. Պիլգիկձեան, Վիեննա, 1907, էջ 16:

³³ Տե՛ս Տիրացյան Գ., Հայաստանը Աքեմենյան Պարսկաստանի տիրապետության ներքո, էջ 455:

քարթվելական են համարվել նաև XIX սատրապության մեջ մտնող ցեղերը (մոսքեր, տիբարեններ, մակրոններ, մոսսինոյկներ, մարեր)³⁴: Միանման կարծիք չկա նաև տվյալ սատրապությունների, հատկապես XVIII-ի մեջ մտնող ցեղերի տեղադրության հարցում: Հենվելով Հերոդոտոսի տեղեկությունների վրա՝ Հ. Մանանդյանը գտնում էր, որ սասպեյրները բնակվել են Կողքիսի և Մարաստանի միջև՝ Ջավախք-Աշոցք-Շիրակ-Արարատյան դաշտ-Շարուր-Նախիջևան ճանապարհի ուղղությամբ, ընդ որում սասպեյրներին համարում է սկյութական ցեղ³⁵: Սասպեյրների այսպիսի տեղադրությունը ընդունում է նաև Ի. Դյակոնովը, որի կարծիքով, սասպեյրները բնակվում էին Այսրկովկասում, ուրարտական արձանագրությունների էթիունի երկրի տարածքում³⁶: Մոտավորապես նույն կարծիքն ունի նաև Գ. Մելիքիշվիլին՝ սասպեյրներին տեղադրելով հարավային Վրաստանից մինչև Արաքսի վերին ու միջին հոսանքները ձգվող շրջաններում: Նա միաժամանակ նրանց է հատկացնում նաև Ճորոխի ավազանը³⁷: Այս դեպքում վրացի ուսումնասիրողը տուրք է տալիս Հերոդոտոսի սասպեյրներին Քսենոփոնի հեսպերիտներին նույնացնելու սխալ տեսակետին:

Հերոդոտոսի հաղորդումներից ելնելով՝ հայագետների և արևելագետների մեծ մասը XVIII սատրապության մատիեններին տեղադրում է Կապուտան (Ուրմիո) լճի ավազանում: Գոյություն ունի մեկ ուրիշ կարծիք ևս, ըստ որի սասպեյրների հարևան մատիեններին փնտրելու ենք Արաքսի վերին հոսանքի շրջանում³⁸:

XIX սատրապության մեջ մտնող ցեղերի տեղադրությունը, բացառությամբ որոշ դեպքերի (հատկապես մարերի և մոսքերի), ճշգրտվում է առավել վստահելի հավանականությամբ:

³⁴ Стен Доватур А., Каллистов Д., Шишова И., Народы нашей страны в «Истории» Геродота (այսուհետև՝ Д. К. Ш.), Москва, 1982, с. 178, прим. 24; с. 185, прим. 43; с. 198, прим. 105-111.

³⁵ Стен Мананджян Հ., Հին Հայաստանի և Անդրկովկասի պատմության մի քանի պրոբլեմների մասին, Երկեր, հ. Ե, Երևան, 1984, էջ 273-274:

³⁶ Стен Дьяконов И., Предыстория армянского народа, էջ 192, 240:

³⁷ Стен Меликшвили Г., К истории древней Грузии, Тбилиси, 1959, с. 232.

³⁸ Стен Хазарадзе Н., К вопросу о локализации матиенов в свете древнегреческих источников VI-V вв. до н. э., «ՊԲՀ», 1973, թիվ 2, էջ 200-210; նույնի՝ Гекатеевы матиены, «Вопросы древней истории» (Кавказско-ближневосточный сборник, IV), Тбилиси, 1973, с. 111-119.

Մեր աշխատանքի ընթացքում լայնորեն օգտագործել ենք Բ. Հարությունյանի XVIII սատրապության տեղադրությանը նվիրված ուսումնասիրությունը³⁹, որը հանդիսանում է, մեր կարծիքով, բավականին հիմնավոր աշխատություն խնդրո առարկայի վերաբերյալ: Ուսումնասիրությունը հիմնված է անտիկ սկզբնաղբյուրների պատմաաշխարհագրական հաղորդումների մանրակրկիտ վերլուծության վրա: Մենք կիսում ենք հեղինակի XVIII սատրապության տեղադրության տեսակետը, որն իր հերթին, ելնելով խնդրո նյութի շրջանակներից, մեզ հանգեցրել է որոշակի եզրակացությունների, որոնք կարևոր նշանակություն ունեն Աքեմենյան ժամանակաշրջանի Հայաստանի և Այսրկովկասի պատմաաշխարհագրական բնույթի խնդիրների պարզաբանման համար: Քննության ընթացքում օգտագործել ենք Բ. Հարությունյանի այլ աշխատությունները ևս, որտեղ կարևոր դիտողություններ կան Հայաստանի, Սև ծովի հարավարևելյան շրջանների և Այսրկովկասի պատմական աշխարհագրության ու պատմության վերաբերյալ: Հեղինակի տեսակետներին մենք ավելի մանրամասն կանդրադառնանք հետագոտության ընթացքում:

Այսրկովկասի Աքեմենյան տիրապետության ժամանակաշրջանի պատմությունը ուսումնասիրության առարկա է դառնում նաև Ադրբեջանում: Վերջերս Ադրբեջանում հրատարակվեց Ռ. Մելիքովի «Ադրբեջանի էթնիկական պատկերը Աքեմենյան տիրապետության ժամանակաշրջանում (մ. թ. ա. VI-IV դդ.)»⁴⁰ աշխատությունը, որտեղ հեղինակը խեղաթյուրում է փաստերը և նենգափոխում պատմությունը:

Վերոհիշյալ ուսումնասիրողներից բացի, այլևայլ հարցերի կապակցությամբ, օգտագործել ենք Ա. Քոսյանի⁴¹, Ս.

³⁹ Տես Հարությունյան Բ., Աքեմենյան Պարսկաստանի XVIII սատրապության տեղադրության շուրջ, -«Հանդես Ամսօրեայ», Վիեննա, 1999, թիվ 1-12, էջ 45-114:

⁴⁰ Տես Мелков Р., Этноическая картина Азербайджана в период ахеменидского владычества (VI-IVвв. до н. э.), Баку, 2003.

⁴¹ Քոսյան Ա., Տուն Թորգոմայ, Երևան, 1998; նույնի՝ Մերձավորարևելյան ճգնաժամը և Հայկական լեռնաշխարհը, Երևան, 1999; նույնի՝ «Արևելյան» և «արևմտյան» մուշկերի խնդիրը, -«ՊԲՀ», 1996, թիվ 1-2, էջ 207-220; նույնի՝ Արամ նահապետը Կապադոկիայում (Մի վարկածի առթիվ), -«ՊԲՀ», 1999, թիվ 1, էջ 237-259:

Կրկյաշարյանի⁴², Ա. Հակոբյանի⁴³, Հ. Կարազոյանի⁴⁴, Ս. Պետրոսյանի⁴⁵, Ի. Պյանկովի⁴⁶, Ե. Հերցֆելդի⁴⁷, Ս. Ինաձեի⁴⁸, Տ. Միքելաձեի⁴⁹ և այլոց աշխատությունները:

⁴² Տես Կրկյաշարյան Ս., Հին Հայաստանի պետական կառուցվածքը (մ. թ. ա. VI-մ. թ. IV դդ.), Երևան, 2005; նույնի՝ Հին Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների պատմության դրվագներ, Երևան, 1970; նույնի՝ К интерпретации некоторых сведений древнегреческих авторов об Армении, «Проблемы античной истории и культуры», I, Ереван, 1979, с. 128-134.

⁴³ Տես Акопян А., Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, Ереван, 1987; նույնի՝ Կասպերի և Կասպիանա (Կասպք) մարզի տեղադրության մասին, «Հ ՉԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» (այսուհետև՝ «ԼՀԳ»), 1983, թիվ 1, էջ 87-99; նույնի՝ Գարգարացիները ըստ սնտիկ և հայկական սկզբնաղբյուրների, «ՊԲՀ», 1982, թիվ 4, էջ 116-130:

⁴⁴ Տես Կարազոյան Հ., Սեպագիր տեղանուններ (Այրարատում և հարակից նահանգներում), Երևան, 1998; նույնի՝ Արևելյան Հայաստանի ուրարտական տեղանունները, «ԼՀԳ», 1978, թիվ 10, էջ 55-76; նույնի՝ Проблема этногенеза и самоназвания армянского народа по клинописным источникам, «ԼՀԳ», 1988, թիվ 7, էջ 57-76:

⁴⁵ Տես Պետրոսյան Ս., Ղատերը և եռադատության դրսևորումները հին Հայաստանում, Երևան, 2006; նույնի՝ Ղաղարշիշի գորաբանակի նահանջի երթուղին, «ՊԲՀ», 1982, թիվ 3, էջ 151-164; նույնի՝ Հացագգիների մշակության և պաշտամունքի արտացոլումը Շարայի ավանդազրույցում, «ՊԲՀ», 1981, թիվ 3, էջ 187-204; նույնի՝ Հին թրական էթնիկական տարրը հնագույն Վանանդում, «ԼՀԳ», 1977, թիվ 8, էջ 32-41 և այլն:

⁴⁶ Տես Пьянков И., Сведения Ктесия о владениях Бардии на востоке Ирана, «ВДИ», 1961, թիվ 4, էջ 98-103; նույնի՝ «История Персии» Ктесия и среднеазиатские сатрапии Ахеменидов в конце Vв. до н. э., «ВДИ», 1965, թիվ 2, էջ 35-50:

⁴⁷ Տես Herzfeld E., The Persian Empire. Studies in Geography and Ethnography of the Ancient Near East, Wiesbaden, 1968.

⁴⁸ Տես Инадзе М., О времени образования Колхидского царства по данным древнегреческих авторов, «Вопросы древней истории» (Кавказско-ближневосточный сборник, IV), Тбилиси, 1973, с. 156-169.

⁴⁹ Տես Микеладзе Т., К вопросу о периодизации истории древней Колхиды, «Вопросы древней истории» (Кавказско-ближневосточный сборник, IV), Тбилиси, 1973, с. 126-155.

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ԱՔԵՄԵՆՅԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ XIII
ՍԱՏՐԱՊՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԸ ԵՎ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Մ. թ. ա. 522 թվականի սեպտեմբերի 29-ին¹ պետական հեղաշրջման հետևանքով սպանվում է Գաուժատա մոզը, և գահին տիրանում է Դարեհ Վշտասպորդին: Եթե Կյուրոս Մեծի օրոք Պարսկաստանի պետության և Հայաստանի փոխհարաբերությունները, թերևս, ավելի շուտ դաշնակցային էին, քան ենթակայական, որտեղ վերջինս հանդես էր գալիս կրտսեր դաշնակցի դերում², ապա Դարեհի վարչական վերափոխումների արդյունքում Հայաստանը վերածվում է առանձին սատրապության՝ զբաղեցնելով հերոդոտյան ցուցակում XIII տեղը:

Հայագիտության մեջ բավական արմատացած է այն տեսակետը, թե Հայաստանի տարածքում գտնվել են XIII և XVIII սատրապությունները: Սակայն վերջերս հիմնավոր տեսակետ հայտնվեց, որի համաձայն Հայաստանը բաժանված չի եղել XIII և XVIII սատրապությունների, և որ վերջինս տարածվել է Կուր գետի և Կովկասյան լեռների միջև³: Լիովին կիսելով այդ տեսակետը, թե Հայաստանը ամբողջությամբ մտել է XIII սատրապության մեջ⁴, սույն ուսումնասիրության մեջ կփորձենք սկզբնաղբյուրների համակողմանի և համադրական քննությամբ ճշգրտել XIII

¹ Տե՛ս Бикерман Э., Хронология древнего мира, Москва, 1975, с. 193, Բայբուրդյան Վ., նշվ. աշխ., էջ 41:

² Տե՛ս Հարությունյան Բ., Հայաստանի, հայ-իրանական հարաբերությունների և Առաջավոր Ասիայի հնագույն պատմության մի քանի խնդիրների շուրջ (մ. թ. ա. VII-VI դդ.), Երևան, 1998, էջ 89:

³ Տե՛ս Հարությունյան Բ., Աքեմենյան Պարսկաստանի XVIII սատրապության տեղադրության շուրջ, էջ 45-112:

⁴ Սատրապության հաստատության և Աքեմենյան կայսրության վարչական համակարգի մասին տե՛ս Фраў П., Наследие Ирана, Москва, 1972, с. 149 и сл., Дандамаев М., Луконин В., նշվ. աշխ., էջ 108-127; Турацян Г., Некоторые аспекты внутренней организации армянской сатрапии, «ՊԲՀ», 1972, թիվ 2, էջ 99-116; Բայբուրդյան Վ., նշվ. աշխ., էջ 69-70; Խորիկյան Հ., Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանումների շուրջ, Երևան, 2010:

սատրապության սահմանները Աքեմենյան տիրապետության շրջանում:

Սկզբնաղբյուրների մեջ իր ուրույն տեղն ունի Պատմահայր Հերոդոտոսի «Պատմություն»-ը, որն արժեքավոր տեղեկություններ է հաղորդում խնդրո առարկայի վերաբերյալ: Պատմիչը գրում է. «Պակտյուիկեից⁵, արմեններից և հարևաններից մինչև Եվքսիյանը ստացվում էր չորս հարյուր տաղանդ. սա տասներեքերորդ նահանգն էր»⁶:

Քննությունը սկսենք Պակտյուիկեից և փորձենք պարզել, թե ինչ երկիր կամ շրջան է Պակտյուիկեն: Պատմահայրը Պակտյուիկե անունով երկիր և պակտյուացիներ (*πακτυες*) անունով ժողովուրդ հիշատակում է ներկայիս Աֆղանստանի տարածքում⁷:

Պակտյուիկեն պատմագիտական գրականության մեջ փորձել են նույնացնել կամ Խուբուշիայի հետ⁸, կամ Կորդուքի հետ⁹, կամ էլ տեղադրությունը համարել են անորոշ և թողել հետագա ուսումնասիրողներին¹⁰: Պակտիների անունը, ըստ Ն. Ադոնցի,

⁵ Պակտյուիկեից - από Πακτυκίης, մյուս ձեռագիր ընթերցումը Πακτυκίης (տե՛ս Դ. Կ. Ա., էջ 96, 195, ժանոթ. 94):

⁶ Հերոդոտոս, III, 93: Herodotus, III, 93, p. 121.

⁷ Տե՛ս Հերոդոտոս, III, 102, IV, 44, VII, 68: Պակտյուացիների հետ կապված նշենք, որ Քսերքսեսի բանակում կռվող ժողովուրդների թվում հիշատակվող արմենները հանդես չեն գալիս այսպես կոչված պակտյուացիների հետ, իսկ սատրապությունների ցուցակում, ընդհակառակը, չկա Աֆղանստանի տարածքում գտնվող Պակտյուիկեն: Երկար ժամանակ մասնագիտական գրականության մեջ տարածված է եղել այն կարծիքը, որ պակտյուացիները եղել են աֆղանների նախնիները, սակայն պակտյուացիներին փաշտունների հետ կապելը սխալ է (տե՛ս Грантовский Э. А., Из истории восточноиранских племен на границах Индии, - "Краткие сообщения института народов Азии", 61, Москва, 1963, с. 10): Կարծիք կա, որ չինական աղբյուրում հիշատակված Պուդո տեղանունը թերևս կապված է պակտիների էթնանվան հետ (տե՛ս Литвинский Б. А., Древние кочевники «Крыши мира», Москва, 1972, с. 164):

⁸ Տե՛ս Երեմյան Ս., Հայկական առաջին պետական կազմավորումները, էջ 92, 111:

⁹ Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. I, էջ 424:

¹⁰ Տե՛ս Մանանդյան Հ., Քննական տեսություն..., էջ 61: Կարծիք է հայտնվել նաև, որ XIII սատրապության կազմում հիշատակված Պակտյուիկեն իրականում աշխարհագրորեն գտնվել է Հնդկաստանի հարևանությամբ, չնայած վարչական առումով միացված է եղել XIII սատրապությանը (տե՛ս Грантовский Э., Сагартии и XIV округ государства Ахеменидов по списку Геродота (III, 93), - "Краткие сообщения института народов Азии", 46, Москва, 1962, с. 233, 235, 241), ինչը սխալ է:

պահել է արևելյան Տիգրիսի վրա գտնվող այժմյան Բոհտանը. կա նաև քրդական բոհտու ցեղ¹¹: Ի. Խլոպինը պակտիներին տեղադրում է հարավային Այսրկովկասի և Հյուսիսային Միջագետքի միջև¹²: Մ. Կատվայանի կարծիքով, Պակտիկե, Կատպատուկա, Կապուտկե (Սեբեոսի մոտ-Խ. Հ.), Կատաոնիա անունները վերաբերում են միևնույն երկրին, որը տարածվում է Հայաստանի եփրատյան սահմանից արևմուտք (ուրեմն Եփրատից արևմուտք գտնվող Փոքր Հայքը Հայաստան չէ՞ր - Խ. Հ.), Բուն, Մեծ կամ Առաջին Կապադովկիայից արևելք, Կիլիկիա սատրապությունից հյուսիս և Եվքսիանյան Պոնտոսից հարավ¹³: Ուսումնասիրողներից Պակտյուիկե երկրի տեղադրության վերաբերյալ ուշագրավ տեսակետ է առաջադրել Բ. Հարությունյանը: Վերջինիս քննության համաձայն, մ. թ. ա. 625 թվականից հետո Արամ-Արամանի-երիմենան գրավում է Կապադովկիայի արևելյան շրջանները, որոնք այդ վաղնջական ժամանակներում «Պատուկա» կամ թերևս «Պակտուկա» էին կոչվում և նույնանուն էին Մովսես Խորենացու «Պռոտին Արմենիա»-ին¹⁴: Չնայած պատմագիտության մեջ¹⁵ Արամ

¹¹ Տե՛ս Արոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 438; Алиев И., Очерк истории Атропатены, Баку, 1989, с. 13.

¹² Տե՛ս Хлопин И., Этнография державы Ахеменидов по Геродоту, «Страны и народы Востока», Москва, 1969, вып. 8, с. 288 и сл.

¹³ Տե՛ս Կատվայան Մ., Աքեմենյան աշխարհակալության 13-րդ և 18-րդ սատրապությունները, «ԼՀԳ», 1976, թիվ 7, էջ 93:

¹⁴ Տե՛ս Հարությունյան Բ., Հայաստանի, հայ-իրանական հարաբերությունների..., էջ 78-79: Տե՛ս նաև նույնի՝ Թոգարամա երկիրը և Հայկանները, «Աստվածաշնչական Հայաստան», Երևան, 2005, էջ 128-145: Կարևոր է նաև Մովսես Խորենացու այն տեղեկությունը, որ Տիգրանը զորք է ժողովում նաև «ի սահմանացն Կապադովկացոց»: Սա կարող է վերաբերել միայն Տիգրան Երվանդյանին (տե՛ս Մովսես Խորենացի, էջ 81):

¹⁵ Քոչյան Ա., Արամ նահապետը Կապադովկիայում, էջ 237-259: Ուսումնասիրողը, հենվելով սեպագիր և անտիկ աղբյուրների մանրամասն քննության վրա, գտնում է, որ Խորենացու կողմից Արամ նահապետի համար նկարագրված ժամանակաշրջանը առավել իրական է արևելափոքրասիական Մելիթ թագավորության համար, որը մ. թ. ա. VII դարում պետական ուժեղ միավորում էր և հաջողությամբ դիմագրավում էր Ասորեստանին, Լիդիային և սկյութներին: Ըստ հեղինակի՝ Մելիթի թագավորությունը (=Տուն Թորգոմայ), հայկական էթնոսի ձևավորման կարևորագույն կենտրոններից մեկն էր (այս մասին մանրամասն տե՛ս նաև Քոչյան Ա., Տուն Թորգոմայ, Երևան, 1998): Ուստիև, «Տուն Թորգոմայ» երկիրը կազմեց Սատրապական Հայաստանի անբաժանելի մասը (տե՛ս ստորև):

նահապետի ռազմաքաղաքական գործունեության հարցը Կապադովկիայում համարվել է կասկածելի, այդուհանդերձ, հենվելով սույն տեսակետի որոշ դրույթների վրա՝ փորձենք պատասխանել մեր իսկ կողմից առաջադրած մի քանի հարցադրումների, որոնք ժամանակագրական առումով կապվում են ավելի ուշ շրջանի պատմաաշխարհագրական իրողությունների հետ և արտացոլում են մ. թ. ա. VI-IV դարերի իրադրությունը:

XIII սատրապության արևմտյան և հարավային սահմանների քննության համար դիմենք պարսից «արքայական ճանապարհի» երթուղու այն հատվածի. քննությանը, որն անմիջականորեն առնչվում է Հայաստանին և նրան հարևան երկրներին: Պատմահոր վկայությամբ Փռյուզիայից հետո «Կապադովկիա մտնելով, ճանապարհը ձգվում է մինչև Կիլիկիայի սահմանը քսանութ կայան՝ հարյուր չորս փարսախ: Այս սահմանում անհրաժեշտ է անցնել երկու դրունք և կողանցել երկու պահակակետ: Դրանք անցնելուց հետո Կիլիկիայի միջով ճանապարհը ձգվում է երեք կայան՝ տասնհինգ և կես փարսախ: Կիլիկիայի և Արմենիայի սահմանը *նավարկելի գետն է* (ընդգծումը մերն է-Խ. Հ.)՝ անունը Եփրատ: Արմենիայում հիսունվեց ու կես փարսախ տարածության վրա կա տասնհինգ կայան իջևանատներով, այնտեղ կա նաև պահակակետ: Այս Արմենիայից ճանապարհը մտնում է Մատինեն, որտեղ կա երեսունչորս կայան, հարյուր երեսույոթ փարսախի վրա: Այս երկրի միջով հոսում են չորս նավարկելի գետեր, որոնք անհրաժեշտ է նավով անցնել: Այդ գետերից առաջինը Տիգրիսն է. երկրորդը և երրորդը համանուն են, բայց նույն գետերը չեն և նույն վայրից չեն բխում, քանզի հիշյալ գետերից առաջինը բխում է Արմենիայից, իսկ երկրորդը՝ Մատինենից: Չորրորդ գետը կոչվում է Գյունդես, որը Կյուրոսը բաժանել էր երեք հարյուր վաթսուն ջրանցքների: Այս երկիրն անցնելուց հետո ճանապարհը մտնում է Կիսսիյան երկիրը...»¹⁶: Այս վկայության մեջ հանդիպող ժողովուրդները հիշատակվում են նաև մեկ այլ կապակցությամբ, երբ Միլետի տիրան Արիստագորասը ցույց է տալիս պղնձե տախտակի վրա փորագրված երկրի ուրվագիծը և հերթով մատնանշում այն ժողովուրդներին, որոնք բնակվել են իրար հարևանությամբ:

¹⁶ Հիրոդոտոս, V, 52; Herodotus, V, 52, p. 56-59; Геродот, с. 253.

Հոնիացիներից հետո նշվում են ցուդիացիները, որոնցից հետո «դեպի արևելք բնակվում են փոյուզները, որոնք ինձ հայտնի բոլոր մարդկանցից առավել հարուստ են իրենց հոտերով և բարեբեր հողերով: Նրանց հաջորդում են կապադովկիացիները, որոնց մենք անվանում ենք սյուրիացիներ: Սրանց սահմանակից են կիլիկեցիները, որոնք տարածվում են մինչև այն ծովը, որտեղ գտնվում է Կիպրոս կղզին: Սրանք արքային տալիս են տարեկան հինգ հարյուր տաղանդ հարկ: Այստեղ կիլիկեցիներին հաջորդում են արմենները, որոնք նույնպես առատ հոտեր ունեն. արմեններից հետո, ահա այստեղ, բնակվում են մատիենները: Հաջորդը, ահա, Կիսսիա երկիրն է, որտեղ Քոասպես գետի վրա գտնվում է ահա Սուսա (քաղաքը), որտեղ ապրում է մեծ արքան և որտեղ գտնվում են նրա գանձերը»¹⁷:

Քննությունը նախ սկսենք Հայաստանի երկու հարևան երկրներից՝ Կիլիկիայից և Կապադովկիայից, և փորձենք պարզել նրանց աշխարհագրական սահմանները: IV կամ Կիլիկյան սատրապության արևմտյան սահմանը ճշգրտվում է բավական հեշտությամբ, քանի որ վերջինս այդ ուղղությամբ սահմանակից էր I սատրապությանը¹⁸, և երկու սատրապությունների միջև ընդհանուր սահմանը եղել է Կիլիկյան Տավրոսի ծայր արևմտյան հատվածը: Կիլիկյան սատրապության բնական սահմանը հյուսիսում Կիլիկյան Տավրոսն էր և Անտիտավրոսի հարավային լեռնաճյուղերը: Ինչպես նշում է Հերոդոտոսը, հարավում Կիլիկիայի և Սիրիայի սահմանը Պոսիդեյոն քաղաքն էր¹⁹, որը Լաոդիկեայից հյուսիս գտնվող Պոսիդիոնն է՝ Կասիոս լեռից (Ջեբել Աքրա) հարավ: Բավականին հակասական և կցկտուր են Հերոդոտոսի տեղեկությունները Կիլիկյան սատրապության հյուսիսարևելյան սահմանների մասին (տե՛ս վերևում V, 49, V, 52 վկայությունները): Մոտավորապես պարզելով Կիլիկյան սատրապության սահմանները՝ այժմ տեսնենք, թե ինչ տարածք է ընդգրկել Կապադովկիան, որը հարցիս քննության համար կարևոր նշանակություն ունի: Հերոդոտոսի հավաստմամբ՝ կապադովկիացիները այլ ազգերի հետ միասին կազմել են առանձին սատրապություն.«Դեպի ներս նավարկելիս

¹⁷ Հերոդոտոս, V, 49; Herodotus, V, 49, p. 52-53; Геродот, с. 252.

¹⁸ Հերոդոտոս, III, 90:

¹⁹ Անդ, III, 91:

աջակողմյան հելեսպոնտոսցիներից, փռյուզիացիներից, Ասիայի թրակացիներից, պափլագոնացիներից, մարիանդիներին և սիրիացիներից (իմա՝ կապադովկիացիներ-ևս. Հ.) (ստացվող) հարկերեք հարյուր վաթսուն տաղանդ. այս նահանգը երրորդն էր»²⁰: Քսերքսեսի հունական արշավանքին այս սատրապության ազգերը մասնակցում են հետևյալ կերպ. «Պափլագոնացիներն արշավում էին զուխներին հյուսկեն սաղավարտ դրած, փոքր վահաններով և ոչ մեծ նիզակներով, ինչպես նաև տեգերով ու դաշույններով: Ոտներին նրանք հագած էին տեղական կոշիկներ, որոնք հասնում էին մինչև սրունքի կեսը: Լիզիացիների, մատիենների, մարիանդիների և սիրիացիների (իմա՝ կապադովկիացիներ-ևս. Հ.) հանդերձանքը նույնական էր պափլագոնականի հետ: Այս սիրիացիներին պարսիկներն անվանում են կապադովկիացիներ: Պափլագոնացիներին և մատիեններին առաջնորդում էր Դոտոսը՝ Մեգասիդոսի որդին, իսկ մարիանդիներին, լիզիացիներին և սիրիացիներին առաջնորդում էր Դարեհի և Արտյուստոնեի որդի Գոբրյուեսը: Փռյուզացիներն ունեին պափլագոնականին շատ նման հանդերձանք՝ քիչ տարբեր դրանից... Արմենները ևս, լինելով փռյուզիական վերաբնակիչներ, զինված էին փռյուզների նման: Այս երկուսին առաջնորդում էր Արտոքմեսը, որն ամուսնացել էր Դարեհի դստեր հետ»²¹: Կապադովկիացիները սիրիացիներ են անվանվում նաև մեկ այլ հատվածում. «Կապադովկիացիներին հելլեններն անվանում են սիրիացիներ: Այս սիրիացիները նախքան պարսկական տիրապետությունը հպատակ էին մեդացիներին, իսկ այդ ժամանակ՝ Կյուրոսին»²²: Նաև՝ «Հալյուս գետը հոսում է հարավից հյուսիս, սիրիացիների (իմա՝ կապադովկիացիներ-ևս. Հ.) և պափլագոնացիների երկրի միջով և դուրս գալիս Եվքսինոս կոչված Պոնտոսը»²³:

Կապադովկիայի Պտերիա կոչված վայրը գտնվել է Սինոպե քաղաքին մոտ²⁴, ուրեմն նրանք տարածվել են Հալիսից արևմուտք: Հերոդոտոսի տեղեկություններից մեկի համաձայն, սիրիացիներն

²⁰ Անդ., III, 90:

²¹ Հերոդոտոս, VII, 72, 73; Herodotus, VII, 72, 73, p. 382-385.

²² Հերոդոտոս, I, 72:

²³ Անդ., I, 6:

²⁴ Անդ., I, 76:

ապրել են Թերմոդոնտ և Պարթենիոս (ներկայիս՝ Բարթին-սուն կամ Կոչա-Իրմակը) գետերի մոտ²⁵: Կապադովկիացիները տարածվել են Պափլագոնիայից արևելք: Ըստ Հերոդոտոսի, Սինոպեն գտնվել է Պափլագոնիայի կազմում²⁶: Ըստ Ստրաբոնի, Հալիսը պափլագոնացիների և լևկոսիրիացիների սահմանն էր, որոնց պատկանում էր Ամիսոսը²⁷: Պլուտարքոսը գրում է, որ Սինոպեն պատկանել է սիրիացիներին²⁸: Դատելով Ստրաբոնի տեղեկություններից՝ սիրիացիները միաժամանակ բնակվել են Սինոպեում և նրա շրջակայքում²⁹: Սկզբնաղբյուրների տարաբնույթ տեղեկություններից կարելի է եզրակացնել, որ Հալիսը Պափլագոնիայի և Կապադովկիայի համար հանդիսացել է վարչական և ոչ թե էթնիկական սահման, և երկու կողմից էլ հնարավոր էին էթնիկական փոխներթափանցումներ՝ Հալիսից արևելք և արևմուտք: Հեկատեոսի մոտ պահպանվել է կարևոր տեղեկություն.«Խաղիսիան լևկոսիրիացիների քաղաքն է» և «Թեմիսկյուրեն դաշտ է Խաղիսիայից մինչև Թերմոդոնտ»³⁰: Ըստ Ստրաբոնի, Թեմիսկյուրեի դաշտը գտնվել է Թերմոդոնտ և Իրիս գետերի միջև, ծովափից մինչև Պոնտական լեռներ: Թեմիսկյուրեին արևելքից սահմանակցել է Սիդենեն (Պոլեմոնիոն, ներկայիս Բոլամանը)³¹: Համեմատելով Ստրաբոնի վկայությունը Հեկատեոսի տեղեկությունների հետ՝ կտեսնենք, որ Խաղիսիան պետք է տեղադրվի Իրիս գետից արևմուտք, հակառակ դեպքում, եթե տեղադրենք Թերմոդոնտից արևելք, ապա Իրիսի և Թերմոդոնտի միջև ընկած տարածքը կհայտնվի Թեմիսկյուրեի հարթավայրից դուրս, որը հակասում է Ստրաբոնի տվյալներին: Մեզ համար կարևորն այն տեղեկությունն է, որ Կապադովկիան հյուսիս-արևելքում հասել է մինչև Թերմոդոնտ գետը: Պոմպեոս Տրոգոսի վկայությամբ Կապադովկիան նույնպես հասել է մինչև Թերմոդոնտ³²: Դրանց գալիս է ավելանալու մի շատ արժեքավոր

²⁵ Անդ, II, 104:

²⁶ Անդ, I, 6, 72:

²⁷ Стрaboн, XII, III, 9, 12.

²⁸ Стрaboн, Плутарх, Лукулл, XXIII, - Избранные жизнеописания, Т. II, Москва, 1987.

²⁹ Стрaboн, XII, III, 5.

³⁰ ИДПСК, -«ВДИ», 1947, №1, т. 301:

³¹ Стрaboн, XII, III, 15, 16.

³² Стрaboн ИДПСК, -«ВДИ», 1949, №1, т. 251:

տեղեկություն: Համաձայն էսքյուլոսի Սքոլիաստի, Թեմիսկյուրեն էսքյուլոսի մոտ տեղանքի անվանում է Հայաստանում կամ գետ է: Ըստ Սքոլիաստի, քաղաք է Սկյութիայում³³: Որպես գետ՝ Թեմիսկյուրեն Թերմոդոնտն է, իսկ որպես Սկյութիայի քաղաք՝ նկատի ունենանք, որ XIX սատրապության տարածքը և ցեղերը անտիկ հեղինակների կողմից ընդհանրապես ընկալվել են Սկյութիա:

Աղբյուրների հավաստմամբ, Թերմոդոնտը սկիզբ է առել Հայկական լեռնաշղթայից (Ամազոնական լեռներից-Խ. Հ.)³⁴: Ըստ Ապոլլոնիոսի «Արգոնավորդների արշավը» սքոլիայի, Մետրոդորոս Սկեպասցին հաղորդում է, որ Թերմոդոնտը կոչվել է Արաքս³⁵:

Հետևաբար, դժվար չէ եզրակացնել, որ Կապադովկիայի սահմանը հյուսիս-արևելքում եղել է Թերմոդոնտը, որից արևմուտք արդեն սպիտակ ստորինների կամ կապադովկիացիների հողերն էին: Հարավում կապադովկիացիները չեն տարածվել Հալիսից հարավ: Սակայն ինչպես կտեսնենք ստորև, արդեն մ. թ. ա. V դարում Կապադովկիան հարավային ուղղությամբ տարածվել էր Հալիսից բավականաչափ հարավ և հարավ-արևելք:

Պատմահայր Հերոդոտոսի՝ մեր կարծիքով մի շատ կարևոր տեղեկությունը կարող է լուրջ թյուրիմացությունների տեղիք տալ, եթե ճիշտ չընկալվի և չքննարկվի կոնկրետ մ. թ. ա. V դարի իրողության համատեքստում: Այսպես, Պատմահայրը գրում է «Մեդական տերության և յուդիական տերության միջև սահմանը Հայկոս գետն էր, որը *հոսում է Հայկական լեռներից Կիլիկիայի միջով* (ընդգծումը մերն է - Խ. Հ.), այնուհետև (հոսում է) աջից մատիեններին, և [ծախից]՝ ախյակից փոյուգիացիներին ունենալով: Անցնելով այս երկրները և հոսելով վեր՝ դեպի հյուսիս՝ այն բաժանում է կապադովկյան սիրիացիներին՝ աջում, սլավիլագոնացիներից՝ ձախում: Այսպիսով, Հայկոս գետը կտրում է Ասիայի ամբողջ ստորին մասը՝ Կիպրոսին հանդիպակաց ծովից դեպի Եվքսինյան Պոնտոսը: Սա այդ ամբողջ երկրի (ամենանեղ) սլավրանոցն է, և լավ քայլող մարդուց այդ ճանապարհը հինգ օր

³³ Անդ.-«ВДИ», 1947, թիվ 1, էջ 307:

³⁴ Անդ.-«ВДИ», 1949, թիվ 4, Ռուփոս Փետտոս Ավիենոս, էջ 242; Պրիսկիանոս, էջ 303:

³⁵ Անդ.-«ВДИ», 1947, թիվ 3, էջ 293:

կխլի»³⁶: Պատմագիտական գրականության մեջ իշխում է այն տեսակետը, թե՛ կիլիկեցիները բնակվել են Կեսարիա-Մաժակի շրջանում³⁷: Սակայն, ինչպես տեսանք, մեջբերված հատվածում խոսվում է ոչ թե կիլիկեցիների, այլ Կիլիկիայի մասին, որը աշխարհագրորեն լիովին տարբերվում է Կիլիկիա սատրապությունից, և ոչ մի հիմք չկա Կիլիկյան սատրապության սահմանը հյուսիսում հասցնել այդքան հեռու: Պատմահոր տվյալ վկայությունում Կիլիկիան աշխարհագրական և վարչական առանձին միավոր է, որն իրապես տարածվել է Կեսարիա-Մաժակի շրջանում³⁸: Այս իրողությունից հրաժարվել կամ անտեսել նշանակում է ճիշտ չըմբռնել նաև Պատմահոր մնացած վկայությունները, որոնք տրամաբանական ամբողջություն են կազմում: Հերոդոտոսը «արքայական ճանապարհի» մասին գրելիս նշում է, որ ճանապարհի մի հատվածը Կապադովկիայից հետո շարունակվել է Կիլիկիայով, և Կիլիկիայով (IV կամ Կիլիկյան սատրապություն) անցնող հատվածը ունեցել է ընդամենը 15,5 փարսախ (շուրջ 90 կմ) երկարություն: Փաստորեն, եթե մենք ևս մի պահ ընդունենք, որ Կապադովկիան և Կիլիկիան սահմանակցել են Կեսարիա-Մաժակի շրջանում, ապա այս դեպքում լիովին կանտեսենք Պատմահոր այն շատ հստակ ցուցումը, որ ճանապարհը Կիլիկիայից հետո մտել է Հայաստան և, ամենակարևորը, Եփրատը եղել է Կիլիկիայի և Հայաստանի սահմանը: Հետևաբար, ճանապարհի՝ Կիլիկյան սատրապությունով անցնող հատվածի մեկնակետը եթե սկսենք Կեսարիա-Մաժակից, ապա հատվածի այդ փոքր երկարությունը (շուրջ 90 կմ) ոչ մի դեպքում չի հասնի Եփրատ: Սակայն պարսից «արքայական ճանապարհի» երթուղին ուղեգծելու համար ուսումնասիրողները կատարել են կամայական պատմաաշխարհագրական վերածնունդներ: Այսպես, որոշ ուսումնասիրողներ, այդ թվում և Հ. Մանանդյանը, հենվելով Հերոդոտոսի տեղեկության վրա (V, 52),

³⁶ Հերոդոտոս, I, 72: Հմմտ. Геродот, I, 72. Herodotus, I, 72, p. 86-89.

³⁷ Տե՛ս Хазарадзе Н., Гекатеевы матриены, էջ 113:

³⁸ Հետաքրքիր է, որ Պատմահոր վկայությամբ Հալիսը հոսել է «Կիպրոսին հանդիպակաց ծովից դեպի Եվքսինյան Պոնտոսը»: Միգուցե Հերոդոտոսը Սարոսը (Փսարոս) իր վերին հոսանքի շրջանից դիտել է որպես Հալիս գետի շարունակություն, մանավանդ, Սարոսի վտակներից մեկը կոչվել է Ալեուս կամ Ալավս, որն իրապես կարող էր անվանական տեսանկյունից նման նույնացման հանգեցնել:

Մելիտինեն համարում էր Կիլիկիայի մաս³⁹, դրանով Կիլիկյան սատրապությանը հյուսիս-արևելքում հատկացնելով ահռելի տարածքներ:

Ընդհանրապես, պարսից տերությանը նվիրված պատմաաշխարհագրական որոշ քարտեզներում «արքայական ճանապարհի» Կապադովկիայով անցնող հատվածի կարևոր կայաններից մեկը նշված է Պոնտոսի Կոմանան, որտեղից ճանապարհը անցնում էր Հալիսը և հասնում Մելիտինե, որը Կիլիկիայի մասն էր համարվում: Ծանապարհի նման երթուղու դեպքում Հայաստանը փաստորեն զրկվում էր Եփրատից արևմուտք ընկած իր տարածքներից (հետագա Փոքր Հայքի տարածքը), որը լիովին հակասում է Հերոդոտոսի այն տեղեկությանը, թե Հալիսը հոսում է Հայկական լեռներից: Ճիշտ է, Հայաստանը մ. թ. ա. V դարի գոնե վերջերին զրկվել էր իր սևծովյան տիրույթներից, բայց պահպանում էր Գալլ գետի և Հալիսի վերին հոսանքի շրջանները: Այս պարագայում Մելիտինեն, բնականաբար, չի կարող դիտվել որպես Կիլիկիայի մաս: Սրան գումարվում է Պատմահոր այն կարևոր նշումը, որ Կիլիկիայի և Արմենիայի սահմանը նավարկելի գետն է՝ անունը Եփրատ: Սա ուղղակիորեն բերում է այն եզրահանգմանը, որ երկու երկրները

³⁹ Տե՛ս Մանանդյան Հ., Քննական տեսություն..., էջ 63-64: Մելիտինե՝ Սատրապական Հայաստանի կազմում լինելու մասին, հաստատում է նաև Դարեհ Բ-ի ժամանակաշրջանի բաբելոնական փաստաթղթերից մեկը, որտեղ հիշատակվում է Ուրաշտուի (Ուրարտուի) մարդկանց և Մելիդուի մարդկանց կուսակալ Շամեշ-բարաքքուն (տե՛ս Unger E., Urartu. Reallexikon der Vorgeschichte, ed M. Ebert, XIV, Berlin, 1928, S. 32; Սարգսյան Դ., Ուրարտացիներ, ալարոդներ, արմեններ հարցի մասին, «ՊԲՀ», 1991, թիվ 1, էջ 192-193): Ուրաշտու-Ուրարտուն համապատասխանում է Հայաստանին, իսկ վերջինիս հետ հիշատակված Մելիդու-Մելիտինեն Սատրապական Հայաստանի անբաժանելի մասն էր, ինչի մասին հաստատում են Հերոդոտոսի տեղեկությունները: Մեր կարծիքով, Մելիդուի առանձին հիշատակվելը պայմանավորված է այն հանգամանքով, որ Մելիդուն Դարեհ Ա-ի վարչական վերաձևումների հետևանքով դառնում է Պակտյուիկեի կենտրոնը, ուրեմն նաև XIII սատրապության կենտրոններից մեկը, որը մ. թ. ա. V դարում, չնայած վարչական նոր փոփոխություններին, մնում էր Սատրապական Հայաստանի մեջ, որի կուսակալը, այսինքն՝ սատրապը, շարունակում էր կրել «Ուրաշտուի և Մելիդուի (լայն առումով՝ Պակտյուիկեի) մարդկանց կառավարիչ» տիտղոսը: Հետևաբար, կարող ենք պնդել, որ Մելիտինեն և Եփրատից արևմուտք ընկած մյուս շրջանները, հետագա Փոքր Հայքի տարածքը, Աբեմենյան տիրապետության ողջ ժամանակաշրջանում Արմինա-Արմենիա երկրի անբաժանելի հատվածն էին:

պետք է սահմանակցեին մի այնպիսի հատվածում, որտեղ Եփրատ գետի հոսանքը նավարկելի էր: Իսկ Մելիտինեի մոտ գետը նավարկելի չէ, քանի որ այստեղ բազմաթիվ սահանքներ են և ջրվեժներ: Բացի այդ, եթե Կիլիկյան սատրապության սահմանը հյուսիս-արևելքում հասներ այդքան հեռու, ապա հին Հայաստանի կարևոր երկրամասերից մեկը՝ Կոնագենեն, կհայտնվեր Կիլիկիայի կազմում, և իրերի նման վիճակը տրամաբանորեն լիովին անհարիր կլիներ մ. թ. ա. III դարի պատմական իրականությանը: Հակառակ դեպքում պետք է անտեսել այն կարևորագույն փաստը, որ մ. թ. ա. III դարում Ծոփքն ու Կոնագենեն կազմում են առանձին պետություն, իսկ Կոնագենեի թագավոր Անտիոքոս Ա-ն իր նախնիներին համարում է Հայաստանի տիրակալներ (Օրոնտես-Արոանդես-Երուանդ)⁴⁰: Ենթադրել, թե Ծոփքը Կոնագենեն գրավել է Կիլիկիայից, որը տվյալ դեպքում կնշանակի Սելևկյաններից, պարզապես անհնարին է: Պետք է, անշուշտ, ի նկատի ունենալ, որ «արքայական ճանապարհը» Հայաստանում երբեք չի հատել Տիգրիսը, իսկ Մելիտինեից հարմարեցնելու դեպքում ճանապարհը անպայմանորեն կհատեր Տիգրիսը, որը, սակայն, հնարավոր չէր, քանի որ Տիգրիսի գետանցումը, ըստ սկզբնաղբյուրի, կատարվել է Մատինեն երկրում (իմա՝ Ասորեստան): Ընդունելով հանդերձ, որ Հերոդոտոսի արդեն մեջ բերված վկայությունում (I,72) Կիլիկիան տեղադրվում է Կեսարիա-Մաժակի շրջանում և ոչ մի կապ չունի IV կամ Կիլիկյան սատրապության հետ՝ այն աշխարհագրական առումով նույնանում է, ինչպես վերևում արդեն նշել ենք, մ. թ. ա. VII դարի վերջերին Արամ-Արամանի-Էրիմենայի կողմից գրաված Պատուկա-Պակտյուիկե երկրին: Հերոդոտոսի «արքայական ճանապարհի» մասին տեղեկությունը արտացոլում է շուրջ մ. թ. ա. V դարի կեսերի իրողությունը: Հետևաբար պիտի ենթադրել, որ մ. թ. ա. V դարում Հայաստանի սատրապությունը կորցրել էր Պատուկա-Պակտյուիկեն, և, իրոք, Կեսարիա-Մաժակն «արքայական ճանապարհի» գլխավոր հանգուցակետերից մեկն էր, սակայն արդեն III սատրապության մեջ: Կապաղովկիայի տարածական ընդարձակումը կարելի է տեսնել Քսերքսեսի հունական

⁴⁰Տե՛ս Турациян Г., Страна Коммагена и Армения, <УУՌ ԳԱ «Տեղեկագիր հասարակական գիտությունների», 1956, թիվ 3, էջ 71-73:

արշավանքի սկզբին: Այսպես, եթե սատրապությունների հերոդոտյան ցուցակում լիգիացիները, որոնք, մեր կարծիքով, թերևս հենց նույն լիկաոնիացիներն են, չեն հիշատակվում, ապա Քսերքսեսի հունական արշավանքի կապակցությամբ հանդես են գալիս մարիանդինների և սիրիացիների (իմա՝ կապադովկիացիներ) հետ մեկ հրամանատարության տակ: Կապադովկիայի տարածական ընդլայնման մասին գրում է նաև Քսենոփոնը: Հույն պատմագրի հավաստմամբ մ. թ. ա. V դարի վերջին Կապադովկիան ձգվել է մինչև Դանա⁴¹ (Տիանա), և Լյուկաոնիան ու Կապադովկիան կազմել են մեկ վարչական միավոր, որի տիրակալն էր Միթրադատեսը⁴²:

Պարսից արքունիքը մ. թ. ա. V դարի կեսերին մեզ անհայտ ինչ-ինչ պատճառներով կատարել էր վարչական վերաձևումներ: Հարավային ուղղությամբ ընդարձակել էր Կապադովկիայի սահմանները, իսկ Սև ծովի հարավային ափամերձ շրջանները մինչև Կոտորա⁴³ մտցրել Պափլագոնիայի մեջ, իսկ Պակտյուիկեն Հայաստանի սատրապությունից անցել էր Կապադովկիային: Կեսարիա-Մաժակի շրջանը պետք է ընդգծել նաև այն առումով, որ փաստորեն Կեսարիան Հայաստան տանող գլխավոր ճանապարհահանգույցն էր և Կիլիկիայի առևտրական խոշոր կենտրոն Տարսոնից Սև ծով տանող առևտրական մայրուղու կարևոր խաչմերուկը: Ավելի ուշ Ալեքսանդր Մակեդոնացին Փոյուգիայի Գորդիոն քաղաքից սկսած նույնպես հիմնականում շարժվում է «արքայական ճանապարհի» ուղղությամբ. նախ Անկյուրա՝ Գաղատիայի քաղաքներից մեկը, որից հյուսիս Պափլագոնիան էր, ապա անցնելով Հալիսը՝ Կապադովկիա և «գրավեց Հալիս գետի այս կողմը գտնվող հողերն ու ավելի շատ տարածություններ գետի այն կողմում»⁴⁴: Ալեքսանդրը փաստորեն գրավում է հիմնականում այս ընդարձակ սատրապության արևմտյան և հարավային շրջանները և չի մտնում Հյուսիսային Կապադովկիա: Հետևաբար, Հալիս գետի այս կողմը ընկած հողերը

⁴¹ Քեն Անաբասիս, էջ 12: Կապադովկիայի սահմանների մասին տես Խորիկյան Հ., Կապադովկիայի տարածքը և սահմանները Աքեմենյան Պարսկաստանի կազմում, «ԼՂ», 2010, թիվ 1-2, էջ 107-118:

⁴² Անդ, էջ 197:

⁴³ Անդ, էջ 121, 139:

⁴⁴ Արիանոս, էջ 57:

պետք է տեղադրվեն Տատտա լճից հյուսիս ընկած շրջանում, որը ցույց է տալիս մ. թ. ա. IV դարում Կապադովկիայի տարածքային ընդարձակման մասին: Իսկ գետի այն կողմը ցույց է տալիս արդեն Հալիսի ներսում ընկած հողերը: Ալեքսանդրը Կիլիկիա է ներխուժում Կիլիկյան դարպասներից (Գուզլակի լեռնանցք), որտեղ տասնամյակներ առաջ, ինչպես վկայում են Արիանոսը և Ռուփոսը, ճամբար էր խփել Կյուրոս Կրտսերը⁴⁵: Այսպիսով, վերոշարադրյալ փաստերը բազմիցս հաստատում են, որ սկսած մ. թ. ա. V դարից՝ Կապադովկիայի ընդարձակումը հարավային ուղղությամբ ոչ միայն արդեն վկայված էր աղբյուրներում, այլև հենց նույն աղբյուրների հավաստմամբ հասել էր բավականին մեծ չափերի: Պատուկա-Պակտյոսիկեն ամբողջովին անցել էր Կապադովկիային, որոնց բնակչությունը էթնիկապես մոտ էր միմյանց: Սկզբնաղբյուրները վկայում են, որ մուշք-փռյուզացիների մի խումբը հաստատվել է Կեսարիա-Մաժակի շրջանում: Այս առումով Բ. Հարությունյանը ուշադրություն է հրավիրում⁴⁶ Հովսեպոս Փլավիոսի մի հետաքրքիր տեղեկության վրա. «Եվ մեսքենները, որոնք հաստատվել են Մեսքեսի կողմից և այժմ կոչվում են կապադովկացիներ. սակայն նրանց հնագույն անվանման ապացույցը բացահայտ է, որովհետև նրանց մոտ կա մի քաղաք, որը մինչև հիմա էլ կոչվում է Մազակա և հասկացողներին թելադրում է ենթադրելու, որ այդպես է կոչվել ամբողջ ազգը»⁴⁷: Ցեղերի և ժողովուրդների ծագումնաբանության մեջ ևս մեսքենները նույնացվում են կապադովկացիների հետ, որոնց նախահայրը Մոսոքն էր⁴⁸: Հետաքրքիր է, որ Ստրաբոնը ևս Մազական բնութագրում է որպես ցեղի գլխավոր քաղաք, որի բնակիչները կոչվում էին մազակեններ⁴⁹: Կոստանդին Ծիրանածինը

⁴⁵ Տես Արիանոս, էջ 57; Ռուփոս, էջ 287:

⁴⁶ Տես Հարությունյան Բ., Աքեմենյան Պարսկաստանի XVIII սատրապության տեղադրության շուրջ, էջ 74-75:

⁴⁷ Հովսեպոս Փլավիոս, Հրեական հնախոսություն, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1976, էջ 55-56: Տես նաև Josephus, Jewish antiquities, with an English translation by H. St. J. Thackeray, v. IV, Books I-IV, Cambridge-Massachusetts-London, 1961, p. 61.

⁴⁸ Տես И.Д.ПСК.-«ВДИ», 1948, թիվ 3, Եվստաթիոս, էջ 237; Թեոդորիտ, էջ 293:

⁴⁹ Տես Strabo XII, II, 7, 8, 9.

նույնպես հաղորդում է, որ Կեսարիան նախապես կոչվում էր Մազակա՝ կապադովկիացիների նախահայր Մոսոխի անունով⁵⁰:

Կատպատուկա-Կապադովկիա անունը, հնարավոր է, առաջացել է հենց պարսկական տիրապետության ժամանակ, երբ ձևավորվում է III սատրապությունը և սերտորեն առնչվում է Պատուկա երկրանվան հետ: Կամ էլ Պատուկա երկրի անունը մ. թ. ա. VI դարի սկզբին արևելքից արևմուտք շարժվող մարերը պետք է տարածեին Հալիսի ոլորանի շրջանում ընկած հողերի վրա, և արդյունքում Պատուկա-Պակտյուլիկե երկրի անունը ավելի ուշ հիմնավորապես դառնում է այլ երկրի անունը՝ Կատպատուկա-Կապադովկիա: Եթե Կապադովկիայի մեջ «կատ»-ը նշանակել է ստորին կամ ներքին, իսկ ամբողջ անունը՝ Ստորին կամ Ներքին Պատուկա, ապա Պատուկա-Պակտյուլիկեի համեմատությամբ նրանից այն կողմ ընկած տարածքները հենց այդպես էլ կարող էին ընկալվել և յուրացվել նվաճող մարերի կողմից: Թերևս ճիշտ է Ի. Դյակոնովը, որ Հալիսի ոլորանի ներսում ընկած հողերը համարում է հայկական կախյալ շրջաններ, որոնցից պարսկական տիրապետության ժամանակաշրջանում կազմավորվում է Կապադովկիան (III սատրապությունը) և միացվում Փոքր Ասիայի կենտրոնական այլ շրջանների հետ⁵¹: Չի բացառվում նաև, որ Կատպատուկա անունը առաջացած լինի դեռևս Արամի (իմա՝ Արամանի) կողմից Պատուկան նվաճելուց հետո, որից հյուսիս գտնվող հողերը կոչվեցին Կապադովկիա, և 585 թվականի Հալիսի ճակատամարտից հետո մարերը հանձնեցին Հայաստանին: Ինչևէ, ավելի ուշ Կապադովկիա անունը վերանում է հյուսիսային շրջաններում և ամրապնդվում հարավում: Մուշք-փոյուզիացիների մի խմբին տեղադրելով Կեսարիա-Մաժակի շրջանում՝ այլ բացատրություն է ստանում նաև Հերոդոտոսի՝ հայերին փոյուզիական վերաբնակիչներ համարելու տեղեկությունը, քանի որ Կեսարիա-Մաժակի շրջանում հաստատված մուշքերին, որոնք երկար ժամանակ գտնվել են Հայաստանի քաղաքական տիրապետության ծայր արևմուտքում, որոնց ըստ Պատմահայր Խորենացու, Արամ Նահապետը ստիպել էր սովորել հայերեն և

⁵⁰ Տե՛ս Կոստանդին Ծիրանածին, Բանակաթեմերի մասին, թարգմանություն բնագրից, արաջաբան և ծանոթագրություններ Հր. Բարթիկյանի, Երևան, 1970, էջ 168:

⁵¹ Տե՛ս Дьяконов И., История Мидии, էջ 356 և էջ 337-ի քարտեզը:

դարձրել էր իր ժողովուրդը, հունական աշխարհը, իրոք, կարող էր համարել փոյուզհական վերաբնակիչներ, որոնց հետ էին նախ և առաջ շփվել հույները: Հետևաբար, Հերոդոտոսի արմենները հենց այս մուշքերն են: Միգուցե, Արտոքմեսը ոչ թե ընդհանրապես փոյուզների, այլ Կեսարիա-Մաժակի շրջանում հաստատված մուշք-փոյուզիացիների և հայերի հրամանատարն էր, և Պատմահոր ժամանակ խոսքը սոսկ պատմական հիշողության մասին է: Հավանաբար, Պատուկա-Պակտյուիկեն, որ տեղադրվում է Կեսարիա-Մաժակի շրջանում և Հերոդոտոսի մոտ (I, 72) հիշատակված է որպես Կիլիկիա, հենց նույն Կիլիկիա անունով էլ հանդես է գալիս Ստրաբոնի կամ Պտղոմեոսի մոտ՝ որպես Կապադովկիայի ստրատեգիաներից մեկը⁵², որը ծնունդ էր առնում հին ժամանակներից: Սակայն Պակտյուիկեն՝ որպես երկիր, ավելի մեծ էր, քան Կիլիկիա ստրատեգիան: Համաձայն Ի. Դյակոնովի, ասսուրական աղբյուրների խիլակկուն տերմինաբանորեն նույնանուն է անտիկ հեղինակների Կիլիկիային: Ֆորերի կարծիքով, խիլակկուն անտիկ Մագական է՝ ուշ Կապադովկիական Կեսարիան, ներկայիս Կայսերին, այլ կարծիքով՝ անտիկ հեղինակների Տրաքեյան Կիլիկիան է⁵³: Ս. Երենյանի կարծիքով, սկզբնապես նեղ իմաստով Կիլիկիա է կոչվել ներկայիս Կեսարիա քաղաքի շրջանը⁵⁴: Մեր կարծիքով, պարսից «արքայական ճանապարհը» Կապադովկիայի մի որոշակի հատվածում (իմա՝ Պատուկա-Պակտյուիկե) ունեցել է հետևյալ երթուղին. Կեսարիա-Ոսկե Կոմանա-Կոկիսոն մինչև Մարաշ: Մարաշն արդեն Կիլիկիայի մեջ էր մտնում, որտեղից, նկատի ունենալով ճանապարհի տվյալ հատվածի շուրջ 90 կմ երկարությունը, կիսանենք Ջևգմա, որտեղ Եփրատը նավարկելի է, և այդպիսով, իրոք, Եփրատը կլինի սահման Հայաստանի և Կիլիկիայի միջև: Այժմ տեսնենք, թե Եփրատից արևելք՝ Հայաստանում, ինչ երթուղի պետք է ունենար ճանապարհը:

⁵² Տե՛ս Տրաբոն, XII, I,4, XII, II,7; Claudii Ptolemaei Geographia, voluminis primi, pars secunda, VI, 14.

⁵³ Տե՛ս АВИИУ, 46, прим. 44.

⁵⁴ Տե՛ս Еремян С., Проблема этногенеза армян в свете учения И.В.Сталина о языке, -ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր հասարակական գիտությունների», 1951, թիվ 6, էջ 41:

Ուսումնասիրողների կարծիքով, Հայաստանը և Մատիենեն սահմանակցել են Ջեզիրե-Իբն-Օմարի մոտ⁵⁵։ Վանա լճից հարավ⁵⁶։ Մեր կարծիքով, Արմենիան և Մատիենեն (իմա՝ Ասորեստան) սահմանակցում էին մի այնպիսի շրջանում, որտեղից Տիգրիսը և նրանից հետո հաջորդաբար նշված Մեծ ու Փոքր Ջաբերը և Գյունդեսը կարելի էր նավով անցնել։ Հերոդոտոսը նշում է չորս նավարկելի գետերի մասին, որը ցույց է տալիս ինչպես այդ գետերի ընդհանրապես նավարկելի լինելը, այնպես էլ այն չորս գետանցները, որոնցով հաջորդաբար պետք է շարունակվեր ճանապարհը։

«Արքայական ճանապարհի»՝ Հայաստանով անցնող ճանապարհի ուղեգծման համար, որի շրջանով էր միաժամանակ անցնում նաև հարավային սահմանը, ընդհանրապես, սխալ է ուղղակիորեն համարել և, այսպես ասած, «հարմարեցնել» Հերոդոտոսի և Քսենոփոնի վկայությունները և դրանցից միանշանակ եզրակացու-թյուններ կատարել, քանի որ Քսենոփոնը ոչ մի տեղեկություն չի տալիս ճանապարհի մասին և միայն ասում է, որ Հայաստանի և կարդուխների սահմանը Կենտրիտես գետն էր⁵⁷։ Այս տեղեկությունը սուկ հնարավորություն է տալիս պարզել Հայաստանի հարավային սահմանը միայն մ. թ. ա. V դարի վերջերին։ Պատմահոր տեղեկու-թյուններից շատերը, որոնց աղբյուրը Հեկատեոս Միլետացին է կամ էլ բանավոր հիշողություններն են, արտացոլում են շատ ավելի վաղ ժամանակների իրողու-թյունները։ Հետևաբար, ինչպիսին էր իրերի դրությունը Քսենոփոնի ժամանակ, նույնը չէր նրանից հարյուր և ավելի տարի առաջ, ինչը միանգամայն բնական է։ Գյունդեսից ճանապարհը տանում էր հարավ՝ դեպի Խալա, և այնուհետև Ջագրոսի դռներով մինչև Շոշ։ Ի նկատի ունենալով աշխարհագրական տեղագրությունը՝ անկասկած է, որ հիշյալ վկայության մեջ Մատիենեն հենց Ասորեստանն է, որը մ. թ. ա. V դարի վերջում արդեն կոչվում է Մեդիա⁵⁸, հավանաբար, այն

⁵⁵ Յեն Манандян. Я., О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен (V в. до. н. э.-XV в. н. э.),-Труды, Т. VI, Ереван, 1985, с. 15.

⁵⁶ Յեն Սարգսյան Գ., Ուրարտական տերությունը և հայերը, էջ 68; նույնի՝ Պատմահայր Հերոդոտոսը,-Հերոդոտոս, էջ 573:

⁵⁷ Յեն Անաբասիս, էջ 88-89:

⁵⁸ Անդ, էջ 50:

պատճառով, որ Ասորեստանի կործանումից հետո Հյուսիսային Միջագետքը անցել էր Մարաստանին: Ռուփոսը գրում է, «որ Հայկական լեռների մոտ երկու գետերը (Եփրատը և Տիգրիսը-Խ. Հ.) իրարից ամենաշատը հեռանում են 2500 ասպարեգ: Այդ նույն գետերը, մտնելով մարերի և կորդվացիների մարզերը, սկսում են որոշ չափով մոտենալ իրար, և որքան հեռու են գնում, այնքան իրենց միջև սկսում են թողնել ավելի ու ավելի քիչ տարածություն: Նրանք ամենաշատը մոտենում են այն հարթավայրում, որը տեղաբնակներն անվանում են Միջագետք, երկու կողմից սահմանափակելով այդ տարածությունը»⁵⁹: Հայկական լեռները համապատասխանում են Մասիոն լեռներին, իսկ կորդվացիների և մարերի մարզերով կարող էր հոսել միայն Տիգրիսը, ուրեմն Մատիենե երկիրն այստեղ նույնպես հիշատակվում է որպես մարերի մարզ: Կարևոր է ընգծել, որ Հայաստանից Մատիենե մտնելու համար Հերոդոտոսը չի նշում Տիգրիսի գետանցման մասին, իսկ դա ցույց է տալիս, որ Մատիենե-Ասորեստանը (այս մասին տես ստորև) տարածվել է Տիգրիսի երկու՝ և՛ աջ, և՛ ձախ ափերին: Մեր կարծիքով, «արքայական ճանապարհի» Մատիենե-Ասորեստանով անցնող հատվածը պետք է ձգվեր Տիգրիսի և Արևելյան Խաբուրի միախառնման վայրից հարավ տարածվող շրջանից, որտեղից Տիգրիսը, ապա նաև Մեծ ու Փոքր Զաբերը և Գյունդեսը, հարմար են և՛ նավարկման, և՛ գետանցման համար: Նման երթուղու սահմանագծման դեպքում Տիգրիսից (Արևելյան Խաբուրի հետ միախառնման շրջանից) արևմուտք ընկած հողերը՝ սկսած Միզոնիա-Մծբինից, պետք է տեսնել Հայաստանի կազմում, քանի որ «արքայական ճանապարհը» բուն Հայաստանում Տիգրիսը չի հատել: Հ. Մանադյանի ուղեգծած ճանապարհի դեպքում (Մալաթիայից Խարբերդի դաշտի միջով դեպի Տիգրիս գետն Ամիդ-Դիարբեքրի մոտ և այստեղից դեպի այժմյան Զեզիրե, որը գտնվել է, հավանորեն, մատիենների երկրում⁶⁰) այն մի քանի անգամ Հայաստանում կհատեր Տիգրիսը, որը հակասում է Հերոդոտոսի վկայություններին, քանի որ ճանապարհը Տիգրիսը հատել է Ասորեստանում:

⁵⁹ Ռուփոս, էջ 371; Quintus Curtius, V, I, 13-15, p. 330-331; Квинт Курций Руф, с. 144-145.

⁶⁰ Տես Մանադյան Հ., Քննական տեսություն..., էջ 64:

Այն, որ Ասորեստանի հյուսիսային որոշ շրջաններ մտել են Հայաստանի մեջ, կարելի է ցույց տալ հենց Բեհիստունի արձանագրության տվյալներով: Այսպես, ապստամբները ճակատամարտերից մեկը պարսիկների դեմ տալիս են Ասորեստանի Իզալա վայրում⁶¹: Բ. Հարությունյանը կարծում է, որ ապստամբները ոչ թե նախահարձակ են եղել, այլ կռվել են քաղաքական առումով հենց Հայաստանի սահմաններում⁶²: Այս ենթադրությունը հաստատվում է արձանագրության աքքադերեն տարբերակի տվյալներով, որտեղ Իզալան ուղղակիորեն հիշատակվում է Ուրաշուի (իմա՝ Հայաստանի) կազմում՝ առանց Ասորեստանի հետ կապելու⁶³: Սա նշանակում է, որ Իզալան Հայաստանի վայրերից մեկն է: Իզալան, որն ուրարտական և ասսուրական արձանագրությունների Իզալա-/ի/ Օալլա-Իշալան է, Ն. Հարությունյանը տեղադրում է Տիգրիսի արևմտյան կողմում՝ Ամադանի լեռներից հարավ և Բիթ-Չամանի երկրից արևմուտք⁶⁴: Ի. Ղյակունովը Իզալան տեղադրում է Խաբուր գետի վերին հոսանքի շրջանում՝ ժամանակակից Մարդինի, Ուրֆայի (Ուշհա) և Դիարբեքրի միջև⁶⁵: Գ. Մելիքիշվիլին Իզալան տեղադրում է ժամանակակից Դիարբեքրից հարավ-արևմուտք⁶⁶: Ն. Ադոնցը տեղադրում է Մարդինի շրջանում⁶⁷: Անկախ այն հանգամանքից, թե Իզալան Հյուսիսարևմտյան Միջագետքի որ մասում կտեղադրվի, հաստատ է, որ «արքայական ճանապարհը» կարող էր անցնել Միջագետքի՝ Հայաստանին անցած այն հատվածով, որն ուներ միակ հարմար երթուղին (տե՛ս ստորև) այդ շրջանում, և բացի այդ, ճանապարհի երկարությունը (56^{1/2} փարսախ = շուրջ 350 կմ) միայն այդ գծով կարող էր անցնել:

⁶¹ Յեն Kent R., նշվ. աշխ., էջ 124: Տե՛ս նաև «Դարեհ Վշտասպի Բիսեթունյան արձանագրությունը», էջ 15: Հ. Ռաուլինսոնն այս տեղանունը չի կարդացել (տե՛ս Rawlinson H. C., նշվ. աշխ., էջ 31):

⁶² Յեն Հարությունյան Բ., Հայաստանի, հայ-իրանական հարաբերությունների..., էջ 71:

⁶³ Յեն Malbran-Labat F., նշվ. աշխ., էջ 98, 114:

⁶⁴ Յեն Арутюнян Н., Топонимика Урарту, Ереван, 1985, с. 86.

⁶⁵ Յեն АВИИУ, 23, прим. 30.

⁶⁶ Յեն Меликшвили Г., Напу-Урарту, էջ 51:

⁶⁷ Յեն Ադոնց Ն., Հայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 69:

Մի շարք տվյալներ գալիս են ապացուցելու, որ Միջագետքի հյուսիսարևմտյան շրջանները դեռևս մ. թ. ա. VII դարի վերջերից արդեն քաղաքական առումով գտվել են Հայաստանի մեջ: Հենվելով «Գեղղի ժամանակագրության» վրա՝ կարելի է ցույց տալ, որ Հայաստանը հարավային ուղղությամբ ծավալվել է:

Այսպես, մ. թ. ա. 609 թվականի հունիս-հուլիս ամիսներին Խառանուն պաշարված իր կայազորին օգնության շտապող Նաբոպալասարի մասին (թարգմանությունը՝ Ի. Ղյակոնովի) «ժամանակագրության» մեջ ասված է. «Царь Аккада (Նաբոպալասարը) на помощь войскам своим пошел, боу (?) [дал (?), в страну] Ицалла поднялся и многочисленные горные селения [разрушил], их [xxx] сжег огнем. В то время войска [xxxxxxxxxxxxx] до области города Урашты [по]шли, в с[тране(?)] x [xx] их разграбили, гарнизон, который царь [xx в них(?) поставил, высе]лили и [xxxx] поднялись [xx]. Царь Аккада в свою страну вернулся»⁶⁸. Մ. թ. ա. 608 թվականի դեպքերի մասին ասվում է. «Год 18-й Набопаласара, в месяце улуле, царь Аккада войска свои ополчил, вдоль Тигра пошел и в горы Бит-Хануни, области страны^o Урашты, поднявшись, селения сжег огнем, добычу многочисленную захватил; в месяце тебете царь Аккада в страну свою вернулся»⁶⁹:

Ըննության առնելով «Գեղղի ժամանակագրությունը»՝ Ի. Ղյակոնովը ենթադրել է, որ մ. թ. ա. 609-606 թվականներին «Թոգարմայի տունը» ուժեղանում և ընդարձակվում է դեպի արևելք և, հնարավոր է, նաև հարավ-արևելք: Նրա (Թոգարմա-Մելիտենե) առաջխաղացումը այնքան է անհանգստացնում Բաբելոնին, որ վերջինս արշավանք է կազմակերպում դեպի Բիթ-Խանունիա (ըստ հեղինակի Խնուան է), իսկ ավելի ուշ հրաժարվում Հյուսիսային Միջագետքի և լեռնաշխարհի նկատմամբ իր հավակնություններից: Հեղինակի կարծիքով, մ. թ. ա. 608 թվականին Բաբելոնի թագավորի արշավանքը դեպի հյուսիս (Բիթ-Խանունիա) պետք է բացատրել կամ Վերին Եփրատի շրջանների մետաղահանքերի գրավման անհրաժեշտությամբ, կամ էլ կասեցնելու հյուսիսից եկող

⁶⁸ Дьяконов И., Малая Азия и Армения около 600 г. до н. э. и северные походы вавилонских царей, -«ВДИ», 1981, №2, էջ 38:

⁶⁹ Անդ, էջ 39:

սպառնալիքը: Միաժամանակ, Ի. Ղյակնոնովի կարծիքով, այդ ժամանակ իր գոյությունն էր շարունակում Ուրարտուն, որն իր հերթին ենթարկվում է Կիաքսարի հարձակմանը⁷⁰: Ի. Ղյակնոնովը իր եզրակացությունները բխեցնում է հայ ժողովրդի կազմավորման իր տեսության սկզբունքներից, որն էլ, մեր կարծիքով, բերել է սկզբնաղբյուրի տեղեկությունների ոչ ճիշտ մեկնաբանության: Հեղինակն, օրինակ, բոլորովին անտեսում է հայոց հին պատմության խնդրում այնպիսի բացառիկ արժեք ունեցող աղբյուր, ինչպիսին Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ն է⁷¹:

Բ. Հարությունյանն իր աշխատություններից մեկում, քննելով Մովսես Խորենացու հաղորդած տվյալները, կատարում է ուշագրավ ենթադրություններ, որոնք վերաբերում են ոչ միայն Հայաստանի, այլ նաև Առաջավոր Ասիայի պատմությանը⁷²: Հիմք ունենալով հեղինակի ուսումնասիրության արդյունքները՝ մենք կփորձենք «Չեղդի ժամանակագրության» և Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ի համեմատական վերլուծության հիման վրա քննության առնել մի քանի հարցեր:

Համաձայն Բ. Հարությունյանի, Խորենացու Արամ Նահապետը նույնանուն է ուրարտական արձանագրությունների էրիմենա (իմա՝ Արամանի) թագավորի հետ, որը «Կուրուպեղիա»-ի մեջ հիշատակվող արմենների, այսպես կոչված, «անանուն» թագավորն է: Անշուշտ, Արամանի անունը հունարեն արտասանվելու էր Ἀραμάνιος, որն էլ վերածվելու էր Ἀρμενιος-ի՝ պատճառ դառնալով հայերին հարևանների կողմից տրված «արմեն» էթնոնիմի հետ չլիթի⁷³: Քննելով Խորենացու տեղեկությունները Արամի մասին՝

⁷⁰ В. И. Дьяконов И., Последние годы Урартского государства по ассирийско-вавилонским источникам, «ВДИ» 1951, № 2, էջ 29-39:

⁷¹ В. И. Дьяконов И., История Мидии, էջ 313:

⁷² В. И. Дьяконов И., История Мидии, էջ 313:

⁷³ Անդ, էջ 24, 73: էրիմենայի թագավոր լինելու խնդիրը դեռևս լիովին արարվարանված չէ (տես Մովսիսյան Ա., Կարևոր մի ուղղում (Կարմիր բլուրի մարտի տարիներից մեկի առնչությամբ), «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», XIX, Երևան, 2000, էջ 133-139): Իսկ Ա. Մուշեղյանը ժխտում է այն տեսակետը, թե Արմենների ցեղանունը ծագում է ենթադրաբար թագավորած Արամ-էրիմենայի անունից (տես Մուշեղյան Ա., «Արամ» անունը հայ ժողովրդի երկրորդ յիղանուն, «ՊԲՀ», 2007, № 1, էջ 226-248): Մեր կարծիքով, Արամ նահապետի

հեղինակը ցույց է տալիս Արամի (իմա՝ Արամանի) իրական պատմական անձ լինելը, որն, իրոք, ծավալել է ակտիվ արտաքին քաղաքականություն՝ ընդարձակելով Հայաստանի սահմանները գրեթե բոլոր ուղղություններով և կառավարել է մ. թ. ա. 631-608 թվականներին: Մենք կհսում ենք հեղինակի իրավացի այն միտքը, որ «Գեղդի ժամանակագրության» Ուրաշտուն այլևս Վանի թագավորությունը չէ, այլ Էրիմենայի պետությունը, որի հետ այդպես էլ հայտնի չէ Բաբելոնի թագավորը բախում ունեցա՞վ, թե՞ ոչ: Հեղինակի ենթադրությամբ, Նաբոպալասարը Իզալայի կամ Իծալայի շրջանում կռվում է ասորեստանցիների դեմ⁷⁴: Սակայն մենք ավելի հակված ենք ընդունելու Ի. Ղյակոնովի տեսակետը, ըստ որի՝ Իծալայում Նաբոպալասարը չէր կարող կռվել Աշշուրուբալիտի և եգիպտական զորքի դեմ, քանի որ ավելի ուշ նրանք հայտնվում են Կարքեմիշում: Ուստիև, հիմք ընդունելով Բ. Հարությունյանի քննությունը, հավանական է ենթադրել, որ Իզալայում Նաբոպալասարը իրականում հարձակվել է Արամի (իմա՝ Արամանի) վրա, որն, ըստ հեղինակի, Հյուսիսային Միջագետքը պետք է նվաճած լիներ 625 թվականից հետո⁷⁵: Փաստորեն, մի կողմից Բաբելոնը և մյուս կողմից Մարաստանը փորձում էին զսպել Հայաստանի՝ հեռուն գնացող քաղաքական նկրտումները: Ըստ երևույթին, հայոց թագավորին անհանգստացրել էր Ասորեստանի կործանումը, Նինվեի ավերումը, և փորձում է հետ կանգնել իր ավագ դաշնակցից: Հավանաբար, Բաբելոնը օգտվել էր հայերի ապստամբությունից Մարաստանի դեմ և նախահարձակ եղել՝ փորձելով Հայաստանից նվաճել վերջինիս կողմից գրաված Ասորեստանի նախկին տիրույթները: Բաբելոնը երկու անգամ (մ. թ. ա. 609 և 608 թվականներին) արշավում է Հայաստանի դեմ՝ Իզալա և Բիթ-Խանունիա: Ի. Ղյակոնովի կողմից Բիթ-Խանունիայի նույնացումը Խնուսին ակնհայտորեն անհաջող է⁷⁶: Դատելով արձանագրությունից՝ թերևս արշավանքը ծավալվել է Տիգրիսի

խնդրի հետ կապված ուսումնասիրությունները պետք է շարունակվեն, ընդ որում՝ նոր լույսով և մոտեցումներով:

⁷⁴ Անդ, էջ 74:

⁷⁵ Անդ, էջ 62:

⁷⁶ Ի. Ղյակոնովը մ. թ. ա. 611 թվականի դեպքերին վերաբերող արձանագրության աղճատված հատվածներից մեկը վերականգնում է Շուպրիա, որը կասկածելի է (տե՛ս Дьяконов И., Малая Азия и Армения..., էջ 34-64):

ավագանում: Արձանագրությունում պարզորոշ ասվում է, որ Աքքադի թագավորը, ընթանալով Տիգրիսի երկարությամբ, հասնում է Բիթ-Խանունիայի լեռները: Բիթ-Խանունիան չի կարող նույնանալ Խնուսի հետ նաև այն պատճառով, որ արձանագրությունում չի հիշատակվում Արածանին, որը հայտնի էր ասսուրական սեպագիր տեքստերում⁷⁷: Մյուս կողմից էլ, հազիվ թե Մարաստանը հանդուրժեր, որ Բաբելոնն այդչափ խորանար իր կրտսեր դաշնակցի բուն տիրույթների մեջ: Չի բացառվում, որ նկատի ունենալով Արամանի-երիմենայի ռազմական մեծ կարողությունները՝ Բաբելոնը և Մարաստանը համաձայնեցրել են իրենց գործողությունները և գործել Հայաստանի դեմ տարբեր ուղղություններով: Ինչևէ, ո՛չ Նաբոպալասարը, ո՛չ էլ Կիաքսարը անմիջականորեն չեն բախվել Արամի (իմա՝ Արամանի) անմիջական հրամանատարության տակ գտնվող գորբերի հետ, և հայոց թագավորի անունը այդ պատճառով չի հիշատակվում արձանագրության մեջ: Կերևում բերված վկայության մեջ կա մի կարևոր հանգամանք, որ Կիաքսարը Ուրաշտուում (իմա՝ Հայաստանում) կռվում է ինչ-որ թագավորի կայազորի դեմ, որին զարթեցնում է: Թե ո՞ր թագավորի մասին է խոսքը՝ «Աքքադի», «Ուրարտուի», «Ասորեստանի», Ի. Դյակոնովի համար պարզ չէ: Ուտ մեզ, այստեղ, բնականաբար, խոսքը կարող է միայն վերաբերել հայոց թագավոր Արամանի-երիմենային:

Բիթ-Խանունիան հնարավոր է, մեր կարծիքով, նույնացնել Աարգոն Բ-ին ուղղված նամակներից մեկում հիշատակվող Ուրարտուի Կանիուն գավառին⁷⁸, որը տեղադրված է ուկկիացիների դիմացի նահանգի և Ալզիի միջև: Ուկկիացիները բնակվել են Ջուդի-դադից արևելք, իսկ Ալզին հայկական Աղծնիքն է: Ուրեմն, Կանիունն աշխարհագրորեն համապատասխանում է Կորդուքին: Ն. Ադոնցի կարծիքով, Կանիունը հիշեցնում է Քանան՝ Ջուդիի շրջանի բնակավայրերից մեկը, որը Սեննապերիքը հայտարարում է, թե նվաճել է Տիմուրիի (հայկ. Տնորիք) և Աշուր-

⁷⁷ Թեև Luckenbill D., Ancient records of Assyria and Babylonia, vol. I, Chicago, 1926, § 584, 604.

⁷⁸ Թեև АВИИУ, 50 (4).

ռիսուայի Կիպչու (Գեֆշ) նահանգի հետ միասին⁷⁹: Քանան և մյուս բնակավայրերը գտնվել են Կուտմուխի սահմանին⁸⁰:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ իր երկրորդ հարվածը Նաբոպալասարը ուղղել էր արդեն Կորդուքի վրա: Ընդ որում, ինչպես կարելի է տեսնել արձանագրության բովանդակությունից, արշավանքը կրել է ավարառուական բնույթ: Եթե նույնիսկ Բաբելոնը գրավել էր Իզալան և Բիթ-Խանունիան, ապա Ասորեստանի ժառանգությունը բաժանելուց հետո Հյուսիսային Միջագետքն անցնում է Մարաստանին, իսկ Միջագետքի հյուսիսարևմտյան շրջանները թերևս կրկին վերադարձվել են Հայաստանին, ինչը և հաստատվում է Աքեմենյան շրջանի տեղեկություններով:

Ինչպես ցույց է տալիս Մովսես Խորենացին, Կորդուքը մտել է Հայաստանի մեջ, քանի որ Արամը շարժվում է դեպի Ասորեստանի դաշտը Կորդուքի միջով, այսինքն՝ Կորդուքն արդեն Հայաստանի մեջ է: Եթե նկատի ունենանք, որ Պատմահոր հաղորդմամբ նախահարձակ է եղել Բարշամը՝ «Նոյն այս Արամ, յետ վճարելոյ ճակատուն որ ընդ արևելեայս՝ խաղայ նոյն զօրութեամբ զկողմամբք Ասորեստանի. գտանէ և անդ գոմն ապականիչ երկրին իւրոյ, չորիւք բիրովք վառելովք հետևակօք և հինգ հազար հեծելագօրու, Բարշամ անուն, յագգէ սկայիցն. որոյ սաստկագոյնս նեղեալ հարկաց խստութեամբ՝ անապատ զբովանդակ շրջակայն իւր առնէր: Սմա ճակատու պատերազմի ի դիմի հարեալ Արամ, հալածական ընդ մէջ Կորդուաց ի դաշտն Ասորեստանի արկանէ, զբազումս ի նոցանէ սատակելով. իսկ Բարշամ առաջի զինակրաց նորա պատահեալ մեռանի...»⁸¹, ապա հնարավոր է, որ Բարշամի անվան տակ թաքնված Նաբոպալասարը, այսուհանդերձ, վերջին հաշվով, Միջագետքի հյուսիս-արևմուտքը հարկադրված թողել է Արամին, քանի որ Նաբոպալասարը և՛ Իզալա, և՛ Բիթ-Խանունիա կատարած արշավանքներից հետո չի նշում այդ շրջանները գրավելու մասին և խոսում է միայն ավերի ու թալանի մասին: Ըստ

⁷⁹ Տե՛ս Ադոնց Ն., Հայաստանի պատմություն, էջ 212:

⁸⁰ Տե՛ս Luckenbill D., Ancient records of Assyria and Babylonia, vol. II, Chicago, 1927, § 244, 295 (հեղինակը Կուտմուխին նույնացնում է Կոմմագենեին, որը սխալ է): Տե՛ս նաև АВИИУ, 57, 58.

⁸¹ Մովսես Խորենացի, էջ 45:

ելության, Արամը կամ գուցե նրա հաջորդը (ըստ Բ. Հարությունյանի, Հրաչյա-Ռուսա Գ- մ. թ. ա. 608-586 թվականներ⁸²) պետք է որ գրաված լինեին Ասորեստանի կողմերը, որպեսզի նման կացությամբ Հայաստանը մտներ նախ Մարաստանի, ապա Աբենեյան Իրանի տիրապետության մեջ:

Որ Նաբոպալասարը իր երկրորդ արշավանքը ուղղել է հենց Կորդուքի վրա, կարելի է ենթադրել խորենացու նաև այն տեղեկությունից, որ Արամը Ասորեստանի կողմերը հանձնում է Կադմոսի տան հաջորդներին⁸³, այսինքն՝ Բիթ-Խանունիան աշխարհագրորեն Կադմեսա տունն է:

Անտիկ աղբյուրների վկայությամբ արմենները հարավում դուրս էին եկել Հայկական լեռնաշխարհի սահմաններից: Ստրաբոնի վկայությամբ արմենները հասել էին մինչև Կալաքենե և Ադիաքենե⁸⁴: Նույնը Ստրաբոնը կրկնում է մեկ այլ հատվածում, որ Արմենոսի ուղեկիցներից ոմանք բնակություն են հաստատում Ակիլիսենեում, որն առաջ ենթարկված էր Ծովքի իշխանությանը, իսկ ոմանք Սիսպիրիտիսում մինչև Կալաքենե և Ադիաքենե, որ գտնվում էին Հայկական լեռնաշխարհից դուրս⁸⁵: Կալաքենեի տեղը ենթադրվում է այժմյան Խաբուր-սուի հարավ-արևելքում՝ սրա և Մեծ Ջաբ գետի միջև, իսկ Ադիաքենեն գտնվում էր Կալաքենեից հարավ՝ հյուսիսային Ասորեստանում⁸⁶: Պատահական չէ, որ Ստրաբոնը մարերին, հայերին և բաբելոնացիներին համարում է Ադիաքենե երկրում ապրող ցեղերից ամենաշատը⁸⁷: Սա նշանակում է, որ հայերը, հին ժամանակներից սկսած, զգալի թիվ են կազմել երկրի բնակչության մեջ: Հայերի՝ մինչև Կալաքենե և Ադիաքենե հասնելու մասին վկայում է նաև մեր պատմիչ Թովմա Արծրունին. «Իբրև աջողութիւն գործոյն զլիսաւորեցաւ՝ եղև դառնալ Քսերքսեանց, առեալ ի պարզկի (Կյուրոս Մեծի կողմից-Խ. Հ.) զՏմորիս ամրոցաւն և զգետաւիներայսն Նինուէի»⁸⁸: Ըստ Բ. Հարությունյանի, այս

⁸² Տես Հարությունյան Բ., նշվ. աշխ., էջ 84:

⁸³ Տես Մովսես Խորենացի, էջ 46:

⁸⁴ Տես Strabo, XI, IV, 8.

⁸⁵ Անդ, XI, XIV, 12:

⁸⁶ Տես Մանանդյան Հ., Պատմական-աշխարհագրական մանր հետազոտություններ, Երկեր, հ. Ե, Երևան, 1984, էջ 292:

⁸⁷ Տես Strabo, XVI, I, 19.

⁸⁸ Տես Թովմա Արծրունի և Անանուն, էջ 66:

տեղեկության մեջ խոսքը վերաբերում է Արտաշես Ա-ի կողմից Տմորիքը գրավելուն⁸⁹: Մեր կարծիքով, Արտաշես Ա-ի դեպքում կարող ենք ենթադրել Տմորիքի ազատագրման մասին, քանի որ մինչև մ. թ. ա. IV դարի վերջերը, ամենայն հավանականությամբ, Տմորիքը պետք է լիներ Հայաստանի անբաժանելի մասը: Չմոռանանք նաև, որ Արտաշես անունը Հայաստանում վկայված է մ. թ. ա. V դարում Արտոքմենս-Արտուխաս ձևով⁹⁰: Թովման մեկ այլ տեղում «Նինվեի գետեզերքի» փոխարեն օգտագործում է Նինվեի կողմերը⁹¹, այն է՝ Ասորեստանի կողմերը: Տմորիքը գտնվել է Արևելյան Խաբուրի վերին հոսանքի շրջանում, իսկ «Նինվեի գետեզերքի» տակ, հավանաբար, պետք է հասկանալ Տիգրիսի՝ Արևելյան Խաբուրի հետ միախառնվելու շրջանը: Բ. Հարությունյանը ուշադրություն է դարձնում Փավստոս Բուզանդի մի շատ հետաքրքիր տեղեկության վրա, որ Պապ թագավորը Վաղես կայսրից պահանջում է Կեսարիան, Ուռհան և ևս տասը քաղաքներ, որն ամենայն հավանականությամբ տեղի չի ունեցել, սակայն կարևորն այն է, որ հայ ժողովրդի պատմական հիշողությունը նշված քաղաքներն իրենց շրջակա տարածքներով համարել է հայկական երկիր, որի նկատմամբ, ժողովրդի ազգային մտածելակերպը ներկայացնող պատմիչի կարծիքով, Պապ թագավորը կարող էր հավակնություններ ի հայտ բերել: Շարունակելով իր միտքը՝ Բ. Հարությունյանն ընդգծում է. «Հայոց պատմության մեջ բացառվում է որևէ այլ ժամանակաշրջան, որ հայերին հաջողված լինի իշխել հիշյալ տարածքներին, ուստի թե՛ Կեսարիայի շրջանը և թե՛ Ուռհան կարող էին գրավված լինել մ. թ. ա. VII դարի վերջին երեսնամյակում»⁹²:

Որ Ասորեստանի որոշ շրջաններ (հյուսիսում) մտել են Հայաստանի մեջ, կարելի է եզրակացնել Հերոդոտոսի այն տեղեկությունից, որտեղ խոսվում է Աքեմենյան Պարսկաստանի IX նահանգի մասին. «Բաբելոնից և մնացյալ Ասորեստանից

⁸⁹ Տե՛ս Հարությունյան Բ., Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն..., էջ 281:

⁹⁰ Տե՛ս Кркияшарян С., К интерпретации некоторых сведений древнегреческих авторов об Армении, էջ 129-130; նույնի՝ Հին Հայաստանի պետական կառուցվածքը, էջ 58-59:

⁹¹ Տե՛ս Թովմա Արծրունի և Անանուն, էջ 63:

⁹² Հարությունյան Բ., Հայաստանի, հայ-իրանական հարաբերությունների..., էջ 70:

(ընդգծումը մերն է-Խ. Հ.) ստացվում էին հազար տաղանդ և հինգ հարյուր ներքինացված տղաներ. սա իններորդ նահանգն էր»⁹³: Բնականաբար, Բաբելոնն այստեղ չէր կարող ընկալվել որպես Ասորեստանի մաս (հմմտ. X սատրապության հետ): Հետևաբար, սույն տեղեկության մեջ «մնացյալ Ասորեստանը» ուղղակիորեն հուշում է այն միտքը, որ Ասորեստանն, իրոք, զրկվել էր իր որոշ շրջաններից, որոնք այլ աղբյուրների հավաստմամբ մտել էին Հայաստանի մեջ: Ճիշտ է, Դարեհի դեմ ապստամբության ժամանակ Ասորեստանի մի շրջանը՝ Արբելա կենտրոնով, մտել է Մեդիայի մեջ⁹⁴, սակայն ապստամբության ճնշումից հետո այն ավելի շուտ պետք է միացվեր IX սատրապությանը:

Հայաստանի հարավային սահմանագծի ճշգրտման համար կարևոր են նաև ներքոհիշյալ տեղեկությունները: Արիանոսը հաղորդում է, որ «Ալեքսանդրը Թապսակոսից շարժվում է մայրցամաքի խորքը, դեպի այսպես կոչված Միջագետք. Եփրատը և Հայաստանի սարերը մնացին ձախ կողմում»: Հաջորդ տեղեկության մեջ Արիանոսը գրում է, որ «թողնելով Տիգրիսի ափերը, Ալեքսանդրն անցավ Ասորեստանով. նրա ձախ կողմում Գորդիոնյան լեռներն էին, աջից՝ Տիգրիսը»⁹⁵: Մեր կարծիքով, Հայաստանի սարերի տակ պետք է հասկանալ Մասիոն լեռները, որոնք, ըստ Ստրաբոնի, մտնում էին Տավրոսի մեջ. «Այսպես են կոչվում Տավրոսի հյուսիսային լեռները (ինմա՝ Պարաքոթրաս-Խ. Հ.). իսկ հարավայինը, Եփրատից այն կողմ, Կապադովկիայից և Կոնմագենեից արևելք է տարածվում, սկզբնական մասում կոչվում է Տավրոս, որ բաժանում է Ծոփքը և մնացյալ Հայաստանը Միջագետքից. ոմանք էլ կոչում են Գորդյան լեռներ: Սրանց մեջ է նաև Մասիոն լեռը, որ գտնվում է Մծբինի և Տիգրանակերտի վերևը: Այստեղից ավելի բարձրանալով՝ կոչվում է Նպատ. այստեղ, լեռան հարավային կողմերում գտնվում են Տիգրիսի ակունքները»⁹⁶: Ինչպես տեսնում ենք, Մասիոնը և Գորդյան լեռները համարվել են Թավրոսի ճյուղերը: Հաջորդ տեղեկության մեջ արդեն նշվում են

⁹³ Հնրոդոտոս, III, 92:

⁹⁴ Ոնն «Դարեհ Վշտասպի Բիսթրոնյան արձանագրությունը», էջ 17; Rawlinson H. C.,

Նշվ աշխ., էջ 32:

⁹⁵ Արիանոս, էջ 96:

⁹⁶ Ստրաբոն, էջ 43-45:

Գորդիոնյան լեռները (իմա՝ Կորդվաց լեռներ), որոնք տարածվել են Մասիոն լեռներից արևելք: Իրականում Մասիոն լեռները Կորդվաց լեռների շարունակությունն են: Հայաստանի հարավային սահմանի ճշգրտման համար Արիանոսը ունի մի շատ կարևոր տեղեկություն. «Դարեհը ճակատամարտի դաշտից (Գավգամելայի-Խ. Հ.) անմիջապես սլացավ Մարաստան, ճանապարհ ընտրելով հայկական լեռներով»⁹⁷: Իսկ Պլուտարքոսը գրում է. «Ամբողջ հարթավայրը (Գավգամելայի-Խ. Հ.) Նիփատեսի և Գորդիոնյան լեռների միջև, լուսավորված էր բարբարոսական գորքի կրակներով...»⁹⁸: Նիփատեսի լեռները, իրոք, գտնվել են Հայաստանում՝ Նպատական լեռներ (Ջողա) անունով: Սակայն Պլուտարքոսը աշխարհագրական առումով ավելի մեծ բովանդակություն է տալիս Գորդիոնյան և Նպատական լեռներին, տարածելով դրանք ավելի հարավ, քանի որ Նպատական լեռներից հարավ գտնվել են Դասն լեռները: Ուրեմն Դարեհ Գ-ն փախել է Դասն և Նպատական լեռներով դեպի Մարաստան, որի հետ Հայաստանի սահմանը, ամենայն հավանականությամբ, կազմել են Կոհ-ի-Նիհորական լեռները, որոնք, ըստ իս, նույնպես ընկալվել են որպես Նպատի լեռներ: Ստրաբոնի Նիբարոսը⁹⁹ Հ. Մարքվարթը նույնացրել է Կոհ-ի-Նիհորական լեռներին¹⁰⁰: Ըստ Դիոդորոս Սիկիլիացու, Դարեհը Արբելայի ճակատամարտում պարտվելուց հետո՝ փախչելով դիմեց վերին սատրապությունները¹⁰¹: Վերին սատրապություններից առաջինն, անկասկած, Հայաստանն էր, որն անցնելուց հետո Դարեհը մտնում է հաջորդ վերին սատրապությունը՝ Մարաստան:

Հայաստանի հարավային սահմանի վերաբերյալ տեղեկություններ են հաղորդում նաև հայկական աղբյուրները: Ըստ Մովսես Խորենացու, Արամ Նահապետը (իմա՝ Արամանի) Նյուբար Մաղեսին սպանելուց հետո նրա երկիրը մինչև Ջարասպ լեռը իրեն ծառայեցնելով հարկատու դարձրեց «մինչև ցթագաւորութիւնն Նինոսի ի վերայ Ասորեստանի և Նինուէի»¹⁰²: Նինոսի

⁹⁷ Արիանոս, էջ 107; Арриан, с. 117.

⁹⁸ Плутарх, Александр, XXXI, -Избранные жизнеописания, Т. II, Москва, 1987.

⁹⁹ Strabo, XI, XIV, 2, XI, XIV, 14.

¹⁰⁰ Տե՛ս Մարկվարտ Հ., Պարսկահայք նահանգը, -«ՊԲՀ», 1961, թիվ 2, էջ 212, 226:

¹⁰¹ Տե՛ս Դիոդորոս Սիկիլիացի, էջ 97:

¹⁰² Մովսես Խորենացի, էջ 44:

հիշատակվելը (Շամիրամ-Շամուրամաթի ամուսին Շամշի-Ադադ Ե-ն է) ցույց է տալիս, որ տվյալ վկայության մեջ, Արամ Նահապետի կերպարի տակ թաքնված է որոշակիորեն նաև Ուրարտուի Արամե թագավորը, իսկ Նյուքար Մադեսը նույնանուն է մ. թ. ա. VII դարի II կեսերին գործած «Երողոտոսի սկյութների թագավոր Մադյուեսի՝ Պրոտոթյուեսի որդու հետ»¹⁰³: Ինչպես տեսնում ենք, Մովսես Խորենացու մոտ Ջարասպը Հայաստանի հարավային սահմանն է: Հետաքրքիր է Սեբեոսի տեղեկությունը՝ կապված Վահրամ Զուբինի կամ Միհրևանդակի հետ: Պարսիկ զորավար Վահրամ Միհրևանդակը, որն ապստամբել էր Խոսրով II Ապրվեգի դեմ, հայ իշխաններին իր կողմը գրավելու համար խոստանում է վերականգնել Հայոց թագավորությունը իր նախկին սահմաններում. հյուսիսում մինչև Կովկաս և Աղվանից դուռը, և Ասորիքի կողմից՝ Արվաստանը, Մրծուիկը և Նոր Շիրականը մինչև տաճիկների սահմանը և արևմուտքում մինչև Կապադովկիայի Կեսարիան և ինքը յի անցնի Ջարասպից մյուս կողմ»¹⁰⁴: Հետաքրքիր է, որ ըստ պարսիկ զորավարի, Հայաստանի սահմանները այդպիսին են եղել նախնյաց ժամանակ: Անուղղակի որոշ փաստեր վկայում են, որ Հայաստանի հարավային սահմանը Աքեմենյան տիրապետության շրջանում, իրոք, անցել է Ջարասպի տարածքով: Պլինիոսի հիշատակած օրոնտներ ցեղը իրավացիորեն տեղադրվում է Ռևանդուզի շրջանում¹⁰⁵: Հ. Մանանդյանի կարծիքով, այդ օրոնտների (ըստ Ս. Երեմյանի՝ ճիշտ ընթերցումն է օրոանդներ) հետ պետք է, որ կապ ունենա Վասպուրականի գավառներից մեկի՝ Արուանթունիքի (Երուանդունիքի) անունը¹⁰⁶: Այդ գավառը կոչվում էր նաև Հայոց ձոր և գտնվում էր Վան քաղաքից հարավ՝ Հայոց ձոր (Խոշաբ) գետի

¹⁰³ Են Հարությունյան Բ., Հայաստանի, հայ-իրանական հարաբերությունները..., էջ 96, 60:

¹⁰⁴ Են Պատմութիւն Սեբեոսի, աշխատասիրությամբ Գ. Աբգարյանի, Երևան, 1979, էջ 63, 78: Սեբեոսի Ջարասպը ուսումնասիրողները ուղղում են «զԱրասպ» (տես Հարությունյան Բ., Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, մաս Ա (Արևմտյան և հարավային աշխարհներ), Երևան, 2001, էջ 396), որը երկու դեպքում էլ ցույց է տալիս, որ խնդր առարկա ժամանակաշրջանում Հայաստանի հարավային սահմանը հասել է մինչև Ուրմիո լճի հարավարևմտյան ստորոտը:

¹⁰⁵ Են Մանանդյան Հ., Պատմական-աշխարհագրական մանր հետազոտություններ, էջ 309; Երեմյան Ս., Հայկական առաջին պետական կազմավորումները, էջ 112:

¹⁰⁶ Են Մանանդյան Հ., նշվ. աշխ., էջ 309; Երեմյան Ս., նշվ. աշխ., էջ 112:

հովտում: Ըստ Հ. Ռաուլինսոնի, օրոնտների անունը պահպանված է այժմյան Ռևանդուզ տեղանվան և քրդական ռավանդի ցեղի անունների մեջ (Օրոնտ>Երվենտ>Ռեվենտ)¹⁰⁷:

Բացի Բեհիստունի արձանագրությունում հիշատակված Իզալա վայրից, ուսումնասիրողները փորձել են նաև տեղադրել արձանագրության մեջ հիշատակվող մնացած տեղանունները, որոնք նշված են Հայաստանի մեջ: Հ. Մանանդյանը տալիս է մնացած տեղանունների տեղադրման փորձերի հանրագումարը: Դրանք պատկանում են Յուստիին, Մարկվարտին ու Սանտալձյանին: Ֆերդ. Յուստին Ջուզան համեմատում է արդի քրդական Ջոզանի հետ և, բացի այդ, նման անուն ունեցող մի տեղ մատնացույց է անում նաև այժմյան Ջեզիրեի մոտ: Տիգրա բերդը նա հնարավոր է համարում նույնացնել այժմյան Տիլ գյուղի հետ, որը գտնվում է Տիգրիսի և Բոհտան-սուի միախառնման մոտ: Իսկ Աուտիյարա գավառը համապատասխան է համարում այժմյան Տիյարային, որը գտնվում է Մեծ Ջաբ գետի աջ և ծախ ափերին, Ջուլամերկի և Ամադիայի միջև: Ուշադրության արժանի են Աուտիյարա գավառի և Իզիտու կամ Իզալա երկրի մասին նաև Սանտալձյանի և Մարկվարտի դիտողությունները: Սանտալձյանը Աուտիյարան նույնացնում է Կորձայքի Այտվանք գավառին, իսկ Մարկվարտը ենթադրում է, որ Իզալա երկրի անունը կարող է համապատասխան լինել Իզալա լեռներին՝ Ամիդ-Դիարբեքիից դեպի հարավ-արևմուտք: Հ. Մանանդյանը Իզալայի ստույգ ընթերցումը համարում է Իզիտու և նույնացնում Մաննայի մայրաքաղաք Իզիրտուի հետ՝ Ուրմիո լճի հարավ-արևմտյան

¹⁰⁷ Տե՛ս Մանանդյան Հ., նշվ. աշխ., էջ 309: Պերգամոն քաղաքից 12 կմ հեռավորության վրա գտնվող Բորիաջիք վայրում գտնված արձանագրությունում Արմենիայի սատրապ, իսկ հետո իբրև Մյուսիայի սատրապ Օրոնտես-Երվանդը (մ. թ. ա. V-IV դդ.) բակտրիական ծագում ունի (տես էլիթեկյան ժ., Երվանդունիների ծագման հարցի շուրջը, - «ՊԲՀ», 1971, թիվ 2, էջ 113-114, Երեմյան Ա., նշվ. աշխ., էջ 112-113): Ինչպես արդեն նշվել է պատմագիտական գրականության մեջ, Բակտրիա քաղաքը և Բակտրիանա երկիրը հայտնի են եղել նաև Չարիասպա անունով: Վերջինս էլ աղերսակցվում է Հայաստանի Չարասպ լեռին, որը գտնվում է Արդինի-Մուսասիր երկրում, Կելիշին լեռնանցքից հարավ և ունի 3497 մետր բարձրություն: Նրա ժամանակակից անունն է Սիահ-կուհ (տես Երեմյան Ա., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 51; նույնի՝ Հայկական առաջին պետական կազմավորումները, էջ 113):

շրջանում, որի հետ կարող է, թերևս, առնչություն ունենալ ներկայիս Ջիրա գյուղաքաղաքը՝ Ռևանդուզ-Սերդեշտ ճանապարհի վրա¹⁰⁸: Ֆ. Յեր-Մարտիրոսովի կարծիքով, Ջուզան, Տիգրան, Աուտիրան և Վիաման գտնվել են Հյուսիսային Միջագետքի արևելյան և կենտրոնական շրջաններում¹⁰⁹: Ս. Երեմյանը Տիգրան կապում է Կասպուրականի Տայգրեան գավառի հետ, որը տեղադրում է Խանասորի լեռնանցքի և Աղբակ գետի միջև, որտեղ այս գավառի անունը հիշեցնում է Դեյգր վայրը¹¹⁰: Բ. Հարությունյանը Տայգրեան գավառը տեղադրում է Ուրմիո լճի հյուսիսային ափին, որի անունը պահպանվել է Չեգրեվան բնակավայրի անվան մեջ¹¹¹: Ուսումնասիրողներից Ս. Պետրոսյանը Ույաման տեղադրում է Մարանդ և Սոֆիան բնակավայրերի միջև գտնվող Յամի լեռնանցքի մատույցներում: Տիգրան, ըստ հեղինակի, համապատասխանում է հայկական Տիգրանավանին, Գողթն գավառում, հետագա Ջուղայի տեղում կամ մոտակայքում, իսկ Ջուզան գտնվել է Արփա գետի ստորին հոսանքի մոտ, որտեղ հետագայում հիշատակվում է Ղուղանգա գյուղը (Շարուրում)¹¹²:

Ստորև մենք կփորձենք առաջադրել վերոհիշյալ տեղանունների տեղադրությունների մեր տեսակետները: Զուզահյան, մեր կարծիքով, թերևս Սասուն գավառն է, որի բերդերից մեկը կոչվել է Ջուզա-Սուսանց¹¹³: Վանում հայտնաբերված իր արձանագրություններից մեկում Մենուա արքան հիշատակում է Ուսուսուանի երկիրը՝ Արպույանի քաղաքով նվաճելու մասին: Ուսուսուանիի հետ հիշատակվում են Նիրիբայի դաշտի երկիրը՝ Կալիբիլիանի քաղաքով, Տուշուրիեխի ցեղի երկիրը՝ Խուլմեբունի քաղաքով, Էրունի քաղաքը, Ուլիբանի երկիրը՝ Կիրպունունի քաղաքով¹¹⁴: Ն. Ադոնցը Ուսուսուանի անունը կապում

¹⁰⁸ Յես Մանանդյան Հ., Պատմական-աշխարհագրական մանր հետազոտություններ, էջ 280-291:

¹⁰⁹ Յես Թեր-Մարտիրոսով Փ., Армения в период восстания 522-520 гг. до н. э., «ԳՐՀ», 2001, թիվ 1, էջ 236:

¹¹⁰ Յես Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 84:

¹¹¹ Յես Հարությունյան Բ., Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն..., էջ 378:

¹¹² Յես Պետրոսյան Ս., Դաղարշիչի զորաբանակի նահանջի երթուղին, էջ 151-164:

¹¹³ Յես Հակոբյան Թ., և ուրիշներ, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, Երևան, 1988, էջ 323:

¹¹⁴ Յես Արտյոնյան Կ., КУКН, էջ 64:

է Սասունի հետ: Ն. Ադոնցի լեզվաբանական համեմատությունը հաստատվում է նաև աշխարհագրական տեսակետից: Ուսուսուանիից առաջ հիշատակվող Կալիբիլիանի քաղաքը փորձում է մոտեցնել Ջիբենեսուի ակունքներում գտնվող Բիլ-Կալենին, իսկ Ուսուսուանիից հետո հիշատակվող Խուլմերունի քաղաքը աստուրական Կուլլիմերին է, հայկական Ք(ու) դիմարը¹¹⁵: Փաստորեն, Կալիբիլիանիի և Խուլմերունիի միջև գտնվող Ուսուսուանի երկիրը միանշանակ Սասունի շրջանն է: Հենց այս Ուսուսուանի երկիրը (ու-ի անկումով) նույնացնում ենք Բեհիստունի արձանագրության Ջուզահյայի հետ: Համեմատության համար նշենք, որ սեպագիր արձանագրություններում հիշատակվում են տեղանուններ, որոնք գրվում են ն՝ ս, և՝ գ ձևերով: Օրինակ, Սուսուկու-Ջիզակ, Ջիկիրտու-Սագարտիա: Եթե ճիշտ է Շաշնու-Սասուն անցումը¹¹⁶, ապա չենք բացառում, որ շ>զ անցման դեպքում Շաշնուն կապ ունենա նաև Ջուզահյայի հետ: Այս առումով կարելի է համեմատել Ջազգիսա-Շազգիսա քաղաքի անունը¹¹⁷: Աուտիյարա տեղանունը, մեր կարծիքով, համապատասխանում է աստուրական արձանագրություններում հիշատակվող Ուդա-Ուդու քաղաքին¹¹⁸, որը Ն. Ադոնցը նույնացնում է բյուզանդական Χοῦδδων-ին ներկայիս Մազարտայի շրջանում¹¹⁹: Ղ. Ալիշանը հիշատակում է Ութա-Ուտայեցվոց երկիրը, որը տեղադրում է Դիարբեքիի նահանգում՝ Տիգրիսի ձախակողմյան Քաղիրթ վտակի հովտում¹²⁰, որը համապատասխանում է հետագայի Սլիվանի գավառակին, այն է՝ Աղձնիք աշխարհի Նփրկերտ գավառի տարածքին: Միգուցե, Ութա-Ուտայեցվոց երկիրը կարելի է կապել Աուտիյարայի հետ, բայց դժվարությունն այն է, որ մեծավաստակ գիտնականը չի նշում իր աղբյուրը: Արդյոք Աուտիյարա-Ութա անունը կարելի՞ է տեսնել օրտա ժողովրդի անվան մեջ, որը մ. թ. VI դարում ապրում էր Անգիտենե-Անձիտ գավառում, եթե ընդունենք, որ «ր»-ն այստեղ աճական է: Եթե համեմատենք Վահունիսայի առաջին (Իգալա) և

¹¹⁵ Տե՛ս Ադոնց Ն., Հայաստանի պատմություն, էջ 199:

¹¹⁶ Տե՛ս Կարապոյան Հ., Սեպագիր տեղանուններ, էջ 41: Հեղինակը Ուսուսուանին կապում է Բսանցի հետ, (անդ, էջ 307, ծանոթ. 11):

¹¹⁷ Տե՛ս Ադոնց Ն., նշվ. աշխ., էջ 50:

¹¹⁸ Տե՛ս АВИИУ, 22, 23 (II, 109).

¹¹⁹ Տե՛ս Ադոնց Ն., նշվ. աշխ., էջ 74:

¹²⁰ Տե՛ս Ալիշան Ղ., Տեղագիր Հայոց Մեծաց, Վենետիկ, 1855, էջ 43:

երկրորդ (Աուտիյարա) ճակատամարտերի միջև ընկած ժամանակային մեծ տարբերությունը (առաջինը 522թ. դեկտեմբերին, իսկ երկրորդը 521թ. հունիսին), ապա շատ ավելի հավանական կլիներ երկրորդ ճակատամարտի վայրը փնտրել Հայաստանի խորքերում:

Հետաքրքիր է այն իրողությունը, որ ձեռագրական կենտրոնների թվում հիշատակվում է Խոյաման՝ առանց տեղագրությունը ճշտելու¹²¹, թերևս այն կարող էր ծագել Հույամա ձևից, որը բոլոր հիմքերը կան կարծելու, որ, ամենայն հավանականությամբ, աղերս ունի Ույամայի հետ: Ըստ իս, Տիգրա ավանը տեղագրվում է Նոր-Շիրական երկրում, որի հետ, մեր կարծիքով, սերտորեն կապված է անվանական տեսանկյունից: Հ. Մանանդյանը, քննելով Նոր-Շիրական երկրի և բրեշխության հարցը, ընդունում է Պլինիոսի տեղեկությունը՝ Հ. Մարկվարտի ուղղումներով. «Արդ՝ Գորդիացիներին հարևան են Ազոնները [ըստ Մարկվարտի՝ Արզոնները], որոնց միջով հոսում է Ջերբիս գետը [ըստ Մարկվարտի՝ Բոհտան-սուն, մեր կարծիքով, Մեծ Զաքը] և թափվում Տիգրիսի մեջ. Ազոններին հարևան են [եռնաբնակ Միլիկները [ըստ Մարկվարտի՝ Sidices= Silices] և Օրոնտները, որոնց արևմտակողմում գտնվում է Գավգամելա քաղաքը, ինչպես և Աուերը ժայռերի մեջ: Միլիկների վերևումն են Միտրերը [ըստ Մարկվարտի՝ Տիցրա= Sitrae], որոնց միջով հոսում է Հայաստանից կուկոս գետը [ըստ Մարկվարտի՝ Զավը, մեր կարծիքով, Խաբուր-սուն], Միտրերից դեպի ձմեռնային արևածագը գտնվում է Ազոխիս քաղաքը (իմա՝ Զախուն-Խ. Հ.)»¹²²: Հ. Մանանդյանը կհսում է միտրերի ուղղումը սիգրերի և Սիգրիանե երկիրը տեղագրում է արձյան Սիդիկանի և Ռևանդուզի հյուսիսակողմում և Մեծ Զաք գետի վերին հոսանքի շրջաններում: Շարունակելով միտքը՝ Հ. Մանանդյանը գրում է. «որ սիգրերի (չիգրերի) Սիգրիան կամ ավելի ձևով՝ Շիգրիան, այս երկիրն է, որ Շիրակ կոչվող ցեղի անվան ապրեցությամբ և բաղաձայնների դրափոխությամբ (metathesis) հին հայերենում դառել է Նոր-Շիրական, իսկ Թեոփիլակտոսի մոտ, որը յոթերորդ դարի առաջին կեսի բյուզանդական հեղինակ է՝

¹²¹ Իսկ Հակոբյան Թ., և ուրիշներ, նշվ. աշխ., էջ 768:

¹²² Իմանուզյան Հ., Պատմական-աշխարհագրական մանր հետազոտություններ, էջ 300:

Շիրազան (Σιραζαωνών χωμή)»¹²³: Հ. Մանանդյանի կարծիքով, Նոր-Շիրականի հին Շիրահան անունը Շիրազ ձևով պահպանվել է Ղևոնդի մոտ (հեղինակը Ջիդոնը ուղղում է Շիրազ)¹²⁴: Թեոփիլակտես Սիմոկատտայի հիշատակած Սիրազանոն գյուղը, հնարավոր է, որ ներկայիս Շիրքենդի գյուղն է¹²⁵: Թեոփիլակտեսի Սիրազանոն գյուղը Հ. Ռաուլինսոնը համադրել է Tepe Sirgān-ի հետ, այժմյան Ուշնուի շրջանում¹²⁶:

Ստրաբոնի Սիրահանեն նույնպես կապվում է Սիրահեր-Շիրահերի հետ.«Առավել լայնության Մարաստանը, ըստ երևույթին, հասնում է Ջագրոսի լեռնանցքից (որը կոչվում է Մարական դռներ) Սիրահանեի միջով մինչև Կասպիական դռները, այն կազմում է 4100 ստադիոն»¹²⁷: Ինչպես կարելի է եզրակացնել այս տեղեկությունից, Սիրահանեն մտել է Մարաստանի մեջ: Մենք հավկած ենք կարծելու, որ Մարական դռները համապատասխանում են ներկայիս Շինակի լեռնանցքին, իսկ Կասպիական դռները գտնվել են Ռագայի (ներկայիս Ռեյը) մոտ: Ըստ հեղինակի, Շինակի լեռնանցքը նույնպես մտել է Սիրահանեի մեջ: Պտղոմեոսի Սիրահանիկեն (VI, 2, 6), հնարավոր է, որ կապ ունի Սիրահանե-Շիրականի հետ: Տիգրա տեղանունը նույնացնում ենք Շիրահ-Սիրազանոնի հետ և այդ առումով համեմատում աստուրական արձանագրություններում հանդիպող Շիրակկա-Տիգրակկա-Սիրահիս-Սիրահնա-Տիգրիշ տեղանվան հետ, որը լայնորեն հանդիպում է Իրանի տարածքում և քննության է առնվել է. Գրանտովսկու կողմից¹²⁸: Ելնելով վերևում կատարված քննությունից՝ մենք գտնում ենք, որ, ամենայն հավանականությամբ, «արքայական ճանապարհը» Հայաստանում ունեցել է հետևյալ երթուղին՝ Ուռհա-Վերանշեիր-Մարդին-Մծբին, որից արևելք սկսվում էր Ասորեստանը:

Աքեմենյան Պարսկաստանի տիրապետության ժամանակաշրջանի Հայաստանի մասին կարևորագույն աղբյուրը

¹²³ Անդ, էջ 310:

¹²⁴ Անդ:

¹²⁵ Տես Հարությունյան Բ., Մեծ Հայքի բրեշխությունների և բրեշխության հաստատության շուրջ, «Հանդես Ամսօրեայ», Վիեննա, 2001, թիվ 1-12, էջ 113:

¹²⁶ Անդ, էջ 112:

¹²⁷ Strabo, XI, XIII, 8.

¹²⁸ Տես Грантовский Э., Ранняя история иранских племен Передней Азии, Москва, 1970, с. 241-245.

Քսենոփոնի «Անաբասիս» աշխատությունն է, որի մեջ նկարագրված է հունական զորքի վերադարձը Միջագետքից Հայաստանի և Տրապիզոնի վրայով դեպի Հունաստան: Քսենոփոնը դեպքերի ականատես հեղինակ է, և նրա հաղորդած տեղեկություններն արժեքավոր են: Ուստի հասկանալի է, որ Քսենոփոնի տեղեկությունները վերաբերում են Հայաստանի (Արմենիայի) այն մասերին, որոնց միջով նա անցել է հունական զորքի հետ: Ստորև ներկայացնում ենք հելլենների նահանջի երթուղու վերաբերյալ մեր քննության արդյունքները, որոնք, ըստ իս, Հայաստանի պատմական աշխարհագրության համար կարևոր նշանակություն ունեն: Ղատելով Քսենոփոնի տեղեկությունից՝ հույները պետք է անցած լինեին Կորդուքի՝ կարգուխների երկրի արևմտյան մասով: Կորդուքի արևելյան մասի վերաբերյալ Քսենոփոնը տեղեկություններ չի հաղորդում: Քսենոփոնը հայտնում է, որ երբ կարգուխները պայման են կնքում դաշտային երկրի սաւորապի հետ, ապա հաղորդակցվում են թե՛ իրենք նրանց հետ, թե՛ նրանք իրենց հետ¹²⁹: Դաշտային երկիրը IX սատրապությունն է: Կորձայքի Կորդուք գավառի անունն առաջացել է Կորդու կամ Կարդու ցեղանվանումից, որի առաջին հիշատակությունը վերաբերում է մ. թ. ա. V դարի վերջին: Անժխտելի է, որ հույները ցեղանվանը ծանոթացան կամ կարգուխներից, կամ էլ նրանց հարավային հարևաններից: Համենայն դեպս, եթե ցեղանունը վերցնեին հայերից, այն կարգուխ չէր հնչի: Հնագույն շրջանում ցեղանունը եղել է Կորդու, որը և փոխառվել է հայերի կողմից: Սակայն սեմական լեզուներում երկրանունը հանդիպում է Qardu, Qardō և Qardā ձևերով¹³⁰, որը խոսում է այն մասին, որ կարգուխերենում մինչև մ. թ. ա. V դարը տեղի է ունեցել o>a հնչյունափոխություն, որը, հատուկ լինելով նաև հայերենին, տվյալ դեպքում հայերենում տեղի չի ունեցել¹³¹: Միաժամանակ, չնայած հույն հեղինակը ցեղանունը հիշատակում է Καρδοῦχοι գրությամբ, այսուհանդերձ ցեղը կոչվել է ոչ թե կարդուխ, այլ կարդու, քանի որ հին հունարենում «X»-ն

¹²⁹ Տե՛ս Անաբասիս, էջ 81:

¹³⁰ Տե՛ս Հյուբշման Հ., Հին Հայոց տեղւոյ անունները, էջ 202:

¹³¹ Տե՛ս Հարությունյան Բ., Սե՛ծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն..., էջ 273:

արտասանվում էր «ք», հետևաբար հույները ցեղանունը ընկալել են կարդուք հնչումով: Վերջինիս «ք»-ն պարզապես հոգնակիակերտ մասնիկ է՝ լիովին համարժեք հին հայերենի հոգնակիակերտին: Հույները չեն ընկալել այն նշված իմաստով, ուստի և իրենց հերթին ավելացրել են հունարենի հոգնակիակերտ -oi-ն (հմմտ. Σαῦς=Ταοχοί): Այս ամենը խոսում է այն մասին, որ չնայած հայերի և կարդուխների թշնամական հարաբերություններին, վերջիններս նույնպես հայկական ցեղ էին¹³²: Հնարավոր է, որ արդեն մ. թ. ա. V դարի վերջին ռազմատենչ ու անկախ կարդուխները դուրս էին եկել նաև Տիգրիսի աջափնյակը, ինչն արդեն աղբյուրներում արձանագրված է մ. թ. ա. 68 թվականի դրությամբ: Մ. թ. ա. 68 թվականին Լուկուլլոսը թողնում է Կորդուքը, որտեղ սկսվել էր հացահատիկների հունձը, և շարժվում դեպի Մշո դաշտ, որտեղ, Պլուտարքոսի հաղորդմամբ, հացաբույսերի ցանքսերը դեռ կանաչ էին¹³³: Կորդուք գավառի լեռնային պայմաններում հացաբույսերը հասունանում են գրեթե նույն ժամանակում և անգամ ավելի ուշ, քան Մշո դաշտում: Ուստի անտիկ հեղինակն, անկասկած, ի նկատի ունի Կորդվաց թագավորության արևմտյան մասը, որը ջերմ կլիմա ունեցող տափարակ երկիր էր, որտեղ գտնվում էր կարդուխների Սարիսա-Շարիչ քաղաքը¹³⁴:

Համաձայն Քսենոփոնի, կարդուխների և արմենների սահմանը Կենտրիտես գետն էր¹³⁵, որն իրավացիորեն նույնացվում է Ջերմ գետին կամ ներկայիս Բոհտան-սուին¹³⁶: Եվ, իրոք, գետի հակառակ ափին նրանց սպասում էին սպառազինված հեծյալներ և հետևակ զորքեր, որոնք «Օրոնտասի և Արտուխասի արմեններն էին և մարդերն ու խալդայները վարձկան», և փորձում են արգելել հեղլեններին մտնել Հայաստան¹³⁷: Քսենոփոնի այս տեղեկության մեջ անհրաժեշտ է պարզել, թե «վարձկանությունը» վերաբերում է բոլորին՝ արմեններին, մարդերին ու խալդայներին, թե վերջին երկու

¹³² Անդ, էջ 274:

¹³³ Տես Պլուտարքոս, Կենսագրություններ, կազմեց, հին հունարենից թարգմանեց, առաջաբանը և ծանոթագրությունները գրեց Ս. Գրքաշարյան, Երևան, 2001, Լուկուլլոս, 31, էջ 72:

¹³⁴ Տես Հարությունյան Բ., նշվ. աշխ., էջ 274-275:

¹³⁵ Տես Անաբասիս, էջ 88-89; Anabasis, Books IV-VII, p. 24-25.

¹³⁶ Տես Հյուբշման Հ., նշվ. աշխ., էջ 199:

¹³⁷ Տես Անաբասիս, էջ 89:

ցեղերին կամ էլ միայն խալդայներին: Մարդերի էպոնիմը, համաձայն սկզբնաղբյուրների, պահպանվել է պատմական Հայաստանի աշխարհագրական անուններում¹³⁸: Օրինակ, ըստ Ն. Աղոնցի, հնարավոր է, որ մարդաղյան մարդերը ծագում են այն մարդերից, որոնք խալդայների հետ միասին շարժվել են դեպի հյուսիս և գրավել այն վայրերը, որոնք կոչվեցին Մարդաղի և Խաղտիք, իսկ մարդերը Մարդաստան եկան, հավանորեն, ավելի ուշ Իրանի կողմից¹³⁹: Եսիս նշենք, որ խալդայները նույնանում են սկյութներին և չէին կարող շարժվել հարավից հյուսիս, քանի որ այդ ժամանակներում նրանք արդեն հաստատվել էին իրենց անունով կոչվող Խալիտու-Խաղտիք երկրում¹⁴⁰: Անշուշտ, դժվար է Քսենոփոնի միայն մեկ անգամ մարդերի հիշատակումից ելնելով, ասել, թե մարդերը տվյալ ժամանակաշրջանում գտնվում էին Մարդաղիում, Մարդաստանում և այլուր: Բայց և այնպես, կարելի է ենթադրել, որ տվյալ տեղեկության մեջ Արտուխասի հիշատակումը մարդերին կապում է ավելի շուտ Արևելյան Հայաստանի հետ: Համենայն դեպս, կարևոր է ընդգծել մեջբերված տեղեկությանը հաջորդող նախադասությունը. «Ասում էին, թե խալդայներն ազատ են և խիզախ. նրանք զինված լին հյուսիսյան երկայն վահաններով և նիզակներով»¹⁴¹: Ինչպես տեսնում ենք, մարդերի ազատ լինելու մասին չի նշվում, իսկ խալդայների ազատ լինելը հաստատվում է Քսենոփոնի այլ տեղեկություններով ևս: Սա նշանակում է, որ մարդերը, ինչպես փաստիանները, տառիսները, հեսպերիտները, մտել են Հայաստանի մեջ:

Ջորավար-պատմիչն իր հիշյալ շարադրանքի հաջորդ տողերում գրում է հույների գետանցման մասին: Հույները, գետը ձախ կողմում ունենալով, շարժվում են դեպի գետանցը, և մինչ հսկայիսոփոսն ու իր զորամասը մտան գետը՝ «Քսենոփոնը վերջապահ զորամասից ամենաթեթևներին վերցնելով իր հետ,

¹³⁸ Ռեն Վարդանյան Վ., Մարդերը Վասպուրականում, -«ՊԲՀ», 1971, թիվ 3, էջ 51; Դանիելյան Է., Մարդերի ցեղը հին Հայաստանում (մ. թ. ա. V-մ. թ. I դդ.), -«ՊԲՀ», 1976, թիվ 1, էջ 203-208:

¹³⁹ Ռեն Աղոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 464, ծանոթ. 1:

¹⁴⁰ Ռեն Խորիկյան Հ., Աքեմենյան Պարսկաստանի XIX սատրապության էթնիկական կազմի վերաբերյալ, -«Բանբեր Երևանի համալսարանի» (այսուհետև՝ «ԲԵՀ»), 2006, թիվ 2, էջ 117-120:

¹⁴¹ Անաբասիս, էջ 89:

ամբողջ թափով ետ վազեց նորից դեպի այն ճանապարհը, որը տանում էր վեր դեպի հայկական լեռները, ձևացնելով, որ իբր ցանկանում են այնտեղով գետն անցնել և թիկունքից կտրել գետի մոտ կանգնած հեծյալներին: Թշնամիները՝ նկատելով, որ Խեյրիստոփոսի զորամասը հաջողությամբ է անցնում գետը, իսկ Քսենոփոնի ջոկատը շտապում է դեպի ետ, վախեցան շրջապատվելուց և արագ կերպով վազեցին դեպի գետից վեր տանող ճանապարհը, և հասնելով այնտեղ, բարձրացան լեռը»¹⁴²: Այնուհետև Քսենոփոնը նույնպես վերադառնում է դեպի գետն անցնող զորամասը: Մինչև գետանցումը Քսենոփոնը նշում է, որ «տեսանելի միակ մի ճանապարհ կար, որը վեր էր տանում և կարժես ձեռակերտ լիներ»¹⁴³: Հավանաբար, պատմիչը նկատի ուներ հենց այս ճանապարհը, երբ գրում էր, որ վերջապահ զորամասի հետ «ամբողջ թափով ետ վազեց նորից դեպի այն ճանապարհը, որը տանում էր վեր դեպի հայկական լեռները» և թշնամիներն էլ, վախենալով շրջապատվելուց, վազեցին դեպի գետից վեր տանող ճանապարհը և հասնելով այնտեղ՝ բարձրացան լեռը: Կարելի է եզրակացնել, որ Քսենոփոնը շարժվել է գետանցման վայրից դեպի հարավ, և եթե տվյալ ճանապարհը, որը, հավանական է, արդեն հիշատակված ձեռակերտ ուղին էր, ապա հայկական սարերը նույնանում են Հայկական Տավրոսի հետ:

Հելլեններն անցել են Կենտրիտեսը Բաղեշ գետի հետ միախառնվելու շրջանից քիչ հարավ և այնուհետև շարժվել Բաղեշ գետի հոսանքն ի վեր, որտեղ «կարողուխների դեմ կռիվների պատճառով գետի մոտ գյուղեր չկային»¹⁴⁴: Տվյալ դեպքում խոսքը կարող է միայն վերաբերել Բաղեշ գետին, որն ավելի մոտ էր կարողուխներին և որը շատ անգամ էին անցել կարողուխները: Ուստի և, Գ. Տիրացյանի կարծիքը, թե հույները Կենտրիտեսն անցնելուց հետո շարժվել էին Քաղիթթ գետի հովտով և հաղթահարելով Սասնա լեռները իջել դաշտ և հասել Տելեբոաս գետին¹⁴⁵ անընդունելի է: Մտածել, որ գետը կարող էր լինել Սալնո ջուրը կամ

¹⁴² Անդ., էջ 90-91:

¹⁴³ Անդ., էջ 89:

¹⁴⁴ Անդ., էջ 93:

¹⁴⁵ Տես Տիրացյան Գ., «Անաբասիսը» և Հայաստանը.-Անաբասիս, էջ 224-225:

առավել ևս Բաղիրթը, չի բխում ոչ մի փաստացի հիմքից, քանի որ Քսենոփոնն, անկասկած, կնշեր այս գետերի մասին: Նաև անհնար է, որ Քսենոփոնը չնշեր բնակավայրերի մասին, եթե հելլենները շարժվեին Բաղեշից արևմուտք, այն դեպքում, երբ հեղինակը հայտնում է, որ գետի մոտ գյուղեր չկային: Եվ, որ ամենակարևորն է, պատմիչը նշում է Տիգրիսի ակունքներն անցնելու մասին¹⁴⁶:
Պեռևս իրենց նահանջի սկզբին հույները որոշել էին գետերն անցնել ակունքների շրջանում¹⁴⁷: Ընդ որում, նրանք գիտեին, որ, եթե ուզենան, կարող են անցնել Տիգրիսի ակունքները, իսկ եթե չըսնկանան, կարող են գետը շրջանցել¹⁴⁸: Հետևաբար, Արմենիայում նրանք Տիգրիսը չեն շրջանցել և Բաղեշի ակունքներն էլ նույնացրել են Տիգրիսի ակունքին, որն էլ, նրանց կարծիքով, շրջանցել են:

Անցնելով «Տիգրիսի ակունքը»՝ հույները «գնացին երեք կայան՝ տասնհինգ փարսախ, մինչև Տելեբոաս գետը: Այն գեղեցիկ էր, բայց ոչ մեծ, իսկ գետի մոտակայքում կային շատ գյուղեր: Այս վայրը կոչվում էր արևմտյան Արմենիա: Նրա հյուպարքոսն էր Միրիբագոսը, որը, լինելով արքայի բարեկամը, երբ ինքը ներկա էր գտնվում, ուրիշ ոչ ոք արքային ձի չէր նստեցնում»¹⁴⁹: Տելեբոաս գետը պատմագիտական գրականության մեջ հիմնականում նույնացվել է Մեղ կամ Մեղրագետի հետ: Այս նույնացումը, մեր կարծիքով, կասկածելի է: Նախ և առաջ, Քսենոփոնը «Տիգրիսի ակունքներից» մինչև Տելեբոաս գետը հաշվում է տասնհինգ փարսախ (շուրջ 90 կմ), որը շատ ավելին է, քան Բաղեշի ակունքներից մինչև Մեղ գետը: Ընդ որում, եթե Տելեբոասը նույնանար Մեղ գետին, ապա հույները կմոտենային վերջինիս ակունքների շրջանից, որը Քսենոփոնի տեղեկությունից չի երևում: Մեր համոզմամբ, հույներն, անցնելով Բաղեշի ակունքները և լեռնանցքը, հասել են տասնհինգ փարսախ ընթանալուց հետո Տելեբոաս գետին, որը կարելի է նույնացնել Լիզ կամ էլ Կորի ձոր (Ռուվանդղ, այժմ Բյոռսու) գետերից որևէ մեկի հետ:

¹⁴⁶ Քեն Անաբասիս, էջ 93:

¹⁴⁷ Անդ, էջ 68:

¹⁴⁸ Անդ, էջ 82:

¹⁴⁹ Անդ, էջ 93; *Anabasis*, Books IV-VII, p. 38-39.

Պատմագիտության մեջ տարակարծությունների տեղիք է տվել նաև Արևմտյան Հայաստանի վերաբերյալ տեղեկությունը: Ելնելով Արևմտյան Հայաստանի մասին Քսենոփոնի տեղեկությունից՝ ուսումնասիրողները ենթադրել են նաև Արևելյան Հայաստանի գոյությունը: Այս ենթադրությունը, չնայած այդ մասին չկա ուղղակի տեղեկություն, հնարավոր է: Քանի որ Տիրիբազոսը հիշատակվում է որպես Արևմտյան Հայաստանի հյուպարքոս, ապա, թերևս, կարելի է մտածել, որ Օրոնտասի հետ հիշատակվող Արտուխասն էլ Արևելյան Հայաստանի հյուպարքոսն էր: Որոշ ուսումնասիրողներ փորձել են Քսենոփոնի հիշատակած Արևմտյան Արմենիան նույնացնել XIII սատրապությանը, իսկ Արևելյան Հայաստանը, որի գոյությունը ենթադրվում է՝ XVIII սատրապությանը¹⁵⁰: Սակայն, ինչպես Հերոդոտոսի, այնպես էլ Քսենոփոնի տեղեկությունները հաստատում են միասնական երկրի գոյության մասին¹⁵¹, որը Աքեմենյան Պարսկաստանի սատրապություններից մեկն էր, որտեղ, հավանաբար, շարունակում էր պահպանվել թագավորական հին դինաստիան, որի ներկայացուցիչները երբեմն նաև սատրապներ էին: Այդպիսին էր նաև, ամենայն հավանականությամբ, «Անաբասիս»-ում հիշատակված Օրոնտասը՝ պարսից արքայադստեր ամուսինը¹⁵² և Հայաստանի տիրակալը: Հետաքրքիր է, որ Քսենոփոնը Օրոնտասին սատրապ չի համարում և գրում է, որ Հայաստանին իշխում էր Օրոնտասը: Սա հավանաբար, ցույց է տալիս, որ Օրոնտասը և՛ թագավոր էր, և՛

¹⁵⁰ Տես Ադոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 433, ծանոթ.1, Սարգսյան Գ., Ուրարտական տերությունը և հայերը, էջ 61-70 (հեղինակը Արևելյան Հայաստանը համարում է «բուն» Հայաստան), Մանանդյան Հ., Քննական տեսություն..., էջ 71; Երեմյան Ս., Հայկական առաջին պետական կազմավորումները, էջ 109, 112; Новосельцев А., Генезис феодализма в странах Закавказья, Москва, 1980, с. 91.

¹⁵¹ Տես Տիրացյան Գ., Երվանդյան Հայաստանի տարածքը (մ. թ. ա. VIդ. վերջ-մ. թ. ա. IIIդ. վերջ), էջ 79 (հեղինակի կարծիքով, Հայաստանի երկու՝ XIII և XVIII սատրապությունների բաժանումը անփոփոխ է մնում մինչև մ. թ. ա. V դարի 30-20-ական թվականները, և Քսենոփոնի ժամանակ Հայաստանը մեկ սատրապություն էր): Ս. Կրկյաշարյանը նույնպես կարծում է, որ Դարեհ Ա-ի ժամանակ Հայաստանը բաժանված էր երկու՝ XIII և XVIII սատրապությունների, իսկ Քսենոփոնի ժամանակ արդեն Հայաստանը մեկ սատրապության մեջ էր (տես Կրկյաշարյան Ս., Ժողովրդագրական տեղաշարժերը հին Հայաստանում, «Հայոց պատմության հարցեր», Երևան, 2005, թիվ 5, էջ11):

¹⁵² Տես Անաբասիս, էջ 75:

սատրապ: Օրինակ, համեմատության համար նշենք, որ Կիլիկիայում՝ IV սատրապությունում, թագավորական դինաստիան¹⁵³ շարունակվում էր պահպանվել մինչև մ. թ. ա. V դարի վերջը¹⁵⁴: Արևելյան Հայաստան հյուպարքիան պետք է գտնվեր Արևմտյան Հայաստանից արևելք: Արդ, որոնք էի՞ն վերջինիս սահմանները: Բաղեշի հովտից մինչև Տելեբոաս գետը (Լիզ կամ Կորի ձոր) Քսենոփոնի մոտ միայն Հայաստան է: Տելեբոաս գետի մոտ արդեն նշվում է Արևմտյան Հայաստանի մասին: Ելնելով այն տեղեկություններից, որ Տիրիբազոսը հույներին հետապնդում է մինչև Եփրատի (= Արածանի) վերին հոսանքի շրջանը¹⁵⁵, ապա Արածանիի վերնագավառը նույնպես մտել է Արևմտյան Հայաստան վարչական միավորի մեջ: Արևմտյան Հայաստանի սահմանների պարզաբանման համար որոշակի եզրակացությունների հիմք են հանդիսանում հետևյալ տեղեկությունները: «Անաբասիս»-ի վերջում նշվում է, որ Տիրիբազոսը փասիանների, հեսպերիտների տիրակալն էր¹⁵⁶: Փասիանների և հեսպերիտների տեղադրությունը հստակ է. առաջինը՝ Բասեանում, երկրորդը՝ Սպերի շրջանում: Միաժամանակ կարելի է ենթադրել, որ Տիրիբազոսի ննթակայության տակ գտնվել են նաև տաոխները, քանի որ փասիանների երկրից՝ Բասեանից, դուրս գալուց հետո, հույները մտան տաոխների երկիրը՝ Տայք: Համաձայն Քսենոփոնի, Միրիբազոսն ուներ և՛ իր գորքը, և՛ վարձկան խալուբներ ու տաոխներ¹⁵⁷: Այս տեղեկության մեջ վարձկաններ համարված են միայն խալուբները, քանի որ տաոխները, ինչպես և փասիանները, հեսպերիտները, մտնում էին Հայաստանի մեջ: Այսպիսով, «Անաբասիս»-ի տեղեկություններից երևում է, որ Արևմտյան Հայաստան հյուպարքիան ընդգրկում էր Արածանիի միջին և ստորին հոսանքների տարածքները, Բասեանը, Տայքը, Սպերը: Անշուշտ, Արևմտյան Հայաստանն ունեցել է, ըստ էության, ավելի մեծ սահմաններ, հատկապես արևմտյան ուղղությամբ, սակայն Քսենոփոնն այդ մասին լռում է: Արևելյան Հայաստանն էլ,

¹⁵³ Օրին «Երրորդոս, V, 118, VII, 98: Տե՛ս նաև Անաբասիս, էջ 11-13, 197:

¹⁵⁴ Օրին Дандамаев М., Политическая история Ахеменидской державы, Москва, 1980, с. 231. Տե՛ս նաև Дандамаев М., Луконин В., նշվ. աշխ., էջ 111:

¹⁵⁵ Օրին Անաբասիս, էջ 95:

¹⁵⁶ Անդ, էջ 197:

¹⁵⁷ Անդ, էջ 94; Anabasis, Books IV-VII, p. 42-43.

բնականաբար, պետք է տարածվեր Արածանիի վերնագավառից, Տայքից և Բասեանից արևելք, թե ինչպիսի՞ սահմաններում, այդ մասին «Անաբասիս»-ը տեղեկություններ չի հաղորդում:

Հույները Տելեբոասի շրջանից անցնում են ևս տասնհինգ փարսախ և հասնում մի ապարանքի, «որի շուրջը բազմաթիվ գյուղեր կային, լի զանազան պարենով»¹⁵⁸: Այստեղից հույներն ամայի տարածություններով ընթանում են տասնհինգ փարսախ, հասնում Եփրատի (= Արածանի) ակունքների մոտակայքը և, մինչև պորտը թրջվելով, գետանցում կատարում¹⁵⁹: Այնուհետև խոր ձյան և դաշտի միջով հույներն անցնում են տասներեք փարսախ և էլի ինչ որոշ տարածություն և իջևանում հայկական գյուղերում¹⁶⁰: Տվյալ երթուղու պարզաբանման համար հետաքրքրություն է ներկայացնում հետևյալ տեղեկությունը: Քսենոփոնը գրում է. «...զինվորներից ոմանք ետ էին մնում. և տեսնելով ինչ-որ սև տեղ, որն առաջացել էր ձյան վերանալու պատճառով, նրանք ենթադրեցին, թե ձյունը հալվել է. և իրոք այն հալվել էր մոտիկ անտառածորում գտնվող աղբյուրի հետևանքով, որը գոլորշի էր արձակում»¹⁶¹: Պատմագիտական գրականության մեջ կարծիք է հայտնվել, որ աղբյուրը համապատասխանում է Վարշակի ջերմուկներին¹⁶²: Նշանակում է, որ հույներն անցել են աշխարհացույցյան Ծաղկոտն գավառի տարածքով¹⁶³ և, հավանաբար, ապաստանում են աշխարհացույցյան Բագրևանդի գյուղերում, որտեղ էլ Խեյրիսոփոսի և Քսենոփոնի՝ թե այդ ի՞նչ երկիր

¹⁵⁸ Անդ, էջ 93:

¹⁵⁹ Անդ, էջ 95:

¹⁶⁰ Անդ, էջ 95-96:

¹⁶¹ Անդ, էջ 96:

¹⁶² Տե՛ս Երեմյան Ս., Հայաստանը և Փոքր Ասիան ըստ Քսենոփոնի «Անաբասիս»-ի, քարտեզ, «Անաբասիս» գրքում: Տե՛ս նաև Հարությունյան Բ., Հայաստանի պատմության աղյաս, (Ա մաս), Երևան, 2004, էջ 18:

¹⁶³ Վարշակի ջերմուկները, ըստ Դազար Փարպեցու, գտնվել են Ծաղկոտն (իմա՝ Ծաղկոտն) գավառում, որտեղ հանգստանում էր հայոց ապստամբ զորաբանակը (տե՛ս «Դազարայ Փարպեցույ Պատմութիւն Հայոց, թուղթ առ Վահան Մամիկոնեան», քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Մալխասյանի, Երևան, 1982, էջ 320): Վարշակի ջերմուկների մոտ է գտնվել, հավանաբար, Փավստոս Բուզանդի հիշատակած Շահապիվանը՝ Արշակունիների բուն բանակատեղին, և մուրաաստանի աղբյուրները (տե՛ս «Փաւստոսի Բիւզանդացույ Պատմութիւն Հայոց», բնագիրը Բ. Պատկանյանի, Երևան, 1987, էջ 188): Թերևս այս մրտենիների անտառը Քսենոփոնի նշած անտառածորն է:

է հարցին, գեղջավագը պատասխանում է, թե Արմենիան է, և հարևան երկիրը խալուբների երկիրն է, և ցույց տալիս այնտեղ տանող ճանապարհը¹⁶⁴: Պատմագիտության մեջ արդեն նշվել է, որ չնայած այն իրողությանը, որ հույներն այնուհետև անցել են փասիանների և տաոխների երկրներով և մտել խալուբների երկիրը, այդուհանդերձ փասիանները և տաոխները գյուղապետի համար սոսկ հայեր էին և միայն խալուբներն էին, որ համարվում էին այլազգիներ¹⁶⁵:

Բագրևանդից (մեր կարծիքով) հույները շարժվում են գեղջավագի ուղեկցությամբ, որը մոտ երեք կայան՝ տասնհինգ փարսախ, շեղում է նրանց ճանապարհը, ըստ էության, դեպի արևելք¹⁶⁶: Գեղջավագի փախուստից հետո հույներն «այնուհետև առաջ գնացին յոթ կայան՝ օրական հինգ փարսախ, Փասիս գետի մոտ, որի լայնքը մոտ մեկ պլեթրոն էր (մոտ 30 մ-իս. Հ.): Այստեղից առաջ գնացին երկու կայան՝ տասը փարսախ, և լեռնանցքով դաշտ իջնելիս նրանց դեմ ելան խալուբները, տաոխները և փասիանները»¹⁶⁷: Մեր կարծիքով, «Փասիս գետի մոտ» արտահայտության փոխարեն ճիշտ կլինի «Փասիս գետի երկայնքով» թարգմանությունը¹⁶⁸, քանի որ հասնելով գետին՝ հույները պետք է շարժվեին հոսանքին հակառակ ուղղությամբ և ակունքներից ոչ հեռու անցնեին գետը: Ճիշտ է, Քսենոփոնը չի նշում Փասիսի ակունքներն անցնելու մասին, սակայն Փասիս-Երասխի պես մեծ գետը նրանք պետք է անցնեին ակունքների շրջանում, ինչպես անցել էին Տիգրիսը (իմա՝ Բաղեշը), Եփրատը (իմա՝ Արածանին): Հույներն, հավանաբար, Երասխն անցել են պատմական Վաղարշավանի¹⁶⁹ շրջանում, որտեղ ուշ ժամանակներում հայտնի էր Հովվի (Քյուփրիքոյ) կամուրջը՝ Մուրց

¹⁶⁴ Տե՛ս Անաբասիս, էջ 98; Anabasis, Books IV-VII, p. 56-57.

¹⁶⁵ Տե՛ս Հարությունյան Բ., Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն..., էջ 96:

¹⁶⁶ Տե՛ս Անաբասիս, էջ 99:

¹⁶⁷ Անդ:

¹⁶⁸ Անդ, էջ 262, ծանոթ. 28: Մ. Մաքսիմովյան թարգմանել է «մինչև Փասիս գետը» (տե՛ս Ксенофонт, Анабасис, перевод М. И. Максимовой, Москва, 2010, с. 101):

¹⁶⁹ Տե՛ս Հարությունյան Բ., Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի և այլ աղբյուրների, քարտեզ, Երևան, 2001:

գետի՝ Արաքսի մեջ թափվելու տեղում¹⁷⁰։ Թերևս այն ժամանակներում էլ լինել փայտե կամուրջ։ Կերևում նշեցինք, որ լեռնանցքով դաշտ իջնելիս հույների դեմ ելնում են խայուբները, տառխները և փասիանները։ Տվյալ ցեղերը թվարկված են հարավից հյուսիս հերթականությամբ։ Քանի որ հույները Երասխը անվանում են Փասիս աջ ափից, ուրեմն փասիանները բնակվել են նաև գետի աջափնյակում, ինչպես աշխարհացույցյան Բասեան գավառը տարածվում էր Երասխից և՛ հարավ, և՛ հյուսիս¹⁷¹։ Դիողորոս Սիկիլիացու մոտ հույներն իրենց ճանապարհը շարունակում են խայոյների (իմա՝ տառխների) և փասիանների երկրների միջով¹⁷²։ Հեղինակը նույնպես տառխներին հիշատակում է փասիաններից առաջ, չնայած որ հույները նախ անցել էին նրանց երկրով։ Փասիանները, որոնց մի հատվածը բնակվել է ներկայիս արևմտյան Կրաստանի Փոթի (իմա՝ Փասիս) քաղաքի շրջակայքում, եղել են իրանական ցեղ, և նրանց անունը մ. թ. ա. V դարում հնչում էր, ըստ երևույթին, Կասեան և դեռևս չէր վերածվել Բասեանի¹⁷³։ Բ. Հարությունյանը փասիաններին տեղադրում է Երասխ գետի վերին հոսանքի և Ուղթիս գետի ակունքների շրջանում¹⁷⁴։ Սակայն փասիանները տարածվել են նաև գետի աջ ափին և պետք է զբաղեցրած լինեին ավելի մեծ տարածք, ինչպես բուն Բասեանը, այնպես էլ Անփայտ Բասեանը՝ Կանանդը։ Հյուսիսում փասիանների գոյությունը ցույց է տալիս, որ Հայաստանում հաստատված փասիանները շարժվել էին Կովկասից և, ըստ երևույթին, սկզբնապես հաստատվել Անփայտ Բասեանում և աստիճանաբար տարածվել դեպի հարավ՝ Բասեան, և հաստատապես իրենց անունը պահպանում են գավառանվան մեջ։ Փասիանների երկրից դուրս գալուց հետո հույները երեսուն և հինգ փարսախս անցնում են

¹⁷⁰ Տե՛ս Հակոբյան Թ. և ուրիշներ, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 5, Երևան, 2001, էջ 409:

¹⁷¹ Տե՛ս Հարությունյան Բ., Հայաստանն ըստ «Աշխարհացույց»-ի և այլ աղբյուրների, քարտեզ:

¹⁷² Տե՛ս Դիողորոս Սիկիլիացի, էջ 67:

¹⁷³ Տե՛ս Հարությունյան Բ., Աբեմենյան Պարսկաստանի XVIII սատրապության տեղադրության շուրջ, էջ 70-72:

¹⁷⁴ Անդ:

տառխների երկրով¹⁷⁵: Ինչպես տեսնում ենք, ամենաերկար ճանապարհը Հայաստանում հույների համար տառխների միջով անցնող հատվածն էր (շուրջ 200 կմ):

Տառխների և փասիանների սահմանը ձգվել է Մեծրաց լեռներից հյուսիս՝ Կարմիր-Փորակ լեռներից արևմուտք: Տառխները հետագա Տայքի բնակիչներն էին, որը սեպագիր արձանագրությունների Ղայանի-Ղիաուխի երկիրն է¹⁷⁶: Ուսումնասիրողների կարծիքով, Ղիաուխին ընդգրկել է ներկայիս Էրզրում քաղաքի շրջանը և Եփրատի (Կարասու) վերնագավառը¹⁷⁷ և, հնարավոր է, Աբունի-Հավնունիքը (ծայրահեղ դեպքում նրա արևմտյան մասը)¹⁷⁸: Ելնելով այն իրողությունից, որ Հերոդոտոսը Եփրատի ակունքները տեղադրում է Հայաստանում¹⁷⁹, ուրեմն Ղիաուխի տարածքը համարված է Հայաստան, իսկ Քսենոփոնի մոտ էլ փասիանների և տառխների երկրները Հայաստան են: Հավանաբար, Բասեանում և Անփայտ Բասեանում փասիանների հաստատվելուց հետո տառխները հետ էին քաշվել հյուսիսային ուղղությամբ և, ըստ էության, Ղիաուխի և Տայքի միջև լրիվ նույնացում չի կարող լինել, օրինակ նաև, Եփրատի վերնագավառը ավելի ուշ գտնվում էր աշխարհացույցյան Բարձր Հայք աշխարհի կազմում: Տառխների երկրից դուրս գալուց հետո հույները մտնում են խալյուբների երկիրը¹⁸⁰, այսինքն՝ դուրս են գալիս Հայաստանից: Ասական բնական պայմանները թույլ չեն տալիս հույներին խալյուբների երկրով՝ Կղարջքով, դուրս գալ Սև ծով, և նրանք խալյուբների երկրից հարկադրված անցնում են Հարպասոս գետը (իմա՝ Ճորոխը) և մտնում սկյութենների երկիրը և նրանց երկրով բնթանում «չորս կայան՝ քսան փարսախ՝ հարթավայր տեղերով դեպի գյուղերը, որոնցում մնացին երեք օր և

¹⁷⁵ Յես Անաբասիս, էջ 101:

¹⁷⁶ Յես Мелукашвили Г., Дуаху.-«ВДИ», 1950, թիվ 4, էջ 26-42:

¹⁷⁷ Յես Мелукашвили Г., Նշվ. աշխ., էջ 27, УКН, էջ 424:

¹⁷⁸ Յես Арутюнян Н., Топонимика Урарту, էջ 70-71:

¹⁷⁹ Յես Հերոդոտոս, I, 180: Ըստ Ղ. Սարգսյանի՝ Ղայանի-Ղիաուխի բնակիչները հետախույզներ էին, և անունը կապ չունի տառխների անվան հետ (տես Սարգսյան Ղ., Ղայանի-Ղիաուխի պետության գրաված տարածքը և բնակչության հայկական ծագումը, «ԼՂ», 2003, թիվ 2, էջ 168-183):

¹⁸⁰ Յես Խորիկյան Հ., Արեմենյան Պարսկաստանի XIX սատրապության էթնիկական կազմի վերաբերյալ, էջ 120:

պարենավորվեցին»¹⁸¹: Ըստ Քսենոփոնի՝ «այստեղից նրանք անցան չորս կայան՝ քսան փարսախս, դեպի մեծ, բարգավաճ և մարդաշատ մի քաղաք, որը կոչվում էր Գյունմիաս: Այս քաղաքից երկրի իշխողը ուղեցույց ուղարկեց հելլեններին, որպեսզի սա առաջնորդի նրանց իրենց թշնամի երկրի միջով: Գալով (հելլենների մոտ), սա ասաց, որ հինգ օրվա ընթացքում կհասցնի այնպիսի մի վայր, որտեղից կտեսնեն ծովը... Նա առաջնորդեց նրանց ու երբ մտավ թշնամու երկիրը, հրահրում էր նրանց այրել և ավերել երկիրը... Եվ հինգերորդ օրը նրանք հասան լեռը. իսկ լեռան անունն էր Թեքես»¹⁸²: Կղարջքից անցնելով Ճորոխը՝ հույներն իրենց ճանապարհը շարունակել էին Ճորոխի ձախ ավիով: Հույները նախ մտել էին «աս» սկյութների (Պլինոս Ավագի սակասանները) երկիրը՝ Ասեաց փոր կամ Արսեաց փոր գավառը¹⁸³, որից հետո շարունակել էին իրենց ճանապարհը թշնամի սկյութների երկրով: Քսենոփոնը «Անաբասիս»-ի վերջում նշում է, որ փասիանների և հեսպերիտների տիրակալը Տիրիբագոսն էր¹⁸⁴: Հեսպերիտները, որոնք իրենց անունը թողել են Սպեր գավառանվան մեջ, ըստ Բ. Հարությունյանի, սկյութական «Ասպեր»-ներ կամ «Ասպեյր»-ներ ցեղն են և ոչ մի դեպքում չեն կարող նույնանալ սասպեյրներին¹⁸⁵: Հեսպերիտների երկրին՝ Սպերին, նույնանում է նաև Ստրաբոնի Իսպիրադիսը¹⁸⁶, որի սրբագրումը Միսպիրիտիս ճիշտ չէ, քանի որ վերջինս Բաթման գետի լեռնային շրջանի Շուպրիան է¹⁸⁷: Իսպիրադիս-Սպերը հայկական սատրապության մեջ էր նաև Ալեքսանդրի արշավանքի օրերին: Սկյութներ-խալդայներ անվանումը¹⁸⁸ հավաքական հասկացություն է, և ասերն ու հեսպերիտները (իմա՝ սսպեյրները) հանդիսացել են սկյութական առանձին ցեղեր: Մեր կարծիքով, որը հավանական է, հույներն, անցնելով Ճորոխը, մտել են Հայաստան և

¹⁸¹ Տե՛ս Անաբասիս, էջ 103-104:

¹⁸² Անդ, էջ 104:

¹⁸³ Տե՛ս Հարությունյան Բ., Սեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն..., էջ 98-99:

¹⁸⁴ Անդ, էջ 97, 99:

¹⁸⁵ Տե՛ս Անաբասիս, էջ 197:

¹⁸⁶ Տե՛ս Strabo, XI, 14, 9.

¹⁸⁷ Տե՛ս Ադոնց Ն., Հայաստանի պատմություն, էջ 325:

¹⁸⁸ Տե՛ս Խորիկյան Հ., Արեմենյան Պարսկաստանի XIX սատրապության էթնիկական կազմի վերաբերյալ, էջ 118:

այդ մասին չեն իմացել: Գյումնիասը, որը պատմագիտական գրականության մեջ նույնացվել է Բաբերդին¹⁸⁹, մեր կարծիքով, համապատասխանում է Ճորոխի ծախ ավին գտնվող Արմանային, իսկ այն վայրը, որտեղ երեք օր հանգստացել էին հույները՝ Ապարանքի շրջանին¹⁹⁰: Եթե Գյումնիասը նույնանար Բաբերդին, ապա Քսենոփոնը պետք է խոսեր այդ շրջանից Ճորոխ գետը հաղթահարելու մասին, որը շատ հարմար էր գետանցման համար: Բայց փաստորեն նման հիշատակություն չկա և այս անգամ հույներն անցել էին գետը Կղարջքից և դրանով խախտել էին ակունքների շրջանում գետերն անցնելու «ավանդույթը»: Կարևոր է նկատի ունենալ նաև, որ եթե հույները Կղարջքից ճանապարհը շարունակեին Ճորոխի աջ ավիով, ապա նորից կմտնեին տառիսների երկիրը, բայց այդ մասին հիշատակություն չկա: Միաժամանակ, չնայած որ հեսպերիտները հիշատակվում են որպես Տիրիբազոսին ենթակա ցեղ, այդուհանդերձ հույներն անմիջականորեն չեն անցել Սպերի տարածքով և, ըստ երևույթին, նկատի է առնված հեսպերիտ-ասպեյրոների այն հատվածը, որը գտնվել է Ճորոխի ծախափնյակում և ընդհանուր անունով կոչվել է սկյութեններ: Սկյութենների երկրից հետո հույները մտնում են մակրոնների երկիրը և դուրս գալիս Հայաստանից:

Հայաստանի Աքեմենյան տիրապետության ժամանակաշրջանի արևելյան, հարավարևելյան և հյուսիսային սահմանների ճշգրտման հարցը աղբյուրագիտական կցկտուր նյութի պատճառով հանդիպում է որոշակի դժվարությունների: Այդուհանդերձ, սկզբնաղբյուրներում կան տեղեկություններ, որոնք հարցիս պարզաբանման համար կարևոր նշանակություն ունեն: Ատրաբոնը գրում է. «Սակայն սակերը կատարեցին զանազան արշավանքներ նման կիմներների և տրերների՝ թե՛ հեռավոր և թե՛ մերձավոր երկրների վրա. գրավեցին Բակտրիան և նվաճեցին Հայաստանի ամենալավ գավառը, որ և պահելով իր վրա նրանց

¹⁸⁹ Սես Հարությունյան Բ., նշվ. աշխ., էջ 95: Տես նաև Երեմյան Ս., Հայաստանը և Փոքր Ասիան ըստ Քսենոփոնի «Անաբասիս»-ի, քարտեզ.-«Անաբասիս» գրքում: Միայն Հ. Մանանդյանն է փորձել Գյումնիասը տեղադրել Գյումրիի տեղում (տես Մանանդյան Հ., Հին Հայաստանի և Անդրկովկասի պատմության մի քանի սրբաբանների մասին, էջ 263-266):

¹⁹⁰ Սես Հարությունյան Բ., Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի և այլ աղբյուրների, քարտեզ:

մականունը՝ կոչվեց Սակասենե, և առաջացան մինչև Կապադովկիա և Նույնիսկ Եվբսիոյան ծովի մոտ, որ այժմ կոչվում է Պոնտական Կապադովկիա»¹⁹¹: Ստրաբոնի մեկ այլ տեղեկությամբ Հայաստանի Սակասենե գավառը տարածվել է մինչև Կուր գետը. «Հայաստանի ներսում կան շատ լեռներ և շատ լեռնադաշտեր, որոնց մեջ խաղողի այգին հեշտությամբ չի աճում. նաև շատ հովիտներ, ոմանք չափավոր, ոմանք էլ շատ բերրի, ինչպես Արաքսենեի դաշտը, որով Արաքս գետն է հոսում մինչև Աղվանքի ծայրը և թափվում Կասպից ծովը, և սրա հետ Սակասենեն՝ սահմանակից Աղվանքին և Կուր գետին, հետո Գուգարքը»¹⁹²: Ստրաբոնի Սակասենեն ներառնելու էր աշխարհացույցյան Ուտիք աշխարհի Շակաշեն գավառն ու շրջակա տարածքները, այսինքն՝ Ուտիքի հյուսիսարևմտյան մասը, տարածվելով մինչև Տրտու (ներկայումս՝ Թարթառ) գետի ստորին հոսանքի հյուսիսակողմը, իսկ Շակաշենի հարևանությամբ հանդես եկող երկրամասը, որը կոչվում է Արաքսենեի դաշտ, տարածվել է Կուրի աջափնյակում՝ Կուր և Երասխ գետերի ջրկիցից մինչև Տրտու գետի և Կուրի ջրախառնուրդը ընկած շրջանում և համապատասխանում է Պատմահոր հիշատակած Ուտիք աշխարհին¹⁹³: Միաժամանակ, Ստրաբոնի հիշատակած Արաքսենեի դաշտը տարածվել է ոչ միայն Երասխի կամ Արաքսի ձախ, այլև աջ ափին, հետևաբար աջափնյա Արաքսենեն, որը հույն աշխարհագրագետի մոտ վարչական հատուկ անվանում չունի, իրականում Կասպիանե-Կասպքի մի մասն է¹⁹⁴: Այսպիսով, Արաքսենեի դաշտը ընդգրկել է Միլի տափաստանը և Մուղանի դաշտի մի մասը:

Հայաստանի հարավային սահմանի ճշգրտման համար արժեքավոր նշանակություն ունի Ստրաբոնի տեղեկությունն Արտաշես Ա-ի կողմից Կասպիանեն, Փավնիտիսը և Բասորոպեդան մարերից գրավելու մասին¹⁹⁵: Ըստ Բ. Հարությունյանի՝ Փավնիտիսը և Բասորոպեդան պետք է տարածապես համընկնեին Պարսկահայքին և Մարդպետականին (Արևելյան Կասպուրական):

¹⁹¹ Ստրաբոն, էջ 37:

¹⁹² Անդ, էջ 55:

¹⁹³ Տե՛ս Հարությունյան Բ., Արցախի, Հայոց Արևելից կողմերի և Ղարաբաղի տարածքի հարցի շուրջը, «ՊԲՀ», 1994, թիվ 1-2, էջ 260:

¹⁹⁴ Անդ, էջ 264-265:

¹⁹⁵ Տե՛ս Ստրաբոն, էջ 57:

Փավնիտիսը նույնանուն է Մարդպետականի, իսկ Բասորոպեդան՝ Պարսկահայքի տարածքին¹⁹⁶: Մարերի անվան տակ պետք է հասկանալ ատրպատականցիներին: Ըստ Արիանոսի, Գավգամելայի ճակատամարտին Ատրոպատեսի հետ էին կաղուսիները, աղվանները և սակեսիները¹⁹⁷: Ճակատամարտին մարերը, կաղուսիները, աղվաններն ու սակեսիները հանդես են գալիս առանձին դասավորությամբ. մարերն ու կաղուսիներն առանձին-առանձին, իսկ աղվաններն ու սակեսիները միասին¹⁹⁸: Ռուփոսի մոտ Գավգամելայի ճակատամարտում աղվաններն ու սակեսիները չեն հիշատակվում¹⁹⁹: Արիանոսը աղվաններին հիշատակում է նաև Դարեհին շրջապատող ցեղերի մեջ²⁰⁰: Կաղուսիների հետ հիշատակվող սկյութներին, որոնք դաշնակցային հարաբերությունների մեջ էին Դարեհ Գ-ի հետ և օգնության էին շտապում նրան²⁰¹, միգուցե կարելի է նույնացնել սակեսիների հետ, սակայն դժվար է հաստատել: Ատրոպատեսի հետ, հավանաբար, կաղուսիները, աղվանները և սակեսիներն ունեցել են դաշնակցային հարաբերություններ և եղել են վարձկաններ, քանի որ «մարերի հետ էին»²⁰² և ոչ թե հրամանատարության տակ: Սակեսիներին նույնացնելով հայկական Շակաշենի հետ՝ որոշ ուսումնասիրողներ փորձել են հայկական այդ երկրամասը տեսնել Աղվանքի մեջ, որն, ըստ Ա. Հակոբյանի հանգամանալից քննության, ձիշտ չէ, քանի որ սակեսիների և աղվանների նույն շարքում հիշատակվելը բաժանում է աղվանների բնակեցման տարածքը Ասկասենեից, և երկու տերմինների նույնացումը հիմնված է միայն հարաբերական համահնչունության վրա²⁰³:

Սակեսիներին նույնացնելով սակասենների հետ՝ դժվար է նույնիսկ կարծել, որ սակ-սկյութները, որոնք Շակաշենում էին

¹⁹⁶ Տե՛ս Հարությունյան Բ., Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման կամավարձն..., էջ 342-343:

¹⁹⁷ Սեյ Արիանոս, էջ 97; Arrian, III, 8, 4, p. 246-247; Арриан, с. 110.

¹⁹⁸ Սեյ Արիանոս, էջ 101; Arrian, III, 11, 4, p. 256-257; Арриан, с. 113.

¹⁹⁹ Սեյ Ռուփոս, էջ 350-351; Quintus Curtius, IV, XII, 6-13, p. 270-275; Квинт Курций Руф, с. 115.

²⁰⁰ Սեյ Արիանոս, էջ 103; Arrian, III, 13, 1, p. 262-263; Арриан, с. 114.

²⁰¹ Սեյ Արիանոս, էջ 112:

²⁰² Սեյ Արիանոս, էջ 97:

²⁰³ Սեյ Ա. Акопян А., Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, էջ 13:

հաստատվել մ. թ. ա. VII դարում²⁰⁴, և համաձայն սկզբնաղբյուրների՝ Ուտիքը կազմել է Սատրապական Հայաստանի անբակտելի մասը, մ. թ. ա. 331 թվականին պետք է Գավգամելայի ճակատամարտին հանդես գային մնացած հայերից առանձին, քանի որ այդ ժամանակ նրանք նույնպես արդեն հայեր էին և վաղուց կորցրել էին իրենց էթնիկ դիմագիծը՝ հիշողությունը պահպանելով միայն գավառանվան մեջ:

Սակերը հաստատվել էին նաև Սյունիքում, և Ձագիկ նահապետի անունը կարող է աղերս ունենալ Հայաստան ներխուժած Սակ կամ Շակ ցեղի անվանմանը, որն իր անունն էր տվել Ուտիքի Շակաշեն գավառին: Հավանաբար, ավելի ուշ Սակը կամ Շակը, Հայաստանի մեկ այլ մասում հնչյունափոխվելով, վերածվում է Ձագի, իսկ Ձագեծորն էլ՝ Ջանգեզուրի՝ ժողովրդի կողմից մեկնաբանվելով որպես «Ջանգն իզուր»²⁰⁵: Սակայն ինչպես Ուտիքում, այնպես էլ Սյունիքում եկվոր էթնիկական տարրը ձուլվել էր հայերի մեջ և կորցրել իր էթնիկական ինքնուրույնությունը: Եթե Շակաշենը գտնվեր Աղվանքի մեջ, ապա այդ մասին կհաղորդեր Ստրաբոնը, որը, նկարագրելով Արտաշես Ա-ի ռազմաքաղաքական գործունեությունը, չի նշում աղվաններից երկրներ զրավելու մասին: Ցանկանում ենք ուշադրություն հրավիրել հետևյալ հանգամանքի վրա: Պլինիոս Ավագի հիշատակած սակասանները²⁰⁶ տեղադրվում են Ասեաց փոքր գավառում և ոչ մի կապ չունեն Շակաշենի հետ²⁰⁷: Սա նշանակում է, որ ինչպես սակ-սկյուրների մի հատվածը կարողացել էր հաստատվել Ասեաց փոքրում, մյուսը՝ Շակաշենում, ապա երրորդն էլ, ելնելով սակեսիանների և աղվանների համատեղ հիշատակումից և միասնական հանդես գալուց, հաստատվել էր Կուր գետի ձախափնյակում: Սակասաններ-Սակասենեսակեսիաններ անվանումները, որոշակի հնչյունաբանական տարբերություններով հանդերձ, ցույց են տալիս, որ սրանց մեջ սակ-

²⁰⁴ Տե՛ս Հարությունյան Բ., Հայաստանի, հայ-իրանական հարաբերությունների..., էջ 31:

²⁰⁵ Տե՛ս Հարությունյան Բ., Մեծ Հայքի Սյունիք աշխարհն ըստ «Աշխարհացոյց»-ի (Պատմաաշխարհագրական դիտարկումներ), -«ՊԲՀ», 2003, թիվ 1, էջ 131:

²⁰⁶ Տե՛ս Plinii Secundi C., Naturalis historiae, VI, 11, 29.

²⁰⁷ Տե՛ս Հարությունյան Բ., Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգ..., էջ 98-99:

սկյութների անվանման առկայությունն անժխտելի է: Մեր կարծիքով, սակեսիները և աղվանները աշխարհագրորեն տեղորոշվում են XVIII սատրապությունում, որտեղ կար սկյութական մեծ գաղթականություն, ընդ որում ավելի լայն առումով սակեսիներին նույնացնում ենք սասայերների հետ, որոնք անվանումը կապված է իբերների հետ²⁰⁸: Սա ցույց է տալիս, որ մ. թ. ա. IV դարի վերջերին XVIII սատրապությունը, չնայած ձևականորեն, շարունակում էր մնալ Աքեմենյան Պարսկաստանի կազմի մեջ և նրա վարչական սահմանները փոփոխության չէին ենթարկվել: Իսկ Հայաստանը Պարսկաստանի ճակատամարտին հանդես է գալիս որպես մեկ ամբողջություն՝ հայեր: Ի. Պյանկովը մարական սատրապության օրթոկորիբանտիների նույնացումը այսրկովկասյան սակեսիների հետ²⁰⁹ համարում է սխալ և օրթոկորիբանտիներին նույնացնում ղերքիկների հետ, որոնք բնակվել են Կասպից և Արալյան ծովերի միջև, չնայած Մարաստանի հետ տարածքային առումով անմիջականորեն չեն սահմանակցել²¹⁰: Օրթոկորիբանտիներին համարել են նաև թրակա-փոյուզական ցեղ և տեղադրել հին Մարաստանի տարածքում²¹¹: Անշուշտ, օրթոկորիբանտիները կապվում են Մարաստանի հետ, որի հյուսիսային սահմանագիծը Արաքսն էր: Քննություն չի բռնում նաև այն ուսումնասիրողների տեսակետը, որոնք փորձում են XV սատրապությունը տեղադրել Այսրկովկասում՝ փորձելով սակերին տեղորոշել Սակասենեի տարածքում, այսինքն՝ Գանձակ (ներկայումս՝ Գյանջա) քաղաքի շրջակայքում²¹²:

Հայաստանի արևելյան և հարավարևելյան սահմանների մասին կարևոր տեղեկություններ ունեն նաև հայ պատմիչները: Մովսես Լուրեմացու հաղորդմամբ մ. թ. ա. III դարի վերջերին Ուտիքը

²⁰⁸ Այս մասին տես «Աքեմենյան Պարսկաստանի XVIII սատրապության տեղադրությունը և սահմանները» գլխում:

²⁰⁹ В. И. Дьяконов И., История Мидии, т. 248, 447:

²¹⁰ В. И. Пьянков И., «История Персии» Ктесия и среднеазиатские сагрании Ассамандов в конце V в. до н. э., т. 43, 49:

²¹¹ В. И. Пьянков И., «История Персии» Ктесия и среднеазиатские сагрании Ассамандов в конце V в. до н. э., т. 43, 49:

²¹² В. И. Пьянков И., «История Персии» Ктесия и среднеазиатские сагрании Ассамандов в конце V в. до н. э., т. 43, 49:

մտնում էր Հայաստանի մեջ.«Լուր հասանէ առ Երուանդ յՈւտէացոց գաւառին, եթէ գումարեաց արքայն Պարսից զօրս բազումս ի ձեռն Սմբատայ, զի ի վերայ քո խաղացեալ ածցէ զմանուկն Արտաշէս ի թագաւորութիւն իւր»²¹³: Ըստ Խորենացու՝ «Իսկ Սմբատ հանդերձ մանկամբն Արտաշիսի աճապարեր հասանել ի սահմանս Ուտէացոց: Ընդ առաջ նորա ելին զօրք այնր կողմանն, նա և նախարարքն զօրս եթող Երուանդ»²¹⁴: Պետք է նշել, որ Խորենացու այս տեղեկությունները, որոնք ծագում են Ողյումպ քրմից (մ. թ. II դար) պատմականորեն հավաստի են և համընկնում են Ստրաբոնի տեղեկությունների հետ²¹⁵: Այս տեղեկությունները ցույց են տալիս, որ Ուտիքը Հայաստանի մեջ է մտել դեռևս հին ժամանակներից: Օրինակ, ըստ Բ. Հարությունյանի, Տիգրան Երվանդյանն իր անունը կրող Տիգրանակերտ ավանը կառուցել է հայոց թագավորների ձեռնոց Ուտիքում, որը գտնվել է Սեբեոսի հիշատակած Տիգրանակերտ ավանի (հայերն ավերակներն անվանել են Թնգրնակերտ, իսկ եկվոր մահմեդականները՝ Թառնագյուտ) մոտ, Շահ-բուլաղ կամ Արքայի աղբյուր (Արքայակն աղբյուր) վայրում²¹⁶: Թովմա Արծրունին հաղորդում է, որ մեծն Տիգրան Հայկազնը Մարաստանի Աժդահակ թագավորի դեմ ձակատամարտ տալու համար զորք է ժողովում «եւ վագս առեալ փութացան մտին ընդ կողմն Մականայ, բանակեցան ի դաշտավայրին Մեդիացոց»²¹⁷: Արծրունյաց տան պատմիչը, որն օգտվել է մեզ անհայտ ինչ-ինչ աղբյուրներից, Արաքսը համարում է Հայաստանի և Մարաստանի սահմանը, և Մուղանի դաշտը (հմմտ. Խորենացու մոտ Մեդացոց կողմերը) մտցնում Մարաստանի մեջ: Թովմայի մի կարևոր վկայությունից պարզվում է, որ Երվանդ Վերջին արքայի օրոք Մեծ Հայքի թագավորության սահմանը Պարսկահայքի շրջանում անցել է Անձախիձոր գավառի

²¹³ Մովսես Խորենացի, էջ 169:

²¹⁴ Անդ, էջ 170:

²¹⁵ Տես Տիրացյան Գ., Մովսես Խորենացու «Հայոց պատմության» և Ստրաբոնի «Աշխարհագրության» մի քանի տվյալներ Հայաստանի ն. մ. թ. III-II-րդ դարերի պատմության մասին, «Բանբեր Մատենադարանի», 1962, թիվ 6, էջ 7-24:

²¹⁶ Տես Հարությունյան Բ., Հայաստանի, հայ-իրանական հարաբերությունների..., էջ 10-11:

²¹⁷ Թովմա Արծրունի և Անանուն, էջ 62:

արևելակողմով²¹⁸, այսինքն՝ Հեր և Ջարևանդ գավառները դեռևս հայոց պետության մեջ չէին մտնում²¹⁹: Թովման նշում է նաև, որ Ջարավանդը Ատրպատականի գավառն էր²²⁰: Մեր կարծիքով, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ Թովման նշված տարածքները համարում է Ատրպատականի և ոչ թե Մարաստանի մաս: Բնականաբար, տարբերությունն ակներև է: Պարզապես Ատրպատականը, որը հզորացել էր մ. թ. ա. IV դարի վերջին տասնամյակներին, կարողացել էր նվաճել Ուրմիո լճի ավազանը, այդ թվում և հետագա Պարսկահայք աշխարհի ամբողջ տարածքը: Վերևում ցույց տվեցինք, որ Սատրապական Հայաստանի հարավային սահմանն անցել է Ուրմիո լիճը թափվող Արասխ գետով: Հայաստանի և X սատրապության սահմանը տարածվել է, ամենայն հավանականությամբ, Ուրմիո լիճը թափվող Սաղամաս գետից հյուսիս՝ մինչև Կարմիր կամ Կոտոր գետի հոսանքը, վերջինիս Արաքսի հետ միախառնվելու հատվածը: Որ Կարմիր գետը հանդիսացել է սահման X սատրապության և Սատրապական Հայաստանի միջև, կարելի է հիմնավորել նաև հետևյալ տեղեկություններով: Մովսես Խորենացու տեղեկությունից պարզվում է, որ Վաղարշակ արքան «ներքինիս հրամայե ի նոյն ազգէ խզել. և նահապետ նոցա զՀայր իշխան մասին յԱտրպատականէ մինչև ցճուաշ և ցՆախճաւան, և նահապետութեան ազգին սա մեծարոյ»²²¹: Քանի որ Փավնիտիսը նույնանուն է Մարդպետականին, ապա Պատմահոր այս կարևոր տեղեկությունից կարելի է եզրակացնել, որ Կարմիր գետը և Նրասխը հանդիսացել են սահմանային գետեր նախ X սատրապության, ապա Ատրպատականի և Հայաստանի միջև: Հետաքրքիր է նաև Թովմա Արծրունու տեղեկությունն այն մասին, որ Նովանդը «երթայ գետեղի ի Նախճաւանն աւանի յոստանին Վասպուրական աշխարհին»²²²: Ըստ պատմիչի, Երվանդը Ատրպատականի սահմաններով է վերադառնում Անձախի ձոր և հետո գնում Նախճավան²²³: Պատմիչի այս տեղեկությունից երևում

²¹⁸ Անդ, էջ 84:

²¹⁹ Նուս Հարությունյան Բ., Արցախի, Հայոց Արևելից կողմերի..., էջ 260:

²²⁰ Նուս Թովմա Արծրունի և Անանուն, էջ 82:

²²¹ Մովսես Խորենացի, էջ 112:

²²² Թովմա Արծրունի և Անանուն, էջ 84:

²²³ Անդ:

է, որ Հայաստանի մեջ մտնող Անձահի ծորը եղել է Ատրպատականին սահմանակցող գավառ, և Երվանդը Նախճավան գնալու համար պետք է անցներ Ճուաշ գավառով, որը մտնում էր Հայաստանի մեջ: Թովմա Արծրունու տեղեկություններից ևս կարելի է եզրակացնել, որ Կարմիր գետը սահմանային գետ էր ինչպես Հայաստանի և Ատրպատականի միջև, այնպես էլ Աքեմենյան ժամանակաշրջանում XIII և X սատրապությունների համար: Մեր կարծիքով, Հայաստանը մարերից նվաճում է միայն Կասպիանե-Փայտակարանը և Փավնիտիս-Մարդպետականը, իսկ Բասորոպեդա-Պարսկահայքը վերամիավորվել է: Միաժամանակ, դատելով հին աղբյուրների որոշ տվյալներից²²⁴, Արտաշես Ա-ն Փայտակարանը գրավել է ոչ թե մարերից, այլ կաղուսիներից: Ա. Հակոբյանը, մանրամասն քննելով հին աղբյուրների տեղեկությունները, հաստատում է, որ աղվանների և կաղուսիների սահմանն անցնում էր Կուր գետի ստորին հոսանքով, և Արտաշես Ա-ն գրավել է կաղուսիների երկրի հյուսիսային մասը՝ Կասպիանե-Փայտակարանը²²⁵:

Ուտիքի, Արցախի և Հայաստանի հյուսիսային շրջանների էթնիկական պատկանելության հարցի պարզաբանման համար կարևոր նշանակություն ունեն վանյան սեպագիր արձանագրությունների տեղեկությունները: Հ. Կարազոյզյանի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Եթիու երկրի տարածքը (Այրարատ նահանգը և շրջակայքը) բնակեցված է եղել հնդեվրոպական-հայկական ցեղերով: Շատ սեպագրագետի, հայ ժողովուրդը կազմավորվել է հնդեվրոպացիների նախահայրենիքի բուն տարածքի արևելյան կեսում՝ ամբողջ Հայկական լեռնաշխարհում, իսկ նրա անունը ծագում է Հայկական լեռնաշխարհի հյուսիսային կեսի բնիկների՝ Եթիու երկրի տարածքն

²²⁴ Стен Сирабон, XI, VI, 1, XI, VIII, 8.

²²⁵ Стен Акопян А., Նշվ. աշխ., էջ 13: Ֆ. Տեր-Մարտիրոսովի կարծիքով, Կասպիանեն, Բասորոպեդան և Փավնիտիսը իր տիրույթներին է միավորում XVIII սատրապության (Հայաստանի որոշ տարածքները և Այրկովկասի կենտրոնական շրջանները) տիրակալ Արսամ Կողոմանը (ապագա Ղարեհ Գ-ն) մ. թ. ա. IV դարի կեսերին (տես Тер-Мартиросов Ф., Границы Армении в Закавказье (IV-II вв. до н. э.), «ՊԲՀ», 2006, քիվ 1, էջ 298-306):

գբաղեցնող ցեղային հզոր միության անունից²²⁶։ Ուսումնասիրող Ա. Պետրոսյանն իր աշխատություններում ցույց է տալիս, որ Հայկական լեռնաշխարհի մերձսևանյան և հյուսիսարևելյան եզերական շրջանների «ուրարտական» և «վաղհայկական» դարաշրջանների բնակչության միջև գոյություն ունեւ ծագումնաբանական սերտ կապ, որ տեղական բնակչության մեջ երկու դարաշրջաններում էլ հնդեվրոպական-հայկական էթնիկ տարրն ունեցել է գերակշիռ դեր²²⁷։ Ա. Պետրոսյանը ցույց է տալիս, որ Ուրարտուի դարաշրջանում վաղնջահայ ցեղերի հիմնական բնակեցման շրջան է համարվում սեպագիր աղբյուրների էթիմոնի/սի երկիրը։ Նրա համոզմամբ, «հայ» ցեղանունը կապվում է հնդեվրոպական *roti- «տեր, անուպին» արմատի հետ, որից ծագած հետագա նախահայերեն *հըթիյո-կամ *հաթիյո-ածանցյալ ձևը կարող էր սեպագրում արտացոլվել որպես էթիու-²²⁸։ Ա. Պետրոսյանը հասնամանալից քննությամբ ցույց է տալիս, որ ուրարտական դարաշրջանի Վելիքունի/սի երկրի բնակչությունը եղել է հայկական։ Նա նշում է, որ Հայաստանում գեղ- արմատով տեղանունները կենտրոնացված են Գեղամա լեռներում և Գեղաքունի (Գեղարքունի) գավառում, և Գեղամա լեռներում մեծ խտությամբ կենտրոնացած վիշապ քարակոթողները հայերեն կոչվել են գեղ, իսկ հայերեն գեղնի- «հայ» բառը կարելի է ստուգաբանել որպես Գեղ աստծուն պաշտող ժողովուրդ²²⁹։

Ուրարտագիտական նյութի քննությունը ցույց է տալիս, որ ուրարտացիները հասել են Վիտերուլիտ-Գուգարք, Ջաբախա-

²²⁶ Յեն Կարաгезян О., Проблема этногенеза и самоназвания армянского народа по письменным источникам, էջ 57-76:

²²⁷ Յեն Պետրոսյան Ա., Սարգուրի II-ի անդրսևանյան արշավանքի երթուղու շուրջ- «ՊԸՀ», 1984, թիվ 2, էջ 175-184; նույնի՝ Մերձսևանյան ցեղերի միությունը Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելքում (մ. թ. ա. VI-V դդ.), «ՊԸՀ», 1976, թիվ 1, էջ 187-198:

²²⁸ Յեն Պետրոսյան Ա., Самоназвание армян и вопрос локализации носителей языка армянского языка, «ԼՀԳ», 1991, թիվ 5, էջ 120-129: Ուսումնասիրող Վ. Խաչատրյանը գտնում է, որ էթիմոնի նշանակում է «անձնական» (խուճի-նրարտական et «անձ» արմատից և -(ս) ու անանցից) և հավանաբար, Արարատ անվան անուղղակի թարգմանությունն է։ Այդ երկիրը կոչվել է Արայի անձի անունով, ուստի և ուրարտացիները կարող էին այն անվանել էթիմոնի «անձնական» (տես Պետրոսյան Վ., Հայաստանը մ. թ. ա. XV-VII դարերում, Երևան, 1998, էջ 111):

²²⁹ Յեն Պետրոսյան Ա., Отражение индоевропейского корня *uel- в армянском языке, «ԼՀԳ», 1987, թիվ 1, էջ 56-70:

Ջավախք, Ուրջիա-Արքեվան (Ցուրտավ, Գաջենք), Ալիշուու-Աղստև, Ամիգու-Անոջ, Տերիա-Տրի, Խուշանե-Խոթձենք, Թարիունե-Թռեղք և այլն²³⁰: Այս համեմատությունները ցույց են տալիս, որ Կուր գետը հանդիսանում էր ինչպես Ուրարտուի, այնպես էլ հին Հայաստանի հյուսիսային սահմանը²³¹: Միանգամայն բնական է, որ Ուրարտուի, այնուհետև հին Հայաստանի թագավորները երկրի սահմանը հասցնեին մինչև Կուր գետը, որը բնական ամուր պատնեշ էր քոչվորների դիմաց:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևելյան եզերական շրջանների բնակչությունն ունեցել է հնդեվրոպական ծագում: Ս. Երեմյանը Գուգարքի հյուսիսային գավառներից մեկի՝ հայկական Թռեղքի անվանումը կապում է տրերների ցեղանվան հետ: Նրա կարծիքով, տրերների թրակական ցեղերից մեկի կամ թերևս կիմերական ցեղի էթնանունը պահպանվել է Թարթառ գետի անվան հնագույն ձևում՝ Տրտու, Տրտուական, և նույն տեղում գտնվող Տոի գավառանվան մեջ (ուրարտ. Teriani): Ըստ Ս. Երեմյանի, բացի Կումայրիի շրջանից, կիմերների հիմնական մասը պետք է բնակվելիս լիներ Ուրարտուի սահմաններից հյուսիս՝ Փոքր Կովկասի հյուսիսային ու արևելյան լանջերին՝ ընդհուպ մինչև Թռեղքի լեռներն ու Կուր գետը²³²: Ս. Պետրոսյանի կարծիքով ևս, թրակա-կիմերական ցեղերը բնակվել են Շիրակ-Արշարունիքում, Գուգարքում, Տաշիրում, Թռեղքում: Հեղինակը ենթադրում է, որ հայերենակիր էթնիկական տարրը ունեցել է գերակշռություն և մ. թ. ա. VI դարի ընթացքում, երբ Շիրակ-Արշարունիքը և հարավային Գուգարքը ընդգրկվեցին Երվանդունիների Այրարատյան թագավորության կազմի մեջ, նրանց բնակչությունն հիմնականում արդեն հայկական էր²³³:

²³⁰ Տես Կարագոզյան Հ., Արևելյան Հայաստանի ուրարտական տեղանունները, էջ 55-76, Սեպագիր տեղանուններ, էջ 91, 186, 194-196: Տես նաև Գայսերյան Վ., Սեպագիր արդյուրների ^{KUR}Էիս երկրի տոպոնիմիկայի հարցեր, «ԼՀԳ», 1990, թիվ 3, էջ 76-77, 79-81 և այլն:

²³¹ Տես Կարագոզյան Հ., Սեպագիր տեղանուններ, էջ 91-92: Տես նաև Տիրացյան Գ., Երվանդյան Հայաստանի տարածքը (մ. թ. ա. VI դար), էջ 90-92:

²³² Տես Երեմյան Ս., Կիմերական ու սկյութական ցեղերի արշավանքները և Ուրարտուի ու Ասորեստանի պայթյալը քոչվորների դեմ, «ՊԲՀ», 1968, թիվ 2, էջ 92:

²³³ Տես Պետրոսյան Ս., Թրակա-կիմերական ցեղերի միությունները Հայկական լեռնաշխարհում (մ. թ. ա. VI-V դդ.), «ՊԲՀ», 1977, թիվ 1, էջ 207-220:

Հայաստանի հյուսիսային սահմանների պարզաբանման համար կարևոր տեղեկություններ է հաղորդում Ստրաբոնը: Հույն աշխարհագետը գրում է, որ հայերը «...իբերներից (գրավեցին) Պարիադրեսի ստորոտի գավառները, Խործենեն, Գոգարենեն, որ ընկած է Կուր գետի մյուս կողմում»²³⁴: Բերված տեղեկությունից կարելի է եզրակացնել, որ Պարիադրեսի լեռնալանջերը և Խործենեն գտնվել են Կուր գետից դեպի արևմուտք, իսկ Գոգարենեն՝ գետից դեպի արևելք: Ստրաբոնի մոտ Պարիադրեսը, ինչպես և Մոսքական լեռները, Տավրոսի ճյուղերից են²³⁵: Պարիադրեսը (իմա՝ Սկյուդիսես) նույնացնում ենք Պոնտական լեռնաշղթայի արևելյան մասի՝ ներկայիս Լազիստանի լեռների հետ, որոնց՝ Ճորոխի ստորին հոսանքի ձախափնյակում ընկած լեռնալանջերը գրավում է Արտաշես Ա-ն: Մեր կարծիքով, դրանք այն տարածքներն են, որոնք ավելի ուշ հայտնի են Մրուղ և Նիգալ անուններով²³⁶: Բ. Հարությունյանի կարծիքով, Կղարջք գավառը սկզբնապես եղել է ընդարձակ՝ իր մեջ ներառելով Շավշեթ, Մրուղ, Մրիտ և Նիգալ գավառների տարածքները²³⁷: Խործենեն (ուրարտական Խուշանի-Խուշախիին) տեղադրվում է Արտահանի շրջակայքում²³⁸: Սակայն ելնելով Ստրաբոնի այն հաղորդումից, որ «Խործենեն և Կամբյուսենեն՝ Հայաստանի ամենահյուսիսային գավառներն են և շատ ծյունառատ, որովհետև մոտ են Կովկասյան լեռներին և Վիրքին ու Կողքսին»²³⁹, կարելի է եզրակացնել, որ Խործենեն ունի ավելի լայն աշխարհագրական ընդգրկում՝ ներառելով ամբողջ արևմտյան Գուգարքը: Այսպիսով, խալկոս-մոսքերի երկիրը Ստրաբոնը բաժանում է երկու մասի՝ Ճորոխի ստորին հոսանքի ձախափնյակը և Կուրից արևմուտք ընկած հողերը: Այսպիսի նույնացման դեպքում կարելի է մտածել, որ Արտաշես Ա-ի

²³⁴ Ստրաբոն, էջ 57:

²³⁵ Стрaboн, XI, XII, 4.

²³⁶ Այս մասին մանրամասն տես Խորիկյան Հ., Ապոլոդորոսի մի տեղեկության շուրջ, «ՊԲՀ», 2008, թիվ 1, էջ 222-231:

²³⁷ Տես Հարությունյան Բ., Մեծ Հայքի Գուգարք աշխարհը ըստ «Աշխարհացոյց»-ի, «ԲԵՀ», 1977, թիվ 2, էջ 194:

²³⁸ Տես Մանանդյան Հ., Маршруты понтийского похода Помпея и путь отступления Мумридата в Колхиду, Труды, т. V, Ереван, 1984, с. 252-254; Խույնի՝ Քննական տեսություն..., էջ 121:

²³⁹ Strabo, XI, XIV, 4.

գրավումից հետո Հայաստանը փոքր հատվածով Ճրրոխի գետաբերանում դուրս է եկել Սև ծով²⁴⁰: Աշխարհագրական այս տեղադրությունները ցույց են տալիս, որ հայերը գրավել են խայլութնոսքերի երկիրը, որը Գոգարենե-Գուգարք հայկական երկրամասի հետ վրացիները նվաճել էին Փառնավազ Ա-ի օրոք (մ. թ. ա. III դարի 70-ական թվականներ)²⁴¹:

Անկասկած, Սատրապական Հայաստանի սահմանների քննության ու պարզաբանման համար Ստրաբոնի տեղեկությունները պատմական հավաստիության տեսանկյունից խիստ արժեքավոր են: Ընդ որում, Ստրաբոնի տեղեկությունների և հայկական աղբյուրների քննական համեմատությունը հանգեցնում է մի շարք եզրակացությունների: Վերևում խոսել ենք, որ համաձայն Ստրաբոնի, հայերը մարերից գրավում են Կասպիանեն, Փավնիտիսը և Բասորոպեդան: Այս տեղեկությունը ցույց է տալիս, որ երկու երկրների սահմանը հանդիսացել է Երասխ գետը: Վերջինս հանդիսացել է Արաքսենի և Սակասենի հարավային սահմանագիծը: Պլինիոս Ավագը Կուրի աջափնյակում՝ Արաքսից մինչև Գուգարք, տեղադրում է Օտենան, որը հայկական Ուտիքն է²⁴²:

«Աշխարհացոյց»-ում Ուտիքի մասին ասված է. «Փայտակարան յելից կայ Ուտիոյ առ Երասխաւ»²⁴³ և «Ուտի առ

²⁴⁰ Որ Հայաստանը Արտաշես Ա-ի ժամանակ դուրս է եկել Սև ծով, ցույց է տալիս նաև Բ. Հարությունյանը (տես Հարությունյան Բ., Մեծ Հայքի Գուգարք աշխարհը..., էջ 179): Ս. Երեմյանի կարծիքով, Պարիադրես (Պարխար) լեռների ստորոտը համապատասխանում է Գոգերծական գավառին, և երեք հիշյալ երկրամասերը, այսինքն՝ նաև Գոգարենեն և Խործենեն (Կղարջքը և Արտահանը), լինելով Հայաստանը ներառող Աբենեյան սատրապության մասեր, ողջ III դարի ընթացքում ընդգրկված են եղել Երվանդունիների պետության մեջ ու միայն դարավերջում են մնցել Վրաստանին: Այս դատողությամբ, Արտաշեսի կողմից նրանց նվաճումը պետք է դիտել որպես վերամիավորում (տես «Հայ ժողովրդի պատմություն», ՀՍՀ ԳԱ հրատարակչություն, հ. I, էջ 532): Ա. Ղարազյոզյանը Խործենեին տարածքային առումով հատկացնում է ընդարձակ տարածք, օրինակ՝ հարավ-արևելքում մինչև Բասեն, իսկ Պարիադրեսը նույնացնում է Ծաղկավետին, ներկայումս՝ Դումրուղաղ (տես Ղարազյոզյան Ա., Անտիկ աղբյուրների Պարիադրես լեռը.-«ՊԲՀ», 1999, թիվ 2-3, էջ 290):

²⁴¹ Տես Հարությունյան Բ., Մեծ Հայքի Գուգարք աշխարհը..., էջ 179:

²⁴² Տես Plinii Secundi C., Naturalis historiac, VI, 42, XII, 28.

²⁴³ «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացոյ յաւելուածովք նախնեաց», հրատ. Ա. Սուքրեան, Վենետիկ, 1881, էջ 33:

մտից կայ Երասխայ ընդ մէջ Արցախայ եւ Կուր գետոյ»²⁴⁴: Ելնելով բերված տեղեկություններից՝ պետք է ընդունենք, որ Ուտիքը տարածվել է մինչև Երասխ գետը, որը հանդիսացել է Ուտիքի և Փայտակարանի սահմանագիծը:

Կարևոր է նաև Ստրաբոնի հետևյալ տեղեկությունը. «Հայաստանի գավառներից են նաև Փավենե, Կոմիսենե և Օրքիստենե, որ հայթայթում է մեծաքանակ հեծելազոր»²⁴⁵: Օրքիստենեն համապատասխանում է աշխարհագրության Արցախին, իսկ Կոմիսենեն Սյունիքին²⁴⁶: Արցախի, Սյունիքի, Ուտիքի տարածքն արձանագրված է ամսվազն մ. թ. ա. VIII դարից որպես հայկական ցեղերով բնակեցված երկրներ²⁴⁷: Այս առումով միանգամայն տեղին է Բ. Հարությունյանի տեսակետը. «Սիսակը և Առանը, որոնք ներկայացնում են Սյունիքի, Արցախի և Ուտիքի բնակչությունը, ըստ Խորենացու, սերում են Հայկից՝ հայ ժողովրդի նախահորից, նշանակում է, անվիճելի է, որ արդեն Խորենացու ժամանակ և նրանից առաջ դրանց բնակչությունը եղել է հայկական: Պատմիչի մեկ այլ տեղեկությունն այն մասին, Առանի կողմնակալությունը ստեղծվել է «գեգերբ հայկական խոսից», վկայում է, որ Կուրի և Երասխի միջագետքը ունեցել է հայ բնակչություն՝ սկսած հնագույն ժամանակներից»²⁴⁸: Արցախը, Սյունիքը, Շակաշենը և Արաքսենեի դաշտը Ստրաբոնի կողմից նշված չեն նվաճված երկրների թվում: Ուտիև, դրանք գտնվել են հայոց պետության կազմում դեռևս Արտաշեսից առաջ: Հարկավ պետք է նկատի ունենալ, որ Ստրաբոնը չի հաղորդում աղվաններից հողեր գրավելու մասին: Բ. Հարությունյանը Փավենեն նույնացրել է Փավնիտիսին²⁴⁹, իսկ Ա. Ղարաբյոզյանը՝ Ուտիք նահանգի Տրի գավառին²⁵⁰: Վերջին նույնացումը, մեր կարծիքով, ճիշտ չէ, քանի որ

²⁴⁴ Անդ:

²⁴⁵ Strabo, XI, XIV, 4.

²⁴⁶ Տե՛ս Հարությունյան Բ., Արցախի, Հայոց Արևելից կողմերի..., էջ 258, 262-264; Կարաբյոզյան Հ., Արևելյան Հայաստանի ուրարտական տեղանունները, էջ 56-57:

²⁴⁷ Տե՛ս Կարաբյոզյան Հ., Սեպագիր տեղանուններ, էջ 159: Տե՛ս նաև Հարությունյան Բ., Արցախի, Հայոց Արևելից կողմերի..., էջ 265:

²⁴⁸ Տե՛ս Арутюнян Б., Когда отсутствует научная добросовестность, - «ԼՀԳ», 1997, թիվ 7, էջ 51:

²⁴⁹ Տե՛ս Հարությունյան Բ., Արցախի, Հայոց Արևելից կողմերի..., էջ 262-264:

²⁵⁰ Տե՛ս Ղարաբյոզյան Ա., Սյունիքի տարածքը և ազգաբնակչությունը հին և միջին դարերում, - «ԼՀԳ», 2002, թիվ 1, էջ 114-115:

Արաքսենեի դաշտը ընդգրկում է այս տարածքը: Մենք կիսում ենք Փավենե-Փավնիտիս նույնացումը այն բացատրությամբ, որ Ստրաբոնի ժամանակ Փավենե-Մարդպետականը Հայաստանի կազմում էր, այսինքն՝ հեղինակի տեղեկությունները Փավնիտիս-Փավենեի վերաբերյալ արտացոլում են տարբեր ժամանակաշրջանների իրողությունները, և հարկ չկա դրանք միմյանցից տարբերակել:

Հետաքրքիր է նաև Խորենացու և Ստրաբոնի տեղեկությունների հետևյալ համեմատությունը: Ըստ Խորենացու, հայոց Արամ Նահապետը (իմա՝ Արամանի) իր արշավանքները արևմտյան, հարավային և հարավարևելյան ուղղություններով, սկսում է Արմավիրից, որը ցույց է տալիս այն իրողությունը, որ Հայաստանը մինչև Աքեմենյան տիրապետության հաստատումը արմատապես իր մեջ ներառել է նաև Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևելյան եզերական շրջանները, քանի որ հյուսիսային և հյուսիսարևելյան ուղղություններով ոչ մի արշավանքի մասին Պատմահայրը չի նշում: Ընդ որում, նկատի ունենանք, որ Արամի արշավանքներն էլ ուղղված էին Հայաստանից դուրս՝ հարևան շրջանների վրա: Այն հանգամանքը, որ Ստրաբոնը չի նշում աղվաններից երկրամասեր գրավելու մասին, ցույց է տալիս, որ հայ էթնոսի համար Կուր գետը հանդիսացել է էթնիկական և քաղաքական սահման, այսինքն՝ Կուրի և Երասխի միջագետքը ունեցել է հայկական բնակչություն:

Մեր քննության արդյունքները ցույց են տալիս, որ բացի արևմտյան Գուգարքից, Մարդպետականից և Փայտակարանից, Արտաշես Ա-ն և Ջարեհը վերամիավորել են հայկական հողերը: Բացի այդ, գոյություն ունենալու Փոքր Հայքի թագավորությունը, որի սահմանները հասնում էին մինչև Փառնակիա և Տրապիզոն²⁵¹: Ընդ որում, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ հայկական հողերի վերամիավորմամբ և նոր հողերի ձեռք բերմամբ երկրի քաղաքական և էթնիկական սահմանները դառնում են միասնական, Հայ ժողովրդի կազմավորման գործընթացը և հայ էթնոսի տարածումը երկրի սահմաններից դուրս, անհրաժեշտություն էր դարձնում ռազմաքաղաքական ճանապարհով ամրագրել

²⁵¹ Տե՛ս Ստրաբոն, էջ 75:

պատմական և աշխարհագրական նոր իրողությունների առկայությունը: Այնպես, որ Ստրաբոնի հաղորդումը, թե Արտաշեսի և Ջարեհի նվաճումներից հետո «հիմա բոլորը միալեզու դարձան»²⁵², Ս. Կրկյաշարյանի ճիշտ մեկնաբանությամբ նշանակում է, որ բոլորը արդեն դարձան մի ժողովուրդ (Ստրաբոնի մոտ «լեզու» տերմինը հոմանիշ է էթնիկական միավորի հասկացության)²⁵³:

Այսպիսով, հետադարձ հայացք նետելով կատարված բնութայնը կարող ենք արձանագրել, որ Հայաստանն ամբողջությամբ մտել է Աքեմենյան XIII սատրապության մեջ, որը տարեկան վճարում էր 400 տաղանդ հարկ և 20000 քուռակ ուղարկում պարսից թագավորին Միհրի տոնի համար²⁵⁴: XIII սատրապությունն ունեցել է հետևյալ սահմանները. արևմուտքում տարածվել է մինչև Կեսարիա-Պակտյուիկե և այստեղից հյուսիս՝ ներմուտք գետի և Յասոնի հրվանդանի միջև ընկած տարածքում, դուրս եկել Սև ծով, իսկ Կեսարիայից հարավ սահմանը ձգվել է «արքայական ճանապարհի» Ոսկե Կոմանա-Կոկիսոն-Մարաշ գծով (վերջինս արդեն Կիլիկիայի մեջ): Հարավային սահմանագիծն անցել է Անգամայից արևելք, Եփրատի արևելյան ափից և շարունակվել Ուտիա (ներկայումս՝ Ուրֆա)-Վերանշեիր-Մարդին-Մծբին (ներկայումս՝ Նուսայբին) գծով, որը հանդիսացել է Հայաստանով անցնող «արքայական ճանապարհի» հայկական հատվածը: Ամերինից արևելք սկսվում էր Ասորեստանը: Այնուհետև հարավային սահմանագիծը պետք է անցներ Արևելյան Խաբուրի և Տիգրիսի միախառնման շրջանից և այստեղից Ռասն լեռներով հասներ մինչև Կոնի-Նիհորական լեռների հարավային մասերը և Արասխ գետով վերջև Ուրմիո լիճը²⁵⁵: Ուրմիո լճից հյուսիս՝ Կարմիր (Կոտոր) գետի հասնելով մինչև Արաքսի հետ միախառնվելու շրջանը, մտել է Քասստանի մեջ: Երկու գետերի ջրկիցից արևելք՝ Արաքս գետի հասնելով մինչև Կուր գետի հետ միախառնվելու շրջանը, կազմել է

²⁵² Մուկ. էջ 67:

²⁵³ Տես Կրկյաշարյան Ս., Հին Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների պատմության հարցազրույց, էջ 90:

²⁵⁴ Տես Արտաբոն, էջ 61:

²⁵⁵ Համազասկյան Հայաստանի արևմտյան և հարավային սահմանների մասին տես Կրկյաշարյան Հ., Սատրապական Հայաստանի արևմտյան և հարավային սահմանները մ.

թիվ VI-IV դարերում, «ՊՐՀ», 2005, թիվ 3, էջ 173-192:

XIII և X սատրապությունների սահմանը: XIII և XVIII սատրապությունների սահմանը կազմել են Կուր գետը և Թռեղքի լեռնաշղթան: Կուր գետի վերին հոսանքի՝ սկսած ոլորանից, և Ճորոխի ստորին հոսանքի միջև ընկած Կղարջքը՝ խայլու-մոսքերի երկիրը, մտնում էր XIX սատրապության մեջ: Այնուհետև XIII և XIX սատրապությունների սահմանն անցնում էր Պոնտական լեռնաշղթայով՝ XIII սատրապությանը թողնելով Սև ծովի հարավային ափամերձ շրջանի որոշակի հատվածը: Նշված սահմաններում XIII սատրապությունը մ. թ. ա. V դարի կեսերին ենթարկվում է վարչական վերակազմության. Պակտյուիկեն, Սև ծովի առափնյա շրջանը պարսից արքունիքը հանում է սատրապության կազմից: Այդուհանդերձ այն եղել է Աքեմենյան տերության ամենախոշոր և հարուստ սատրապություններից մեկը²⁵⁶:

²⁵⁶ Անկասկած, այսպիսի մեծ սատրապությունը չէր կարող ունենալ ընդամենը 100000 կմ² տարածք, ինչպես կարծում է Ո. Հյուսընը (տես՝ Hewsen R., The boundaries of Achaemenid "Armina", էջ 141): Նշենք նաև, որ Քսենոփոնի այն տեղեկությունը, թե Կյուրոսն իր Տանառքսարես (իմա «մարմնով հզոր») որդուն կարգում է մեղացիների, արմենների և կաղուսիների սատրապ (տես՝ Կյուրոպեդիա, էջ 362; Киропедия, с. 211; Сиропедия, v. II, p. 428-429) չի համապատասխանում իրականությանը, քանի որ Տանառքսարեսի Բարդիայի տիրությունները գտնվել են Սիջին Ասիայում, և Քսենոփոնը փոխել է Կտեսիասի մոտ հիշատակվող երկրների անունները (տես՝ Пьянков И., Сведения Ктесия о владениях Бардуса..., էջ 98-103):

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ԱՔԵՄԵՆՅԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ XVIII
ՍԱՏՐԱՊՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԸ ԵՎ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Պատմահայր Հերոդոտոսը գրում է. «Մատիենների, սասպեյրների և ալարոդների վրա սահմանված էր երկու հարյուր տաղանդ հարկ. սա տասնութերորդ նահանգն էր»¹: Պատմահայրը տարբեր առիթներով մի քանի անգամ ևս անդրադառնում է նշված ցեղերին, իսկ մենք էլ, ելնելով վերոհիշյալ հերթականությունից, քննությունը սկսենք մատիեններից :

Մատիենների վերաբերյալ սկզբնաղբյուրները տալիս են տարբեր տեղագրություններ: Այսպես, Հերոդոտոսը հաղորդում է, որ Մեդիայի և Լյուդիայի սահմանը կազմում էր Հալիս գետը, որը հոսում է Հայկական լեռներից սկզբում Կիլիկիայով, «այնուհետև թողնում է աջից մատիեններին, ձախից՝ փռյուզիացիներին: Անցնելով այս երկրները, գետը թեքվում է դեպի հյուսիս և անցնում աջում՝ սիրիական կապադովկիացիների և ձախում՝ պափլագոնացիների միջով»²: Այս տեղեկությունից երևում է, որ մատիեններին և փռյուզիացիներին պետք է տեղադրել Կիլիկեցիներից (իմա՝ Կեսարիա-Մաժակի շրջանը) հյուսիս և արևմուտք, իսկ սիրիացիներին և պափլագոնացիներին՝ մատիեններից հյուսիս և հյուսիս-արևմուտք: Ըստ Պատմահոր մեկ այլ տեղեկության, հույն-պարսկական կռիվներին մատիենները մասնակցել են պափլագոնացիների հետ մեկտեղ, և «լիգիացիների, մատիենների, մարիանդինների և սիրիացիների հանդերձանքը նույնական էր պափլագոնականի հետ: Այս սիրիացիներին պարսիկներն անվանում են կապադովկիացիներ: Պափլագոնացիներին և մատիեններին առաջնորդում էր Դոտոսը՝ Մեգասիդրոսի որդին, իսկ մարիանդիններին, լիգիացիներին և սիրիացիներին առաջնորդում էր Դարեհի և Արտյուստոնեի որդի Գոբրյուեսը»³: Դատելով այս

¹ Γεροδοτ, III, 94; Herodotus, III, 94, p. 122-123.

² Անդ, I, 72:

³ Հերոդոտոս, VII, 72:

տեղեկությունից՝ մատիենները մտել են III սատրապության մեջ և գտնվել են լիգիացիներից հյուսիս, որոնք թերևս նույն լիկաոնիացիներն են: Այսպիսով, համաձայն բերված երկու տեղեկությունների՝ մատիենների մի հատվածը բնակվել է Փոքր Ասիայում՝ Հալիսի ոլորանի շրջանում, արևմուտքում՝ Հալիսի ծախ ափին՝ սահմանակցելով փյուլգիացիներին: Այս մատիենները չէին կարող մտնել XVIII սատրապության մեջ, քանի որ XIII սատրապությունը չէր կարող դուրս գալ Աև ծով:

Հերոդոտոսի հաջորդ տեղեկությունները մատիեններին կապում են բոլորովին այլ աշխարհագրական միջավայրի հետ: Հեղինակը գրում է. «... Կիլիկեցիներին հաջորդում են արմենները, որոնք նույնպես առատ հոտեր ունեն. արմեններից հետո, ահա այստեղ, բնակվում են մատիենները: Հաջորդը, ահա, Կիսսիա երկիրն է, որտեղ Քոասպես գետի վրա գտնվում է ահա Սուսա (քաղաքը), որտեղ ապրում է մեծ արքան և որտեղ գտնվում են նրա գանձերը»⁴: Այս տեղեկության հետ առնչվում է Պատմահոր հետևյալ հիշատակությունը. «Կիլիկիայի և Արմենիայի սահմանը նավարկելի գետն է, անունը Եփրատ: Արմենիայում հիսունվեց և կես փարսախ տարածության վրա կա տասնհինգ կայան իջևանատներով. այնտեղ կա նաև պահակակետ: Այս Արմենիայից ճանապարհը մտնում է Մատիենե, որտեղ կա երեսունչորս կայան, հարյուր երեսունյոթ փարսախի վրա: Այս երկրի միջով հոսում են չորս նավարկելի գետեր, որոնք անհրաժեշտ է նավով անցնել: Այդ գետերից առաջինը Տիգրիսն է. երկրորդը և երրորդը համանուն են, բայց նույն գետերը չեն և նույն վայրից չեն բխում. քանզի հիշյալ գետերից առաջինը բխում է Արմենիայից, իսկ երկրորդը՝ Մատիենեից: Չորրորդ գետը կոչվում է Գյունդես, որը Կյուրոսը բաժանել էր երեք հարյուր վաթսուն ջրանցքների: Այս երկիրն անցնելուց հետո ճանապարհը մտնում է Կիսսիան երկիրը, որտեղ քառասուներկու և կես փարսախի վրա կա տասնմեկ կայան, մինչև Քոասպես գետը, որը նույնպես նավարկելի է: Այս գետի վրա է գտնվում Սուսա (իմա՝ Շոշ-Խ. Հ.) քաղաքը»⁵: Երկու նույնանուն գետերն ուսումնասիրողներն իրավացիորեն նույնացնում են Մեծ ու

⁴ Անդ, V, 49:

⁵ Անդ, V, 52:

Փոքր Ջաբ գետերի հետ⁶: Վերոբերյալ տեղեկությունը մեզ է հասել աղճատված վիճակում, և հետազոտողները փորձել են վերականգնել մեջբերված հատվածի տեքստը: «Народы нашей страны в "Истории" Геродота» գրքի կազմողների և ծանոթագրողների կողմից տեքստի տվյալ հատվածի վերականգնումն ունի որոշ ներքին հակասություններ: Ստացվել է այնպես, որ բոլոր չորս նավարկելի գետերն էլ՝ Տիգրիսը, Մեծ ու Փոքր Ջաբերը, Գյունդեսը, հոսել են Հայաստանից⁷: Սակայն եթե Տիգրիսի ու Մեծ Ջաբի պարագայում, իրոք, երկու գետերն էլ հոսել են Հայաստանից, ապա Փոքր Ջաբը և Գյունդեսը իրենց ակունքներն ունեցել են Մատիենեում և հոսել են այս երկրի միջով: Մեր կարծիքով, Մատիենեն չի կարող նույնանալ Ասորեստանին, քանի որ Հերոդոտոսի մոտ Մատիենե երկիրը հստակ տեղորոշվում է Ռիմիո լճից հարավ: Ընդ որում, Հերոդոտոսը տեղեկություններ է հաղորդում հենց Ասորեստանի վերաբերյալ: Այսպես, Ասորեստանը ասորեստան-ցիներով բնակեցված երկիր է, Հայաստանին հարևան, և Ասորեստանի մի մասը Բաբելոնի հետ միասին կազմել է IX սատրապությունը⁸: Հերոդոտոսը նշում է նաև, որ Նինոսը (իմա՝ Նինվե) Ասորեստանի քաղաքն էր⁹: Այս տեղեկություններից կարելի է եզրակացնել, որ Մատիենեն և Ասորեստանը չեն կարող նույնանալ և աշխարհագրական, և վարչական առումներով: Հետևաբար, մեր կարծիքով, վերոբերյալ տեղեկության մեջ պետք է վերականգնել Ասորեստանի անունը, քանի որ պարսից արքայական ձանապարհը Հայաստանից մտնում էր Ասորեստան և հետո միայն Մատիենե:

Հերոդոտոսի մոտ մատիենների վերաբերյալ կան նաև այլ հաղորդումներ: Ըստ Հերոդոտոսի, Գյունդեսը բխում է Մատիենական լեռներից, հոսում Դարդանների երկրի միջով ու քառվում մեկ այլ՝ Տիգրիս գետը¹⁰: Դարդանները գտնվել են, հավանաբար, Գյունդեսի միջին և ստորին հոսանքի շրջաններում: Կարծիք կա, որ նրանք թրակա-փոյուզական ցեղ են¹¹:

⁶ Նես Ս. Կ. III., էջ 388, ծանոթ. 708(a):

⁷ Անդ, էջ 159:

⁸ Նես Հերոդոտոս, II, 17, I, 194, III, 92:

⁹ Անդ, II, 150:

¹⁰ Անդ, I, 189:

¹¹ Նես Պետրոսյան Ս., Հին Մարաստանի տարածքի երրորդ էթնիկական տարրի մասին, «ՊԲՀ», 1979, քիվ 4, էջ 51-52:

Մատիենական լեռները համապատասխանում են Ջագրոշի լեռներին, որտեղից սկիզբ է առնում Գյունդեսը՝ ներկայիս Դիալան: Պատմահայրը հիշատակում է նաև. «Արաքս գետը բխում է մատիենների երկրից, որտեղից և Գյունդես գետը, որը Կյուրոսը բաժանեց երեք հարյուր վաթսուն ջրանցքների, բաժանվում է քառասուն բերանների, որոնք բոլորը, մեկից բացի, դուրս են գալիս ճահիճների և խրուտների մեջ: Պատմում են, որ այդ ճահճուտներում ապրում են հում ձուկ ուտող մարդիկ, որոնք սովորաբար օգտագործում են փոկի կաշուց պատրաստած հագուստ: Իսկ Արաքսի բերաններից մեկը բաց տեղանքով հոսում է դեպի Կասպից ծով»¹²: Նկատի ունենալով այն տեղեկությունը, որ Արաքսն ու Գյունդեսը բխում են մատիենների երկրից և Արաքսը թափվում է Կասպից ծով, ապա Արաքսն այս դեպքում համապատասխանում է Ամարդոս (ներկայիս Սեֆիդ-ռուզը) գետին, որի ակունքները բխում են Մատիենական լեռների (իմա՝ Ջագրոշի) արևելյան լանջերից: Հերոդոտոսի բերված տեղեկությանն անդրադառնում է նաև Ստրաբոնը, որը գրում է. «Նա (իմա՝ Հերոդոտոսը - Խ. Հ.) ասում է, թե այս գետը (իմա՝ Արաքսը - Խ. Հ.) Մատիենների երկրից դուրս հոսելով՝ ճյուղավորվում է քառասուն գետերի և բաժանում սկյութացիներին բակտրիացիներից: Կալիսթենեսը, նույնպես, հետևում է Հերոդոտոսին»¹³: Ստրաբոնը, որ նախորդ նախադասություններում խոսում էր հայկական Արաքսի մասին, Հերոդոտոսի պատմածը համարում է անհավանական և գտնում, որ հայկական Արաքսը և Հերոդոտոսի Արաքսը չեն նույնանում: Անկասկած, Ստրաբոնն իրավացի է այս հարցում, քանի որ Հերոդոտոսի տվյալ հիշատակության մեջ Արաքսը պատմական Օքսոսն է՝ ներկայիս Ամու-Դարյան, քանի որ Պատմահայրը տվյալ պարբերության առաջին մասում՝ «ոմանք ասում են, թե Արաքսն Իստրոսից (իմա՝ Դանուբ գետը - Խ. Հ.) ավելի խոշոր է, ուրիշները թե՛ ավելի փոքր»¹⁴, և նախորդ պարբերությունում՝ «...Կյուրոսը ցանկացավ իրեն հպատակեցնել նաև մասսագետներին... Մասսագետները բնակվում են արևելքում, դեպի արևածագ, Արաքս

¹² Հերոդոտոս, I, 202:

¹³ Strabo, XI, XIV, 13.

¹⁴ Հերոդոտոս, I, 202:

գետից այն կողմ, իսսեղոններին հանդիպակաց»¹⁵, ինքն է հենց բացառում հայկական Արաքսի հետ որևէ նույնացում: Հետևաբար, ուսումնասիրողների կողմից Հերոդոտոսի վերոբերյալ տեղեկության (I, 202) Արաքսի նույնացումը հայկական Երասխա-Արաքսին քննություն չի բռնում, և փնտրել Երասխի վերին ու միջին հոսանքների շրջանում մատիեններին ոչ մի դեպքում հիմնավորված չէ¹⁶: Հերոդոտոսի տեղեկությունները ցույց են տալիս, որ Մատիենե երկիրը գտնվել է Ուրմիո լճից հարավ ընկած շրջանում, որտեղից սկիզբ էին առնում Փոքր Զաբը, Գյունդեսը և Սեֆիդ-ռուղը: Մատիենե երկիրն աշխարհագրորեն ընդգրկում էր նախկին Մանայի և հարակից որոշ շրջաններ և վարչական առումով մտել է X մարական սատրապության մեջ:

Անտիկ աղբյուրներում Մատիենե երկրի և մատիենների մասին պահպանվել են նաև այլ տեղեկություններ: Ստրաբոնի մոտ Մատիենեի հիշատակությունը Հայաստանի, Ստորին Փռյուզիայի հետ միասին՝ կապված երաշտի հետ, ցույց է տալիս, որ այստեղ խոսքը վերաբերում է հայուսյան մատիեններին¹⁷: Այդուհանդերձ, Մատիենեն՝ որպես Մարաստանի երկրամաս, Ստրաբոնը հիշատակում է երկու անգամ. «Ասում են, թե Հյուրկանիայում մի որթատունկը տալիս է մի մետրետ գինի, մի թզենին 60 մեդիմնոս թուզ, իսկ հասկից ընկած մի ցորենը նորից է բուսնում, մեդուները ծառի մեջ փեթակ են շինում, և մեդրը տերևներից հոսում է: Նույնպես է Մատիանեում՝ Մարաստան, և Սակասենեում և Արաքսենեում՝ Հայաստան: Բայց այդ տեղերում այնքան զարմանալի չէ այդ, որովհետև ավելի հարավ են քան Հյուրկանիան, և մյուս երկրներից տարբերվում են չափավոր քարեխառնությամբ»¹⁸: Եվ երկրորդը գրեթե նույն բովանդակությամբ. «Նշաններ Հյուրկանից աշխարհի փարթամության. խաղողի մի որթը բերում է մի մետրետ գինի, մի թզենին 60 մեդիմնոս. հասկից ընկած ցորենը նոր բերք է տալիս.

¹⁵ Անդ, I, 201:

¹⁶ Ձարբեր կարծիքների մասին տես Խազարադե Н., К вопросу о локализации мятиенов..., էջ 201 – 210: Տես նաև Меликишвили Г., К истории..., էջ 266; Дьяконов И., История Мидии, էջ 138, ծանոթ. 5, էջ 339, 353, ծանոթ. 3, նույնի՝ Предыстория армянского народа, էջ 17, ծանոթ. 19:

¹⁷ Տես Ստրաբոն, էջ 11:

¹⁸ Անդ, էջ 13:

ծառերի մեջ մեղուները փեթակ են շինում և մեղրը հոսում է տերևներից: Նույնը լինում է Մարաստանում՝ Մատիանեի մեջ և Հայաստանում՝ Սակասենեի և Արաքսենեի մեջ»¹⁹:

Ստրաբոնը Մատիանեն և մատիեններին հիշատակում է նաև այլ տեղեկություններում: Նա գրում է. «Վրկաններից հետո ծովի շրջագծով բնակվում են ամարդները, անարիակները, կաղուսիները, ալբանները, կասպերը, վիտիները և, հնարավոր է, ընդհուպ մինչև սկյութներ, այլ ժողովուրդներ: Վրկանների մյուս կողմում ապրում են դերբիկները, իսկ կաղուսիները սահմանակցում են մեդացիներին և մատիանեներին Պարաքոաթրես լեռան ստորոտին»²⁰: Հույն աշխարհագետը Մեդիա-Ատրոպատենեն տեղադրում է Հայաստանից և Մատիանեից արևելք, Մեծ Մարաստանից արևմուտք և Մատիանեից ու Մեծ Մարաստանից հյուսիս, իսկ հարավում հարակից է համարում Վրկանից ծովի խորշին մերձակա մարգերին և Մատիանեին²¹: Հեղինակը նաև հայտնում է, որ Մարաստանը բարձրալեռնային և ցուրտ երկիր է, և նրա լեռներն էկբատանայից, Ռագայից և Կասպիական դժներից ձգվում են մինչև Մատիանե և Հայաստան²²: Ելնելով հենց իսկ Ստրաբոնի տեղեկություններից²³, Պարաքոաթրես լեռան տակ պետք է հասկանալ ոչ միայն Թալիշի և Գիլանի լեռները, այլ նաև էլբուրսն ամբողջությամբ և, ընդհանրապես, Իրանական սարահարթի հյուսիսարևմտյան լեռնաշղթաները: Պարաքոաթրես անունը որոշակիորեն պետք է տարածվեր նաև Ջազրոշի հյուսիսարևելյան մասի վրա: Կաղուսիները (հայկական աղբյուրների կատիշները) սկզբնաղբյուրներում որոշ դեպքերում նույնացվել են գելերի հետ: Նրանք բնակվել են Կասպից ծովի հարավարևմտյան

¹⁹ Անդ, էջ 35: Մասնագիտական գրականության մեջ կարծիք է հայտնվել, որ Մատիենն անունը կարող է առնչություն ունենալ, հ.-ե. *mad -կամ *medhu - «քաղցր, մեղր» արմատին (տես Աղոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 466, ծանոթ. 1; Պալայան Ս., Հայ իշխանական տների հետքերը հարավ-արևմտյան Հայաստանում (քրդական որոշ ցեղանունների և ցեղերի ծագման հարցի շուրջ),- «ՊԲՀ», 2004, թիվ 2, էջ 176-179): Եթե նկատի ունենանք Մատիանեի գինով և մեղրով հարուստ լինելու հատկությունը, ապա այդ կարծիքը չի բացառվում:

²⁰ Страбон, XI, VIII, 8.

²¹ Անդ, XI, XIII, 2.

²² Անդ, XI, XIII, 7:

²³ Անդ, XI, VIII, 1:

շրջանում՝ հյուսիսում հասնելով Կուր գետի ստորին հոսանքի հատվածը: Եթե մատիենների տակ նկատի ունենանք Մատիեն երկրի բնակիչներին, ապա նրանք չէին կարող սահմանակցել կադուսիներին: Սակայն մեր կարծիքով, Ստրաբոնի տվյալ տեղեկության մատիեններին պետք է համարել Ուրմիո լճի արևելյան ափամերձ շրջանների բնակիչներ, որոնցից արևելք՝ դեպի Կարասու գետի վերնագավառը, արևմուտքում հասնում էին կադուսիները: Որպես երկիր՝ Ստրաբոնի Մատիանեն իր տեղադրությամբ համապատասխանում է Հերոդոտոսի Մատիենեին, որը գտնվում էր Ուրմիո լճից հարավ: Հայաստանի և Մատիանեի համատեղ հիշատակությունը ցույց է տալիս նաև, որ այս երկու երկրները պետք է սահմանակից լինեին և Մատիանեի հետ Հայաստանը կարող էր սահմանակից լինել Ուրմիո լճի հարավարևմտյան ափի շրջանում:

Ստրաբոնը Հայաստանի մեծ լճերից է համարում Մանտիանեն, որն, ըստ հեղինակի, թարգմանաբար նշանակում է «կապույտ»²⁴: Աշխարհագետը լիճը հիշատակում է նաև Մարաստանի կազմում՝ **Σηαῦτα** անունով, որն ուսումնասիրողներն իրավացիորեն սրբագրել են **Καθαῦτα** կամ **Καθαῦταν**²⁵: Կապուտան անունն իր կառուցվածքով իրանական է, սակայն շատ հավանական է, որ լճին Կապուտան անունը տվել էին հայերը՝ «կապույտ» գույնանունը շատ ավելի հին ժամանակներում փոխառած լինելով իրանցիներից²⁶: Այս եզրակացությունն ամրապնդվում է, թերևս, այն փաստով, որ իրանախոս Ատրպատականի նկարագրության առիթով լճանունը հիշատակվում է ոչ թե Կապուտան, այլ Մանտիանե գրությամբ, և այսպես են ծնվել Ուրմիո լճի անունները, թե ոչ, շատ էլ կարևոր չէ, բայց անտարակույս է մի բան, որ «կապույտի» գաղափարը գալիս էր հենց մատիեն կամ մատիան ցեղանունից²⁷: Խնդրո առարկայի

²⁴ Անդ, XI, XIV, 8:

²⁵ Յիս Strabo, XI, XIII, 2, ժանոթ. 3:

²⁶ Մես Հարությունյան Բ., Աբեմենյան Պարսկաստանի XVIII ստորապության տեղադրության շուրջ, էջ 61:

²⁷ Անդ: Եթե ճիշտ է Մատիենեի կապը «քաղցր, մեղր» արմատին, ապա անունը **Աստումնաբանորեն** ոչ մի **ասնչություն** չունի կապույտ բառի հետ և, ըստ էության, նկարագրող, իմանալով, որ լճի Կապուտան անունը կապված է «կապույտ»-ի հետ, լինել կ իր հերթին կապել է այն լճի մեկ ուրիշ՝ Մատիանե անվան հետ: Իսկ լճի

մասին տեղեկություններ է հաղորդում նաև Պտղոմեոսը, որի մոտ Մարտիանե կոչվող Ուրմիո լիճը տեղադրվում է Կադուսիայում²⁸, այն դեպքում, երբ, ըստ Ստրաբոնի, կադուսիները սահմանակցում էին մարերին և մատիաններին Պարաքոաթես լեռան ստորոտին: Պտղոմեոսը նաև գրում է. «Մեդիայի՝ Հայաստանին մոտ արևմտյան մասը, զբաղեցնում են կասպերը, որոնցից ներքև գտնվում է Մարգիանան՝ Ասորեստանի ողջ կողքի երկայնքով, իսկ ծովամերձ մարզերը՝ կադուսիները, գելերը և դրիբիկները, որոնցից հետո մինչև երկրի խորքերը տարածվում են ամարիակների և մարդերի հողերը: Կադուսիների շրջանին հարևան հողերը զբաղեցնում են կարդուխները...»²⁹: Մարգիանան պետք է սրբագրել Մարտիանա-Մատիանա: Հակառակ դեպքում, այն կնույնանա միջինասիական Մարգիանա երկրամասին, իսկ կասպերն էլ կհամապատասխանեն Մարգիանայից արևմուտք ընկած վրկաններին³⁰: Սակայն քանի որ Մարգիանան ընկած է Ասորեստանի հարևանությամբ, ապա այն հենց Մարտիանա-Մատիանան է: Պտղոմեոսի վերոբերյալ տեղեկությունը և նրա շարունակությունը Բ. Հարությունյանի մոտ ունի հետևյալ պատկերը. «Մեդիայի մոտ, Հայքին մոտ գտնվող մասում, բնակվում են կասպիացիները (իմա՝ կասպերը—Հ. Բ.), որոնցից ներքև գտնվում է Մարտիանեն՝ Ասորեստանի ողջ կողքի երկայնքով: Ծովամերձ շրջաններում կադուսիացիները, որոնք կոչվում են նաև լեգեր (իմա՝ գելեր—Հ. Բ.), և դրիբյուկներ, որոնցից հետո մինչև երկրի խորքերը տարածվում են ամարիակները (իմա՝ անարիակները—Հ. Բ.) և ամարդները (կամ մարդերը): Ներսի դեպի կադուսիացիների գավառն ընկած մասերը զբաղեցնում են կարդուքները և Մարունդները՝ մինչև Մարտիանե լիճը: Գելերից ներքև մարգասներն են, որոնցից հետո Տրոպատենեն, որը տարածվում է մինչև անարիակները (իմա՝ անարիակները—Հ. Բ.)»³¹: Ինչպես իրավացիորեն նկատում է Բ. Հարությունյանը,

Կապուտան անունն այս դեպքում պետք է ծագեր վառ կապույտ գույնից: Բայց և այնպես, անմխտելի է, որ լճի Մատիանե անունը ծագել է մատիեների անունից:

²⁸ Տե՛ս Claudii Ptolemaei Geographia, VI, 2, 2.

²⁹ Տե՛ս ИДИСК.—«ВДИ», 1948, քիվ 2, էջ 255:

³⁰ Կասպ-վրկանների մասին տե՛ս Խորիկյան Հ., Աբեմենյան Պարսկաստանի XI և XV սատրապությունների տեղադրության շուրջ, էջ 147-157:

³¹ Տե՛ս Հարությունյան Բ., նշվ. աշխ., էջ 62:

Մարաստանի պտղոճեռայան նկարագրությունն անհամեմատ հին է, քան հեղինակի ապրած ժամանակաշրջանը, քանի որ մ. թ. II դարում արդեն Մարաստանը որպես ինքնուրույն պետություն, գոյություն չուներ, իսկ եթե գոյություն էլ ունենար, ապա նրա կազմում չէր գտնվի Կասպքը, որը, բոլոր սկզբնաղբյուրների համաձայն, Արտաշես Ա - ից (մ. թ. ա. 189 – 160 թթ.) սկսած Մեծ Հայքի թագավորության մասն էր կազմում³²: Մ. թ. II դարում Ուրմիո լճի ավազանը ոչ մի կերպ չէր կարող պատկանել Մեդիա-Մարաստանին, քանի որ հայ Արշակունիները տիրում էին Ատրպատականի ձեռական իշխանության երկրին³³, իսկ կարողւթները Մարաստանի մեջ կարող էին մտնել Անտոնիոսի՝ Արևելքում գտնվելու տարիներին, ուստի և Պտղոմեոսը օգտագործել է Մարաստանի մի հին նկարագրություն, որը նա փորձել է հարմարեցնել այլ երկրների նկարագրությանը և մոծել է աշխատության մեջ³⁴: Պտղոմեոսի վերոհիշյալ տեղեկության մեջ աշխարհագրության տեսանկյունից բավականաչափ խառնաշփոթություն կա: Օրինակ, դրիբիկները, որոնք մյուս հեղինակների դերբիկներն են, Պտղոմեոսի մոտ հիշատակվում են վելերից հետո, այն դեպքում, երբ դերբիկները գտնվել են Կասպից ծովի հարավարևելյան ափին, իսկ մարդերը (կամ ամարդները) և ամարիակները (= անարիակները), որոնք հիշատակված են դերբիկներից հետո, իրականում գտնվել են վերջիններիցս արևմուտք: Մարդերը զբաղեցրել են ներկայիս Կըզըլ-Ուզեն գետի (պատմական Ամարդոսի) միջին և ստորին հոսանքի շրջանները մինչև գետաբերան, իսկ անարիակները կոնկրետ ցեղի անվանում չէ և նշանակում է «ոչ արիացի», այսինքն՝ Կասպից ծովի հարավային, հարավարևմտյան և հարավարևելյան շրջանների ոչ իրանախոս լեակչությունը: Կասպերը գտնվել են Փայտակարանում, իսկ նրանցից ներքև՝ այսինքն հարավ, գտնվել է Մարտիանան՝ Ապրեստանի ողջ կողքի երկայնքով: Ուրեմն, Պտղոմեոսի Մարտիանեն համապատասխանում է Հերոդոտոսի Մատիենե

³² Անդ:

³³ Պես Հարությունյան Բ., Հայ Արշակունիների ձեռական իշխանության կալվածքների հարցի շուրջը, «ՊԲՀ», 1988, թիվ 3 – 4:

³⁴ Պես Հարությունյան Բ., Արեմենյան Պարսկաստանի XVIII սատրապության տեղադրության շուրջ, էջ 63:

երկրին՝ Ուրմիո լճից հարավ: Ինչ վերաբերում է մարունդներին, որոնք հասնում էին մինչև Մարտիանե լիճը, ապա սրանք, թերևս, Պտղոմեոսի այն մարդերն են³⁵, որոնք տեղադրվում են Կասպուրականի արևելյան մասում՝ Մարդպետականում³⁶: Չելերից ներքև՝ հարավ, հիշատակված մարզասներն էլ, հավանաբար, մարդերն են, որոնցից հետո նշված Տրոպատենեն Ատրպատականն է, որը տարածվել է մինչև անարիակները: Պտղոմեոսի մոտ մատիենական հողերը կոչվում են Ματουστάνα (mati - և stan - ից)³⁷:

Մ. թ. ա. II դարի պատմիչ Պոլիբիոսը գրում է. «Մեդիայի դեպի հյուսիս նայող մասերը, որ շրջապատում են ելլումայները, անհարակները (իմա՝ անարիակներ – իս. Հ.) ու նաև կադուսիները և մատիանները գտնվում են Պոնտոսի այն մասերի վերևում, որոնք սահմանակից են Մայոտիսին (իմա՝ Ազովի ծովը – իս. Հ.)»³⁸: Իսկ Պլինիոս Ավագը նշում է. «...մարոտիաններ, աորսներ, զելեր, որոնց հույներն անվանում էին կադուսիներ, մատիաններ...»³⁹: Բ. Հարությունյանը կարծում է, որ մարոտիանները մատիեններին կամ մարտիեններին ազգակից ցեղ է, որը զբաղեցրել է Պարաքոթարես (հայկական աղբյուրների Պատիժահար (էռը) լեռան մերձակայքը՝ դառնալով հույն հեղինակների հակասական ընկալումների պատճառ⁴⁰: Մեր կարծիքով, մարոտիաններն, ընդհանրապես, ոչ մի կապ չունեն մատիենների հետ և, հնարավոր է, որ նույնիսկ նման ցեղ չի էլ եղել: Մարոտիանների մյուս տարընթերցումն է Nasotiani⁴¹, որն այս դեպքում կհամեմատեինք այնքան հայտնի Նիսեական դաշտի հետ: Կամ էլ Հերոդոտոսի մոտ լիգիացիներ, մատիեններ, մարիանդիներ, սիրիացիներ շարքը⁴² կարող էր ծնել մարիանդիներ–մարոտիաններ նմանությունը: Սակայն սա քիչ հավանական է, քանի որ մարոտիանների առաջինը հիշատակվել

³⁵ Տե՛ս Claudii Ptolemaei Geographia, V, 12, 9.

³⁶ Տե՛ս Հարությունյան Բ., Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն..., էջ 369:

³⁷ Տե՛ս Claudii Ptolemaei Geographia, VI, 2, 5.

³⁸ Տե՛ս ИДИСК,-«ВДИ», 1947, թիվ 3, էջ 301:

³⁹ Անդ,-«ВДИ», 1949, թիվ 2, էջ 304-305:

⁴⁰ Տե՛ս Հարությունյան Բ., Արեմենյան Պարսկաստանի XVIII սատրապության տեղադրության շուրջ, էջ 65:

⁴¹ Տե՛ս ИДИСК,-«ВДИ», 1949, թիվ 2, էջ 304, ծանոթ. 21:

⁴² Տե՛ս Հերոդոտոս, VII, 72:

թույլ չի տալիս տարածքային առումով նույնիսկ նրանց փնտրել մատիենների հարևանությամբ: Իսկ մարոտիաններին տեղադրել Պարաքոաթրես լեռան մերձակայքում ոչ մի դեպքում չի հիմնավորվում: Ընդհանրապես մարոտիաններին (գուցե մարունդե՞ր) փնտրել Ատրպատականի սահմաններում կասկածելի է, քանի որ, օրինակ, նրանցից հետո հիշատակված աղոսներին Ատրաբոնը տեղադրում է Ագովի և Կասպից ծովերի միջև⁴³: Պարաքոաթրես լեռների (Գեղմանց լեռներ) շրջանում տեղադրելու դեպքում մարոտիանները թրևս ավելի շատ կնույնացվեն մարդերի հետ: Պոլիբիոսի և Պլինիոս Ավագի կողմից կաղուսիների և մատիենների հիշատակությունը կրկին վկայում է նրանց հարևաններ լինելու հանգամանքը: Քանի որ հին հեղինակների մոտ Ուրմիո լիճը կոչվում է Մարտիանե-Մանտիանե (և՛ «ր»-ն, և՛ «ն»-ն աճական են), ապա կարծում ենք, որ ավելի ընդունելի կլինի այն ենթադրությունը, որ լճի անունը հետագայում տարածվել է արևելյան և հարավային ափամերձ շրջանների բնակչության վրա, որոնք էլ կոչվել են մատիեններ, սակայն այս իրողությունն ավելի ուշ ժամանակներին է վերաբերում: Կարևոր է նկատի ունենալ, որ Վերողոտոսն Ուրմիո լճի ավազանում գրեթե մատիեններին չի հիշատակում և խոսում է միայն Մատիենե երկրի մասին: Այս իրողությունը ցույց է տալիս, որ մատիեններն այլևս գոյություն չունեին և իրենց անունը տվել էին երկրին: Անշուշտ, նկատի ունենալով, որ մատիենները հին սկզբնաղբյուրներում հիշատակվում են աշխարհագրական առումով տարբեր վայրերում, կարելի է մտածել, որ այս ցեղը կարող էր հայտնվել կաղուսիների հարևանությամբ ևս, բայց հենց հին սկզբնաղբյուրները բացառում են նման հավանականությունը: Համեմատության համար նշենք, որ ինչպես Սև ծովի ծովափնյա բնակչությունը կոչվում էր պոնտացիներ, այնպես էլ Մանտիանե լճի հարավային և արևելյան ափամերձ բնակչությունը երբեմն կարող էր կոչվել մատիեններ ուշ ժամանակներում: Միաժամանակ նշենք, որ Մատիենե երկրի բնակչությունը կարող էր կոչվել մատիեններ անունով, բայց միայն

⁴³ Թևո Տրաբոն, XI, V, 8.

այն պարագայում, եթե նրանք տեղորոշվում են Ուրմիո լճից հարավ ընկած Մատիենե երկրում⁴⁴:

Այսպիսով, ոչ հայուսյան մատիենները և ոչ էլ Ուրմիո լճի մերձակայքում գտնվող Մատիենե երկիրը չէին կարող մտնել XVIII սատրապության մեջ: Եթե առաջինը պարզապես անհնար է, ապա երկրորդի դեպքում, հաշվի առնելով սասպեյրների Սպերի շրջանում մինչ այսօր ընդունված տեղադրությունը, դժվար թե Սպերից մինչև Ուրմիո լճի շրջանը ընկած տարածքում այլ ցեղեր չգտնվեին, և ալարոդները, որոնք պետք է զբաղեցնեին այդ տարածքը, անհետանում են տարածաշրջանի էթնիկական քարտեզից: Սակայն Հեկատոնոս Միլետացու մոտ պահպանվել է տեղեկություն, որը մատիեններին տեղորոշում է աշխարհագրական բոլորովին այլ միջավայրում:

Հեկատոնոսը մատիենների մասին ունի մի քանի տեղեկություններ: Նա գրում է. «Հիոպեն մատիենների քաղաքն է, Գորդիոնի հարևանությամբ»: Այս մատիենները տարածքային առումով կապվում են պափլագոնացիների հետ և հեղինակը շարունակում է. «Հիոպե քաղաքում բնակիչները հագնվում էին պափլագոնացիների նման»⁴⁵: Ինչպես տեսնում ենք, Հեկատոնոսը երկու տեղեկություններում էլ նկատի ունի հայուսյան մատիեններին: Սակայն Հեկատոնոսի այն տեղեկությունը, թե մոսքերը կոլխական ցեղ են և հարևան մատիեններին⁴⁶, անհրաժեշտ է այլ տեսանկյունից քննել, ինչը և կատարել է Բ. Հարությունյանը: Այս տեղեկությունն, ըստ ուսումնասիրողի հանգամանալից քննության, հաստատում է, որ Մատիենական ցեղախմբի մի հատվածը բնակվել է Այսրկովկասում՝ ներկայիս Վրաստանի Հանրապետության հարավարևմտյան շրջաններում հաստատված մոսխերի կամ մոսքերի հարևանությամբ, և այս մատիեններին չի կարելի նույնացնել փոքրասիական մատիեններին, որովհետև նրանց հարևան մոսքերը կոլխական ցեղ

⁴⁴ Տե՛ս Հերոդոտոս, V, 49:

⁴⁵ St. Byz., s.Վառդ; fr. 189 (տե՛ս Müller C., *Fragmenta historicorum graecorum*, v. I, Parisiis, 1841, p. 13).

⁴⁶ Տե՛ս ИДПСК, «ВДИ», 1947, №1, т. 301; Müller C., *Fragmenta historicorum graecorum*, v. I, p. 13.

են, և նրանց պետք է տեղադրել մոսքերից հյուսիս⁴⁷: Փասիանները գտնվել են Երասխ գետի վերին հոսանքի և Ուղթիս գետի ակունքների շրջանում և փասիաններից հարավ, որոնք մտնում էին XIII սատրապության մեջ, մատիեններ փնտրելը ծիծաղելի է, ընդ որում Երասխի ակունքը հնում ոչ թե Բյուրակնյան լեռներից կամ Սերմանցից սկիզբ առնող գետն էր, այլ Բասենի դաշտով հոսողը, հետևաբար ստացվում է, որ փասիանների երկիրը նույնանում է մատիենների երկրին, որը ոչ մի հիմք չունի⁴⁸: Իսկ քանի որ Սպերը՝ Քսենոփոնի հեսպերիտների երկիրը, նույնպես ենթակա էր Տիրիբազոսին, ապա այն չէր կարող մտնել XVIII սատրապության մեջ, և մատիեններին պետք է փնտրել մոսքերից հյուսիս⁴⁹: Մատիեններին Այսրկովկասում տեղադրելու վերաբերյալ, մեր կարծիքով, կարող է վկայել նաև Պոմպոնիոս Մելասի՝ թեկուզև ոչ այնքան որոշակի տեղեկությունը: Թվարկելով տարբեր ցեղերի, որոնց աշխարհագրությունը շատ խճճված է, նա գրում է.«...իսկ որտեղ երկիրը (իմա՝ Ասիան – Խ. Հ.) մոտենում է մեր ծովերին (նկատի ունի Սև ծովը և Մեյոտիս լիճը–Խ. Հ.) ապրում են մատիանները, տիբարանները և ավելի հայտնի մեղացիները, հայերը...»⁵⁰: Մատիեններն, ըստ երևույթին, պատկանել են սկյութական աշխարհին և Այսրկովկասում նրանց գոյությունը ցույց է տալիս, որ այս ցեղախումբն իր շարժումը սկսել էր Կովկասից:

Այժմ անցնենք սասպեյրների տեղադրության քննությանը: Բացի այն, որ սասպեյրները հիշատակվում են XVIII սատրապության կազմում, Հերոդոտոսը նրանց մասին ունի ևս մի քանի տեղեկություններ: Նա գրում է. «Պարսիկներից, մեղացիներից, սասպեյրներից և կոլխերից վերև, դեպի արևելք, գտնվում է Կարմիր ծովը (իմա՝ Պարսից ծոցը–Խ. Հ.): Դեպի հյուսիս՝ Կասպից ծովը և Արաքս գետը (հավանաբար, հայկական Արաքսն է-Խ. Հ.), որը հոսում է դեպի արևելք»⁵¹: Ինչպես տեսնում ենք, սասպեյրները

⁴⁷ Ռեն Հարությունյան Բ., նշվ. աշխ., էջ 66: Մոսքերի տեղադրության մասին տես նաև Թորիկյան Հ., Աքեմենյան Պարսկաստանի XIX սատրապության էթնիկական կազմի վերաբերյալ, էջ 120-122:

⁴⁸ Ռեն Հարությունյան Բ., նշվ. աշխ., էջ 70:

⁴⁹ Անդ, էջ 79:

⁵⁰ Ռեն Իլլոսկ, «ВДИ», 1949, թիվ 1, էջ 273:

⁵¹ Հերոդոտոս, IV, 40:

հիշատակվում են կոլխերի և մեղացիների միջև: Այս տեղեկությանը գործնականում համապատասխանում են Հերոդոտոսի հաջորդ մի քանի տեղեկությունները: Այսպես, Հերոդոտոսը հայտնում է. «Պարսիկները բնակվում են մինչև Հարավային ծովը, որը կոչվում է Կարմիր (իմա՝ Պարսից ծոցը-Խ. Հ.): Նրանցից վերև դեպի հյուսիս բնակվում են մեղացիները, մեղացիներից (վերև)՝ սասպեյրները, սասպեյրներից (վերև)՝ կոլխերը, տարածվելով մինչև Հյուսիսային ծովը» (իմա՝ Սև ծովը - Խ. Հ.), որտեղ թափվում է Փասիս գետը: Ահա այս չորս ազգերն են բնակվում մեկ ծովից մյուսն (ընկած երկրում)⁵²: Պատմահայրը հաղորդում է. «Մեյոսիս լճից մինչև Փասիս գետը և կոլխերի երկիրը երեսուն օրվա ճանապարհ է անխոնջ ուղևորի համար: Կոլխիսից Մեդիա ավելին չէ ճանապարհը, բայց նրանց միջև բնակվում է մի ազգ, սասպեյրները. սրանց միջով անցնելուց հետո կարելի է հասնել Մեդիա». նաև՝ «Արոտավայրերը, որտեղ այս խաշնարածը (իմա՝ Աստյուագեսի - Խ. Հ.) արածացնում էր նախիրը, գտնվում էին Ագբատանայից հյուսիս՝ դեպի Եվքսինյան Պոնտոս ընկած (իմա՝ նայոլ - Խ. Հ.) լեռների ստորոտներին: Քանզի մեղական երկիրը միայն դեպի սասպեյրներն ընկած մասում բարձադիր է, լեռնային և անտառաշատ. իսկ մնացյալ երկիրն ամբողջապես դաշտային է»⁵³: Բերված տեղեկություններից պակասատ է, որ կոլխերի և մեղացիների միջև գտնվող սասպեյրները եղել են էթնիկական խոշոր միավորում, որը հանդես է գալիս որպես հավաքական ամբողջություն՝ ազգ՝ հյուսիսում անմիջականորեն սահմանակցելով կոլխերին, իսկ հարավում՝ մեղացիներին: Հերոդոտոսը հաղորդում է, որ Քսերքսեսի հունական արշավանքին ալարոդները և սասպեյրներն արշավում էին կոլխերի նման զինված, որոնց առաջնորդում էր Սիրոմիտրեսի

⁵² Անդ, IV, 37:

⁵³ Անդ, I, 104, 110: Հերոդոտոսը Եվքսինյան Պոնտոս նայոլ լեռների տակ նկատի ունի Երասիցի հարավ ընկած Հայկական, Կասպիական լեռները մինչև Կասպից ծով. այսինքն՝ ուշ ժամանակների Կասպիական աշխարհի արևելյան մասը՝ Մարդպետականը, մարական սատրապության մեջ էր: Մյուս կողմից էլ պատմիչի տեղեկությունը ցույց է տալիս, որ մարերը և սասպեյրները եղել են անմիջական հարևաններ, ինչը հնարավոր էր միայն Կուր գետի ստորին հոսանքի շրջանում Հմմտ. Օհանյան Մ., Աբեմենյան XVIII սատրապության սահմանները, -«Իրան-Նամե», 1999, թիվ 32-34, էջ 97:

որդի Մասիստիոսը⁵⁴: Այս տեղեկությունը ևս ցույց է տալիս, որ սասպեյրները և ալարոդները մտել են XVIII սատրապության մեջ, և ալարոդների առաջինը հիշատակվելը թույլ է տալիս սասպեյրներին տեղադրել նրանցից հյուսիս:

Գ. Մելիքիշվիլին սասպեյրներին համարում է քարթական ցեղեր, որոնք վերահսկում էին Ուրարտուի հյուսիսային գավառները և գլխավորում արևելավրացական ցեղերի հարավային միավորումը: Այս ենթադրությունը հիմնվում է հայկական Սպեր գավառի հետ սասպեյրների անվանական նմանության վրա՝ միաժամանակ սասպեյրների բնակության շրջանը Կողքիսից հասցնելով մինչև պատմական Մեդիա ընկած տարածությունը⁵⁵: Ի. Ղյակոնովը կիսում է Շպիգելի կարծիքը, համաձայն որի, Հերոդոտոսի վկայության մեջ (I, 104) խոսքը վերաբերում է մարական տերության սահմաններին և ոչ թե պատմական Մեդիայի շրջանին⁵⁶: Սակայն սասպեյրները չեն կարող տեղադրվել Սպերի փոքրիկ շրջանում, քանի որ ընդգրկել են մեծ տարածություն՝ սահմանակցելով մարերին: Անտրամաբանական է նաև, որ հայերը չհիշատակվեին մարերի և սասպեյրների միջև, եթե ընդունենք վերջիններիս տեղադրությունը Սպերի շրջանում: Հարկ է նշել, որ եթե սասպեյրները տեղորոշվեին Սպերի տարածքում, ապա նրանք վարչականորեն կմտնեին Հայաստանի մեջ, իսկ վերջինս էլ մարական տիրապետության ժամանակ Մարաստանի կազմում էր, հետևաբար մարական տերության սահմանների մասին խոսք լինել չի կարող, քանի որ սասպեյրներն ընդգրկված կլինեին մարական տերության սահմանների մեջ: Սա նշանակում է որ սասպեյրները պետք է լինեին անկախ էթնիկական միավորում և գտնվեին մարերից հյուսիս-արևմուտք և կոլխերից արևելք: Այս ամենը նշանակում է, որ սասպեյրներին պետք է փնտրել այլ տարածաշրջանում, ինչը և կատարել է Բ. Հարությունյանը: Նրա կարծիքով, սասպեյրները զբաղեցրել են Արևելյան Վրաստանի

⁵⁴ Ամոյ, VII, 79:

⁵⁵ Նուր Меликишвили Г., Наирн-Урарту, էջ 415; նույնի՝ К истории..., էջ 116, 232: ընտր. Новосельцев А., Նշվ. աշխ., էջ 90:

⁵⁶ Нру Spiegel Fr., Eranische Alterthumskunde, II Band, Leipzig, 1873, S. 245.

տարածքն ու նաև հետագա Աղվանքի կամ Կուրի ծախսափնյակի շրջանը⁵⁷: Այս ենթադրությունը հաստատում են հին աղբյուրները:

Մ. թ. ա. III դարի հեղինակ Ապոլլոնիոս Հռոդոսցին իր «Արգոնավորդների արշավը» երկում նշում է, որ մակրոններից այն կողմ բեխիրների բազմամարդ ցեղն է, որոնցից անմիջապես այն կողմ ապրում են սապեյրները և նրանցից հետո արդեն ռազմաշունչ կոլխերը⁵⁸: Ապոլլոնիոսի այս տեղեկության մեջ սապեյրները նույնանում են սասպեյրներին, որոնք գտնվել են բեխիրներից և կոլխերից արևելք: Ապոլլոնիոսն իր երկի մեկ այլ հատվածում ևս հիշում է մակրոններին, բեխիրներին, հպարտ սապեյրներին և նրանցից այն կողմ բիզերներին⁵⁹: Ապոլլոնիոսի երկրորդ տեղեկության մեջ սապեյրները գտնվել են բեխիրների և բիզերների միջև, երբ, ըստ Սկիլաքս Կարիանդացու, նրանց միջև գտնվել են էկեխեյրիները⁶⁰, իսկ ըստ Հեկատեոսի՝ խոյերը⁶¹: Այս դեպքում սապեյրները կարող են նույնանալ Սպերի բնակիչների՝ սապեյրների հետ: Բեխիրները գտնվել են մակրոնների հարևանությամբ, իսկ բիզերները՝ Մոսքական լեռների հարավարևմտյան լանջերին⁶²: Հետևաբար, սապեյրների նույնացումը Սպերի բնակիչների հետ նրանց կտեղորոշի շատ ավելի հարավ: Սակայն, եթե Ապոլլոնիոսի առաջին տեղեկության մեջ սապեյրներին հաջորդում են կոլխերը, իսկ երկրորդ դեպքում՝ բիզերները, ապա նշանակում է, որ բիզերները կոլխական ցեղերից մեկն են: Ուրեմն, սապեյրները գտնվել են կոլխերից արևելք: Այս տեղեկությունը հաստատվում է Ամիանոս Մարկելինոսի տեղեկությամբ, որը մի առիթով հիշատակում է սապեյրներին, ընդ որում, նրանց նախորդում են բիզարները (= բիզերներ), խայուբները, դահերը, և հաջորդում են տիբարենները, մոսսինոյկները, մակրոնները և փիլիրները⁶³, Դահերը շփոթված են տաոխների հետ, որոնցից հյուսիս խայուբներն (=մոսքեր) են, և վերջիններիցս էլ ավելի հյուսիս՝

⁵⁷ Տե՛ս Հարությունյան Բ., նշվ. աշխ., էջ 81:

⁵⁸ Տե՛ս ИДПСК.-«ВДИ», 1947, թիվ 3, էջ 280:

⁵⁹ Անդ, էջ 282:

⁶⁰ Տե՛ս Скилак Кариандский, Перипл обитаемого моря,-«ВДИ», 1988, թիվ 1-2, § 83:

⁶¹ Տե՛ս ИДПСК.-«ВДИ», 1947, թիվ 1, էջ 301, 1948, թիվ 3, էջ 329:

⁶² Տե՛ս Խորիկյան Հ., նշվ. աշխ., էջ 126:

⁶³ Տե՛ս ИДПСК.-«ВДИ», 1949, թիվ 3, էջ 286:

բիզներները, որոնցից արդեն արևելք բնակվել են սապեյրները, Հերոդոտոսի սասպեյրները: Ապոլլոնիոսի երկի սքոլիայում ասվում է, թե բեխիրները սկյութական ժողովուրդ են, և նրանցից հետո սապեյրներն են՝ մի սկյութական ժողովուրդ, որն իբր իր անունը ստացել է նրանց մոտ առատությամբ հանդիպող «սապեյրին» քարի անվանումից⁶⁴: Այս տեղեկության մեջ կարևոր է, որ սապեյրները համարվում են սկյութական ժողովուրդ: Կեղծ Օրփեոսը արգոնավորդների արշավի հետ կապված զրույցում հիշատակում է սապեյրների խիտ բնակեցված քաղաքները, որոնցից այն կողմ (իմա՝ արևմուտք) բիզներներն են⁶⁵: Ստեփանոս Բյուզանդացին սապեյրներին կամ սաբեյրներին համարում է Պոնտական տարածաշրջանի ժողովուրդ⁶⁶: Սապեյր կամ սասպեյր անունը պարզապես հիշատակում է նաև մ. թ. II դարի հեղինակ Հերոդիանոսը⁶⁷: Փաստորեն, բերված տեղեկությունների հիմքում ընկած են Ապոլլոնիոս Հռոդոսցու տվյալները: Սապեյրների անվան կապումը «սապեյրին» քարի անվանման հետ պատահական նմանության արդյունք է: Թերևս, սապեյրների անունից է առաջացել ըրրի անվանումը և ոչ թե հակառակը: Սասպեյրները սկյութական ժողովուրդ են կամ ցեղախումբ, որի անունը ծագում է սկյութա-սլավոնական աշխարհին պատկանող «աս» ցեղախմբի անվանումից, որի մի մասն անհայտ պատճառներով կրել է ասպեյր անունը⁶⁸: «Աս» ցեղի մի հատվածը հաստատվում է Ասեաց փոքր կամ Արսեաց փոքր գավառում, իսկ Սպեյրը պահպանել է ասպեյր ցեղանունը⁶⁹: Ասպեյրներ էին նաև սասպեյրները, որոնք հերոդոտյան ժամանակներում հեռացել էին իրենց սպեյրյան ազգակիցներից և հաստատվել Վիրքում բռնելով աստիճանական վրացականացման ուղին, երբ արդեն վրացերենին հատուկ սկզբունքով ասպեյրների հավաքականությունը ստանում էր սասասպեյր կամ սասպեյր տեսքը⁷⁰: Բ. Հարությունյանն իր տեսակետը հիմնավորելու համար լինում է վրացական ավանդությունը: Համաձայն Լեոնտի Սրովելու,

⁶⁴ Անդ.-«ՅԺԻ», 1947, թիվ 3, էջ 288:

⁶⁵ Անդ.-«ՅԺԻ», 1948, թիվ 3, էջ 268:

⁶⁶ Անդ, էջ 325:

⁶⁷ Անդ.-«ՅԺԻ», 1948, թիվ 2, էջ 258:

⁶⁸ Թեև Հարությունյան Բ., նշվ. աշխ., էջ 82:

⁶⁹ Անդ, էջ 83:

⁷⁰ Անդ:

հայերի և մի շարք ժողովուրդների նախահայր Թարգամոսն (Թորգոմը) իր ութ զավակների միջև է բաժանում իր տիրույթները, որոնցից Հաոսին (Հայկին) բաժին է ընկնում Հայաստանը, իսկ Քարթլոսին՝ Քարթլիի ծնակաշատ աշխարհը: Ավանդության հետագա շարադրանքից պարզվում է, որ բոլոր եղբայրներն էլ խոսում էին հայերեն (սոմխուրի), սակայն «մինչ այժմ (Երուսաղեմի գրավումը Նաբուքոդոնոսորի կողմից) Քարթլոսյանների լեզուն հայերենն (սոմխուրի) էր, որով և խոսում էին: Իսկ երբ անհամար ժողովուրդներ ժողովեցան Քարթլիում, այն ժամանակ վրացիք թողին հայերեն (սոմխուրի) լեզուն, և այս բոլոր ժողովուրդներից գոյացավ վրացերեն (քարթուլի) լեզուն»⁷¹: Այս ավանդությունը Բ. Հարությունյանը մեկնաբանում է հետևյալ կերպ. «Սպերում և նրա շրջակայքում, այլ խոսքով՝ Ճորոխ գետի ավազանի արևմտյան մասում հաստատված հնդեվրոպական սկյութական ցեղախմբերը, որոնք ներգրավվել էին հայագոյացման ոլորտը և հայացել էին, մի մասով դեպի հյուսիս շարժվելով, հաստատվում են Վիրքի տարածքում և, գերազանցելով ռազմական ու տնտեսական առումով տեղաբնիկ քարթական ցեղերին, իրենց գերիշխանության տակ են գցում վերջիններին... Այն իրողությունը, երբ քարթական ցեղերի վրա իշխանություն հաստատածների լեզուն հայերենն էր կամ հայերենի բարբառներից մեկը, հետագայում եկվորներին ուժացրած քարթական ցեղերի շրջանում պետք է այն միտքը ծներ, որ իրենք՝ վրաց ժողովուրդը, մի ինչ-որ ժամանակ հայախոս է եղել»⁷²: Այս տեսակետը կարելի է հաստատել նաև Ստրաբոնի տեղեկությամբ: Հույն աշխարհագետը հայտնում է. «Վրաց դաշտում բնակվող ժողովուրդը լավ երկրագործ է և խաղաղասեր. հագնվում է հայ և մարական ձևով. իսկ լեռնաբնակները, որոնք ավելի

⁷¹ Տե՛ս «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», քաղվածքներ վրացերեն բնագրերից հայերեն թարգմանությամբ. ներածություն-ժանրագրություններով և հավելվածներով, հ. Ա (Ե-ժԲ դար), կազմեց պրոֆ. դր. Լ. Մելիքեթ-Բեկ, Երևան, 1934, էջ 143-149: Տե՛ս նաև. Карлис Цховреба (История Грузии), глав. ред. акад. П. Метревели, Тбилиси, 2008, с. 19. Գ. Տիրացյանը ենթադրում է, որ սասպերների արևելյան խմբերն ավելի ուշ մղվեցին Կուրից այն կողմ, դեպի հյուսիս-արևելք կազմելով վրաց ժողովրդի և պետության հիմքը (տես Տիրացյան Գ., Երվանդյան Հայաստանի տարածքը (մ. թ. ա. VI դար), էջ 86):

⁷² Հարությունյան Բ., Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն..., էջ 77:

բազմաթիվ և պատերազմասեր են, ապրում են սկյութացոց և սարմատացոց կարգերով, ինչպես որ նրանց սահմանակից և ցեղակից են»⁷³: Ստրաբոնի հաղորդումից հստակ երևում է, որ հնդեվրոպական տարրի հայկական ազդեցությունը պահպանվել էր իբերների ազգագրության բնագավառում (հագուստի նմանությունը):

Պատմագիտական գրականության մեջ սասպեյրներին համարել են վրացական ցեղ և նույնացրել արևելյան վրացիների հետ՝ սասպեյրներ անվանումը կապելով իբերների անվան հետ⁷⁴: Սասպեյրներ անվանումը կարելի է կապել իբերների հետ, սակայն այն տարբերությամբ, որ սասպեյրները բնակվել են միայն Արևելյան Վրաստանի տարածքում, և այդ միավորումը գլխավորել են հնդեվրոպական ցեղերը, բայց այդ միավորման մեջ մտած ցեղերը եղել են հիմնականում քարթական⁷⁵: Ընդ որում, այն հանգամանքը, որ սասպեյր անունը Սպերում գործնականում փոփոխություն չի կրում, հավաստում է, որ նշված գործընթացներն ընթացել են Արևելյան Վրաստանի տարածքում, և ինչպես վրացիների համար հայերը սոմեխի էին մոսքերի հետ կապված, այնպես էլ հայերի համար վրացիներն իբեր-իվեր-վիր էին, քանի որ սասպեյրական ցեղերը բնակվում էին նրանց սահմանակցությամբ⁷⁶: Փաստորեն, սասպեյր անունը հավաքական անվանում էր, և այդ ցեղախմբի մեջ թագմաթիվ ցեղեր և անգամ ցեղային փոքր խմբեր էին մտնում: Ամեն ինչից դատելով՝ դրանց թվում էին մատիենները և ալարոզները: Անհրաժեշտ է նշել, որ «Անաբասիս»-ում հիշատակվող հեռաբերիտները⁷⁷ ոչ մի դեպքում չեն կարող նույնանալ սասպեյրների հետ, քանի որ տեղադրվում են Սպերում, և սասպեյրների անունն այդպես է արտացոլվել հույների մոտ: Սասպեյրների հետ կապված նշենք, որ վերջիններս մարերի հետ սահմանակցել են Կուր գետի ստորին հոսանքի շրջանում, և Կողքիսից դեպի Մեդիա ձանապարհն անցել է Կասպից ծովի արևմտյան շրջաններով և Կուրի հովտով: Այս ձանապարհի

⁷³ Ստրաբոն, էջ 29:

⁷⁴ Ննու Дьяконов И., Предыстория армянского народа, էջ 17, ծանոթ. 19, էջ 240, բանոթ. 133: Տե՛ս նաև Меликшвили Г., К истории..., էջ 233:

⁷⁵ Ննու Հարությունյան Բ., նշվ. աշխ., էջ 80:

⁷⁶ Ննու Հարությունյան Բ., Արեւմեյան Պարսկաստանի XVIII սատրապության տնտեսության շուրջ, էջ 83:

⁷⁷ Ննու Անաբասիս, էջ 197:

կարևորությունն է նշում Պլինիոս Ավագը, երբ գրում է, որ հնդկական ապրանքները Կասպից ծովով և Կուր գետով հասնում են Փասիս⁷⁸: Ընդ որում, ընդգծենք, որ Հերոդոտոսի մոտ կոլխերը տեղադրվում են Փասիսից հարավ և հյուսիս՝ գետի երկու ափերին⁷⁹: Սասպեյրները չեն կարող տեղադրվել կոլխերից հարավ, քանի որ կնույնանան մոսքերի (արևելյան խալյուբների) հետ, որը սկզբնաղբյուրներով բացառվում է: Հետևաբար, սասպեյրները գտնվել են կոլխերից արևելք: Համաձայն Հերոդոտոսի՝ XVIII սատրապության մեջ մտնող երրորդ ցեղը ալարոզներն էին, որոնց մասին Պատմահայրն ունի սոսկ երկու վկայություններ. ալարոզները մատիենների և սասպեյրների հետ միասին կազմում էին XVIII նահանգը, և հույն-պարսկական կռիվներին զինված էին, ինչպես և սասպեյրները, կոլխերի նմանությամբ: Ելնելով մատիենների և սասպեյրների տեղադրությունից՝ ալարոզները չեն կարող տեղորոշվել Հայկական լեռնաշխարհում: Նրանք պետք է տեղադրվեն XVIII սատրապության հարավում՝ ընդգրկելով հետագա Աղվանքի տարածքը: Ալարոզները չեն կարող վրացական ակունքներ ունենալ, քանի որ բառի մեջ երկու «ր» լինելու դեպքում «լ»-ի է վերածվում ոչ թե առաջինը, այլ՝ երկրորդը⁸⁰: Ալարոզների մասին, թեկուզև կցկտուր, տեղեկություններից կարելի է միայն ու միայն ենթադրել, որ նրանք ևս պատկանում էին սկյութական աշխարհին⁸¹: Պարսից արքունիքն ինչ-ինչ պատճառներով XVIII

⁷⁸ Տես ИДПСК.-«ВДИ», 1949, №2, էջ 307; Plinii Secundi C., Naturalis historiae, VI, 50, 52.

⁷⁹ Տես Խորիկյան Հ., նշվ. աշխ., էջ 123-124:

⁸⁰ Տես Հարությունյան Բ., նշվ. աշխ., էջ 84: Ս. Պետրոսյանն ալարոզների անունը բացատրում է «ուրիշ (տեսակի կամ ցեղի) հողագործներ», սասպեյրներինը՝ «հացահատիկի ծնունդներ կամ զարմեր» (այսինքն՝ «Շարայածին» կամ «Շարայի զարմեր»), որոնց դեպքում գործ ունենք հայ-թրակյան ընդհանրության հետ, իսկ մատիենն ցեղանունը հնարավոր է նույնացնել հ.-ե. *mendjān «հեծյալ» բառի հետ (տես Պետրոսյան Ս., Հացազգիների մշակության և պաշտամունքի արտաջրումը Շարայի ավանդազրույցում, էջ 187-204): Ուսումնասիրողն իր մեկ այլ աշխատությունում ալարոզի ցեղանվան առաջին բաղադրիչը (ծագում է հ.-ե. *el-/*al-/*al-բնաձայն արմատից) նույնացնում է հայերեն աղօթել, աղաչել, աղատել, աղերսել բայերի արմատների հետ, իսկ երկրորդ բաղադրիչը՝ -թօժը կարող է դրավոյալան ծնը լինել հայերեն -որդ վերջածանցի (տես Պետրոսյան Ս., Ղասերը և եռադասությունը դրսևորումները հին Հայաստանում, էջ 322):

⁸¹ Անդ: Ղ. Սարգսյանը չի ընդունում ուրարտացիների նույնացումը ալարոզներին և վերջիններս տեղադրում է Մեդիայի հյուսիսում (տես Սարգսյան Ղ.

սատրապության տարածքը վարչականորեն ձևավորել է սկյութական էթնիկական տարրի հիմքի վրա: Իրանական աշխարհին պատկանող երեք ցեղերից յուրաքանչյուրի շուրջ համախմբված տեղական ցեղերը կազմում են նահանգի առանձին ենթաշրջաններ: XVIII սատրապության տեղադրության պարզաբանման տեսանկյունից շատ կարևոր է XI և XV սատրապությունների տեղադրության քննությունը:

Պատմահայր Հերոդոտոսը, անդրադառնալով Աքեմենյան Պարսկաստանի XI սատրապությանը, գրում է. «Կասպերը, պավսիկները, պանտիմաթները և դարեյտները մեկ նահանգ կազմած, վճարում էին երկու հարյուր տաղանդ: Սա էլ տասնմեկերորդ նահանգն էր»⁸²: Պատմահայրը կասպերին հիշատակում է նաև XV սատրապության մեջ. «Սակերը և կասպերը վճարում էին երկու հարյուր հիսուն տաղանդ. սա տասնհինգերորդ նահանգն էր»⁸³: Կասպերին հեղինակը հիշատակում է նաև Թներքեսի հունական արշավանքին մասնակցող ցեղերի ու ժողովուրդների շարքում. «Կասպերը արշավել էին այծենի հագած և իրենց տեղական եղեգնյա աղեղներով ու ակինակներով զինված: Նրանց հանդերձանքը այսպիսին էր, իսկ նրանց առաջնորդն էր Արտյուսիփոսի եղբայր Արիոմարդոսը»⁸⁴: Կասպերը և պարեկանիները, ըստ Պատմահոր, տրամադրել էին նաև հեծյալներ, որոնք նույնպես զինված էին իրենց հետևակի նման⁸⁵: Հերոդոտոսը հաղորդում է, որ արշավանքին մասնակցում էին նաև սակերը. «Ոսկյութացիները արշավում էին գլուխներին մեղական գլխարկների նման գլխարկներով և եղեգնյա տեղական աղեղներով ու կարճ նիզակներով: Իսկ սակերը, որոնք սկյութներ են, պլուխներին կրում էին սրածայր բարձր զղակ, հագնում սնդուրավարտիք և զինված էին իրենց տեղական աղեղներով,

Ուրարտացիներ, ալարոզներ, արմեններ... էջ 191): Այն կարծիքը, թե ալարոզների անվանումը է նկատի ունենալ ոչ միայն Առանտոտն ու Ուտիքը, այլև Աղվանքը կամ նրա ինչ-որ հատվածը, իսկ սասպեյրներն էլ նույնանուն են կասպերին (տես Խորիկյան Ս., Աքեմենյան XVIII սատրապության սահմանները, էջ 97, 99), չեն հիմնավորվում:

⁸² Հերոդոտոս, III, 92:

⁸³ Ընդ, III, 93:

⁸⁴ Ընդ, VII, 67:

⁸⁵ Ընդ, VII, 86:

դաշույններով, ինչպես նաև սագարիս (կոչված) սակրերով: Սրանց, որոնք սկյութներ էին, կոչում էին ամյուրզյան սակեր: Բակտրիացիներին ու սակերին առաջնորդում էր Հյուստասպեսը, Ղարեհի և Առոսսայի՝ Կյուրոսի դստեր, որդին»⁸⁶: Բերված վկայություններում, ինչպես տեսնում ենք, կան որոշակի հակասություններ: Եթե սատրապությունների ցուցակում Հերոդոտոսը հիշատակում է կասպերի երկու առանձին խմբերի մասին, ապա Քսերքսեսի հունական արշավանքի ժամանակ կասպերը հիշատակվում են որպես մեկ միասնական խումբ, որը հանդես է գալիս առանց որևէ այլ ցեղի հետ միավորված և մեկ հրամանատարության ներքո: Ըստ որում, ինչպես կտեսնենք ստորև, կասպերի մյուս հատվածը ևս հիշատակվում է այդ արշավանքի ժամանակ, միայն թե այլ անվամբ:

XI սատրապության կասպերին ուսումնասիրողները սովորաբար առանձնացնում են XV սատրապության կասպերից: XI սատրապության կասպերին ուսումնասիրողների մեծ մասը տեղադրում է Կասպից ծովի հարավարևմտյան ափերին՝ Ափշերոնի թերակղզուց դեպի հարավ⁸⁷: Կասպերին տեղադրում են նաև Կասպից ծովի հարավային առափնյա շրջանում՝ Մարաստանից հյուսիս-արևելք⁸⁸: Ե. Հերցֆելդը կասպերին տեղադրում է Կասպից ծովից հարավ-արևմուտք և հարավ՝ կարծելով, որ այս կասպերի անունից է առաջացել Կասպիական դռներ անվանումը⁸⁹: Կան, ըստ էության, երկու Կասպիական դրուներ՝ մեկը՝ Ռագայի մոտ, մյուսը՝ Թալիշի լեռներում: Նշենք, որ այս տեսակետները հետազոտողները հիմնավորում են սկզբնաղբյուրների տեղեկություններով: Սակայն սկզբնաղբյուրների ուսումնասիրությունը, օրինակ, Հ. Սվազյանին հիմք է տվել XI սատրապությունը տեղադրելու Այսրկովկասում, որը հյուսիսից անփոփոխ է եղել Կովկասյան լեռնաշղթայի հարավային փեշերի, արևելքից՝ Կասպից ծովի, հարավից՝ Կուր գետի, իսկ արևմուտքից՝ Ալազան գետի միջև: Այս տարածքում, ըստ հեղինակի, պետք է փնտրել նաև կասպերի հետ հիշատակվող

⁸⁶ Անդ, VII, 64:

⁸⁷ Տե՛ս Ը. Կ. Վ., էջ 196, ծանոթ. 101:

⁸⁸ Անդ:

⁸⁹ Տե՛ս Herzfeld E., Նշվ. աշխ., էջ 196:

պավսիկներին, պանտիմաթներին և դարեյտներին⁹⁰: Սակայն, եթե ելնենք միայն այն իրողությունից, որ դարեյտների տեղադրությունը սկզբնաղբյուրներում հստակ է (տե՛ս ստորև), ապա այս տեսակետը ոչ մի ձևով քննություն չի բռնում: Ի. Ղյակոնովը կասաբերի զգեստը և սպառազինությունը բնորոշ է համարում նաև մ. թ. ա. I հազարամյակի մանացիների և մարերի համար⁹¹, այսինքն նրանց համարում է այսրկովկասյան ցեղ: Հեղինակը ենթադրում է, որ պավսիկները, պանտիմաթները և դարեյտները եղել են միգուցե կադուսիների (կատիշներ-իւ. Հ.) և մյուս անարիակների առանձին ցեղեր, որոնք բնակվել են հյուսիսում, իբր, ուտիների և աղվանների և արևելքում՝ վրկանների միջև ընկած մերձկասպյան տարածքում⁹²: Ի. Ալիևը բոլոր երեք ցեղերին տեղադրում է հին Կասպիանեի հարևանությամբ⁹³:

Ուսումնասիրողների շրջանում կարծիքները բաժանվում են նաև XV սատրապության տեղադրության հարցում: Որոշ հետազոտողներ XV սատրապության կասաբերին հատկացնում են Հինգուբուշից հարավ ընկած շրջանները (Քաֆիքիստան-Նուրիստան և Չիտրալ)⁹⁴: Վ. Ստրուվեն XV սատրապության կասաբերին տեղադրում է Արալյան ծովից արևելք (ընդ որում՝ Արալյան ծովը դիտարկելով որպես Կասպից ծովի շարունակություն): Նա կարծում է, որ կասաբերը նույնանում են սակերին, որոնք բնակվում են Սոգդից այն կողմ, և Ղարեհ Ա-ի օրոք կազմել են ծովից այն կողմ գտնվող սակերի հատուկ շրջանը: Ըստ հեղինակի, Արալյան ծովից արևելք գտնվող այս սակերին հույն հեղինակներն անվանում էին մասսագետներ և դաիեր, որոնցից ժովախինյա շրջանում գտնվողները կոչվել են կասաբեր⁹⁵: Պատմագիտության մեջ առաջարկություններ են եղել Каспий-и

⁹⁰ Մես Սվազյան Հ., Կասաբերի ցեղային միություններն Ալեքսանդրյան Պարսկաստանի տիրապետության շրջանում (մ. թ. ա. VI դ.-մ. թ. ա. IV դ.), «ԼՀԳ», 1983, թիվ 6, էջ 89:

⁹¹ Մես Дьяконов И., История Мидии, էջ 103, 364:

⁹² Միդ., էջ 447:

⁹³ Մես Алиев И., История Мидии, Баку, 1960, с. 104, прим. 9; նույնի՝ Алиев И., История истории Атропатены, էջ 9, 52:

⁹⁴ Մես Д. К. Ш., էջ 196, ծանոթ. 101:

⁹⁵ Մես Струве В., Этюды по истории Северного Причерноморья, Кавказа и Северо-Восточной Азии, էջ 55, 110:

ուղղել Κάσπειοι, Κάσιοι, Πάκτυες⁹⁶: Հ. Շտեյնը հրաժարվում է լուծել կասպերի հարաբերության հարցը Κάσπειοι-ին կամ ΚασΠεραίοι-ին, կամ էլ Կասպայություն-Քաբուլին և սրբագրում է Πάκτυες⁹⁷:

Սակայն այս առաջարկություններն ավելի շուտ նոր հարցեր են ծնում, քան պատասխան տալիս քննարկվող հարցերին: Ուսումնասիրողների շրջանում փորձեր են եղել նաև XV սատրապությունը տեղադրել Այսրկովկասում⁹⁸: Սակայն, ինչպես ցույց են տալիս վերջին ուսումնասիրությունները, Այսրկովկասում և XI, և XV սատրապությունների տեղադրության ամեն մի փորձ մատնված է անհաջողության: Անդրադառնալով կասպերի խնդրին Բ. Հարությունյանը ցույց է տվել, որ Կովկասյան լեռների և Կուր գետի միջև ընկած տարածքում գտնվել է XVIII սատրապությունը⁹⁹: Հետևաբար, պետք է ձիշտ լինեն այն ուսումնասիրողները, որոնք առաջարկում են XI և XV սատրապությունները տեղադրել Միջին Ասիայում:

Ու. Հաուն և Ջ. Ուելսը ենթադրել են, որ XV սատրապության կասպերը կարող են լինել Քաշմիրի բնակիչները, թեև նման տեղադրությունը համարել են կասկածելի: Միաժամանակ, նրանք ենթադրում էին, որ XI սատրապության կասպերը փոխարինում են Վրկանին, որի բացակայությունը սատրապությունների ցուցակում զարմանք է հարուցում¹⁰⁰: Համաձայնվելով այս ենթադրության հետ Բ. Հարությունյանը փորձում է ապացուցել, որ XI սատրապությունը գտնվել է Վրկանի և շրջակա տարածքներում¹⁰¹: Ա. Հակոբյանի կարծիքով ևս, XI սատրապությունը գտնվել է Վրկանում, իսկ XV սատրապության սակերին նույնացնելով Հերոդոտոսի «ամյուրգյան սկյութներին», որոնք Բեհիսթունի արձանագրության «հաունավարգյան սակերն» են, տեղադրում է վրկաններից հյուսիս արևմտյան Թուրքմենիայի ներքին շրջաններում: Նրա կարծիքով,

⁹⁶ Տես Դ. Կ. Վ., էջ 395, ծանոթ. 764:

⁹⁷ Անդ, էջ 196, ծանոթ. 101, էջ 395, ծանոթ. 764:

⁹⁸ Տես Тер-Мартиросов Ф., Границы ахеменидских владений в Закавказье, էջ 141), Меликов Р., Նշվ. աշխ., էջ 103:

⁹⁹ Տես Հարությունյան Բ., Արեւմտյան Պարսկաստանի XVIII սատրապության տեղադրության շուրջ, էջ 45-114:

¹⁰⁰ Տես How W. W., Wells J., A commentary on Herodotus, Oxford, 1928, I-II (տես Դ. Կ. Վ. էջ 196, ծանոթ. 101):

¹⁰¹ Տես Հարությունյան Բ., նշվ. աշխ., էջ 87-98:

երկու սատրապությունների կասպերը պետք է հարևաններ լինեին, քանի որ Քսերքսեսի բանակում կռվել են միևնույն ջոկատում¹⁰²: Սակայն հեղինակի ենթադրությունը վերապահվում է հետևյալ կարևոր իրողությամբ: Հերոդոտոսը հաղորդում է, որ «յուրաքանչյուր ազգի նա (իմա՝ Ղարեհ Ա-ն-Խ. Հ.) կցեց մերձակա հարևաններին և, բացի այդ, հեռավոր ազգություններին միացրեց այս կամ այն իշխանությանը»¹⁰³: Այս տեղեկությունից կարելի է եզրակացնել, որ պարսից արքունիքի նպատակը եղել է ոչ թե որևէ էթնոսի բաժանումը տարբեր սատրապությունների միջև, այլ մի քանիսին մեկ վարչական շրջանի մեջ միավորելը: Ի. Ղյակնունվը XV սատրապության կասպերին տեղադրում է Կասպից ծովից արևելք՝ մերձկասպյան սակերի հարևանությամբ, իսկ նույն սատրապության սակերը Բեհիսթունի արձանագրության **Sakā** երկրի ժողովուրդն է: Ինչևէ, ուսումնասիրողը XV սատրապության հարցը բաց է համարում¹⁰⁴, և այդ բացը կփորձենք լրացնել մեր քննության արդյունքներով: XI և XV սատրապությունների տեղադրության վերաբերյալ քննության առնենք մի քանի խնդիրներ: XI սատրապության ցեղերից առավել հստակ տեղադրվում են դարեյտները, որոնց Պտղոմեոսը տեղադրում է Կասպից ծովից հարավ՝ ներկայիս Ռեյ (պատմական Ռագա) քաղաքի մերձակայքում¹⁰⁵: Պավսիկները, մեր կարծիքով, Պոմպոնիոս Մելասի պեստիկներն են (Pestici), որոնք հիշատակվում են ամարդների և դերբիկների միջև: Մեկ այլ կապակցությամբ պատմիչը, խոսելով Յաքսարտի և Օքսոսի մասին, գրում է, որ երկրորդը, արևելքից արևմուտք հոսելով առաջին անգամ շրջվում է դահերին մոտ և հոսանքն ուղղելով դեպի հյուսիս՝ գետաբերանը րացում է ամարդների և պեսիկների (Paesicas) միջև¹⁰⁶: Գրեթե կասկած չի մնում, որ Մելասի երկրորդ հիշատակության պեսիկները նույն պեստիկներն են: Ամարդները կամ մարդերը զբաղեցրել են ներկայիս Կըզըլ-Ռուզեն գետի (պատմական Ամարդոսի) միջին և

¹⁰² Մես Հակոբյան Ա., Կասպերի և Կասպիանա (Կասպ) մարզի տեղադրության մասին, էջ 91; նույնի՝ Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, էջ 45-46:

¹⁰³ Հերոդոտոս, III, 89:

¹⁰⁴ Մես Дьяконов И., Նշվ. աշխ., էջ 360:

¹⁰⁵ Մես Claudii Ptolemaei Geographia, VI, 2, 6.

¹⁰⁶ Մես ИДПСК.-«ВДИ», 1949, թիվ 1, էջ 284-285:

ստորին հոսանքի շրջանները մինչև գետաբերան, իսկ դերբիկները բնակվել են Կասպից ծովի մերձափնյա շրջանում վրկաններից հյուսիս: Ելնելով XI սատրապության ցեղերի թվարկման հաջորդականությունից՝ պավսիկները պետք է գտնվեին կասպերից հարավ և հարավ-արևմուտք: Օքսոսը Մելասի երկրորդ հիշատակության մեջ նույնանուն է ոչ թե այսօրվա Ամու-Ղարային, այլ Ատրեքին կամ ավելի ճիշտ՝ Գորգանին: Պլինիոս Ավագը պեստիկներին հիշատակում է որպես սկյութական ցեղ¹⁰⁷: Պավսիկների հետ նույնանուն են նաև Պտղոմեոսի պասիկները¹⁰⁸: Ելնելով ասվածից՝ կարելի է կարծել, որ պավսիկները գտնվել են Կասպից ծովի հարավային ափերին, համեմայն դեպս, դարեյտներից արևելք, և հանդիսացել են սկյութական ցեղ:

Վերևում նշեցինք, որ ըստ պատմագիտական գրականության մեջ եղած կարծիքի՝ XI սատրապության կասպերը փոխարինում են Վրկանին: Որոնք են այն կռվանները, որոնք կարող են տվյալ տեսակետի հիմք լինել: Չնայած վրկանները սատրապությունների հերոդոտյան ցուցակում չեն հիշատակվում, Պատմահայրը տեղյակ է նրանց գոյությանը: Ըստ Հերոդոտոսի՝ «Ասիայում կա մի դաշտավայր, բոլոր կողմերից լեռներով շրջապատված, իսկ այդ լեռներով անցնում են հինգ նեղ կիրճեր: Այս դաշտավայրը հնում պատկանել է քորասմներին և գտնվում է նույն քորասմների, հյուրկանների, պարթևների, սարանգների և թամանների սահմաններում: Պարսից իշխանության հաստատումից հետո այն արդեն պատկանում է (պարսից) արքային»¹⁰⁹: Պատմահոր մյուս հաղորդմամբ՝ «Հյուրկանները ևս զինված էին պարսիկների նման, նրանց առաջնորդն էր Մեգապանոսը, որը հետագայում դարձավ Բաբելոնի կառավարիչ»¹¹⁰: Հերոդոտոսի առաջին տեղեկությունից երևում է, որ քորասմների և պարթևների միջև հիշատակվող հյուրկանները գտնվել են Կասպից ծովի հարավարևելյան շրջանում, իսկ երկրորդ հիշատակության մեջ մինևույն սպառազինությունը ցույց է տալիս հյուրկանների և պարսիկների

¹⁰⁷ Անդ, -«ВДН», 1949, թիվ 2, էջ 306:

¹⁰⁸ Տե՛ս Claudii Ptolemaei Geographia, VI, 12, 4.

¹⁰⁹ Հերոդոտոս, III, 117:

¹¹⁰ Անդ, VII, 62:

ընդհանուր իրանական ծագումը և, բացի այդ, կարևոր է նկատի ունենալ, որ հյուրկանները Քսերքսեսի բանակում հիշատակված են պարսիկներից, մեդացիներից, կիսսիացիներից հետո, որը ցույց է տալիս Աքեմենյան տերությունում նրանց տեղը և դերը: Հերոդոտոսի տեղեկությունների պարզաբանման կարևոր սկզբնաղբյուր է Բեհիսթունի արձանագրությունը, որտեղ Վրկանը չի հիշատակվում հպատակ երկրների թվում, սակայն նշվում է նույն արձանագրության մեկ այլ հատվածում. «Պարթևն ու Վարկանան իմ (իմա՝ Ղարեհ Ա- Խ.Հ.) դեմ ապստամբեցին և հարեցին Ֆրավարտիշին»¹¹¹: Ինչպես երևում է, Պարթևստանն ու Վրկանը կազմել են մեկ երկիր, որի կառավարիչը մինչ ապստամբությունը եղել է Վշտասպը՝ Ղարեհ Ա-ի հայրը: Ապստամբությունը ճնշելուց հետո Ղարեհը հայտնում է, որ այդ է իր կատարածը՝ Պարթևստանում: Ուստի պետք է կարծել, որ Վրկանը մտել է Պարթևստանի մեջ: Համեմատության համար նշենք, որ Մարգիանա երկրում ապստամբությունը ճնշելուց հետո Ղարեհը կրկին հայտնում է, որ այդ է իր կատարածը Բակտրիայում¹¹²: Հետևաբար, Մարգիանան մտել է Բակտրիայի մեջ, և պատահական չէ, որ նույնպես չի հիշատակվում Բեհիսթունի արձանագրության հպատակ երկրների շարքում: Ֆրավարտիշի ապստամբությունը ճնշելուց հետո Վրկանն առանձնացվում է Պարթևստանից, իսկ վերջինս մտնում է XVI սատրապության մեջ: Սակայն Ղարեհ Գ-ի օրոք Վրկանը և Պարթևստանը կրկին հայտնվում են մեկ սատրապության մեջ¹¹³:

Կասպ-վրկան նույնությանը Բ. Հարությունյանը անորոշաբանում է հետևյալ տեսանկյունից: Ըստ նրա՝ «Աշխարհացոյց»-ի մեջ հիշատակվող վրացական Վարջանը (Իրերիան կամ Վիրքը-Խ. Հ.) պետք է սերտ աղերս ունենա Վրկան կամ Վարկան երկրանվան հետ, և հետաքրքիր է նաև, որ Վիրքի Վարջան անվանը ուղեկցում են Կասպի քաղաքի և Կովկասյան լեռներին տրված Կասպիական լեռներ անվանումները: Ուստի անկեղծ միտքը՝ հեղինակը եզրակացնում է, որ Վարկանը կամ Վարգանը պետք է ծագեր «գայլ» բառից և նշանակել է «Գայլի

¹¹¹ Kent R., Նշվ. աշխ., էջ 124, 127; Lecoq, էջ 200:

¹¹² Յես Kent R., Նշվ. աշխ., էջ 127; Lecoq, էջ 201-202:

¹¹³ Յես Արիանոս, էջ 116, 193:

երկիր», ուրեմն էթնոնիմը առաջացել է ցեղային տոտեմ հանդիսացած «գայլ» անունից: Բ. Հարությունյանը ենթադրում է, որ կասպ-վրկանների մի մասը, դատելով կցկտուր անուղղակի նյութից, հաստատվում է Արևելյան Կրաստանի տարածքում՝ նրան փոխանցելով Կրկան-Վարկան-Վարջան, իսկ նրա քաղաքներից մեկին՝ Կասպի անունը, և կարելի է ենթադրել, որ այդ տեղաշարժը կատարվել է, թերևս, Դարեհ Ա-ի վարչական վերակառուցումներից և Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքներից հետո՝ հիմք ունենալով կասպերի՝ Հյուսիսային Կովկասում գտնվելը¹¹⁴: Ասվածը ցույց է տալիս, որ կասպ-վրկան նույնության հնարավորությունն ինչպես տրամաբանական էր Կրկանից աշխարհի բնակչության համար, այնպես էլ իրական է Կիրքի առնչությամբ: Սկզբնաղբյուրներում կան որոշ տեղեկություններ, որոնք արձանագրում են վրկանների գոյությունն Այրկովկասում: Հովսեփոս Փլավիոսը գրում է. «Իսկ թե պանաց ազգը, որը բնակեցրել է Տանայիս գետը և Մեոտիս լճի շրջակայքը, սկյութացիներ են, մենք հայտնել ենք դեռ նախապես մեկ այլ տեղ: Ահա նրանք այդ ժամանակները նպատակ ունենալով արշավել Մեդիա և նրանից ավելի այն կողմ ընկած այլ վայրեր ավարառության համար, համաձայնության են գալիս հյուրկանների թագավորի հետ, որը տերն էր այն անցուղու, որ Ալեքսանդր (Մակեդոնացի) թագավորը փակել էր երկաթյա ամուր դարպասներով: Ու քանի որ այդ մուտքը նրանց տրամադրեց, ապա նրանք հոծ բազմությամբ հարձակվեցին մեդացիների վրա...»¹¹⁵: Դեռ Հ. Մանանդյանը կարծում էր, որ հյուրկանների թագավորը

¹¹⁴ Տես Հարությունյան Բ., նշվ. աշխ., էջ 96-97: Տես նաև հեղինակի գրախոսությունը «Рауф Меликов, Этноическая картина Азербайджана в период Ахеменидского владычества (VI-IV вв. до н. э).», - «Գիտության զորուս», հ. 5, 2005, էջ 143-147: Պևտինգերյան քարտեզի Caspiae կայանը (ներկայիս Խոսպիան) Ախալքալաք քաղաքից հարավ (տես Манандян Я., Круговой путь Помпея в Закавказье.-Труды т. V, Ереван, 1984, с. 226), մեր կարծիքով, կապված է կասպերի հետ: «Մանանդյանը Դիոն Կասիոսի Ասպիք ուղղում է Κασις և նույնացնում Caspiae կայանը հետ (անդ, էջ 235): Հետաքրքիր է, որ Ե. Հերցֆելդը Կասպ անունը ուղում է տեղակի Կազբել լեռնագագաթի անվան մեջ (Herzfeld E., Նշվ. աշխ., էջ 197):

¹¹⁵ Հովսեփոս Փլավիոս, Հրեական պատերազմի մասին, էջ 52:

վրաց թագավորն է¹¹⁶: Մեր կարծիքով, դա չի բացառվում, սակայն Այսրկովկասի արևելքում կասպ-վրկանների առկայությունը կարող է վերաբերել հենց նրանց, եթե անցուղին նույնացնենք Դերբենդի լեռնանցքի հետ, եթե, իհարկե, խոսքը չի վերաբերում Ալանաց դոմներին: Առավել հետաքրքիր տեղեկություն է հաղորդում Դիոնիսիոսը. «Փասիսը,-գրում է նա,- սկիզբ է առնում Արմենական լեռից: Նրանից հյուսիս-արևելք՝ Կասպից և Եվքսինյան ծովերի միջև, քնկած է պարանոց: Նրա վրա ապրում է իբերներ արևելյան ժողովուրդը, որոնք մի ժամանակ արևելք էին եկել Պիրենեյներից և դաժան պատերազմի մեջ մտել հյուրկանների հետ...»¹¹⁷: Սույն վկայությունը վերաշարադրում է նաև Եվստաթիոսը, ըստ որի Արմենական լեռը, որտեղից սկիզբ է առնում Փասիսը, գտնվում է Հյուրկանիայի սկզբին («այնտեղ որտեղ սկսվում է Հյուրկանիան»), և հյուրկաններին համարում է արևելյան իբերների բնական թշնամիները¹¹⁸: Արմենական լեռը գուցե համապատասխանում է Մոսքական լեռներին, իսկ Փասիսը ներկայիս Ռիոնի գետի վտակ Ղվիրիլան է, որից հյուսիս-արևելք Հյուրկանիան է՝ Վիրքը: Բերված տեղեկություններում, ինչ խոսք, իբերները չեն կարող նույնանալ Պիրենեյների իբերների հետ, չնայած որ շատ հեղինակներ նրանց նույնացնում են, և այդ պատճառով էլ, ըստ էության, հյուրկանները կարծես թե բնիկներ են, երբ դատելով աղբյուրների վարկածից՝ նրանք էին գաղթել Այսրկովկաս: Ըստ Պոմպոնիոս Մելասի՝ Կյուրոս (Կուր-Խ. Հ.) և Կամբյուսես (Իորի-Խ. Հ.) գետերն առանձին-առանձին հոսում են իբերների և հյուրկանների հողերով, այնուհետև ծովից ոչ հեռու թափվում միևնույն գետը և մի հունով հասնում մինչև Վրկանից ծովածոց¹¹⁹: Վրկանների տակ կարելի է հասկանալ նաև նովկաններին, որպես աղվանական ցեղերից մեկը, եթե նկատի ունենանք գետի միջին և ստորին հոսանքը, սակայն նկատի ունենալով, որ Իորի գետի վերին հոսանքը գտնվել է Վիրքում, ապա վրկանները կտեղադրվեն կրկին Վիրքում: Ինչպես տեսնում ենք,

¹¹⁶ Ճես Սանանդյան Հ., Զննական տեսություն հայ ժողովրդի պատմության,-Երկեր, հ. Բ, Երևան, 1978, էջ 14: Տես նաև Հակոբյան Ա., Գարգարացիները ըստ անտիկ և իսլամական սկզբնաղբյուրների, էջ 125:

¹¹⁷ ИДИСКИ,-«ВДИ», 1948, №1, էջ 240:

¹¹⁸ Լեոյ, էջ 253:

¹¹⁹ Լեոյ,-«ВДИ», 1949, №1, էջ 285:

որոշ հեղինակներ վրկաններին դեռևս տարբերել են իբերներից, երբ հետազայում երկու էթնոսները որոշակիորեն նույնացվում են: Հետաքրքիր է, որ սկզբնաղբյուրներում վրկանները հանդես են գալիս բորկաններ¹²⁰, բարկաններ¹²¹ անվանաձևով, թեև տվյալ վկայություններում ներկայանում են որպես տարբեր ցեղեր: Թերևս, այս հանգամանքը միևնույն ժողովրդին երկու անուններով կոչելը, վկայում է վրկանների տեղաշարժի մասին, որի արտահայտությունն է սկզբնաղբյուրներում նույն ժողովրդին առանձին ցեղեր համարելը:

Կատարված քննությունը նոր լույս է սփռում Հերոդոտոսի տեղեկությունների վրա: Փաստորեն, այն, որ Քսերքսեսի հունական արշավանքի ժամանակ վրկանները հիշատակվում են, ցույց է տալիս, որ XI սատրապության ցեղերը, բացի կասպ-վրկան կոնկրետ նույնացումից, հավաքական ամբողջությամբ ներկայացված են վրկանների անվան տակ: Միաժամանակ, կարելի է պնդել, որ XI սատրապության մնացած ցեղերը՝ պավսիկներ, պանտիմաթներ, դարեյտներ, նույնպես ունեցել են իրանական ծագում և հանդես եկել մեկ անվան ներքո: Այսպիսով, կարող ենք պնդել, որ Քսերքսեսի բանակում կասպերի երկու խմբերը չեն միավորվել մեկ իրանաատարության ներքո, քանի որ դրանց մի հատվածը հիշատակված է բուն էթնանվամբ, իսկ մյուսը՝ ցեղային տոտեն հանդիսացած «գայլ» անվամբ, որն աստիճանաբար դառնում է էթնոնիմ: XI սատրապության ցեղերը, ունենալով ընդհանուր ծագում, Քսերքսեսի բանակում հանդես են գալիս վրկաններ-«գայլեր» հավաքական անվան տակ, երբ սատրապությունների ցուցակում հիշատակվում են առանձին-առանձին: XI սատրապության մեջ կասպերին առաջինը նշելը ցույց

¹²⁰ Տե՛ս Դիոդորոս Սիկիլիացի, էջ 17:

¹²¹ Տե՛ս Ռուփոս, էջ 282: Բորկաններ-բարկաններ և հյուրկաններ հարցի մասին տե՛ս Пьянков И., «История Персии» Ктесия и среднеазиатские кампании Ахеменидов в конце V в. до н. э., էջ 44-45: Պատմագիտության մեջ փորձել են՝ նկատի ունենալով Վրկանի բացակայությունը Հերոդոտոսի սատրապությունների ցուցակում Հերոդոտոսի պարիկանին նույնացնել հյուրկանի հետ (տե՛ս Olmstead A., History of the Persian Empire, Third impression, Chicago, 1960, p. 291), որը Ի.Պյանկովը համարում է ավելորդ, քանի որ Վրկանը գտնվել է Պարթևստանի կազմում (անդ, էջ 45, ծանոթ. 79):

է տալիս, որ նրանք «վրկանների» մեջ եղել են մեծաթիվը, որի շուրջ միավորվել են մյուս «վրկանները» (պավսիկներ, պանտիմաթներ, դարեյտներ), հետևաբար, թերևս կարելի է մտածել, որ մինչև սատրապության ձևավորումը նշված ցեղերը կազմել են ցեղամիություն: Կասպ-վրկան նույնության պարզաբանումները միաժամանակ հնարավորություն են ընձեռում ճշտելու XV սատրապության տեղադրությունը:

Ղատելով և՛ Հերոդոտոսի տվյալներից, և՛ պարսկական սեպագիր արձանագրությունների նկարագրության տրամաբանությունից XV սատրապությունը, անկասկած, նույնպես գտնվել է Միջին Ասիայում: Բեհիսթունի արձանագրությունում Ղարեհ Ա-ն թվարկում է իրեն ենթակա երկրները, որոնց թվում նաև, ըստ աշխարհագրական հերթականության, գալիս են Խորասմը, Բակտրիան, Աոգդիանան, Գանդարան, Սական (Սկյութիա-Խ. Հ.), Սատագուշը, Արաքոսիան, Մական¹²²: Խորասմները, որոնք, համաձայն Հերոդոտոսի, այլ ժողովուրդների հետ XVI սատրապության հիմնական էթնոսներից մեկն էին, տեղադրվում են Խորեզմի շրջանում: Բակտրիան (XII սատրապության մեջ) ընդգրկել է ժամանակակից Հարավային Տաջիկստանը և Հյուսիսային Աֆղանստանը: Սոգդիանան (XVI սատրապությունում) Մարականդա կենտրոնով գտնվել է ժամանակակից Սամարղանդի և Բուխարայի շրջաններում: Ինչպես տեսնում ենք, Սոգդիանան ընկել է Խորասմների և Բակտրիայի միջև, և պետք է, համաձայն աշխարհագրական հերթականության, հիշատակվեր Խորասմից ինտո՞ Բակտրիայից առաջ: Գանդարան (VI սատրապությունում) տարածվել է Քաբուլի և Տաքսիլայի միջև ընկած շրջանում: Սատագուշը (VII սատրապությունում սատտագյուտներն են) գտնվել է գանդարիներից հարավ: Արաքոսիան տեղորոշվում է ժամանակակից Ղանդահարի շրջանում: Վարչական առումով Արաքոսիան, որը չկա Հերոդոտոսի սատրապությունների ցուցակում, կարող էր մտնել XVII սատրապության մեջ, որտեղ, ըստ Հերոդոտոսի, մտնում էին պարթևները և Ասիայի կրովկացիները: Սական, որը արձանագրության մեջ հիշատակվում է Գանդարայի և Սատագուշի միջև, պետք է գտնվեր Գանդարայից

¹²² Ինս Lecoq, էջ 188; Kent R., Նշվ. աշխ., էջ 117:

հյուսիս և Բակտրիայից արևելք, քանի որ միայն այս դեպքում կունենանք այն ազատ տարածությունը, որտեղ կարող էր տեղադրվել Սակա երկիրը և Հերոդոտոսի նշած XV սատրապությունը: Տվյալ տարածքը համապատասխանում է ժամանակակից Հյուսիսային Տաջիկստանին և Անու-Ղարյայի վերին հոսանքի շրջանին՝ հարավում ձգվելով մինչև Հինդուքուշի լեռնաշղթան: Ուշագրավ է, որ Հերոդոտոսը ևս ն' սատրապությունների ցուցակում, և՛ հույն-պարսկական պատերազմներին մասնակցող ցեղերի շարքում հիշատակում է միայն, այսպես ասած, սակերի մի հատվածին, որոնք երկու վկայությունների (III, 93, VII, 64) դեպքում էլ ակնհայտորեն կապված են Միջին Ասիայի հետ: Սա նշանակում է, որ և՛ Բեհիսթունի սակերը (Sakā երկրի բնակիչները), և՛ Հերոդոտոսի սակերը բացարձակապես նույնանում են: Այդ նույնացումը երկու տարբեր աղբյուրներում արտացոլված է նաև հետևյալ կերպ: Ղարեհ Ա-ի Պերսեպոլիսի արձանագրություններից մեկում Գանդարայից, Հի(ն)դուշից հետո հիշատակվում են հաունավարգյան և «սրածայր գղակավոր» սակերը¹²³: Գանդարայի տեղադրությունը վերևում արդեն նկարագրել ենք: Հի(ն)դուշը (կամ Սինդ) հնդիկների՝ Ինդոսի արևմտյան ափի բնակիչների երկիրն է: Հաունավարգյան և tigraxaudā սակերը փաստորեն իրենց աշխարհագրությամբ համապատասխանում են Բեհիսթունի արձանագրության Sakā երկրին: Այս իրողությունը պարզ արտացոլվել է նաև Հերոդոտոսի երկում: Պատմահայրը միևնույն վկայության մեջ թեև ոչ ուղղակի հիշատակում է, ընդ որում բակտրիացիներից հետո, երկու խումբ սակերի մասին՝ «սրածայր բարձր գղակավոր» և ամյուրգյան¹²⁴: Չնայած Հերոդոտոսը տվյալ տեղեկության մեջ խոսում է միայն սակ-սկյութների մասին և այն էլ ընդհանրական ձևով, կա որոշակի տարբերակում (ամյուրգյան սակեր), որոնց հետ արտացոլված են նաև հաունավարգյան սակերը, որոնք իրականում Հերոդոտոսի հիշատակած ամյուրգյան սկյութներն են, և tigraxaudā սակերը, որոնք Հերոդոտոսի այն սակ-սկյութներն են, որոնք նկարագրության մեջ բնութագրվում են նաև իրենց «սրածայր բարձր գղակներով»: Սակերի մեր առաջարկած տեղադրության օգտին կարող է վկայել

¹²³ Տե՛ս Kent R., Նշվ. աշխ., էջ 137: Հմնտ. նաև այլ արձանագրությունները:

¹²⁴ Տե՛ս Հերոդոտոս, VII, 64:

Ղարեհ Ա-ի հետևյալ արձանագրությունը. «Ղարեհ թագավորն ասում է. «Սա է թագավորությունը, որին ես տիրում եմ՝ Սկյութիայից, որը Սոզդիանայի այն կողմում է, մինչև Քուշ (իմա՝ Եթովպիա-Խ. Հ.), Սինդից (իմա՝ Հնդկաստանից-Խ. Հ.) մինչև Սարդես (իմա՝ Լյուդիա-Խ. Հ.), որը շնորհել է ինձ Ահուրամազդան, աստվածներից մեծագույնը: Թող պահպանի Ահուրամազդան ինձ և իմ արքայական տունը»¹²⁵: Ինչպես տեսնում ենք, Սոզդիանայից այն կողմ (արևելք-Խ. Հ.) գտնվող Սկյութիա-Սակա երկիրը, իրոք, համապատասխանում է XV սատրապության սակերին: Այս առումով հետաքրքիր է մատնանշել, որ Արիանոսը և Ռուփոսը նույնպես ունեն բազմաթիվ տեղեկություններ սկյութների մասին, որոնք հիշատակվում են և բակտրիացիների հետ միասին, և՛ նրանց հարևանությամբ (Տանախ-Յաքսարտայի, ներկայիս Սիր-Ղարայի աջ ափին), և՛ սոզդերի հարևանությամբ¹²⁶: Սկյութների մասին նրանց տեղեկությունները թեև ունեն ընդհանուր բնույթ և լայն աշխարհագրություն, ակնհայտ է, որ որոշ վկայություններում սկյութները գտնվել են XV սատրապության մեր տեղադրության սահմաններում: Մեր կարծիքով, Ալեքսանդրիա Եքազան (Հեռավոր) հիմնադրելիս Ալեքսանդրը պետք է գործ ունենար Սակա երկրի բնակիչների հետ:

Ինչ վերաբերում է կասպերին, որոնց մի հատվածը հիշատակվում է XV սատրապության մեջ, ապա նրանք, էլնելով Հերոդոտոսի տեղեկություններից, ևս պետք է տեղադրվեն Պարսից տերության ծայր հյուսիս-արևելքում՝ սակերի, գանդարիների և բակտրիացիների հարևանությամբ: Ինչպես երևում է նրանց սպառնազինությունից, կասպերը որոշակիորեն կարող են համեմատվել բակտրիացիների (եղեգնյա տեղական աղեղներ), սակերի (տեղական աղեղներ) հետ, իսկ կասպերի ակինակներով զինված լինելը վկայում է նրանց սկյութական ծագման մասին: Պատահական չէ, որ Հերոդոտոսը նրանց հիշատակում է վանդարիներից և դադիկներից հետո, իսկ կասպերից հետո նշում է սարաունգներին: Վերջիններս գտնվել են XIV սատրապության մեջ, որը տարածվում էր VII սատրապությունից հարավ-արևմուտք: Ուրեմն, կասպերին կարող ենք տեղորոշել գանդարիների հարևանությամբ, նրանցից հյուսիս, Հինդուքուշից հարավ,

¹²⁵ Herod., Եշվ. աշխ., էջ 137:

¹²⁶ Սուս Արիանոս, էջ 97, 101, 132, 150-152: Տես նաև Ռուփոս, էջ 330, 470, 476, 543:

Աֆղանստանի, Հնդկաստանի և Պակիստանի սահմաններին: Կասպերը, ամենայն հավանականությամբ, XV սատրապությունում զգալի թիվ են կազմել, որպեսզի, լինելով սկյութական ցեղ, առանձին հիշատակվեին մյուս սակերի կողքին, կամ էլ իրենց հիշատակությամբ «պարտական» են XI սատրապության կասպերին: Ելնելով քննությունից՝ կարելի է ընդունել, որ երկու խումբ կասպերն էլ ունեցել են ընդհանուր սկյութական ծագում, ինչը պարզ երևում է հին աղբյուրներից¹²⁷: Այսպիսով, ասվածը թույլ է տալիս եզրակացնելու, որ կասպերը և վրկանները, համաձայն սկզբնաղբյուրներում պահպանված տեղեկությունների, նույնանուն են. առաջինը եղել է ցեղի ինքնանունը, իսկ երկրորդը՝ նույն ցեղի տոտեմը, որն աստիճանաբար դառնում է էթնոնիմ և առանձին դեպքերում կրում հավաքական բնույթ: Կասպ-վրկանները ցեղային տեղաշարժման արդյունքում հայտնվում են նաև Այսրկովկասում, ինչը ցույց են տալիս աղբյուրները: Հետագայում վրկանները, հաստատվելով Արևելյան Վրաստանի տարածքում, նրան են փոխանցում Վրկան-Վարկան-Վարջան անունը: Ուրեմն, XI և XV սատրապությունները գտնվել են Միջին Ասիայում աշխարհագրորեն տարբեր վայրերում, և Այսրկովկասում նրանց տեղադրության յուրաքանչյուր փորձ չի համապատասխանում պատմական իրականությանը:

Արդ, ելնելով վերը շարադրվածից, կարելի է հստակեցնել XVIII սատրապության սահմանները: Հյուսիսում սատրապության սահմանը համընկնում էր Աքեմենյան Պարսկաստանի պետական սահմանին և անցնում էր Կովկասյան մեծ լեռնաշղթայով՝ հասնելով թերևս մինչև ներկայիս Դերբենդ քաղաքի հյուսիսային մատույցները, արևելքում՝ Կասպից ծովով մինչև Կուրի գետաբերանը, հարավում՝ Կուր գետով և Թռեղքի լեռնաշղթայի ջրբաժանով՝ սահմանակցելով XIII սատրապության մեջ մտնող Հայաստանին, և արևմուտքում՝ Սուրամի լեռներով մինչև Կովկասյան մեծ լեռնաշղթան, սահմանակցելով XIX սատրապությանը:

¹²⁷ Այսպիսի մոտեցման դեպքում, բնականաբար, լիովին անընդունելի է դառնում կասպերի նույնացումը կասիտներին տեսակետը (տես Դьяконов И. М., Языки древней Передней Азии, Москва, 1967, с. 87):

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ԱՔԵՄԵՆՅԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ XIX
ՍԱՏՐԱՊՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԸ ԵՎ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Պատմահայր Հերոդոտոսը, անդրադառնալով Աքեմենյան Պարսկաստանի XIX սատրապության էթնիկական կազմին, գրում է. «Մոսքերի, տիբարենների, մակրոնների, մոսսինոյկների և մարերի վրա սահմանվեց երեք հարյուր տաղանդ (հարկ). սա տասնիններորդ նահանգն էր»¹: Անտիկ հեղինակներից շատերի տեղեկությունները մակրոնների, մոսսինոյկների և տիբարենների մասին ունեն սուկ ընդհանրական բնույթ՝ առանց տեղագրական որոշակիության: Այսպես, համաձայն Հեկատեոս Միլետացու, «տիբարեններին (= տիբարեններին-և. Հ.) արևածագից (ինձա՛ Արևելք-և. Հ.) սահմանակից են մոսսինոյկները, որոնց պատկանում է Խեյրադի քաղաքը»²: Այս հիշատակությանը գործնականում համահունչ են նաև մյուս հեղինակների տեղեկությունները: Սկիլաքս Կարիանդացին տիբարեններին տեղադրում է մոսսիններից (=մոսսինոյկներ-և.Հ.) արևմուտք, հիշատակում մեծագլուխներից (=մակրոններ-և. Հ.) այն կողմ մոսսինոյկներին, որոնք ապրում են լեռներում, Ջեֆիրիոս նավահանգիստը, հելլենական քաղաք Խոյրադին, Արեսի կղզին³: Խոյրադի քաղաքը, անկասկած, Հեկատեոսի Խեյրադին է և մենք հակված ենք նույնացնելու Կեռասունտին, քանի որ Արեսի կղզին գտնվել է նրա դիմաց, իսկ վերջինս էլ ներկայիս Գիրեսուն-ադան է, Կեռասունտի մոտ:

Ապոլլոնիոս Հոդոսցին խալյուբներից հետո, այսինքն՝ դեպի ալբեյք, հիշատակում է տիբարեններին և մոսսինոյկներին⁴: Ապոլլոնիոսի «Արգոնավորդների արշավը» սքոլիայում ասվում է. «Յիբարենները նույնպես խալյուբներին հարևան սկյութական

¹ Հերոդոտոս, III, 94; Herodotus, III, 94, p. 122-123.

² Արևելք. «ВДИ», 1947, թիվ 1, էջ 301:

³ Արև. «ВДИ», 1947, թիվ 3, էջ 242-243: Տե՛ս նաև Mullerus C., Geographi Graeci Minores,

1. Parisus, 1855, p. 63-65.

⁴ Արև. էջ 280-281:

ժողովուրդ են և նրանցից հետո մոսսիճոյկներն են»⁵: Փաստորեն խայտւոբները տիբարեններին հարևան են եղել արևմուտքից, իսկ մոսսիճոյկները՝ արևելքից: Ինչպես տեսնում ենք, բերված տեղեկություններից հնարավոր չէ կատարել տեղագրական հստակ դիտարկումներ: Սակայն անտիկ աղբյուրներում տիբարենների, մոսսիճոյկների և մակրոնների տեղադրության վերաբերյալ կան նաև բավականին հստակ և որոշակի տեղեկություններ: Դրանց մեջ՝ Ան ծովի հարավարևելյան շրջանի էթնիկական կազմի վերաբերյալ, պատմական հավաստիության տեսանկյունից մեծ կարևորություն են ներկայացնում Քսենոփոնի «Անաբասիս»-ի տեղեկությունները, որոնց հիմքում ընկած են ականատեսի վկայությունները:

Անդրադառնալով մերձսևծովյան ցեղերին՝ Քսենոփոնը գրում է. «Առաջին իսկ օրը նրանք (իմա՝ հելլենները-Խ. Հ.) հասան գետը, որը մակրոնների երկիրը բաժանում էր սկյութների երկրից: Նրանց աջ կողմում բարձրանում էր դժվարամատույց մի տեղանք, իսկ ձախ կողմում կար մի ուրիշ գետ, որի մեջ թափվում էր բաժանող սահմանային գետը և որը հարկավոր էր անցնել»⁶: Ստանալով հավատարմության փոխադարձ երաշխիքներ հելլենները մակրոնների ուղեկցությամբ երեք օրում հասնում են կոլխերի սահմանը: Հաղթահարելով կոլխերի դիմադրությունը հելլեններն անցնում են ևս յոթ փարսախ և ծով հասնում Տրապիզոնի մոտ, որը բազմամարդ հելլենական քաղաք էր Եվքսիդյան Դոնտոսում. այն Սինոպի գաղութն էր կոլխերի երկրում⁷: Դժվար չէ տեսնել, որ հույները Տրապիզոնին մոտեցել են հարավից և, անտարակույս, անցել են Ջիզանայի լեռնանցքը և, հավանաբար, հենց այս շրջանում է, որ կոլխերը փորձել են փակել նրանց ճանապարհը: Ջիզանայի լեռնանցքը առևտրական խոշոր նշանակության միջանցք էր և անտարակույս այն ժամանակներում էլ առևտրական ուղին Տրապիզոնից Բաբերդով և Կարինով ձգվում էր դեպի Հայաստանի այլ վայրեր: Մենք հակված ենք կարծելու, որ Ջիզանայի լեռնանցքն իր անունը ստացել է պոնտական զիզերիս՝

⁵ Անդ, էջ 288, 290:

⁶ Անաբասիս, էջ 105:

⁷ Անդ, էջ 107:

⁸ Стен И.Д.ПСК, «ВДИ», 1948, №4 3, էջ 320:

հետևաբար այդ դեպքում կոլխերը կարող են նույնանալ այս ցեղին կամ էլ նրանց դաշնության մաս կազմել: Տրապիզոնի մոտ հելլենները մնում են շուրջ երեսուն օր և ավարի են ենթարկում Կողքիսի այն մասը, որը թշնամի էր տրապիզոնցիներին⁹: Ավարի է ենթարկվում նաև դրիլների երկիրը, որոնց Մ. Մաքսիմովան տեղորոշում է Հյուսիս-Անատոլիական (իմա՝ Արևելա-Պոնտական) լեռնաշղթայի արևելյան մասի բարձրալեռնային շրջանում՝ Տրապիզոնից ոչ հեռու¹⁰:

Տրապիզոնից հույները բարեկարգված ճանապարհով երեք օրում հասնում են հելլենական ծովափնյա Կեռասունտ քաղաքը, որը Սինոպի քաղաքացիների գաղութն էր Կողքիս երկրում: Այստեղ նրանք մնում են տասը օր¹¹: Այնուհետև հույն վարձկանները անցնում են մոսսինոյկների երկրի միջով, որը գտնվում էր Կեռասունտ և Կոտյուորա քաղաքների միջև: Մոսսինոյկների և նրանց հարևան ու ենթակա խայուբների զբաղեցրած տարածքում չկային հունական քաղաքներ, սակայն Տրապիզոնի և մոսսինոյկների միջև կար հաղորդակցություն, և Տրապիզոնի առանձին քաղաքացիներ հանդիսանում էին մոսսինոյկների պրոքսենոսները (իմա՝ դեսպանները) և լավ էին ճանաչում նրանց երկիրը: Մոսսինոյկների երկրի միջով, ինչպես թշնամական, այնպես էլ բարեկամական, հելլեններն անցան ութը կայան և հասան խայուբներին: Սրանք փոքրաթիվ էին և հպատակվում էին մոսսինոյկներին. այս խայուբները՝ ի տարբերություն մյուս կամ արևելյան խայուբների, զբաղվում էին երկաթագործությամբ և նրանց արտադրանքը վաճառվում էր մոսսինոյկների միջոցով: Խայուբներից անմիջապես արևմուտք հելլենները մտնում են տիբարենների երկիրը, որն առավել դաշտային էր և իբրև լարեկամներ՝ երկու օր ընթանալով այդ երկրի միջով, հասնում են հելլենական Կոտյուորա քաղաքը, որը Սինոպի քաղաքացիների գաղութն էր տիբարենների երկրում¹²: Ըստ Քսենոփոնի տվյալների,

⁹ Յես Անաբասիս, էջ 107:

¹⁰ Յես Մակսիմովա Մ., Античные города юго-восточного Причерноморья, Москва-Ленинград, 1956, с. 128, Местное население юго-восточного Причерноморья по «Анабасису» Ксенофонта. Дрилы и моссиники, «ВДИ», 1951, №1, էջ 253:

¹¹ Յես Անաբասիս, էջ 115:

¹² Այդ, էջ 121:

մակրոնները տեղադրվում են Քարշիտ կամ Ծանախոծոր գետի հովտում¹³, Տրապիզոնից հարավ և հարավ-արևելք, և բացառված չէ, որ Ծանախոծոր գետանվան մեջ պահպանվել է նրանց անունը (ըստ Ս. Պետրոսյանի, ծան-ճան և ա_h բաղադրիչներից, որը սերում է հ.-ե. *ak^u «ջուր, գետ» արմատից)¹⁴: Ինչ վերաբերում է մոսսիոնյկներին, ապա նրանք գտնվել են Կեռասունտից արևմուտք, իսկ տիբարենները՝ Կոտյուորայի շրջանում և Կոտյուորայից արևելք:

Անտիկ մի խումբ այլ աղբյուրներում կան տեղեկություններ, որոնք մակրոնների, մոսսիոնյկների և տիբարենների վերաբերյալ տալիս են տեղագրական կոնկրետ հաղորդումներ: Կեղծ Արրիանոսը (մ. թ. V դար) Եվքսինյան Պոնտոսի նկարագրության մեջ տիբարեններին տեղադրել է Կոտյուորայից մինչև Պոլեմոնիոն, իսկ մոսսիոնյկներին՝ Փառնակիայից՝ նախկին Կեռասունտից, մինչև Կոտյուորայի շրջակայքը, և մակրոններին կամ մակրոկեփալներին (մեծագլուխներին)՝ Տրապիզոնից մինչև Փառնակիա ընկած շրջանը¹⁵: Կեղծ Արրիանոսի տեղեկությունները, որոնք հիմնված են բազմաափսի աղբյուրների վրա, հիմնականում համապատասխանում են Քսենոփոնի տեղեկություններին, իսկ տեղ գտած որոշակի տարբերությունները, օրինակ տիբարենները հասցվել են մինչև Պոլեմոնիոն, իսկ մակրոնները Տրապիզոնից մինչև Փառնակիա, կարող են արտացոլել միայն Քսենոփոնին հաջորդած ավելի ուշ ժամանակների իրողությունները:

Մ. թ. I դարի հեղինակ Պլինիոս Ավագը գրում է. «Թերմոզոնտ գետից այն կողմ բնակվում են կեները, խայուբները, գտնվում է Կոտյուորա քաղաքը, այնուհետև տիբարենները, մասսիները (=մոսսիոնյկներ-և.Հ.), մակրոկեփալների (մեծագլուխներ-մակրոններ-և.Հ.) ցեղը, Կեռասունտ քաղաքը, Կորդուլա նավահանգիստը, բեխիրների, բուքսերների(=բիզերներ-դիզերներ-

¹³ Տես Հարությունյան Բ., Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն..., էջ 94; նույնի՝ К вопросу об этнической принадлежности населения бассейна реки Чорох в VII-IV вв. до н. э.,-«ՊԲՀ», 1998, թիվ 1-2, էջ 237:

¹⁴ Տես Պետրոսյան Ս., Հին թրակյան էթնիկական տարրը հնագույն Վանանդում, էջ 38, ծանոթ. 34:

¹⁵ Տես ИДПСК,-«ВДИ», 1948, թիվ 4, էջ 227:

Խ.Հ.) ցեղերը...»¹⁶: Պլինիոսի մոտ տիբարենները տեղադրված են Կոտյուորայից արևելք, երբ Քսենոփոնը նրանց տեղադրում է Կոտյուորայի շրջակայքում և Կոտյուորայից արևելք, իսկ մակրոկեփալները՝ մեծագլուխները, որոնք, մեր կարծիքով, մակրոններն են, տեղադրված են Կեռասունտից արևմուտք, որն այլ տեղեկությունների լույսով չի համապատասխանում իրականությանը, քանի որ Կեռասունտից արևմուտք գտնվել են մոսսինոյկները, ուրեմն մակրոնները պետք է տեղադրվեն Կեռասունտից արևելք, եթե միայն Պլինիոսի ժամանակներում նրանք արևմուտքում չէին հասել մինչև Կեռասունտ:

Կերը կատարված քննությունից կարելի է եզրակացնել, որ XIX սատրապության մեջ մտած ցեղերից երեքի՝ տիբարենների, մոսսինոյկների և մակրոնների, տեղադրությունը անտիկ աղբյուրներում հստակ է: Սակայն մյուս երկու ցեղերի՝ մոսքերի և մարերի տեղադրությունը այնքան էլ պարզ չէ և պահանջում է մանրագնհն և համակողմանի քննություն: Խնդիրն այն է, որ այդ վկայությունները և տեղեկությունները աչքի են ընկնում իրենց հակասականությամբ, իսկ ժամանակագրական հարթության մեջ երբեմն իրենց բովանդակությամբ ամբողջովին չեն համապատասխանում նախորդ ժամանակներում արձանագրված իրողություններին: Տիբարեններից առաջ հիշատակվող մոսքերի փոխարեն անտիկ աղբյուրներում նշվում են խայուբները: Ուշադրություն է գրավում այն հանգամանքը, որ հույն պատմիչներից միայն Քսենոփոնն է խայուբներին տեղադրում Ճորոխից արևելք՝ հայերի հյուսիսային սահմանակցությամբ: Երկու հեղինակներ խայուբներին տեղադրում են Հալիս գետից արևմուտք: Առաջինը Հերոդոտոսն է, որը խայուբներին իրաշատակում է Կրեսոսին ենթակա ժողովուրդների շարքում, որոնք ապրել են Հալիսից արևմուտք¹⁷: Հարկ է նշել, որ այս իրաշատակությունը ուսումնասիրողները դիտել են որպես ուշ շրջանի լուրջ արկություն¹⁸, չնայած, մեր կարծիքով, խայուբների անվան

¹⁶ Մեդ. «ВДИ», 1949, № 2, էջ 287:

¹⁷ Մես Հերոդոտոս, I, 28:

¹⁸ Մես Максимова М., Античные города..., էջ 28: Ա. Լոմոնոսովի բացատրում է խայուբների տեղադրությունը Հայուսից արևմուտք կամ էլ գետի արևելյան ափին
Ломоносов Н., К истории Понтийского царства, ч. I, Тбилиси, 1979, с. 123, 124, 135):

տակ հասկացվել են մետաղագործությամբ զբաղվող ցեղեր: Երկրորդ հեղինակը Կլավդիոս կայսեր ժամանակակից Պոմպոնիոս Մելան է, համաձայն որի, խայլութեան են պատկանել Ամիսոս և Սինոպ քաղաքները, իսկ գետերից՝ Հալիսը և Թերմոդոնտը: Որ Մելան այդ խայլութեան տակ փորձում է ընկալել հին աղբյուրների խայլութեան, երևում է այն իրողությունից, որ նրա հաղորդմամբ խայլութեան ապրել են տիբարենների հարևանությամբ¹⁹:

Անտիկ աղբյուրների մեծամասնությունը խայլութեան տեղադրում է մերձսևծովյան շրջանում, մասնավորապես Թերմոդոնտի և Կեռասունտի միջև ընկած տարածքում: Քսենոփոնը տիբարեններից արևմուտք չի հիշատակում խայլութեան, քանի որ Կոտյուրոբայից հելլենները շարժվում են արդեն ծովով: Որոշ աղբյուրներում խայլութեան տեղադրվում են Հայաստանի հարևանությամբ, ընդ որում, միաժամանակ ընդունվում է մերձսևծովյան խայլութեան գոյությունը: Հեկատեոս Միլետացին նրանց տեղադրում էր հայերից հյուսիս, որը համընկնում է Քսենոփոնի տեղեկությանը, ըստ որի՝ Հարպասոս գետից արևելք խայլութեան եղել են հայերի հարևանները²⁰: Ստեփանոս Բյուզանդացու կարծիքով, Հեկատեոսը նույնպես նկատի է ունեցել պոնտական խայլութեան, որոնց, հների վրա հենվելով, հեղինակը տեղադրում է Սև ծովի մոտ, Թերմոդոնտ գետի շրջանում²¹, ընդ որում պոնտական խայլութեան (Χάλυβες) նա հակադրում է Հայաստանին հարևան խայլութեան (Χάλυβοι): Պետք է նշել, որ Հեկատեոսը նկատի է ունեցել արևելյան խայլութեան: Հույների համար խայլութեան հանդիսացել են երկաթը հայտնագործող ժողովուրդ և երբեմն համարվել են Սկյութիայի ժողովուրդ, որն իր անունը ստացել է Արեսի որդի խայլութեան²²:

Խայլութեան վերաբերյալ տեղեկությունները պարզորոշ ցույց են տալիս, որ հունա-լատինական հեղինակներն այդ անվանումը ցեղանուն չէին դիտում, այլ զբաղմունք: Կալիմաքոսից սկսած շատ հեղինակներ ընդհանրական անեծք են հղում երկաթը

¹⁹ Տես ИДПСК, «ВДИ», 1949, քիվ 1, էջ 273:

²⁰ Անդ., «ВДИ», 1947, քիվ 1, էջ 301: Տես նաև Անաբասիս, էջ 98, 103:

²¹ Տես ИДПСК, «ВДИ», 1947, քիվ 1, էջ 301, 1948, քիվ 3, էջ 329: Максимов М. Նշվ. աշխ., էջ 29:

²² Տես ИДПСК, «ВДИ», 1947, քիվ 1, էջ 305, 1947, քիվ 3, էջ 269, 287-288:

հայտնագործած խալյուրներին, որոնք չարի ստեղծագործությունը հանել էին գետնի տակից²³։ Ռ. Շմիդտը գրում է. «խալյուրների տեղադրությունն անտիկ ավանդույթում անկայուն է. նրանք տեղադրվում են կամ Պոնտոսի հարավային ծովափում կամ Փոքր Ասիայում, կամ էլ Կովկասում և Հայաստանում։ Այս էթնանունը, ըստ երևույթին, դաժնում է հասարակ, լայնորեն տարածվում և հատկացվում է այն ժողովուրդներին, որոնք առավելապես զբաղվում են մետաղագործությամբ»։ Շարունակելով միտքը՝ հեղինակը եզրակացնում է, որ «խալյուրների մասին տեղեկություններն այնքան խայտաբղետ են, որ դա կամ առասպելներում հանդես եկող լեգենդար ցեղ է, կամ էլ արդեն լրիվ իրական ժողովուրդ... Հավանաբար այս հանգամանքը մի կողմից ցույց է տալիս նրանց մեծ վաղեմությունը, մյուս կողմից՝ նրանց երկարատև բնակությունը միևնույն տեղում»²⁴։ Ինչպես տեսնում ենք, Ռ. Շմիդտը վերջնական եզրակացություն ընդունելու հարցում տատանվում է՝ երկմտելով խալյուրներ ցեղի իրական գոյության մեջ։

Մ. Մաքսիմովան մերծսևծովյան խալյուրներին անվանում է հարավարևելյան Մերծսևծովի բնիկ ժողովուրդ և հավանական համարում, որ մոսսիոնյկները եղել են հարավից եկած ցեղերից մեկը, որոնք էլ ենթարկել և մասամբ ոչնչացրել են խալյուրներին։ Ինչ վերաբերում է լեռնային խալյուրներին, ապա Մ. Մաքսիմովան ենթադրում է, որ նրանք սկզբնապես մերծսևծովյան խալյուրներին հետ կազմել են մեկ ամբողջություն և հարավից շարժվող ցեղերի ճնշման տակ անջատվել նրանցից։ Հայտնվելով լեռնային շրջանի նոր պայմաններում՝ նրանք փոխում են և իրենց տնտեսական կացութաձևը, ու մերձպոնտական մետաղագործների համբավը մնում է իրենց մերծսևծովյան համացեղակիցներին²⁵։ Մ. Մաքսիմովայի համար խալյուրները իրական ցեղ են, որը հայտնի է լիել իր զբաղմունքի՝ մետաղամշակության շնորհիվ։

Դեռևս XIX դարում Կ. Մյուլլերը կարծիք է հայտնել, որ հույները խալյուրների անվան տակ նկատի են ունեցել ոչ թե որոշակի ցեղ,

²³ Անդ., «ВДИ», 1947, թիվ 3, էջ 263:

²⁴ Максимова М., Նշվ. աշխ., էջ 27:

²⁵ Անդ., էջ 26, 31:

այլ Փոքր Ասիայի տարբեր շրջաններում ապրող բոլոր այն ցեղերին, որոնք զբաղվել են երկաթի արդյունահանությամբ և մշակմամբ²⁶:

Ուսումնասիրողներից Գ. Մելիքիշվիլին ժամանակին այն միտքն է հայտնել, որ չնայած անտիկ շրջանում լայն տարածված էր Եվրասիական Պոնտոսի շրջանում ապրող խալյուրների մասին ավանդությունը, ըստ որի՝ նրանք հայտնագործել էին երկաթը և հմուտ մետաղագործներ էին, լուրջ կասկածներ է հարուցում այդ անունը կրող ցեղի գոյությունը: Շարունակելով իր միտքը՝ նա գտնում է, որ «խալյուր» անվանման հետքեր հետագայում այնևս չեն նկատվում, այն դեպքում, երբ «խալդայ» և «խալդ» անվանումը նշված տարածքում երկար ժամանակ պահպանվում է: Առանց Ն. Ադոնցի անունը հիշելու, նա կրկին առաջ է քաշում «խալյուր»-ի և «խալդայ»-ի նույնության խնդիրը՝ գտնելով, որ «խալյուր»-ը առաջացել է «խալդ»-ից արևմտավրացական *-ip(-ib)* հոգնակիակերտ վերջածանցի հավելումով (*hal-d-ib>halib*)²⁷: Սակայն խալյուրը և խալդայը ծագումնաբանորեն բացարձակապես տարբերվում են իրարից, քանի որ առաջինը անվանում է, իսկ երկրորդը՝ սակ-սկյութների էթնիկական անունը:

Խալյուրների մասին տարակարծություններն առկա են եղել դեռևս անտիկ ժամանակներում: Այսպես, Ստրաբոնը փորձում է ալիզոններին նույնացնել հին խալյուրների հետ, որոնք նրա ժամանակներում խալդայներ էին և հակված է Հոմերոսի «ալյուր»-ը սրբագրել «խալյուր»-ի²⁸: Ն. Ադոնցը համամիտ է մեծ աշխարհագետին Chal-ybes-ի և Chal-daei-ի նույնացման խնդրում, գտնելով, որ Chal-di-ն, հավանորեն, հայ խալիբների անվանումն է: Ն. Ադոնցը քիչ հավանական է գտնում ալյուրների ու խալյուրների նույնացումը, քանի որ ալյուրները արծաթ էին մշակում, իսկ խալյուրների հանքերը երկաթ էին պարունակում, իսկ ալիզոններին խալիբների հետ համեմատելը համարում է սոսկ անհիմն ենթադրություն՝ հարց տալով, թե « Halli-zoni և Allibi-ն *ali – ibi-ից արդյոք չե՞ն նշանակում այն ժողովուրդը, որ զբաղվում էր

²⁶ Անդ, էջ 27:

²⁷ Տե՛ս Мелюкшвили Г., К источнику..., էջ 71: Խալդայների նույնացումը ուրարտացիների հետ պետք է անընդունելի համարել (տե՛ս Пусторовский Б., Ванское царство, էջ 117-121; նույնի՝ История и культура Урарту, էջ 326-332):

²⁸ Տե՛ս Страбон, XII, III, 19-20.

աղահանքերի մշակությամբ Halis գետի վրա և նրան հարևան խալիբների հետ շփոթելը տեղի չի՝ ունեցել արդյոք նրանց լեռնաարդյունաբերական նույն բնույթը կրող զբաղմունքի հետևանքով: Այդ դեպքում դասական Alyb-ին կհամապատասխաներ հայկական Աղին- Aliun, *alibn-ին և թերևս an-aliba-ին»²⁹:

Խոսելով խալուբների մասին՝ անհրաժեշտ է կրկին անդրադառնալ հալիզոններին: Ստրաբոնը Հալիս գետի անունը բխեցնում է աղահանքերից, որոնք գտնվում էին նրա հոսանքի մոտ³⁰: Համաձայն Հոմերոսի՝ հալիզոնները Հալիսի հովտում ապրող ցեղ էին, որոնք իրենց անունը տվել էին գետին: Հալիս գետի անունը կապվում է «աղ» բառի հետ³¹, և դա բացառված չէ, քանի որ գետի ջուրը աղի է: Այս դեպքում պետք է ենթադրել, որ հալիզոններ ցեղն է իր անունը ստացել գետից և ոչ թե հակառակը: Հալիս գետը խեթական աղբյուրներում կոչվում է Մարասանտիա, կա նաև համանուն քաղաք և շրջան: Խեթերի մոտ նման քաղաքները և շրջանները սովորաբար գետեղված են համանուն գետերի վերին հոսանքում: Ընդ որում, Մարասանտիա գետը գլխավորապես ծևավորվում է ներկայիս Սվազի (Սեբաստիա) մոտ³²: Հալիսի հետ նույնացվող Մարասանտիան մեկնաբանվում է որպես «կարմիր գետ», և նրա անունը կապվում լուվ.mar(r)u-(ya)՞ «կարմիր» բառի հետ³³: Այս գետը երկաթահանքով և կարմիր հողով հարուստ լեռներից բխելու պատճառով ունի կարմիր, պղտոր ջուր: Հետագայում թուրքերը, նկատի ունենալով նրա ջրի կարմրավուն նրանգը, Հալիսը անվանել են Կըզըլ Իրմակ: Հետևաբար Ն. Ադոնցի այն կարծիքը, թե Հալիս գետը ունի լազական և վրացական ծագում՝ «գետ», «ջուր» իմաստով³⁴, սխալ է: Ինչպես տեսանք, ավելի հավանական է, որ գետը երկու դեպքում էլ՝ կամ «աղի»,

²⁹ Ադոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 72-73:

³⁰ Տես Страбон, XII, III, 12.

³¹ Տես Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Իրևան, 1987, էջ 146:

³² Տես Хачатрян В., Восточные провинции Хеттской империи, Ереван, 1971, с. 23.

³³ Տես Ջահուկյան Գ., նշվ. աշխ., էջ 327, ծանոթ. 15: նույնի՝ Հայաստանի լեզվի կլինամատոլիական ծագման վարկածը, «ԴԲՀ», 1976, թիվ 1, էջ 94, ծանոթ. 18:

³⁴ Տես Ադոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 73:

կամ «կարմիր», անունը ստացել է սեփական յուրահատկության շնորհիվ: Մեր կարծիքով, ալիզոնը Հալիսի վերին հոսանքի բնակիչների անվանումն է, որն առաջացել է կամ գետանունից («աղի», «կարմիր»), կամ էլ զբաղմունքից (աղագործներ): Ս. Երեմյանը ալիզոններին տեղադրում է Հալիսի վերին հոսանքում՝ Սեբաստիայի շրջանում³⁵: Ընդհանրապես, Հալիսի վերին հոսանքի շրջանը հարուստ է աղահանքերով, պղնձահանքերով, երկաթահանքերով և այլ օգտակար հանածոներով: Հերոդոտոսի մոտ ալազոնները սկյութական ժողովուրդ են Դնեպրի ստորին հոսանքի ավազանի շրջանում³⁶, և ըստ էության, հետաքրքիր է Պատմահոր այն տեղեկությունը, թե Հյուպանիս (Հարավային Բուզը-Խ. Հ.) գետի վտակներից մեկի ջուրը խիստ դառնաղի է և գտնվում է երկրագործ սկյութների և ալազոնների սահմանի վրա: Մեր կարծիքով, տվյալ դեպքում ևս, չնայած ալիզոններ-ալազոնների տարբեր աշխարհագրական տեղորոշմանը, նրանց անվանումը կարելի է կապել «աղ» բառի հետ: Ս. Երեմյանի կարծիքով, ալիզոնների Ղևսից քաղաքը կարող է տեղադրվել Նիկոպոլիսի և Զինարայի միջև³⁷, այսինքն՝ Հալիսի ակունքների շրջանում Ալյուբների անունը կարելի է, ամենայն հավանականությամբ, կապել Աղյուն գավառի հետ, որը հարուստ էր աղահանքերով, և Հոմերոսի հալիզոնների քաղաք Ալյուբեն նույնացնել ալիս արդյունահանությամբ զբաղվողների բնակավայրի՝ Աղիաւանի հետ, որից էլ, ըստ Բ. Հարությունյանի, պետք է առաջանար Աղինը³⁸՝ Վերջինիս արևմուտքից հարում էր Հալիսի ակունքների շրջանը: Իսկ նման տեղադրության դեպքում անժխտելի է, որ, ըստ Հերոդոտոսի, Հալիսի վերին հոսանքի շրջանը գտնվել է Հայաստանում, ուրիշն ալիզոնները, որոնք Հալիսի վերին հոսանքի բնակիչներն են, մասն

³⁵ Տե՛ս «Амлас Армянской ССР», Ереван-Москва, 1961, с. 102.-«Государственный Урагму и сопредельные страны в VIII-VII в.в. до н. э.», карта.

³⁶ Տե՛ս Հերոդոտոս, IV, 17, 52:

³⁷ Տե՛ս Дьяконов И., Предыстория армянского народа, էջ 119:

³⁸ Տե՛ս Հարությունյան Բ., Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգի էջ 105: Ալյուբներին Աղյունի հետ նույնացնում է նաև Ս. Պետրոսյանը և Լեւոնյանը կապում «առյուծ» բառի հետ. Ի.-Ե. *ԼԵՍ -«առյուծ» արմատից (տե՛ս Պետրոսյան Ս. Սամուխայի Մայր դիցուհու պաշտամունքի ակունքները,-«ՊԲՀ», 2004, քիվ 1, էջ 166-174):

են XIII սատրապության մեջ և մ. թ. ա. V դարում արդեն կարող էին ներգրավված լինել հայագոյացման ոլորտը և աղբյուրներում արտացոլվել են Հալիս գետանվան ներքո: Հետևաբար խալյուբների նույնացումն ալիզոններին անհիմն է, քանի որ երկուսն էլ ծագումնաբանորեն ունեն տարբեր արմատներ և միաժամանակ ծագումնաբանորեն լիովին տարբերվում են խալդայներից: Բ. Հարությունյանի կարծիքով, խալդայ կամ խալտայ անունը հայկական ծագում ունի և կապված է «խաղտ» հասկացության հետ, որ նշանակում է «կոշտ, կոպիտ»: Դրանից են կազմված խաղտալեզու, խաղտալուր, խաղտախուղտ բառերը, որոնք բոլորն էլ նշանակում են «թանձրախոս, կոշտ ու կոպիտ բարբառով խոսող»³⁹: Ըստ հեղինակի, «խալդայ» նշանակել է թանձրախոս և կոպտախոս մարդ և հավաքական հասկացություն է: Հեղինակի ենթադրությամբ, խալդայների անվան տակ ամենից առաջ հասկացվում էին սկյութեն կոչված ցեղերը, որոնք չի բացառվում, որ իրականում սկյութական ցեղեր էին, որոնք Այսրկովկաս էին մուտք գործել կիմմերական և սկյութական ներխուժումների շրջանում: Ասկայն շատ հնարավոր է, որ սկյութեն անվանումն էլ լյուդիանրական էր, ուստի հեսպերիտ կոչված ցեղը (ըստ հեղինակի, սասպերյուների անունը այդպես էր արտացոլվել հույների մոտ, իսկ հեսպերուհիները հունական դիցաբանության մեջ նիմփաներ էին, որոնք ծայր արևմուտքում պահպանում էին ոսկե խնձորները), որը ոչ մի դեպքում չի կարող նույնանալ սասպերյուների հետ, պարզապես դրանցից մեկն էր և թողել է իր հետքը Սպեր գավառանվան մեջ⁴⁰:

Սկյութենները, մեր կարծիքով, նույն խալդայներն են լյուդիանրական ընկալմամբ: Տարբերությունն այն է, որ եթե խալդայների անունը հույներն իմացան հայերից և ընդունեցին որպես որոշակի ցեղի անուն, ապա սկյութենների անունը, որոնք խալդայի համար նույն խալդայներն էին, հույներն արդեն ընդունեցին որպես հենց կոնկրետ ցեղի ինքնանուն, որի մասին հունական եռօրյա լեզուները ունեն որոշակի պատկերացում: Հույները, խալյուբ-խալդայների երկրից դուրս գալով, կրկին մտել էին Հայաստան և այդ մասին չեն իմացել: Խալդայների մի մասը, որ սկյութեններն էին,

³⁹ Բն Անտոյան Հր., Հայերեն արմատական բառարան, Կ. Բ, Երևան, 1973, էջ 323:

⁴⁰ Բն Հարությունյան Բ., նշվ. աշխ., էջ 95-97:

մտել են Հայաստանի մեջ, ընդ որում, խոսքը, հավանաբար, Գյումնիասի սկյութենների մասին է: Պատահական չէ, որ «Կյուրոպեդիա»-ի տեղեկություններում հստակ երևում է, որ խալդայներն այսպես թե այնպես կապված էին հայերի հետ, և երկու ժողովուրդների դաշինքը պահպանվում էր, ըստ Քսենոփոնի, նաև իր ժամանակներում: Համենայն դեպս, «Անաբասիս»-ի վերջում մակրոնների և խալյութների միջև հիշատակվող խալդայները ինքնավար էին: Ղատելով շարադրանքից՝ այստեղ պարզորոշ կերպով սկյութենները կոչված են խալդայներ: Որ Հարպասոսն անցնելուց հետո հույները կրկին մտել էին Հայաստան, կարող է վկայել «Կյուրոպեդիա»-ի մի շատ արժեքավոր տեղեկությունը: Խալդայներին, որոնք եկել էին հաշտություն կնքելու, Կյուրոսը հարցնում է. «Արդյոք չէ՞իք ցանկալ, որ դուք ևս վճարեիք նույնը, ինչ որ *մյուս Արմենները* (ընդգծումը մերն է-Խ.Հ.), և թույլտվություն ստանայիք մշակելու Արմենիայի հողերը, որքան որ կամենայիք»⁴¹: Սույն տեղեկությունում ակնհայտորեն խալդայները, որոնք բռնել էին հայացման ուղին, համարված են ուղղակիորեն Հայաստանի բնակիչներ, հայաստանցիներ և խալդայները, ըստ «Անաբասիս»-ի, անկախացել էին մ. թ. ա. V դարի վերջերին, որոնք մինչ այդ մտնում էին XIII սատրապության մեջ:

Մ. թ. V դարի առաջին կեսին, երբ հայերեն էր թարգմանվում Մակաբայեցիների Երկրորդ գիրքը, 4-րդ գլխի 47-րդ տան՝ *εί χαι ἐνί Σχυθῶν ἐλεγον ἀπηλύθισαν ἀχατάγνωστοι* արտահայտությունը հայերը թարգմանել են այսպես. «Թէպէտ առաջի խաղտեաց դառ վարէին, իրաւ գտանէին»⁴²: Ն. Ադոնցը և Ս. Երեմյանը սկյութենների անվան տակ փորձում են տեսնել որոշակի ցեղ, որը տարբեր է խալդայ-խալյութներից: Սակայն դժվար չէ նկատել, որ հայերեն թարգմանության մեջ Խաղտիքը հին հունարեն տեքստի *Σχυθῶν*-ի փոխարեն օգտագործված է էթնիկական համարժեքության ամենալայն և կոնկրետ նշանակությամբ, և ոչ մի հիմք չկա այստեղ տեսնել Քսենոփոնի սկյութեններին, որոնք, լինելով նույն սակ-

⁴¹ Կյուրոպեդիա, էջ 112; Հմմտ. *Киропедия*, с. 69; *Cyropaedia*, v. I, p. 258-259.

⁴² Ադոնց Ն., Հայաստանի պատմություն, էջ 305: Տե՛ս նաև Երեմյան Ս., Կիմերական ու սկյութական ցեղերի արշավանքները և Ուրարտուի ու Ասորեստանի պայքարի ընթացքները, էջ 96:

սկյութները, հայերի համար խալդայներ են կոչվել, և այն ինչ-որ հայերի համար խալդայներ են եղել, հույների համար էլ սկյութներ են եղել: Ուստի խալդայների համադրումը սկյութեններ կոչվող որոշակի ցեղի հետ անընդունելի է: Սկյութենները ևս խալդայներ էին հայերի համար, սակայն հետաքրքիր է ուշադրություն հրավիրել այն հանգամանքի վրա, որ հայկական աղբյուրները միայն Ճորոխի վերին և միջին հոսանքի շրջանում հաստատված սակ-սկյութներին են անվանում խալդայներ, չնայած նրանք հաստատվել էին նաև Հայաստանի այլ շրջաններում, օրինակ Շակաշենում: Բ. Հարությունյանը գտնում է, որ սկյութենական ցեղերը հավաքական առումով կոչվել են խալդայներ կամ, դատելով հայկական աղբյուրներից, խալտայներ⁴³: Սկյութների անունից էլ պետք է ծագեր Սկյուդիսես լեռնաշղթայի անունը, որ Պոնտական լեռնահամակարգի Ճյուղավորումներից մեկն է⁴⁴: Արիստոտելի աշակերտներից Դիկեարքոս Մեսենացին գրում է, որ Կողքիսի մոտ ապրող խալդերին ոմանք անվանում են խալդայներ եռավանկով⁴⁵, այսինքն՝ սկյութական ցեղերը հավաքական առումով կոչվում են խալդայներ: Դիոդորոս Սիկիլիացին նույնպես արևելյան խալդայների փոխարեն հիշատակում է խալդայներին⁴⁶, ցույց տալով, որ Կատարգա-Կղարջքի տարածքում սկյութական տարրը բավականաչափ մեծ թիվ է կազմել, որոնց շրջանում միևնույն ժամանակ տարածված է եղել մետաղագործությունը:

Ի. Դյակոնովը ժամանակին կարծիք է հայտնել, թե Արծկեի (Աղըլջևազի) արձանագրության մեջ հիշատակված Խալխուու կրկիրը համապատասխանում է հայկական աղբյուրների Խաղտիքին⁴⁷: Կերջին շրջանի ուսումնասիրությունները ցույց են

⁴³ Ինչև Հարությունյան Բ., նշվ. աշխ., էջ 95:

⁴⁴ Ինչև Мелкушвасу Г., К истории..., էջ 81: Հմմտ. Ադոնց Ն., Հայաստանի պատմություն, էջ 304:

⁴⁵ Ինչև ИДПСК,-«ВДИ», 1947, թիվ 3, էջ 254:

⁴⁶ Ինչև Դիոդորոս Սիկիլիացի, էջ 67:

⁴⁷ Ինչև Дьяконов И., Заметки по урартской эпиграфике,-«Эпиграфика Востока», VI, 1952, с. 111-112: նույնի՝ Предыстория армянского народа, էջ 170-171, Հարությունյան Բ., նշվ. աշխ., էջ 102: Չ. Մելիքիշվիլին «Խալխուու» նույնացնում է Խաղտիքի արձանագրությունների «Թաբալ»-ին և տեղադրում այն հայկական շրջաններից արևմուտք, սակայն այս նույնացումը խիստ կասկածելի է (Мелкушвасу Г., նշվ. աշխ., էջ 76-77):

տալիս, որ Խաղտիքի բնակչությունը հնդեվրոպական-իրանական է և ոչ թե քարթվելախոս⁴⁸։ Օրինակ, ըստ «Աշխարհացոյց»-ի՝ եգերացիք Պոնտոսի ծովը կոչում են Ակամսիս, իսկ Խաղտերը՝ Կակամար⁴⁹։ Մենք կիսում ենք Ս. Պետրոսյանի կարծիքը, ըստ որի՝ ծովանունը բաղկացած է կակա (հմմտ. հուն. կակոս «վատ», «կատաղի», «սարսափելի») և մար (հմմտ. լատ. mare «ծով») բաղադրիչներից⁵⁰։ Համեմատության համար նշենք, որ հայ իրականության մեջ Աղթամար նշանակել է Աղի ծով։

Ավելի ուշ խալյուբների՝ որպես մետաղագործների, զբաղմունքը հատկացվում է նաև հայերի մի մասին։ Պլինիոս Ավագը գրում է․«... այնուհետև Փառնակիայից 100 մղոն հեռավորության վրա՝ հսկայական լեռներով շրջապատված ազատ քաղաք Տրապեզունտը, որից հետո գալիս է արմենոխալյուբներ ցեղը, իսկ 30 մղոն այն կողմ՝ Մեծ Հայքը»⁵¹։ Արմենոխալյուբներին Պլինիոսը հիշատակում է նաև մեկ այլ հատվածում․«Թասիեի և Թրիարիեի տարածքները հասնում են մինչև Պարիհեդրոյան լեռները, որոնցից այն կողմ գտնվում է Կողքիսի անապատը։ Նրա կողքին՝ կերավնացիների ուղղությամբ, բնակվում են արմենոխալյուբները, և մուսքերի տարածքն է՝ մինչև Կյուրոսի վտակ Հիբերոսը. նրանցից ներքև սակասաններն են, այնուհետև՝ մակերոնները և Աբսարոս գետը»⁵²։ Ըստ Բ. Հարությունյանի, Պլինիոսի առաջին հիշատակության մեջ արմենոխալյուբները համապատասխանում են սկյութեն-խալդայներին, որոնք բնակվել են Ծանախոձոր գետի վերին հոսանքի շրջանում և ներառնվեցին հայագոյացման ոլորտը՝ իսկ երկրորդ հիշատակության արմենոխալյուբները տեղադրվում են այն խալյուբների տարածքում, որոնց «Անաբասիս»-ը

⁴⁸ Տե՛ս Меликшвили Г., Наир-Урарту, էջ 411:

⁴⁹ Տե՛ս Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 110:

⁵⁰ Տե՛ս Петросян С., Древнейшие названия Черного моря, озер Урмия и Ван в свете мифологических представлений древних армян.-«ԼԳ», 1986, թիվ 4, էջ 71-64:

⁵¹ ИДПСК.-«ВДИ», 1949, թիվ 2, էջ 288: Տե՛ս նաև Plinii Secundi C., Naturalis historiae, VI, 4, 11-12.

⁵² ИДПСК.-«ВДИ», 1949, թիվ 2, էջ 298: Տե՛ս նաև Plinii Secundi C., Naturalis historiae, VI, 11-29.

տեղորոշում է տառխների հարևանությամբ⁵³: Դժվար չէ նկատել, որ ինչպես Ստրաբոնի, այնպես էլ Պլինիոսի մոտ, խալկերը և խալդայը համարժեք են, քանի որ վերջիններիս շրջանում ևս զբաղվել են մետաղագործությամբ, երբ ավելի վաղ ժամանակների աղբյուրների վերլուծությունը ցույց էր տալիս նրանց հստակ տարբերակումը: Ընդ որում, Պլինիոսի առաջին վկայությունից պարզորոշ նկատվում է, որ այդ արմենոխալկերները մ. թ. I դարի արշալույսին չէին մտնում Մեծ Հայքի մեջ, որոնք մինչ այդ Փոքր Հայքի անբաժանելի մասն էին կազմում:

Ստրաբոնի ժամանակներում խալդայ հայկական անվանումը աստիճանաբար ներթափանցել էր Պոնտական լեռների հյուսիսահայաց լանջերը, տարածվել հույների շրջանում, որը և պատճառ էր դարձել, որ Ստրաբոնը խալկերներին նույնացնի խալդայների հետ⁵⁴: Խալդայ հավաքական անունով ցեղերը, որոնք հնդեվրոպական էին, մեծ մասամբ հայացան (XIII սատրապության տարածքում գտնված մասը-Խ. Հ.), իսկ Կղարջքի շրջանում՝ վրացացան: Դրա հետևանքով Խաղտիք կամ Խալդայների երկիր հասկացությունն աստիճանաբար տարածվեց հայերից հյուսիս-արևմուտք բնակվող մերձսևծովյան ցեղերի վրա, այսինքն՝ Պոնտական լեռների հյուսիսահայաց լանջերի տեղաբնիկների վրա, որոնք զբաղեցնում էին Տրապիզոնից մինչև Ճորոխ գետն ընկած տարածքները⁵⁵: Խաղտիք է համարվել նաև Արսեսա-Արսիքը, որտեղ հաստատվել էին «աս» կոչված սկյութական ցեղերը, և ավելի ուշ Խաղտիք է անվանվում ճան-մակրոնների երկիրը⁵⁶: Խաղտիքի առավել լայն տարածական ընդգրկումը առավել ուշ շրջանի աղբյուրներում պայմանավորված է բյուզանդական Խաղտիք վարչական միավորի (սկզբում տուրմա, իսկ այնուհետև՝ բանակաթեմ) հանդես գալով, որի մեջ ներառվում է նաև Ճորոխի

⁵³ Ցես Հարությունյան Բ., նշվ. աշխ., էջ 97-98: Ըստ Ս. Մուրավյովի, արմենոխալկերը տեղադրվում են Լյուկոս գետի վերին հոսանքի տարածքում՝ Լյուբսոն լեռնաշղթայի հարավային կողմից, Փոքր Հայքի սահմանի մոտ (տես Ս. Мухоманьев С., Заметки по исторической географии Закавказья. Плиний о Кавказе, «В.Д.И», 1988, թիվ 1, էջ 160-161):

⁵⁴ Ցես Հարությունյան Բ., նշվ. աշխ., էջ 104:

⁵⁵ Ընդ, էջ 101:

⁵⁶ Ընդ, էջ 99, 109-111:

ավագանը⁵⁷: Կատարված քննությունից կարելի է եզրակացնել, որ Խաղտիքը, որը ճորոխի ավագանն է, ավելի ուշ ժամանակներում հարավից պետք է տարածվեր հյուսիս, և որ աղբյուրներում խալդայները համարվել են էթնանուն, իսկ խայկուբները՝ զբաղմունք: Դատելով Կարինի և Դերջանի սահմանագլխին գտնված Խաղտոյառիձ գյուղի անունից՝ խալդայները շարժվել են նաև դեպի հարավ և հաստատվել էթնիկ այլ միջավայրում: Թերևս ուրարտական արձանագրությունների Խալդիիրուլխի տեղանունը կարելի է կապել խալդայ էթնանվան հետ և աշխարհագրորեն նույնացնել Խաղտոյառիձին: Խալդիիրուլխին չի կարող նույնացվել Չալդրանի Չլդր լճի ավաաներձ շրջանի հետ, քանի որ տվյալ տարածքը գտնվել է էթիունի երկրի կազմում⁵⁸: Մեր կարծիքով, տեղանվան մեջ -ուլխի-ն հայկական «աղխ»-ն է, և հետագայում

⁵⁷ Անդ, էջ 111: Վ. Իվանովը երկաթի կամ պողպատի հունական ձևը չձևսը (նաև խայկուբների անունը) բխցնում է խաթերեն *hapalki*-ից (տես *Иванов В., Проблемы истории металлов на Древнем Востоке в свете данных лингвистики*, «ՊԲՀ», 1976, թիվ 4, էջ 82-83: Հմմտ. նաև *Гамкрелидзе Т., Иванов В., Индоевропейский язык и индоевропейцы*, т. II, Тбилиси, 1984, с. 710, прим.1): Խեթական արձանագրությունների Խալիպասուվա տեղանվան առաջին բաղադրիչը, ըստ Վ. Խաչատրյանի, հիշեցնում է ինչ-որ մասնագիտություն նշող խեթերեն *halipi-* բառը, ինչպես նաև հին հունական *χάλσιος* «մետաղագործ» տերմինը, որը հին հեղինակների աշխատություններում հաճախ տրվել է Հայկական լեռնաշխարհում ապրող ցեղերին (հմմտ. արմենոխայկուբներ և խայկուբներ): Հեղինակը միաժամանակ նշում է , որ խեթական աղբյուրներում *halipi-* բառը հանդիպում է հաճախ որպես աշխարհագրական անվանում, ըստ էության, նույնպես Հայկական լեռնաշխարհի հետ կապված (Խալիպի (այս լեռնանունը մենք կհամեմատենք նմանատիպ կազմություն ունեցող հետևյալ լեռնանունների հետ. Երկաթահանք և Երկաթահատաց-Աղձվիք աշխարհում, Երկաթասար-Չանգեզուրի լեռնահամակարգում, Երկաթադրոյր Դարաբաղի բարձրավանդակում, Երկաթներ-Արձակ լճի արևմտյան կողմում և այլն) Խալիպուտա, Խալիպսիուրա): Հեղինակի քննությունը հիմք է տվել նրան ենթադրելու որ Խալիպասուվան գտնվել է Ասուվա երկրում (ըստ հեղինակի՝ հետաքրքիր Երկվարքն գավառն է) , որտեղ զբաղվել են մետաղամշակությամբ, որն սկի ժամանակներում կապված էր նաև մարտակառքերի արտադրության հետ (տես *Хачатрян В., Восточные провинции Хеттского империи*, էջ 127: Հմմտ. տես Պետրոսյան Ս., Ասուվա երկիրը և գույզ առաջնորդների սոցիալական ինստիտուտը՝ «ՊԲՀ», 2002, թիվ 3, էջ 261-276: Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն, էջ 334) Այսպիսի մոտեցման դեպքում անկասկած է, որ խայկուբների անունը՝ որպես մետաղագործներ, հին հունարեն է ներթափանցել այլ լեզվից (խաթերենի⁵⁹) և ունենալ է այլ արմատներ:

⁵⁸ Տես Խաչատրյան Վ., Հայաստանը մ. թ. ա. XV-VII դարերում, էջ 124:

տեղանունը պետք է ստանար -առիճ (առինճ, առինջ) «գյուղ, շեն» իմաստը:

Այժմ քննենք մուսքերի տեղադրության խնդիրը: Պատմագիտության մեջ մուսքերին փորձել են կապել մուշքերի հետ, որոնք հնագույն աղբյուրներում նույնացվում էին փռյուզների հետ⁵⁹, սակայն այս նույնացումը կասկածելի է⁶⁰: Հիմքեր չկան նաև մուսքերին նույնացնել (օրինակ Գ. Մելիքիշվիլու կողմից) վրացական մետախերի հետ⁶¹, քանի որ մուսքերի մի մասը հետագայում ծուլվում է վրացական էթնոսի մեջ և իր անունը պահպանում վրացական մետախերի անվան մեջ: Բ. Հարությունյանը մուսքերին համարում է իրանական աշխարհին պատկանող ցեղերից մեկը և նույնացնում է «Անաբասիս»-ում հիշատակված արևելյան խաչյուրների հետ, որոնք զբաղեցրել են Ճորոխ գետից մինչև Կուր ընկած հողերը⁶²: Մենք ընդունում ենք նման տեղադրությունը: Բ. Հարությունյանը Քսենոփոնի խաչյուրներին տեղադրում է Ճորոխից արևելք և տաղիներից հյուսիս ընկած շրջանում, որը նույնանում է արևմտյան Պուգարքին կամ Կատարգա-Կղարջքին⁶³: Եթե նկատի ունենանք, որ նրանց երկրից հույները հասել են Հարպասոս-Ճորոխ գետին, ապա այդ տեղադրությունը միանգամայն ընդունելի է :

Ըստ էլլանիկոս Միտիլենացու (մ. թ. ա. V դար), կերկետներից վերև բնակվում են մուսքերը և քարիմատները, ներքև՝ հենիոքները, վերև՝ կորաքսները⁶⁴: Պալեոֆատոսը (մ. թ. ա. IV դար) գրում է. «Կերկետներին սահմանակցում են մուսքերը, և քարիմատները տիրում են Պարթենիոսին (գետ Հյուսիսային Կովկասում, մասնականակից Ֆուրտունան -խ. Հ.) մինչև Եվքսիանյան Պոնտոս»⁶⁵: Ուստ Ստրաբոնի, Սև ծովի ափագծով բնակվող ցեղերն էին

⁵⁹ Иллу Дьяконов И., Предыстория армянского народа, т. 2, Меликшвили Г., Иерус.-Урарту, т. 2 315:

⁶⁰ Иллу Հարությունյան Բ., Աքեմենյան Պարսկաստանի XVIII սատրապության տեղադրության շուրջ, էջ 69:

⁶¹ Иллу Меликшвили Г., Նշվ. աշխ., էջ 410:

⁶² Иллу Հարությունյան Բ., նշվ. աշխ., էջ 69, 78:

⁶³ Иллу Հարությունյան Բ., Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման տեղադրում..., էջ 95:

⁶⁴ Иллу ИДПСК.-«ВДИ», 1947, №1, էջ 316: Stru նաև Müller C., Fragmenta historicorum graecorum, v. I, p. 59, Fr. 109.

⁶⁵ Иллу «ВДИ», 1947, №3, էջ 250:

աքեյցիները, այնուհետև գիգերը, հետո հենիոքները, կերկետնայլ, մոսքերը և կոլխերը⁶⁶: Կերկետները ժամանակակից չերթզանքի նախնիներն են: Ստեփանոս Բյուզանդացու կորաքաները կոլխական ցեղ են՝ կոլերին հարևան, իսկ Կոլական լեռներ են կոչվում Կովկասի լեռնալանջերը, և երկիրը՝ Կոլիկա⁶⁷: Պոմպոնիոս Մելասը հիշատակում է վեց Կոլիկներ⁶⁸: Կեղծ Արրիանոսի մոտ Կորաքսիկա երկրին սահմանակցում է, այսպես կոչված, Կոլիկան, որտեղ նրա ժամանակներում մելանիլեններ ժողովուրդն էր և կոլխերը: Նույն հեղինակը հիշատակում է հենիոքերին, կորաքաներին, կոլիկներին, մելանիլեններին, մաքելուններին, կոլխերին, լազերին⁶⁹: Սկիլաքս Կարիանդացին ևս կորաքաներից հետո հիշատակում է կոլիկա ժողովուրդը⁷⁰: Պլինիոսի մոտ ևս հիշատակվում է regio Colica-ն⁷¹: Բերված տեղեկություններից կարելի է եզրակացնել, որ կորաքաները գտնվել են ներկայիս Կողորի գետի հովտում՝ տարածվելով մինչև Կողորի լեռնաշղթա, իսկ կոլեր անունով ժողովուրդը բնակվել է Կողորի լեռնաշղթայից հարավ:

Կորաքաներն իրենց անունը տվել են Կովկասի արևմտյան մասին, որը Պլինիոսի մոտ կոչվում է նաև Հենիոքական կամ Կորաքսական լեռներ⁷²: Պոմպոնիոս Մելասի մոտ հիշատակվում են աքեյները, գեորգիլները, մոսքերը, կորսիտները, ֆորիստները, ռիմֆակները: Մելասի երկի ծանոթագրողները վերջին երեք ցեղերի անունները ուղղում են կերկետներ, տորետներ, արեմֆեյներ կամ կերկետներ, տորիստներ, ռիմֆակներ⁷³: Ըստ աղբյուրների՝ կորսիտների սրբագրումը կերկետների ավելի ճիշտ է, քանի որ նրանց հարևանությամբ բնակվել են մոսքերը: Որ մոսքերի մի հատվածը բնակվել է հյուսիսային Կովկասում, կարող են վկայել անտիկ աղբյուրներում պահպանված այն կցկտուր

⁶⁶ Ст.у Смардон, XI, II, 14.

⁶⁷ Ст.у ИДПСР, «ВДИ», 1948, р.ч. 3, т. 321-322:

⁶⁸ Անդ., «ВДИ», 1949, р.ч. 1, т. 275:

⁶⁹ Ст.у ИДПСР, «ВДИ», 1948, р.ч. 4, т. 229, 232:

⁷⁰ Անդ., «ВДИ», 1947, р.ч. 3, т. 242; Muller C., Geographi Graeci Minores, v. I, p. 61.

⁷¹ Անդ., «ВДИ», 1949, р.ч. 2, т. 291:

⁷² Անդ., т. 286, 297:

⁷³ Անդ., «ВДИ», 1949, р.ч. 1, т. 272, ծանոթ. 13:

տեղեկությունները, որոնք խոսում են սարմատների և մոսքերի հարևանության մասին⁷⁴: Զվինտոս Կուրտիոս Ռուփոսի մի հիշատակության մեջ ասվում է.«... Չախից գտնվում են կերկետների, մոսսինների և խալուբների երկրները, մյուս կողմից լեկոսիրներինն ու ամազոնուհիներինը»⁷⁵: Ելնելով հյուսիսից հարավ թվարկումից՝ մոսսինները նույն մոսքերն են: Եթե խալուբները հիշատակվեն լեկոսիրների ու ամազոնուհիների հետ, ինչը, մեր կարծիքով, ըստ սկզբնաղբյուրների, ավելի ճիշտ է, ապա մոսսիններ-մոսքերը կտեղադրվեն կերկետներից հարավ, այնուհեղ, ուր Ստրաբոնի «Մոսքերի երկիրն» է: Հակառակ դեպքում, խալուբները, որ նույն մոսքերն են, պետք է տեղադրվեն ճորոխի ստորին հոսանքի շրջանում, այսինքն՝ Ռուփոսը միևնույն ցեղի երկու տարբեր անվանումները, մեկը որպես զբաղմունք, մյուսն էթնանուն, ընկալում է որպես երկու տարբեր ցեղերի անուններ, որն իրական չէ: Այս շփոթը, երբ միևնույն էթնոսը հիշատակվում է երկու տարբեր անուններով, առկա է նաև Ստրաբոնի մոտ: Ստրաբոնը հավաստում է, որ Արտաշես Ա և Ջարեհ թագավորները խալուբներից ու մոսսինոյկներից գրավեցին Կարենիտիսը և Քսերքսենն (իմա՝ Դերքսենե-Դերջան)⁷⁶: Ինչպես իրավացիորեն նկատում է Բ. Հարությունյանը, Ստրաբոնն՝ ազդվելով Քսենոփոնի վկայություններից, ինքն է խալոայների անունը փոխարինել խալուբներով, իսկ այնուհետև, ելնելով այն իրողությունից, որ խալուբներից արևելք գտնվում են մոսսինոյկները, որոնց ենթակայության տակ են խալուբները, ավելացրել է մոսսինոյկների անունը, կամ էլ քսենոփոնյան խալուբների հարևանությամբ բնակվել են մոսքերը, հանգամանք, որը հույն աշխարհագետի մոտ կարող էր ծնել խալուբ-մոսսինոյկ զուգորդությունը: Նման զուգորդությունը կարող է ծագել հեղինակի մոտ, սակայն Կարենիտիսի և Քսերքսենե-Դերքսենեի գրավումը խալուբների և մոսքերի կողմից բացառվում է, որովհետև Արտաշես Ա-ն, Ստրաբոնի հավաստմամբ, Մոսքերի երկրի տարածքը գրավել էր

⁷⁴ Անդ.-«ВДИ», 1949, թիվ 2, էջ 322, 332; 1949, թիվ 4, էջ 290:

⁷⁵ Անդ.-«ВДИ», 1949, թիվ 1, էջ 288:

⁷⁶ Տե՛ս Ստրաբոն, էջ 57:

իբերներից⁷⁷: Ինչպես կարելի է ենթադրել Ստրաբոնի տեղեկություններից, խոսքն Արտաշես Ա-ի կողմից կատարված վերանվաճման մասին է, քանի որ Հերոդոտոսի և Քսենոփոնի ժամանակներում Դերջանը և Կարինը մտել են XIII ստրապուլային մեջ: Հերոդոտոսը Եփրատի ակունքները դնում էր Հայաստանում⁷⁸, իսկ համաձայն Քսենոփոնի, փասիանների, հեսպերիտների և տառիսների բնակության շրջանները համարվել են Հայաստան⁷⁹ Ուրեմն, մոսքերը պատմական ինչ-որ ժամանակահատվածում, հավանաբար մ. թ. ա. III-II դարերում, ստեղծել էին սեփական պետական կազմավորումը, որը հարավային ուղղությամբ բավականին տարածվել էր:

Ըստ Գայոս Պլինիոսի, աքեյներից հետո մարդերն են կերկետները, սերրերը և կեփալոտոմները⁸⁰: Սերրերը Հ Մանանդյանը ուղղում է սերակի-սիրակի և կապում է Շիրակ գավառի հետ, իսկ կեփալոտոմները Ստրաբոնի սարապարներն են («գլուխ կտրողներ»)՝⁸¹: Կ. Կրեչմերը նշում է, որ սերրեր անունով ցեղ կա Պոնափոնոս Մելասի հին հրատարակություններում մելանխլեններ, սերրեր, սիրակներ, կոլիկներ և այլն, այն դեպքում, երբ Ֆրիքի հրատարակության մեջ ցեղի անունը ընդհանրապես ոչնչացված է⁸²: Ըստ Մելասի երկի ծանոթագրողների, սերրերը գտնվել են Նովոռոսիյսկի շրջանում⁸³: Եթե հետևենք Սկիլաքս Կարիանդացուն, մարդերը պետք է հայտնվեն տորետների տեղում⁸⁴: Սակայն մարդերը Գայոս Պլինիոսի մոտ առանձին ցեղ են և չեն կարող նույնանալ տորետներին: Սերրերը, այսպիսով, որոնք նույնական չեն սիրակների հետ և, թերևս նույնանում են գելոններին, նախորդել են կերկետներին: Կերկետներից հետո աքեյներն են: Աքեյներին հաջորդել են մարդերը, իսկ վերջիններիս

⁷⁷ Տես Հարությունյան Բ., Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն..., էջ 102-103:

⁷⁸ Տես Հերոդոտոս, I, 180:

⁷⁹ Տես Անաբասիս, էջ 98:

⁸⁰ Տես Մ.Ս. Մանանդյան, «Վ.Ս.», 1949, թիվ 2, էջ 291:

⁸¹ Տես Մանանդյան Հ., Հին Հայաստանի և Անդրկովկասի պատմության մի քանի պրոբլեմների մասին, էջ 277-278:

⁸² Տես Մ.Ս. Մանանդյան, «Վ.Ս.», 1949, թիվ 2, էջ 291, ծանոթ. 15:

⁸³ Անդ: Սերրերը, միգուցե, Պտղոմեոսի գերրերն են, որոնք հիշատակվում են Ալբանիայում (տես Մ.Ս. Մանանդյան, «Վ.Ս.», 1948, թիվ 2, էջ 249, 252):

⁸⁴ Անդ, «Վ.Ս.», 1947, թիվ 3, էջ 242:

կենդանությունները: Մարդերը, թերևս, մեր կարծիքով, շփոթվել են XIX սատրապության մարերի հետ, իսկ կենդանությունները ինչ-որ ցեղի մակդիրն է, որը բնակվել է Սև ծովի արևելյան ափին: Կենդանություններ մակդիրը լիովին համապատասխանում է խաղութներին, որոնց հունաց բյուրը հանդիպում է Ճորոխի ստորին հոսանքի շրջանում և բնորոշում որպես գլուխ կտրողների:

XIX սատրապության մոսքերին Ն. Խազարաձեն տեղադրում է նորատից արևելք, մոտավորապես Թոքատ-Շաբին-Չարահիսար-Ոլունուշխանե գծի ուղղությամբ⁸⁵: Սակայն այս տեղադրությունը քննության չի դիմանում այն պարզ պատճառով, որ XIII սատրապությունը չէր կարող դուրս գալ Սև ծով, որը հակասում է Հերոդոտոսի տեղեկություններին: Ն. Խազարաձեն (նաև է. Անչաբաձե, Մ. Ինաձե, Ն. Լոմոսովի) չի վստահում էլլանիկոսին ու Պալեոֆատոսին և գտնում է, որ Ստրաբոնի «Մոսքերի երկիրը» պետք է փնտրել ոչ թե կերկետների հարևանությամբ, այլ պատմական հարավարևմտյան Վրաստանի տարածքում, որտեղ ենթադրվում է Հեկատեոսի և Հերոդոտոսի մոսքերի տեղադրությունը⁸⁶: Մոսքերի տեղադրությունը տիբարենների հարևանությամբ գուրկ է պատմական որևէ հիմքից, քանի որ նման տեսակետի կողմնակիցները հաշվի չեն առնում բազմաթիվ պատմական իրողություններ: Թերևս պետք է համաձայնվել այն մտքի հետ, «որ ցեղերի ու ժողովուրդների մեծ շարժի ժամանակներում մոսքերի մի մասը հաստատվել է Հյուսիսային Կովկասի կողմերում, իսկ մյուս հատվածը, շարժվելով հարավ, հաստատվել է ներկայիս Վրաստանի հանրապետության հարավարևմտյան շրջանում: Մոսքերը, հետևաբար, վրացական ցեղ չեն եղել, այլ միայն հետագայում, ինչպես կարելի է եզրակացնել Ստրաբոնի տեղեկություններից, հայտնվել են Մեծ Հայքի, Վիրքի և Կողքիսի քաղաքական տիրապետության ներքո և աստիճանաբար լուծվել հայկական և վրացական էթնոսների մեջ: Ավելին, ամենայն հավանականությամբ, սկզբում մոսքերը՝ որպես անկախ

⁸⁵ Ств Хазарадзе Н., Античная письменная традиция и вопрос о расселении мосхов в VI-Vвв. до н. э., «Проблемы античной истории и культуры», I, Ереван, 1979, с. 309-312.

⁸⁶ Անդ, էջ 312:

քաղաքական կազմավորում, պետք է գտնվեին Կիրքի և Հայրի միջև, և վրացիներն իրենցից հարավ գտնվող ժողովուրդի անունը պետք է տեղափոխեին հայերի վրա, երբ վերջինները տիրապետող մոսքերի երկրին Արտաշես Ա-ի օրերում: Պոնե մեր կարծիքով վրացիների կողմից հայերին տրված սոմեխի էթնանունը կարող էր ծագել մոսք կամ մոսխ անունից և ոչ թե Սուխմու երկրանունից, ինչպես այսօր ընդունված է պատմագիտության մեջ⁸⁷: Օստի հեղինակի, մոսքերը և մուշքերը տարբեր էթնիկական ծագում ունեն մոսքերը՝ որպես կոլխական ցեղ, պատկանում են իրանական լեզվաշխարհին, իսկ մուշքերը՝ թրակա-փռյուզիական ընդհանրությանը: Հեղինակը կարծում է նաև, որ մոսքերի անունը սերտ աղերս ունի վրացական «մեսխ»-ի հետ, սակայն ոչ մի կերպ չկա նրանց վրացական ցեղ համարելու, քանի որ մոսքերը պատկանել են սկյութական աշխարհին: Հետևաբար, մոսքերը նույնական են խաչուրներին և զբաղեցրել են Ճորոխի ստորին հոսանքից մինչև Կուր ընկած հողերը⁸⁸:

Ա. Քոսյանը, մանրակրկիտ վերլուծության ենթարկելով «արևելյան» և «արևմտյան» մուշքերի խնդիրը, ենթադրել է, որ երեք մուշքերը («արևելյան») կապ ունեն անտիկ աղբյուրների մոսքերի հետ, ապա մուշքերի ելակետը կարելի է տեղադրել Հայկական լեռնաշխարհի արևմուտքում, հյուսիս-արևմուտքում, այն շրջաններում, որտեղ խեթական աղբյուրները հիշատակում են Հայասա-Ազգին⁸⁹: Սակայն, պարզելով, որ մոսքերը գտնվել են արևմտյան Գուգարքի տարածքում, և նկատի ունենալով, որ մուշքերը, ի տարբերություն կասկ-ապիշլուների և ուրումուների, չեն համարվում «խաթի երկրի անհնազանդ ժողովուրդներ», այսինքն՝ հեռու են գտնվել խեթական ազդեցության ոլորտներից, ապա մուշք-մոսք հնարավոր նույնացման դեպքում, մուշքերի նախնական բնակության վայրը նույնպես պետք է տեղորոշել արևմտյան Գուգարքի տարածքում:

⁸⁷ Հարությունյան Բ., Աբեմենյան Պարսկաստանի XVIII սատրապության տեղադրության շուրջ, էջ 73-74:

⁸⁸ Անդ, էջ 69, 74, 78:

⁸⁹ Տե՛ս Քոսյան Ա., «Արևելյան» և «արևմտյան» մուշքերի խնդիրը, էջ 207-220; նույնի՝ Մերձավորարևելյան ճգնաժամը և Հայկական լեռնաշխարհը, էջ 164-167:

Այժմ անդրադառնանք մարերի տեղադրության քննությանը: Ապրերի անվան տակ, համաձայն Գ. Մելիքիշվիլու, ենթադրվում է Քրուսիս-Անատոլիական լեռնաշղթայի լեռներում ապրող ինչ-որ ցեղ: Զեղիմակը չի բացառում նաև, որ մարերի անվան տակ մասնակիորեն թաքնված են խալդայները: Միաժամանակ մարերի և կոլխերի միատեսակ սպառազինությունը, համաձայն Գ. Մելիքիշվիլու, թույլ է տալիս ենթադրելու, որ մարերի անվան տակ՝ կոլխերի հարևանությամբ, նկատի է առնվում հարավարևելյան Արծնսևծովի ծայր արևելյան շրջանում ապրող ինչ-որ ժողովուրդ⁹⁰:

Մեր կարծիքով, XIX սատրապության մեջ հիշատակվող մարերի ցեղն իր անունը թերևս տվել է Ամարանտական լեռներին: Ապոլլոնիոս Հռոդոսցին գրում է, որ Փասիսը հոսում է հեռավոր Ամարանտական լեռներից և մեկ այլ տեղում Փասիսը անվանում է Ամարանտական⁹¹: Ապոլլոնիոսի «Արգոնավորողների արշավը» սրբիլիայում ասվում է. «Ամարանտը քաղաք է Պոնտոսում, իսկ այդ պոնտի (իմա՝ Ապոլլոնիոսի-Խ.Հ.) խոսքերով՝ լեռներ Կողքիսում, որտեղից հոսում է Փասիսը... Իսկ որ Կոլխերը ունեն Ամարանտական լեռներ, այդ մասին ասում է Կտեսիասը II գրքում»: Սրբիլիայում գրված է նաև, որ Փասիսը հոսում է մի մարգագետնով, որը ծածկված է փթթուն, անթառամ բուսականությամբ⁹², որը կեղծ ստուգաբանություն է: «Etymologicon Magnum»-ը անունը կապում է հունարեն ἀμαραντος «չթառամող» բառի հետ⁹³: Սրբիլիաներում ամարանտները բարբարոս ժողովուրդ են մայրացամաքում՝ կոլխերից վերև, որտեղից բխում են Փասիսի ակունքները: Կամ էլ Ամարանտական է կոչվում Կոլխական լեռը, որտեղից հոսում է Փասիսը⁹⁴: Չայոս Պլինիոսի մոտ հիշատակված ամպրեվտներին նրա երկի ծանոթագրողները նույնացնում են ամարանտների՝ Ամարանտական լեռների բնակիչների հետ, որտեղից հոսում է Փասիսը և ենթադրել են, որ Ամարանտական լեռները նույնանում են Մոսքական լեռներին (որտեղից հին հեղինակների մեծ մասը բխեցնում էր Փասիսի ակունքները, նկատի առնելով Փասիս-Ռիոնի

⁹⁰ Տե՛ս Мелукишвили Г., К источн... , էջ 255:

⁹¹ Տե՛ս ИДПСК.-«ВДИ», 1947, թիվ 3, էջ 280, 285:

⁹² Անդ, էջ 289:

⁹³ Անդ, էջ 280, ծանոթ. 11:

⁹⁴ Անդ, էջ 293:

գետի վտակ Ղվիրի(ան), իսկ Պլինիոսի ամպրեվտներին համեմատել են հին մոսքերի հետ⁹⁵: Սակայն, եթե ամպրեվտներին կարելի է համեմատել ամարանտների հետ, ապա ոչ ամարանտները և ոչ էլ Ամարանտական լեռները չեն կարող նույնացվել Մոսքական լեռներին: Մոսքական լեռները, որտեղիս հին հեղինակների մի մասի կարծիքով, հոսում էր Փասիսը (իմա Ղվիրի(ա), նույնացվել են Հայկական լեռների հետ: Հետևաբար, եթե Մոսքական և Հայկական լեռներ համադրությունն ունի պատմական հիմք, ապա Ամարանտական և Մոսքական լեռների նույնացումը բացառվում է: Հենց նույն Ստրաբոնը մի տեղում Փասիսի ակունքները դնում է Հայաստանում, մյուս դեպքում՝ Իբերիայում⁹⁶: Հերոդոտոսը Քսերքսեսի հունական արշավանքի ժամանակ մարերին և կոլխերին հիշատակում է մեկ հրամանատարության տակ.«Մարերը իրենց գլխին կրում էին տեղական հյուսվեն սաղավարտներ, կաշվե փոքր վահաններ և տեգեր: Կոլխերը իրենց գլխին կրում էին փայտե սաղավարտներ, աննշակ կաշուց պատրաստած փոքր վահաններ, կարճ տեգեր, ինչպես նաև դաշույններ: Մարերին և կոլխերին առաջնորդում էր Տեսապիսի որդի Փառանդատեսը»⁹⁷: Հեկատեոսը մարերին համարում է մոսսինոյկներին հարևան⁹⁸: Հերոդոտոսը նույնպես մարերին հիշատակում է մոսսինոյկներից հետո, սատրապության ծայր արևելյան հատվածում⁹⁹: Եթե Հերոդոտոսի կոլխերին տեղադրենք Տրապիզոնի շրջանում, ինչպես ավելի ուշ դա անում է Քսենոփոնը, ապա մարերն իրոք ապրել են մոսսինոյկների հարևանությամբ, նրանցից արևելք: Բ. Հարությունյանը գտնում է, որ մարերը նույնանում են «Անաբասիս»-ի մոսսինոյկների ենթակայության տակ գտնվող խայլուբների հետ և մարը ցեղի պարսկական անվանաձևն

⁹⁵ Անդ.,-«ВДИ», 1949, քիվ 2, էջ 288, ծանոթ. 12: Ըստ Պլինիոսի, Փասիսը հոսում է մոսքերի տիրույթներից (անդ., էջ 289):

⁹⁶ Տե՛ս Страбон, XI, 14, 7; XI, 2, 17; XI, 3, 4: Բացի այն հանգամանքից, որ Փասիսն ավելի հին աղբյուրներում նույնացվել է նաև Ճորոխի հետ, նկատենք, որ Փասիսի տակ Ստրաբոնը կարող էր նկատի ունենալ նաև Արաքսը, քանի որ Քսենոփոնի փասիանները բնակվել են Արաքսի վերին հոսանքի և Ուղթիս գետի ակունքների շրջանում:

⁹⁷ Հերոդոտոս, VII, 79:

⁹⁸ Տե՛ս И.Д.Покр.,-«ВДИ», 1947, քիվ 1, էջ 301; 1948, քիվ 3, էջ 322:

⁹⁹ Տե՛ս Հերոդոտոս, III, 94:

(¹⁰⁰): Սակայն այդ փոքրաթիվ խալուբները չէին կարող ինքնուրույն ցեղ դիտվել և հանդես գալ կոլխերի հետ: Պարզապես մոսսինոյկների մի մասը զբաղվել է երկաթագործությամբ և այդ մասը հույների համար ընկալվել է որպես առանձին ցեղ, և վերջին հաշվով նկատենք, որ մոսսինոյկները ևս ցեղի բնորոշում է հույների կողմից տրված, և թե ինչ է եղել ցեղի իրական էթնանունը մեզ համար անհայտ է: Մեզ անհրաժեշտ է ճշտել, թե Պատմահոր երկում կոլխերը այլ տեղեկություններում ինչպես են արտացոլվում: Ստորև թերում ենք Կողքիսին և կոլխերին վերաբերող այն տեղեկությունները, որոնք հարցիս պարզաբանման համար կարևոր նշանակություն ունեն: Հերոդոտոսը գրում է. «Ռազմանավով նրանք (ինա՛ր արգոնավորդները-Խ. Հ.) նավում են դեպի Այա, Կողքիսում, և Փասիս գետը. այստեղ նրանք, վերջացնելուց հետո բոլոր այն գործերը, ինչի համար ժամանել էին, առևանգում են արքայի դուստր Մեդեային»¹⁰¹: Նաև՝ «Մեյոտես լճից մինչև Փասիս գետը և կոլխերի երկիրը երեսուն օրվա ճանապարհ է անխոնջ ուղևորի համար»¹⁰²: Մեկ այլ տեղում՝ «Պարսիկները բնակվում են մինչև Հարավային ծովը, որը կոչվում է Կարմիր: Նրանցից վերև՝ դեպի հյուսիս, բնակվում են մեդացիները, մեդացիներից (վերև)՝ սասպեյրները, սասպեյրներից (վերև) կոլխերը, տարածվելով մինչև Հյուսիսային ծովը, որտեղ թափվում է Փասիս գետը»¹⁰³: Պատմահոր հաղորդումներից մեկում Փասիսը համարվում է Կողքիսի գետը¹⁰⁴: Բերված տեղեկություններում պարզորոշ երևում է, որ կոլխերը Պատմահոր երկում տեղադրված են Փասիս գետից և՛ հարավ, և՛ հյուսիս:

Տ. Միքելաձեի կարծիքով, Հերոդոտոսի Կողքիսը զբաղեցրել է Դիաուխիի և Կուլխայի տարածքը: Ջարգացնելով իր միտքը՝ նա գտնում է, որ Աքեմենյան Պարսկաստանի ճնշման հետևանքով Կողքիսի պետության կենտրոնը հարավից տեղափոխվում է Ռիոնի

¹⁰⁰ Տես Հարությունյան Բ., Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն..., էջ 92:

¹⁰¹ Հերոդոտոս, I, 2:

¹⁰² Անդ, I, 104:

¹⁰³ Անդ, IV, 37:

¹⁰⁴ Անդ, IV, 45:

ավագան¹⁰⁵: Դիաուխիի տարածքը հետագայում միանշանակորեն մտել է Հայաստանի մեջ, իսկ ինչ վերաբերում է Կուլխային, կարող ենք ասել հետևյալը: Սարգուրի Բ-ի տարեգրության մեջ ասվում է. «... արշավեցի (իմա՝ Սարգուրի Բ-ն) Կուլխա (երկրի) վրա: Խալոյան մեծությամբ Խախա արքային Խուշա-ալխե (երկրի) ժողովրդով հանդերձ գերեվարեցի, քչեցի, բնակեցրի երկրումս» և «... արշավեցի Կուլխա (երկրի) վրա: Երկիրը գրավեցի, Իլդամուշա քաղաքն արքայական Միշա արքայի՝ Կուլխա-խալյան (երկրի), (որ) ամրացված էր, կռվում գրավեցի»¹⁰⁶: Դատելով արձանագրությունից՝ Խուշալխի երկիրը (Արգիշտի Ա-ի տարեգրության Խուշանին է), որը նույնանուն է Խորձենին¹⁰⁷, գտնվել է ոչ թե Կուլխայի հարևանությամբ, այլ հանդիսացել է հենց որպես Կուլխա երկիր, նրա մի հատվածը: Եթե նկատի ունենանք, որ Կուլխա թագավորության Իլդամուշա քաղաքը մասնագիտական գրականության մեջ նույնացվում է ուշ շրջանի Արտանուջի հետ¹⁰⁸, ապա կարելի է տեսնել, որ ուրարտական Կուլխան մասամբ համապատասխանում է Հերոդոտոսի մոսքերի, Քսենոփոնի խալյուբների երկրին՝ Կատարգային: Քսենոփոնի վկայությամբ մ. թ. ա. V դարի վերջին ծովափնյա հելլենական Կեռասունտ քաղաքը, որը Սինոպի քաղաքացիների գաղութն էր, գտնվել է Կողքիս երկրում¹⁰⁹: Ըստ Քսենոփոնի, Տրապիզոնը՝ Սինոպի գաղութը, նույնպես գտնվում էր կոլխերի երկրում¹¹⁰: Քսենոփոնյան կոլխերի վերաբերյալ մենք կամենում ենք նշել հետևյալը: Քսենոփոնը հայտնում է, որ մակրոնները երեք օրում հելլեններին հասցրին մինչև կոլխերի սահմանը¹¹¹: Ինչպես արդեն ասվել է, մակրոնները գտնվել են Տրապիզոնից հարավ-արևելք: Քսենոփոնի կոլխերը պետք է գտնվեին նրանցից արևմուտք: Նրանց երկիրը գտնվել է

¹⁰⁵ Տե՛ս Микеладзе Т., К вопросу о периодизации истории древней Колхиды, էջ 149-152:

¹⁰⁶ Վարազդրյան Հ., Ուրարտական արքյուրները Հայկական լեռնաշխարհի և հարևան պետությունների մասին, էջ 75, 77; Меликушвили Г., УКН, էջ 279, 282; Арутюнян Н., КУКН, էջ 235, 239:

¹⁰⁷ Տե՛ս Վարազդրյան Հ., Սեպագիր տեղանուններ, էջ 195-196:

¹⁰⁸ Տե՛ս Арутюнян Н., Топонимика Урарту, էջ 118:

¹⁰⁹ Տե՛ս Անաբախի, էջ 115:

¹¹⁰ Անդ, էջ 107:

¹¹¹ Անդ, էջ 105:

Տրապիզոնի և Կեռասունտի միջև ընկած տարածքում: Տրապիզոնի մոտ գտնվող կոլխերի գյուղերում հելլենները մնում են շուրջ երեսուն օր և այստեղից արշավելով՝ ավարի ենթարկում Կողքիսը¹¹²: Այս տեղեկության մեջ առաջին հայացքից կարծես թե կոլխերը և Կողքիսը ինչ-որ առումով հակադրվում են: Սակայն Կողքիսն այստեղ պարզապես օգտագործված է Տրապիզոնից արևմուտք ընկած տարածքների համար և նշվում է նաև, որ հելլենները Տրապիզոնի բնակիչների օգնությամբ դաշինք են կնքում հարևան կոլխերի հետ, որոնք առավելապես դաշտավայրում էին ապրում¹¹³: Ուստի և հելլենների համար Կողքիս էին ինչպես Տրապիզոնից արևմուտք ընկած շրջանները, այնպես էլ Տրապիզոնի տարածքը: Ստրաբոնի մոտ, օրինակ, Տրապիզոնն արդեն Կողքիսի մոտ գտնվող քաղաք էր¹¹⁴: Քսենոփոնի մոտ Կողքիսն ունի սոսկ աշխարհագրական նշանակություն, իսկ կոլխերը հարավարևելյան Մերծսևծովի որոշակի շրջանի (տվյալ դեպքում Տրապիզոնից մինչև Կեռասունտ) բնակչության ընդհանուր անվանումն էր: Կուլխա երկրանունը, ըստ Հ. Կարապոզյանի, կազմված է կուլխա («եզր», «կողք») բառով, որը հանդիպում է նաև Հնդկաստանում՝ Կուլխափուր («եզրաքաղաք») տեղանվան մեջ: Այդպիսի կազմություն ունեն նաև Ուկրաինա երկիրը և Կրայովա քաղաքը: Կուլխա երկրանունը («կողք», «եզր», «անկյուն» իմաստով) ցույց է տալիս, որ այն գտնվել է Սև ծովի եզրին, ափին, և այն այդպես է կոչվել արևմտյան և հարավային հարևանների կողմից¹¹⁵: Հետևաբար, ոչ մի հիմք չկա եզրակացնելու, թե ի դեմս Կողքիս երկրի՝ գործ ունենք քաղաքական որոշակի միավորման հետ, և ոչ էլ կոլխերը ինչ-որ առանձին ցեղ էին, որն իր ազդեցությունը, ինչպես կարծում է Մ. Ինաձեն, մ. թ. ա. V դարում հասցրել էր մինչև Տրապիզոն, մակրոնների հարևանությամբ, որն ավելի վաղ աղբյուրներում վկայված չէ: Ըստ Մ. Ինաձեի, Հերոդոտոսին մոտ ժամանակներում Տրապիզոնի մոտ՝ մակրոնների հարևանությամբ, կոլխերի հայտնվելու մասին, հնարավոր է, վկայում է Հերոդոտոսի այն տեղեկությունը, որ Թերմոդոնտ գետի մոտ ապրող

¹¹² Անդ, էջ 107:

¹¹³ Անդ:

¹¹⁴ Տես Страбон, VII, IV, 3. հմտ. XI, II, 14, 18, XII, III, 17.

¹¹⁵ Տես Կարապոզյան Հ., Սեպագիր տեղանուններ, էջ 179, 182:

սիրիացիները և նրանց հարևան մակրոնները «վերջերս են ընդօրինակել» (ընդգծումը Մ. Ինաձեի-իւ. Հ.) թլպատման սովորույթը կոլխերից¹¹⁶: Ինչպես հայտնի է, ոչ մի սկզբնաղբյուր մակրոններին չի տեղադրում սիրիացիների հարևանությամբ, և հենց նույն Հերոդոտոսը մակրոններին հիշատակում է բոլորովին այլ տեղորոշմամբ, և Պատմահոր տվյալ վկայությունում կոլխերին փնտրել մակրոնների հարևանությամբ ոչ մի հիմք չկա, քանի որ նա խոսում է միայն թլպատման սովորույթի մասին: Որ Քսենոփոնը կոլխերի տակ նկատի ունի Տրապիզոնից մինչև Կեռասունտ ընկած շրջանի բնակչությանը, երևում է նաև «Անաբասիս»-ի վերջում հիշատակվող ցեղերի հերթականությունից՝ «...մակրոնները, կոլխերը, մոսսինոյկները... հնքնավար են»¹¹⁷: Հետաքրքիր է, որ Քսենոփոնը հենց Փասիս-Ռիոնի գետի ավազանում հիշում է փասիանների երկիրը, որտեղ թագավորում էր Այետեսի ծոռը¹¹⁸: Քսենոփոնը չէր եղել Փասիսի ավազանում, այդուհանդերձ փասիանները՝ որպես իրանական ցեղ¹¹⁹, այստեղ լայն առումով համարժեք են կոլխերին՝ որպես կոլխերի իրանական ցեղախմբի ցեղերից մեկը: Պատմագիտական գրականության մեջ կարծիք կա, որ կոլխերին հաջողվում է Աքեմենյանների հետ հաստատել խաղաղ հարաբերություններ՝ կամավոր ենթակայության տակ պահպանելով որոշակի անկախություն: Նման փոխհարաբերություններ հաստատելու համար Կողքիսի թագավորությունը պետք է լիներ ուժեղ քաղաքական միավորում¹²⁰: Ա. Բոլտունովան ցույց է տվել, որ Հերոդոտոսի տեքստում «կամավոր» բառը չկա և այն հունարեն տեքստին տրվել է թարգմանչի կողմից՝ որպես մեկնաբանություն (ընդ որում, Ս. Կրկյաշարյանի մոտ նույնպես թարգմանված է «կոլխերը և նրանց հարևանները հարկ տալիս են ընծաներ մատուցելու ձևով», III, 97): Այս հատվածի հետ համադրում են կոլխերի հիշատակության բացակայությունը սատրապությունների ցուցակում որպես այն եզրակացության հիմնավորում, որ կոլխերը պաշտպանում են իրենց անկախությունը և չեն ենթարկվում

¹¹⁶ Տե՛ս Инадзе М., О времени образования Колхидского царства..., էջ 165-167:

¹¹⁷ Տե՛ս Անաբասիս, էջ 197:

¹¹⁸ Անդ, էջ 129:

¹¹⁹ Տե՛ս Հարությունյան Բ., Աքեմենյան Պարսկաստանի XVIII սատրապության տեղադրության շուրջ, էջ 70-72:

¹²⁰ Տե՛ս Инадзе М., Նշվ. աշխ., էջ 165-167:

Աքեմենյաններին: Սակայն Հերոդոտոսը չի հիշատակել ոչ միայն փոքր, այլ նաև մեծ ցեղային միավորումներին, որոնք ենթարկվել են Աքեմենյաններին: Ընդ որում, պարսից արքաների ռազմական արշավանքներին մասնակցելը հազիվ թե կարելի է համարել ժողովուրդների ազատ կամքի արտահայտում¹²¹: Հերոդոտոսը շատ պարզ գրում է, որ եթովպիացիները, կոլխերը և նրանց հարևանները, արաբները ընծաներ են ուղարկում հարկերից բացի¹²²: Բացի այդ Պատմահայրը հստակ մատնանշում է, որ պարսիկների իշխանությունը հասնում էր մինչև Կովկաս լեռը, հետևաբար, կոլխերը և նրանց անանուն հարևանները ենթարկվել են պարսիկներին:

Մարերի և կոլխերի՝ մեկ հրամանատարության ներքո հանդես գալը կարևոր կռվան է նրանց հարևաններ լինելու համար, իսկ սպառազինության նմանությունը, համենայն դեպս, վկայում է նրանց էթնիկական ընդհանուր ծագման մասին: Ն. Ադոնցը նույնպես մարերին կապում է Ամարանթի-Իմերեթի՝ իմերների երկրի հետ¹²³: Բացի այն հանգամանքից, որ մարերը եղել են առանձին ցեղ և բնակվել են Փասիս-Ռիոնի գետի վերին և միջին հոսանքի շրջանում, Արզվեթի լեռներից արևմուտք մինչև Քութայիսի շրջանը, նրանք՝ որպես կոլխական ցեղ, Հերոդոտոսի XIX սատրապության մեջ ամենալայն առումով աշխարհագրորեն փոխարինում են Պատմահոր կոլխերին, որոնց մենք տեղադրեցինք Փասիս-Ռիոնի գետի (երկու ափերին) և Մոսքական լեռների միջև: Այսինքն՝ Պատմահոր երկում մարերը, լինելով առանձին ցեղ XIX սատրապության մեջ, համարժեքն են նաև կոլխեր հավաքական հասկացության: Այսպիսով, XIX սատրապության ցեղերը Քսերքսեսի հունական արշավանքին մասնակցել են, ըստ աշխարհագրական տեղադրության, հետևյալ հերթականությամբ. տիբարեններ և մոսսիոնյակներ, մակրոններ և մոսքեր, կոլխեր և մարեր: Մոսքերը չփոթվել են մոսսիոնյակների հետ, և սատրապության տարբեր հատվածներում գտնվող այս երկու ցեղերը չէին կարող հանդես գալ մեկ հրամանատարության ներքո: Անտիկ աղբյուրներում ևս

¹²¹ Տե՛ս Болтунова А., Колхи и держава Ахеменидов (по данным Геродота), - «Проблемы античной истории и культуры», I, Ереван, 1979, с. 52.

¹²² Տե՛ս Հերոդոտոս, III, 97:

¹²³ Տե՛ս Ադոնց Ն., Հայաստանի պատմություն, էջ 275, ծանոթ. 1:

մուսքերը և մուսսինոյկները շփոթվել են և նույնացվել: Օրինակ, Եպիփանեսը գրում է, որ մուսսինոյկները իրենց լեզուն ստացել են Մուսքից¹²⁴: Սակայն հայտնի է, որ Մուսքը համարվել է մուսք-մեսքենների նախահայրը:

XIX սատրապության մեջ, անշուշտ, մտնում էին նաև այլ ցեղեր, որոնք չեն հիշատակվում Հերոդոտոսի կողմից: Խոսքը հատկապես վերաբերում է բիզերներին, բեխիրներին, էլեխեյոյներին, խոյերին: Մ. թ. IV դարի հեղինակ Ռուփոս Փեստոս Ավիենոսը արևելքից արևմուտք շարքով թվարկում է բիզերներին, կոպիտ բեխիրներին, մակրոններին, փիլիբներին, ժիր դուրատներին, տիբարեններին և խալսուբներին¹²⁵: Մեր կարծիքով, փիլիբները, թերևս, աշխարհագրորեն համապատասխանում են Զսենոփոնի դրիլներին, իսկ մուսսինոյկների անվան բացակայությունը, հավանաբար, ցույց է տալիս, որ դուրատները հենց մուսսինոյկների էթնանունն է: Մ. թ. V դարի հեղինակ Պրիսկիանոսը տալիս է ցեղերի հետևյալ հերթականությունը՝ բիզերներ, բեխիրներ, մակրոններ, փիլիբներ, մուսսիններ (=մուսսինոյկներ), տիբարեններ ու խալսուբներ¹²⁶: Պրիսկիանոսի մոտ, ինչպես տեսնում ենք, դուրատները փոխարինված են մուսսինոյկներով: Դիոնիսիոսը տալիս է պոնտական ցեղերի հետևյալ հերթականությունը՝ կոլխերից և Փասիսից արևմուտք գծով. բիզերներ, բեխիրներ, մակրոններ, փիլիբներ, փայտե մուսսիններում ապրողներ (=մուսսինոյկներ), տիբարեններ, խալսուբներ¹²⁷: Այստեղ նույնպես մուսսինոյկները փոխարինում են դուրատներին: Եվստաթիոսը «Դիոնիսիոսի «Աշխարհագրության մեկնաբանություններում» նշում է, որ մակրոնները պոնտական ժողովուրդ են բեխիրներից հարավ, որոնց հիմա անվանում են սաներ կամ ճաներ¹²⁸: Նիկիփորոս Բլեմմիդոսը բիզերներից այն կողմ հիշատակում է բեխիրներին, մակրոններին,

¹²⁴ Տե՛ս ИДПСК.-«ВДИ», 1948, №3, т. 245. հմմտ. «ВДИ», 1949, №3, т. 249:

¹²⁵ Անդ.-«ВДИ», 1949, №4, т. 242:

¹²⁶ Անդ, էջ 303:

¹²⁷ Անդ.-«ВДИ», 1948, №1, т. 241: Եթե դուրատն առանձին էթնանուն չէ, ապա փարզապես հոմերոսյան **δουρατεις** «փայտե» բառն է (տե՛ս Древнегреческо-русский словарь, составил И. Дворецкий, т. I, Москва, 1958, с. 424), որը կրկին ցույց է տալիս մուսսինոյկներին:

¹²⁸ Անդ, էջ 255:

փիլիոններին, հոտերով հարուստ տիբարեններին և խայուբներին¹²⁹: Մ. թ. ա. IV դարի հեղինակ Ապոլլոնիոս Հռոդոսցին «Արգոնավորդների արշավը» երկում թվարկում է խայուբներին, տիբարեններին, մոսսինոյկներին, փիլիոններին, փիլիոններից վերև (իմա՝ հարավ)՝ մակրոններին, բեխիրներին, նրանց անմիջական հարևանությամբ՝ սապեյրներին, որոնցից հետո արդեն՝ կոլխերին: Հաջորդ հատվածներից մեկում սապեյրներից հետո կոլխերի փոխարեն հիշատակվում են բիզերները: Ապոլլոնիոսի «Արգոնավորդների արշավը» սքոլիայում մակրոնները անվանվում են էվբեայից գաղթածներ և կոչվում են մակրեթ՝ էվբեայի Մակրիա անունից: Ուրիշները մակրեթ են անվանում բեխիրներին, որոնք մշտապես մարտնչում են կիզիկցիների հետ¹³⁰: Սկիլաքս Կարիանդացին կոլխերից հետո հիշատակում է բիզերներին, էլեխեյրիներին, բեխիրներին, մեծագլուխներին (=մակրոններ-և. Հ.), մոսսինոյկներին, տիբարեններին, խայուբներին¹³¹: Սկիլաքսի մոտ բիզերների և բեխիրների միջև հիշատակվում են էլեխեյրիները: Կլավդիոս Պտղոմեոսի մոտ Կողքիսի նկարագրության մեջ հիշատակվող էկրեկտիկան¹³², ըստ երևույթին, աշխարհագրորեն կապվում է էլեխեյրիների հետ, և անունը, հավանաբար, պահպանվել է վրաց. էգրիսի, հայ. Եգր աշխարհի անվան մեջ, ճորոխ գետի ներքին հոսանքի հովտում: Ս. Երեմյանի մոտ Եգրը կազմում էր Ստրաբոնի **Μοσχχχ**՝ երկրի կողքիսյան (եգերական) մասը¹³³: Բ. Հարությունյանի կարծիքով, Կողքիսը կամ Եգրը տարածվել է մինչև Տրապիզոնի արևելակողմը և Պարխարյան լեռներով սահմանակցել Տայքին: Վրացական էգրիսին, ըստ հայագետի, ոչ թե Եգերքն է կամ Կողքիսը, այլ հետագա շրջանի Աճարան¹³⁴:

Էկրեկտիկան, ըստ էության, Գայոս Պլինիոսի Կեգրիտիկան է¹³⁵:
 Գայոս Պլինիոսը հիշատակում է մակրոկեփալներին

¹²⁹ Անդ.-«ВДИ», 1948, թիվ 4, էջ 241:

¹³⁰ Անդ.-«ВДИ», 1947, թիվ 3, էջ 280, 282, 287:

¹³¹ Անդ, էջ 242-243:

¹³² Անդ.-«ВДИ», 1948, թիվ 2, էջ 251:

¹³³ Տեն Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 50:

¹³⁴ Տեն Հարությունյան Բ., Մեծ Հայքի Գուգարք աշխարհը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 180-182:

¹³⁵ Տեն ИДПСК.-«ВДИ», 1949, թիվ 2, էջ 290:

(մեծագլուխներ=մակրոններ-Խ. Հ.), Կեռասունտ քաղաքը, Կորդուլա նավահանգիստը (Տրապիզոնից արևելք-Խ. Հ.), բեխիրների, բուքսերների (=բիզերներ-Խ. Հ.) ցեղերը...¹³⁶: Պոմպոնիոս Մելասը հիշատակում է մոսսիններին (=մոսսինոյկներին-Խ. Հ.), մակրոկեփալներին (=մակրոններ-Խ. Հ.), բեխիրներին և բուքսերներին (=բիզերներին-Խ. Հ.)¹³⁷: Ստեփանոս Բյուզանդացին «Եթնիկա» երկում նշում է, որ հեպտակոմետները բարբարոսներ են, որոնք ապրում են Սկյուդես լեռան վրա. նրանցից ոմանք կոչվել են նաև բիզերներ¹³⁸: Չ. Մելիքիշվիլին սկյութեններին համարում է վրացական ցեղ: Նրա կարծիքով, հունական աղբյուրներում հիշատակված հեպտակոմետները նույնանուն են սկյութեններին, քանի որ առաջինը ցեղի հունական անվանումն է, որը նշանակում է «յոթ գյուղերի բնակիչներ», իսկ երկրորդը ծագում է մեգրելաճանական «շկվիթի» (շկիթի) բառից, որը թարգմանվում է «յոթ»¹³⁹: Սակայն, ինչպես իրավացիորեն նշում է Բ. Հարությունյանը, «Ստրաբոնը հավաստում է, որ հեպտակոմետներին, որոնք աչքի էին ընկնում իրենց առանձնահատուկ վայրենությամբ, հներն անվանել են մոսսինոյկներ նրանց փայտե «մոսսին» կոչվող աշտարակների կապակցությամբ, իսկ այլ տեղեկությունների համաձայն հեպտակոմետների մի մասը կոչվել է «բիզերներ», որոնք նույնանուն են Հեկատեոսի «բեխիրներին», որոնց պետք է փնտրել մոսսինոյկների շրջանում: Ամենայն հավանականությամբ, հեպտակոմետները մոսսինոյկների մի մասն էին, որոնք այդպես էին կոչվել իրենց «յոթ գյուղերի», թե «յոթնահարկ փայտե աշտարակների» համար, դժվար է հաստատապես ասել: Եթե անգամ մի պահ ընդունենք, որ վրացագետ հեղինակի տեսակետը ճիշտ է, ապա շատ տարօրինակ պետք է դիտել այն, որ յոթ գյուղերի բնակիչների անունը տարածվել է Ճորոխ գետի և մասամբ Ծանախոճորի վերին հոսանքի բնակիչների վրա: Ընդհակառակը, «սկյութեն» ընդհանրական անունն է տարածվել այդ շրջանի ցեղերի վրա, որը ոչ այլ ինչ է, բայց եթե skythan=սկյութների անվան

¹³⁶ Անդ, էջ 287:

¹³⁷ Անդ.-«ВДИ», 1949, թիվ 1, էջ 274:

¹³⁸ Անդ.-«ВДИ», 1948, թիվ 3, էջ 319; Strabo, XII, III, 18.

¹³⁹ Стен Мелкушвили Г., К источн..., էջ 81:

հունականացված արտասանությունը»¹⁴⁰: Հեպտակոմետները, որոնց մի մասը կոչվել է բիզերներ և ոչ մի կապ չունեն մուսինոյկների հետ, Ստրաբոնը տեղադրում է Մոսքական լեռների բարձունքներին, և բիզերները չեն կարող նույնանալ բելսիրների հետ: Հեկատեոս Միլետացին հաղորդում է, որ «խոյերը ժողովուրդ են վելսիրների մոտերքում» և «մինչև այստեղ վելսիրների հողերն են, իսկ նրանց կողքին ապրում են խոյերը», նաև՝ «խոյերին արևելքից հարևան են դիզերները»¹⁴¹: Հեկատեոսի դիզերները այլ աղբյուրների բիզերներն են, իսկ վելսիրները բելսիրներն են: Հեկատեոսի նկարագրությունից պարզվում է, որ խոյերը գտնվել են բելսիրների և բիզերների միջև: Իսկ ըստ Սկիլաքս Կարիանդացու, բելսիրների և բիզերների միջև գտնվել են էկելսերիները: Մ. Ինաձեն բիզերներին տեղադրում է Ապարոսի (Ճորոխի) գետաբերանից հարավ, մոտավորապես մինչև ներկայիս Արխավե գետը (Բաբունից հր.-արմ.-խ. Հ.), իսկ բելսիրներին՝ Վիցե գետի (Աթինա քաղաքից մոտ 25 կմ հյուսիս-արևելք թափվում է Սև ծովը-խ. Հ.) ավազանից մինչև Տրապիզոն: Մնացած տարածքը, ըստ հեղինակի, այս ցեղերի միջև զբաղեցրել են Հեկատեոսի խոյերը: Հեղինակի կարծիքով, Ապարոսից հյուսիս ընկած տարածքը մինչև Դիոսկուրիա, համաձայն Կեղծ Սկիլաքսի և, ըստ երևույթին, Հեկատեոսի, զբաղեցրել են կոլխերը¹⁴²:

Ըստ Կեղծ Արիթանոսի, Արխաբիս գետից (Արխավե-խ. Հ.) մինչև Օֆիոս գետը (Օֆ-խ. Հ.) նախկինում ապրում էր մի

¹⁴⁰ Հարությունյան Բ., Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգ..., էջ 100-101:

¹⁴¹ Տե՛ս ИДПСК, «ВДИ», 1947, թիվ 1, էջ 301; 1948, թիվ 3, էջ 329:

